ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուա Կոնդակս ի 25-ն Նոկտեմբերի
յամի Տեառն 2005 և ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարս 323

ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՆԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի կոնդակով հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

- Գրիգոր Կյուկչյան (Արարարչյան Տայրապետական թեմ)
- Տիգրան Կարապետյան (Արարարչյան Տայրապետական թեմ)
- Պեկրոս Այսանյան (Արարական Միացյալ Էմիթություններ)
- Գրիգոր սարկավագ Թոքազյան (Կանադայի հայոց թեմ)
- Գարրիկ Մոլոյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Օրինության գիր է փրվել.

- Աստվածաբան Բուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմ)
- Սեդա Գրիգորյան (Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմ)
- Ռուզաննա Կուրդիսյան (Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմ)
- Տրաչ Մանուկյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
- Կարպիս սարկավագ Քեչյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
- Գրիգոր սարկավագ Մախսերենյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ) *
- Ղևոնդ քահանա Տարությունյան (Արևմտյան Եվրոպայի Տայրապետական Պատվիրակություն)
- Արման Պարույր (Կենտրոնական Եվրոպայի Տայրապետական Պատվիրակություն)
- Պողոս Կիրակոսյան (Կենտրոնական Եվրոպայի Տայրապետական Պատվիրակություն)

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք է փրվել.

- Գևորգ քահանա Խաչերյան (Բուլղարիայի հայոց թեմ)
- Սուրբ Սյրեվաննոս եկեղեցու ծխական խորհրդին (Բուլղարիայի հայոց թեմ)
- Երևանի Բժշկական համալսարանին՝ 70-ամյակի առիթով
- Երևանի Վալերի Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանին
- «Մարտիրոս Սարյան» եկադրական ակադեմիային (Տալեպ, Սիրիա)
- Բոստոնի հայկական ուղիորդին (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
- Ազգային Մշակութային Միությանը (Սիրիա)

**ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՅԱՎԱԿՅՈՒԹՅՈՒՆ Է
ՆԱՅՏՆԵԼ ՆՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՊԱԿԻՍՏԱՆԻ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

Նոկտեմբերի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսը ցավակցական գրեր է հղել Պակիստանի Իսլամական Տանրապետության նախագահ Փերվեզ Մուշարաֆին ու Նոդկաստանի վարչապետ Մանմոհան Սինխին և Տայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և համայն հայ ժողովրդի անունից իր սրբակցությունը հայտնել Քաշմիրի շրջանում շարաք օրը փնդի ունեցած աղետալի երկրաշարժի հետևանքով զոհված բյուրավոր մարդկանց համար:

Նորին Սրբությունը ցավակցական գրերում Աստուծո մխիթարություն է հայցում զոհվածների հարազատներին ու մտերիմներին և մաղթում, որ Նոդկաստանն ու Պակիստանը առաջ հաղթահարեն երկրաշարժի պարճառած վնասները:

*ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇԻՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ*

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՎՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅՈՒ ԹԵՄԵՐՈՒՄ

Տոկոսներն 11-ից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի հայրապետական փոփոխությամբ (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հոգևորիկ Ս. Մարկոս վարդապետ հովհաննիսյանը նշանակվել է Գեղարքունյաց թեմի առաջնորդական փեղապահ:

Ինչ այլ հայրապետական փոփոխությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հոգևորիկ Ս. Արգար արեղա հովակիմյանը հոկտեմբեր 11-ից հոգևոր սպասավորության է կոչվել Սյունյաց թեմում՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո:

*

* *

Տոկոսներին 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի հայրապետական փոփոխությամբ 21 քահանաներ, որպես հոգևոր հովիվներ, ծառայության են կոչվել հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գանազան թեմերում՝ թեմակալ առաջնորդների և առաջնորդական փեղապահների իշխանության ներքո:

Տ. Սերևոս թին. Ղալաչյանը, Տ. Գրիգոր թին. Գրիգորյանը և Տ. Մաշտոց թին. հակոբյանը հոգևոր ծառայության են նշանակվել Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում, Տ. Կերենիկ թին. Միքայելյանը և Տ. Զգոն թին. Արրահամյանը՝ Արարաբյան հայրապետական թեմում, Տ. Գարեգին թին. Արսենյանը և Տ. Ներսես թին. Ռուշանյանը՝ Արագածոտնի, Տ. Մեսրոպ թին. Մկրտչյանը՝ Արցախի, Տ. Սիմեոն թին. Տեր-Մկրտչյանը և Տ. Վերոզ թին. Տեր-Բարսեղյանը՝ Գեղարքունյաց, Տ. Վրթանես թին. Բաղալյանը, Տ. Սյրեմիանոս թին. Մարգարյանը, Տ. Թորգոմ թին. Մարգարյանը և Տ. Մաշտոց թին. Սյրեմիանյանը՝ Գուգարաց, Տ. Շնորհիք թին. Մաթևոսյանը և Տ. Շահան թին. Միրզոյանը՝ Կոպայքի, Տ. Սյրեմիանոս թին. Ավետիսյանը և Տ. հովհաննես թին. Ալեքսանդրյանը՝ Շիրակի, Տ. Խաչատուր թին. Քեսաբյանը, Տ. հուսիկ թին. Նուրիջանյանը և Տ. Անպոտի թին. հարությունյանը՝ Սյունյաց թեմերում:

Քահանաներից 18-ը նորածներն են, ովքեր 40-օրյա պահեցողության շրջանից հետո, նախորդ կիրակի, իրենց աղերսակի Ս. Պարարազն են մաքուրցել փարրեր եկեղեցիներում:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԵՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆՄՄԱԿԱՐԳ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ԱՐՎԵԼ Տ. ԶՈՆՐԱՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի նոյեմբերի 10-ի Տայրապետական փնտրիչությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Զոհրապ վրդ. Կոստանյանը՝ ծառայությունն ինքնակամորեն լքելու կարգազանցության համար:

Կարգալույծ արված հոգևորականը դատվում է աշխարհականների շարքը և այսուհետ կկոչվի ավագանի անունով՝ Տրանս Կոստանյան:

ՆԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի Տայրապետական բարձր փնտրիչությամբ Կալկաթայի Տայիական Մարդասիրական ճեմարանի ղեկավարի (մենեջեր) պաշտոնից ազատ է արձակվել փիլիսոսայտ Սոնյա Զոնը:

Մարդասիրական ճեմարանի ղեկավարի պարտականությունների իրականացման համար Նորին Սրբության կողմից նշանակվել է ժամանակավոր հանձնախումբ՝ գլխավորությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյանի: Ճեմարանի վարչական կառավարչի պարտականությունները շարունակում է կատարել Տիգրան արկ. Բաղումյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ*

«Ս. ՍԱԿԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ ԿՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ

Տոկոսների 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապեսությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի, փնդի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն: Ամենայն Տայոց Տայրապետը Տայասրանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պապիկ բարձր շքանշանով պարգևատրեց արձակագիր, հրապարակախոս Ադամի Այվազյանին՝ ծննդյան 80-րդ փարեղարձի առիթով, հայ ժողովրդին ու Տայրենիքին մատուցած ծառայությունների ու վաստակի համար:

Արարողության սկզբում Ա. Այվազյանի՝ արվեստի փարբեր բնագավառներում ծավալած գործունեությանն ու մեծ վաստակին անդրադարձավ ՏՏ Գրողների միության նախագահ Լևոն Անանյանը: «Այս շքանշանը արժանի հատուցումն է այն ծառայության, որ Ադամի Այվազյանը մատուցել է մեր ժողովրդին»,- ասաց պրն Անանյանը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը պարգևի համար, անդրադառնալով նաև Մայր Աթոռի ու Գրողների միության միջև առկա սերտ համագործակցությանը:

Այնուհետև «Էջ Միածինն ի Տօրե» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Տայրապետական Սրբաբառ Կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը (փնն էջ 18):

Կոնդակի ընթերցումից հետո Ամենայն Տայոց Տայրապետը մեծարյալի կուրծքը զարդարեց «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով: «Ձեր օրհնությունը շար մեծ նշանակություն ունի ինձ համար: Այս շքանշանի հանձնումը անակնկալ էր ինձ համար և մեծ պատիվ»,- հուզված ասաց պրն Այվազյանը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը բարձր պարգևի համար:

Իր Տայրապետական օրհնությունը ներկաներին ուղղեց նաև Նորին Սրբություն Գաբրիել Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսը: «Նախախնամական ենք համարում, որ այս պարգևի հանձնումը կատարվում է այսօր, երբ փակավին ապրում ենք խորհուրդը մեր մեծ թաղամասից Վարդապետների, որոնց փոքր մենք փոխախմբեցինք երեկ: Այսօր Տայ Եկեղեցու մեծագույն սրբերի՝ Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպի շքանշանը զարդարում է Ձեր կուրծքը՝ ի գնահատություն Ձեր ծառայության, որ Դուք իրականացրել եք ազգային մեր կյանքում, մաշտոցյան գործը շարունակելով մեր ժողովրդի կյանքից ենթա, կրթելով, սնելով, դաստիարակելով հայրերի ներկա սերնդին Ձեր հոգու ազնիվ զգացումներով, Ձեր հայրենասիրությամբ, առ Տայրենին ունեցած բարի իղձերով, երագներով ու փնսիլքներով»,- նշեց Նորին Սրբությունը՝ մաղթելով Տիրոջ գորակցությունը վաստակաշար գրողին:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԱՄԱԿԱՐԳ*

«Մ. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԿԻ» ՇՔԱՆՇԱՆ ՊԵՏՐՈՍ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Նոկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսավարությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի, փռոյի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն: Ամենայն Տայոց Տայրապետը Տայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Մ. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով պարգևատրեց Շարժայում (Արարական Միացյալ Էմիրություններ) բնակվող փիար Պետրոս Ասլանյանին՝ հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, Տայրենիքը ու հարազատ ժողովուրդը ցուցաբերած և գործերով վկայված սիրո համար:

Արարողության սկզբում Պետրոս Ասլանյանի կյանքի ուղին և բարեգործական բեղուն գործունեությունը ներկայացրեց «Տիգրան Մեծ» հրապարակաբան փոխարևորեն Լյուդվիգ Տարոյանը: Այնուհետև «Էջ Միածինն ի Տորե» շարականի երգեցողության ներքո բերվեց Տայրապետական Մրբաբատ Կոնդակը, որն ընթերցվեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանի կողմից:

«...Գոհունակությամբ եք անդրադառնում բազմաբեղուն այն գործունեությանը: որը փաստյակ փարիներ իրականացնում եք Դուք ազգային-հասարակական մեր կյանքում: Ճնկելով ու հասակ առնելով հայ կյանքի ավանդույթներով հարուստ Եթովպիայում, Դուք իրփասարդ փարիքից ինքնաբոխ լծվեցիք ազգանվեր ծառայության՝ ի սպաս դնելով Ձեր ջանքերը, ժամանակը և կյուրական կարողությունները: Ծառայանվեր նույն ոգով Դուք շարունակեցիք Ձեր ծառայությունները մեր ժողովրդին նաև Արարական Միացյալ Էմիրություններում՝ դրսևորելով հայ համայնքը միշտ շեն ու պայծառ փեսնելու Ձեր նախանձախրնդությունը:

Տամայնքային կյանքում Ձեր ծառայություններին գուգրնթաց Դուք գովելի մասնակցություն եք բերում նաև Տայրենի մեր Էրկրի գորագմանն ու առաջընթացին՝ Ձեր ավանդը բերելով Միացյալ Էմիրություններում ՏՏ Դեսպաևության բազման, ինչպես և Դեսպաևաբան շենքի կառուցման աշխատանքներին:

Տայրապետիս համար ուրախություն է հաստատել նաև, որ Ձեր կյանքի ողջ ընթացքին Դուք դրսևորել եք անկեղծ սեր ու նվիրում հանդեպ յուս խորան Սուրբ Էջմիածինը և փարբեր հանձնառություններով Ձեր աջակցությունը բերել Մայր Աթոռիս առաքելության իրականացմանը Քրիստոսասեր մեր ժողովրդի կյանքում»,- ասված է Տայրապետական Կոնդակում:

Կոնդակի ընթերցումից հետո Ամենայն Տայոց Տայրապետը պրն Ասլանյանի կուրծքը գարդարեց «Մ. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով՝ գնահատելով մեծարյալի ազգագուր ու եկեղեցաշեն արդյունաշար վաստակը: Ապա Նորին Մրբությանն իր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեց Պետրոս Ասլանյանը:

Արարողության ավարտին իր Տայրապետական գնահատանքն ու օրհնությունը մեծարյալին ուղղեց Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսը: «...Տարիներ ի վեր ճանաչում եք

Չեզ և որքան շփվել ու մտքիկից ճանաչել ենք, այնքան սիրել ենք Չեզ, Չեր ազնիվ, հավա-
 րավոր, եկեղեցասեր ու ազգասեր ոգին, րեսել ենք անկեղծությունն ու խոնարհությունն
 անձիդ մեջ և բարձրորեն գնահատել: ...Այսօր Մենք զարդարում ենք Չեր կուրծքը «Ս. Ներ-
 սես Ընորհալի» բարձր շքանշանով, որպես գնահատություն Չեր բոլոր ծառայությունների,
 որ բերել էք մեր ազգին, մեր եկեղեցուն ինչպես Եթովպիայում ու Արարական Էմիրություն-
 ներում, այնպես և Մայր Նայրենիքում: Մենք ուրախ ենք Չեր վաստակի համար, որ Չեր
 ազնիվ հոգով 'Դուք արձանագրել էք եկեղեցական մեր կյանքից ներս, Մայր Աթոռ Սուրբ
 Էջմիածնի գործունեության մեջ...»: մասնավորաբար ասաց Նորին Սրբությունը՝ մաղթե-
 լով րիհար Ալանյանին ևույն ևախանձախնդիր, հավաքավոր ու եվիրյալ ոգով շարունակել
 ծառայությունն ի նպաստ Նայրենիքի շինության և եկեղեցու պայծառության:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ
 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ՊԱՐԳԵՎԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆՈՒՄ

Տոկոսներին 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ և մասնակցությամբ ՏՏ Կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանի փեղի ունեցավ հանրակրթական դպրոցների ուսուցիչների պարգևաբաշխություն: Արդեն ներկրորդ փարին է, ինչ Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի հովանավորությամբ ՏՏ ԿԳ նախարարությունը Տայաստանում անցկացնում է հանրակրթական դպրոցների ուսուցիչների մրցույթ, որի հաղթողներին Ամենայն Տայոց Գարեգին Բ Կաթողիկոսը հանձնում է վկայականներ և դրամական պարգևներ:

Արցանակաբաշխության արարողությունն այս փարի բացվեց Քրիստոնեական դասփարակության կենտրոնի նորակազմակ փոսթեն Տ. Ղուկաս արեղա Զաբարյանի ողջույնի խոսքով: «Ուսուցչի աշխատանքը ծանր է և միևնույն ժամանակ բազրը: Այն, ինչ ժամանակին արեց Ասրվաձորդին՝ Իր աշակերտներին կարգելով նաև ուսուցիչներ, այսօր այդ առաքելությունը շարունակում է Տայոց Եկեղեցին՝ մշտապես իր ուշադրության կենտրոնում պահելով հայ մանուկների կրթությունը և գիտության զարգացումը»,- ասաց Տայր Սուրբն իր խոսքում:

Վեհարանի հանդիսությունների դահլիճում հավաքված հանրակրթական դպրոցների ուսուցիչներին բարենաչող ուսումնական փարի մաղթեց նաև Կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանը: «...Ավանդույթ են դառնում այս հանդիսությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Խորհուրդը հենց սա է, որ Վեհափառ Տիրոջ հովանավորությամբ Մայր Աթոռը գնահատում է դպրոցը, կրթության մշակին, գնահատում է մանկավարժին: Եվ այդ նախաձեռնությունը, որ ցուցաբերվեց Մայր Աթոռի կողմից՝ մրցանակներ սահմանել ուսուցչի աշխատանքը գնահատելու համար, այս վերաբերմունքի արտահայտություններից է:

...Մենք հավաքվել ենք այսօր ոչ միայն արդյունքներն ամփոփելու համար, այլև խորհելու ուսուցչի մասնագիտության, կոչման մասին: Իսկ այդ կոչումն արժանի է ամենամեծ գնահատանքին ու հարգանքին»,- նշեց պրն Երիցյանը: ԿԳ նախարարը, անդրադառնալով ուսուցչի պատասխանատվու և դժվարին առաքելությանը, վստահություն հայտնեց, որ, արժանանալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ամենապարգավոր մրցանակներին և ստանալով Ամենայն Տայոց Կաթողիկոսի օրհնությունը, ուսուցիչներն առավել նախանձախնդրությամբ կկատարեն իրենց աշխատանքը:

Տանդիսության ընթացքում հայտարարվեցին մրցույթի վերջնական արդյունքները, և բառատունչորս ուսուցիչներ Ամենայն Տայոց Տայրապետից և նախարարից ստացան վկայականներ և դրամական պարգևներ:

Խրախուսական մրցանակների հանձնումից հետո ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքի խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսը: «Արդարև, կանգնած Թարգմանչաց նվիրական խորհրդի առջև՝ մենք պիտի անդրադառնանք և գի-

փակցենք, որ դաշտցում որքան որ կարևորություն պիտի ընծայենք գիտելիքի փոխանցման, նույնքան կարևորությամբ աշխարհանք պիտի ներդնենք հայորդու բարոյական անձի կերտման գործին, նրա հայաշունչ ոգու և քրիստոնեական բարոյական նկարագրի կերտման գործին, որպեսզի երաշխավորված լինի մեր կյանքը նոր ժամանակների մեջ, որպեսզի մեր ներկյան լինի ապահով ու գորեղ, և մենք հասարակության քայքայում ընթանանք առայ՛ջ՝ դեմք եկող ժամանակները մեր կյանքի և ապագայի»,- մասնավորաբար կշեց Նորին Սրբությանը: Հայոց Հայրապետը նաև իր գնահատանքը բերեց ԿԳ ևախարարին և ևախարարության պաշտոնությանը՝ սերտ համագործակցության և Եկեղեցուն գորակցության ու մատուցած ծառայության համար՝ կոչելով բարի իրագործումներով խանդավառել ու ոգևորել կրթության և գիտության հայ մշակներին, որպեսզի նրանք ևախանձախնդրորեն լծվեն հայ պատանու ու մանկան կրթության սրբազան գործին: Վեհափառ Հայրապետը, բերելով իր օրհնությունն ուսուցիչներին, մաղթեց, որ Աստված պահպանի իրենց քաջատողջ և երջանիկ՝ իրականություն դարձնելով իրենց բոլոր բարի իղձերը, որ նպատակաուղղված են Հայրենիքի շինությանը և ժողովրդի բարօր կյանքին:

ՄԱՅՐ ԱԹՈՒՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՄԱԿԱՐԳ

«ՆԱՅՈՅ ԵԿԵՂԵՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի նախագահությամբ և ՏՏ Կրթության և գիտության նախարար Սևրզո Երիզյանի մասնակցությամբ նոյեմբերի 16-ին Էրևանի Առևտրաբանական կոնգրեսի անվան համերկայանում փոփոխված ՏՏ և Արցախի հանրակրթական դպրոցների 4-10-րդ դասարանների «Տայ Եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքերի շնորհանդեսը, որին ներկա էին Տայաստանի թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՏՏ նախարարներ, օպարերկրյա դեսպանատների ներկայացուցիչներ, ուսուցիչներ և հրավիրյալներ:

Նոր առարկայի մուտքը հանրակրթական դպրոցներ վավերացվել էր դեռևս 2002 թվականին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի և ՏՏ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի կողմից ստորագրված համաձայնագրով: Այս փորձերի ընթացքում փուլ առ փուլ առարկան ընդգրկվեց հանրակրթական դպրոցների 4-10-րդ դասարանների ուսումնական ծրագրերում: Դասագրքերը սրելով են ՏՏ Կրթության և գիտության նախարարության կրթական ծրագրերի բարեփոխումների կենտրոնի մասնագետների ու Տայ Եկեղեցու մի խումբ հոգևորականների ջանքերով:

Ըստ ծրագրի, 4-րդ դասարանցիները ծանոթանում են Հին եւ Նոր Կտակարաններին, 5-րդ դասարանցիները՝ քրիստոնեական Եկեղեցու կիրառական համակարգին, ուղղություններին ու խորհուրդներին, ազգային-եկեղեցական փոփոխություններին: 6-8-րդ դասարաններում ուսուցանվում է Տայ Եկեղեցու պատմություն՝ առարկայական շրջանից մինչև մեր օրերը, 9-10-րդ դասարաններում քրիստոնեական բարոյագիտություն:

Հանդիսությունը բազմեց Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի փոփոխ Ս. Ղուկաս արք. Զաքարյանը: Դասագրքերի սրելովման անմիջական պատասխանատուներից է Սյունյաց թեմի առաջնորդ Ս. Արրահամ եպիսկոպոս Մկրտչյանը: Նա անդրադարձավ ծրագրի իրականացման գործընթացին: ՏՏ Կրթության և գիտության նախարար Սրբազան Տորր հանձնեց նախարարության բարձրագույն պարզեր՝ ոսկե մեդալը: Ծրագրի հանրակրթական նշանակության մասին խոսեց կրթական բարեփոխումների Ազգային ինստիտուտի փոփոխ Վիկտոր Մարտիրոսյանը:

ՏՏ Կրթության և գիտության նախարարը, անդրադառնալով աշխարհաբանական խնդիր կապարած հսկայական աշխարհագրին, իր երախարագիտությունը հայրենացի «Անհափառ Տայրապետին» Նորին Սրբության հայրական օրհնության, նախանձախնդրության և գործուն աջակցության համար:

«Մյուս րարի ավարտին են հասել աշխարհաբանը, դասագրքերը մեր առջև են, մեր դպրոցականների սեղաններին են: Տայաստանի անկախ հանրապետության հայ դպրոցը, նրա կրթական համակարգը անկարելի էր պարկերացնել առանց «Տայ Եկեղեցու պատմություն» առարկայի: Մեր կրթական համակարգը կլինեք թերի ու անկարար՝ առանց Տայ Եկեղեցու պատմության, որովհետև մեր

Եկեղեցու պատմությունը միայն կրոնական հասարակության պատմությունն է: Մեր Եկեղեցու պատմությունը մասն է մեր ժողովրդի պատմության, կրա ոգին, ամբողջական շաղախն է այդ պատմության: Այսօր մենք ուրախ ենք, որ մեր ժամանակների զավակները ճանաչում են ու հետաքննություն ունեն ճանաչելու մեր դավանանքի պատմությունը, մեր հայրերին ու հայրապետներին, իշխաններին ու քաղաքացիներին, կրթության ու գիտության, արվեստի լուսավոր գործիչներին, որոնք անդու աշխատանքով ու քրտինքով կերտվել է խորհուրդը հայոց պատմության, կերտվել է խորհուրդը մեր լինելության, մեր գոյության: Հայ Եկեղեցու պատմությունն անհրաժեշտաբար պետք է ուսուցանվի հայ դպրոցում, որպեսզի մեր ընթացքը միշտ Աստուծո՞ւ ճանապարհների վրա լինի, մեր կյանքի հույսը քրիստոնեական բարոյական արժեքները լինեն, որպեսզի միշտ ընթանանք Աստուծո՞ւ հետ, որովհետև պատմությանը վկայված է գիտեք, որ Աստուծոց հետևալ, կշահակում է հետևալ ազգությունից, կշահակում է հանձնել մեզ պատմության բնից անհետևալու վտանգներին»,- ելեց Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում:

Անհախառ Հայրապետն իր գնահատանքը հայրենց Կրթության նախարարությանը, դասագրքերի հեղինակներին, խմբագրակազմին, «Տիգրան Մեծ» հրատարակչական տնօրինությանը և այն բոլոր անձանց, ովքեր նպաստեցին դասագրքերի սրբեցմանը: Նորին Սրբությունը նաև մասնավոր իր բարձր գնահատանքը հայրենց բարերարներ՝ փրկին Լուիզ Մանուկյան Սիմոնին, ում ազնիվ նվիրավորությամբ հրատարակվել են 4-10-րդ դասարանների դասագրքերը, և Իրմա ու Սիլվա Տեր-Ստեփանյան բույրերին, ովքեր «Անասիա Տեր-Ստեփանյան հիմնադրամի» միջոցով հոգացին ուսուցիչների համար նախատեսված մեթոդական ձեռնարկների հրատարակումը:

Հանդիսության մասնակիցները դիմեցին նաև կրթական այս ծրագրի ներդրման մասին պարմող «Հոգևոր սերունդ» ֆիլմը՝ պարբարաված «Շողակաթ» հեռուստաընկերության կողմից: Ընդհանրապես ընթացքում իրենց համըզային կարարումներով հանդես եկան Հայաստանի հեագույն շնչական նվագարանների «Տկզար» պետական նվագախումբը և հեագույն երաժշտության «Տաղարան» համույթը:

ՄԱՅՐ ԱՊՈՒՄ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՂԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ԴԻՎԱՆԱՏԱՆ ՇԵՆՔԻ ՆԻՄՆԱՐԿԵՐԸ

Նոկտեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կարարվեց Մայր Աթոռի Դիվանատան շենքի հիմնարկերը, որ կառուցվում է ամերիկաբնակ փեր և փիկին Նազար և Արսենիս Նազարյանների ազնիվ բարերարությամբ: Շենքը նախագծել է ամերիկաբնակ մեծանուն ճարտարապետ Արմանդ Ավագյանը: Դիվանատան նոր շենքում են լինելու կաթողիկոսական գրասենյակները և Ամենայն Տայոց Կաթողիկոսության արխիվը:

Տանդիսավոր արարողության ընթացքում Մայր Աթոռի դիվանատանը Ս. Արշակ եպ. Խաչատրյանն ընթերցեց շենքի հիմնադրման հիշատակագիրը, որը Նորին Սրբությունը գեղեցիկ շենքի հիմքում:

Այնուհետև այս առիթով Ամենայն Տայոց Տայրապետին շնորհավորեց Ս. Տաթև արքեպ. Սարգսյանը՝ նշելով, որ այս կառույցը, ուր պիտի արձանագրվի և պահպանվի մեր Եկեղեցու պատմությունը, Վեհափառի իրագործումների մեջ կարևոր փուլ է գրավում ոչ միայն ներկայի, այլև ապագայի առումով:

Արարողությանը մասնակից հայորդիներին իր օրհնության խոսքն ու պարգամն ուղղեց նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը գոհունալությամբ նշեց, որ այս շինությամբ հնարավորություն է ընձեռվում հասարակական ու ազգային կյանքում, միջեկեղեցական, պետական ոլորտներում առավել ամրոցչական և արդյունավետ կերպով կազմակերպել ու իրականացնել Տայ Եկեղեցու առաքելությունը՝ ի փառս մեր ժողովրդի:

«...Մենք վերադարձինք փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ Տեղի առաքելորդում է մեր Եկեղեցու կյանքը դեպի տոր իրագործումներ՝ ի ծառայություն հավատարմոր մեր զավակների: Թող Տեղի Իր Աջը հովանի դարձնի Տայոց աշխարհի վրա, պահի և պահպանի ազգս հայոց սիրտ և միաբնակության մեջ և գոյացնի մեր մեջ հավատքը և ծառայասիրության ոգին՝ սևեմնացորդ ու սևսակարկ կեփրումով թերևոյ մեր ծառայությունը՝ որպես 1700-ամյա փառքի պատմություն կերտած Տայ Եկեղեցու արժանի սպասավորներ»,- ասաց Նորին Սրբությունը՝ իր գեհափարակը հայտնելով բարերարներին, շինարարներին ու բոլոր նրանց, ում ջանքերի շնորհիվ կառուցվում է այս նոր շենքը:

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆՈՒ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ**

ՔԱՐՈՉ ԽՈՍՄԱԿԱՆ

Տ. ՆՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ՆԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՉԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(6 նոյնբերի 2005 թ.)

«Մի՛ երկնչիր, միայն հաւաքա՛ւ ե կեցցէ՛»:

(Ղուկ. Ը 51)

Ավերարաններն ճառագայթող Քրիստոսի այս խոսքը բոլորիս կհաղորդն, սիրելի բարեպաշտ հավաքացյալներ, հավաքքի ճշմարտության ու անոր պարզեամ հոգևոր ներուժի մասին: Օրվա Ավերարանի դասը մեզի կպատմն հարյուրապետի մը դասեր մասին, որ լսած ըլլալով Տիտոսի՝ հրաշագործ բժշկություններու մասին, անձամբ անոր քով գալով կհնդրն, որպեսզի Ան գար և իր մահամերձ դուստրը բժշկեր: Ահա այդ միջոցին լուր կհասնի հարյուրապետին, որ իր դուստրն արդեն մեռած էր և իզուր էր հոգեցնել Վարդապետը:

Այս խոսակցության իրազեկ կղատնա Տիտոս և Իր վճռական խոսքը ուղղելով հարյուրապետին կպատասխանն և կըսն. «Մի՛ երկնչիր, բայց միայն հավաքա՛ւ»: Ապա Իր խոսքն ուղղելով հարյուրապետի տան մեջ հավաքվածներուն՝ նույնպիսի շնչով մը արթնության կհրավիրն ներկաները, որոնք կողբային հարյուրապետի դասեր մահը: Այնուհետն Քրիստոս փոստնն ներս ավելի առաջանալով կմտնենա հարյուրապետի դասեր, կրնն անոր ձեռքնն ու կըսն. «Արի կաց, մանուկ դու: Եւ դարձաւ ոգի նորա, և կանգնեցաւ վաղվադակի» (Ղուկ. Ը 55-56):

Օրվա Ավերարանի հոգևոր հացին հաղորդությամբ ինչպիսի սնունդ կատնենք, սիրելի բարեպաշտ հավաքացյալներ: Պարզ է, որ բոլորս ալ այս կյանքի մեջ կրախվինք որոշակի դժվարություններու, երբ հավաքքի կյանքին մեջ թուլացած ենք, ապա հուսահարությունը նան կդարձնենք մեր կյանքի բաժինը: Տիտոսի խոսքը «Մի՛ երկնչիր, բայց միայն հաւաքա՛ւ ե կեցցէ՛», որպես աղոթք արթնության հրավերի արձագանք կղատնա բոլորիս կյանքի մեջ, երբ մեր հոգևոր կյանքի ընթացքը շարունակարար կխմորվի ու կշտնմարանվի աղոթքով ու երբ փորձության պահը կհասնի, Տիտոս անգամ մը ալ նս կարձագանքն մեր հոգևոր աշխարհնն ներս, որպեսզի ամուր մնանք հավաքքի մեջ և նոր արշալույսին տեսիլքը ապրինք և ավելին, նույնը ներշնչենք մեր շրջապատին: «Մի՛ երկնչիր, բայց միայն հաւաքա՛ւ ե կեցցէ՛»:

Այս երևույթը բնականորեն իր արտահայտությունը կզգնն նան հասարակական կյանքի մեջ, երբ տխուր պարագաներ կղատնան բաժինը մեր կյանքին, երբ բնության արհափրթներ հույսը գրեթե արմաբախիլ ընելու չափով կտկարացնն մարդը, բայց կրկին հավաքքի կյանքն ապրող մարդն է, որ կյան Քրիստոսի ուղղած խոսքը ոչ միայն հարյուրապետի դասեր, այլն բոլորի. «Արի կաց, մանուկ դու»:

Մարդկությունն այսօր պետք է իր հոգևոր էության խորքին արմաբացած պահն Քրիստոսի այս խոսքերը, որովհետն անոնց պատճառած արթնությամբ մեր մեջ կլուսավորվի այն գիտակցությունը, որ հրաշքները հարաժամորեն կձնին մեր էության մեջ վերապրած

կյանքի ընթացքին ու շրջապատին մեջ: Կուն սակայն, որ մենք մեր հոգու աչքերը բանանք և զգանք, որ մեզի հենք բայրողը Քրիստոս է, որ կհաստատվի մեր մեջ հավատարմի գործությունը և խրոխտ կկանչե. «Արի կաց, մանուկ դու»:

Այսօրվա Ավետարանի կանչը այս կամ այն ձևով ժողովուրդներու կյանքի մեջ կդրսևորվի, ան անընդհատ կրկնված է նաև մեր ազգի, Եկեղեցվու կյանքին մեջ, երբ սև սուր անպեր ծածկված են հայոց երկինքը, բայց միշտ այ նախախնամող Աստված Իր հավիտենական խոսքով առավել կյանք է ներարկված մեր նախնյաց հոգևոր կյանքի մեջ և լսելի է դարձուցած Քրիստոսի խոսքը. «Մի՛ երկնչիր, բայց միայն հաւարա՛ եւ կեցցէ»:

Այսօր մեր կյանքի մեջ ամեն րեղ կհանդիպինք հարյուրապետին և իր դպրեր պարագան ներկայացնող երևույթներուն, ուր ծառան է, որ հուսահատ վազելով կուզա հարյուրապետին, որպեսզի իգուր չհոգնեցնե վարդապետին և կասեցնե անոր այցելությունը: Գիտենք սակայն Քրիստոսի պարասխանը, որայն ենք նաև անոր համար, որ Տայասարանյայց Առաքելական Եկեղեցվու կյանքին մեջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն կճառագայթե Քրիստոսի Ավետարանին պարզամբ անթիվ գործերով, որոնք գործնական արտահայտությունն են Քրիստոսի խոսքին. «Մի՛ երկնչիր, բայց միայն հաւարա՛ եւ կեցցէ»:

Քրիստոսի այս խոսքը, սիրելի Անհափառ Տայրապետ, Դուք դարձուցած եք Ձեր սրբի աղոթքը, այս աղոթքով գահակալության Ձեր առաջին օրերը սկսած աներկուղ ու անկշռելի հավատքով, նոր կյանք կներշնչեք բոլորիս և ի պարասխան Ձեր անհարնում հավատքով ու եռանդով ծավալված առաքելության Քրիստոս կխոսի բոլորիս, ինչպես խոսեցավ հարյուրապետի դպրեր:

Ավետարանը կպարզամբ նաև մեզի այն մասին, որ հարյուրապետի դուստրը ուրի կանգնեցավ և նոր կյանքով լցվեցավ և «դարձա հոգի նորա ու կանգնեցա վաղվադակի»: Այս խոսքը կվերաբերի մեզի, եթե կսիրենք Տայասարանյայց Առաքելական Եկեղեցին, որուն ճնշողավայրն է Սուրբ Էջմիածինը, ապա պարբ ենք համախմբվիլ ազգիս Անհափառ Տայրապետի շուրջը, գորացնելու անոր բազուկների ուժը, որպեսզի առավել բարձրական դասու Տայասարանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցին ի Տայասարան, հԱրցախ և ի Սփյուռս աշխարհի:

Անհափառ Տայրապետ, այս օրերուն կրոնախմբենք Ձերո Սրբության՝ Լուսավորչի գահին բարձրանալու վեցերորդ փարեդարձը: Բոլորիս աղոթքն է, որ Ձեր հայրապետական մականը մնա ծաղկալ, և Դուք շար երկար փարիներ քաջատողությամբ ու նորանոր իրագործումներով Տայասարանյայց Առաքելական Եկեղեցվու նավը առաջնորդեք դեպի առավել բարձունքներ:

Ձերո Սրբության առջև դրված կան բազում անհերքելի հարցեր ու ծրագրեր, բայց Դուք այդ բոլորին անվարակույս պիտի փոկաք, քսնզի Ձեր սրբին մեջ կարճագանքն Քրիստոսի խոսքը. «Մի՛ երկնչիր, բայց միայն հաւարա՛ եւ կեցցէ»:

Ձերը պիտի ըլլա նաև իրավունքը վայելելու Եկեղեցվու հոգևոր վերագարթոնքը, և մեր ժողովուրդն ականջ կուրա Քրիստոսի պարզամբին. «Արի կաց, մանուկ դու»:

Ձերո Սրբության գահակալության վեցերորդ փարեդարձի առիթով մենք անգամ մը նա Ձեզի կրնենք որդիական մեր ջերմ սերն ու հավատարմությունը, մեզի կճայնակցին նաև Արևմտյան թեմի թեմական խորհուրդի անդամները, որոնք այս օրերու, ուխտավորաբար և Ձերո Սրբության հրավերով նաև վարչական պարտականություններով կգտնվին այսօր: Սա պահուն, սիրելի Անհափառ Տայրապետ, սրբի պարբը կզգանք հանուն Արևմտյան

թեմի հոգևորականաց, թեմական խորհուրդին և ողջ հավաքացեցող մեր երախտագիրական զգացումները փոխանցել Ձեզ՝ Ձեր քանի մը ամիսներ առաջ Արևմտյան թեմ կաթարած հովվապետական այցելության համար, որուն սրելուամ խանդավառությունն ու հորգևոր երախտությունը հավաքքի վերամնուողին առաջնորդող նոր սկիզբ դարձավ բոլորիս համար:

Միրելի հոգևոր եղբայրներ և բարեպաշտ հավաքացյալներ, հունիս ամսվա առաջին քսան օրերը Նյուսիսային Ամերիկայի թեմի, Արևմտյան թեմի Տայաստանայաց Էկեղեցվո գավակաց համար դարձան սրաբնական: Տայոց Տայրապետ, որպես զլուխը Տայաստանայաց Առաքելական մեր Մայր Էկեղեցվո, Սուրբ Էջմիածնի հավաքքի բուրայեն կրակ բնայոյ մեզի, որպեսզի հեռավոր Ամերիկայի ախերուն ապրող մեր ժողովուրդի գավակներու սրբին մեջ անթելված հայրենական սերն ու Էկեղեցու հանդեպ հավաքարմությունը կայծ ստանար: Տայոց Տայրապետին սրբուն բխող սիրտ կրակին մեջ մենք զգացինք, Ահապատ Տեր, Ձեր սիրտ չափն ու սրբին գարկը:

Տայրապետական իր ուղևորության ընթացքին Տայոց Տայրապետին պարգամներուն մեջ անընդհար կպարկերվեին Տայրենիքն ու Սուրբ Էջմիածինը: Տայոց Տայրապետի օրենարեր և շնորհարաշխ այցելությունը Արևմտյան թեմեն ներս հաստարեց պարմական նոր հանգրվաններ բոլոր մակարդակներու վրա, ըլլա եկեղեցական, ըլլա հայրենասիրական, քաղաքական և ընկերային սարգերեն ներս: Օրենվեցան հիմքերը Առաջնորդանիսք եկեղեցվո և շար ծխական եկեղեցիներու: Տայրապետական Պարարագներով ու ժողովրդական բազմություններուն ուղղված իր խոսքերով Տայոց Տայրապետն իր գավակներուն հորդորեց գործնապես նվիրվիլ Տայրենիքին և Սուրբ Էջմիածնին: Ի պարասխան այս բոլորին, սիրելի Ահապատ, այսօր, երբ մենք կրունախմբենք Ձերդ Սրբության գահակալության վեցերորդ արեղարձը, մեր մեծագույն նվերը Ձերդ Սրբության պիտի ըլլա առ Աստված վերարժեկորված հավաքքի մեր կյանքը և հավաքարմությունը ղեկավ Սուրբ Էջմիածինը և ղեկավ Ձերդ Սրբությունը:

Ձերմ սրբով, բարի մաղթանքներով գոհարանական աղոթք մը կվերատարենք առ Աստված Ձեր կյանքի քաջատոյությունն ու նրկար արինների հովվապետական ծառայության համար: Տայոց Տայրապետի գահակալության արեղարձի այսօրվան Սրբագան Պարարագին ընդմեջեն ծառայության ուխտը նոր ուխտի հրավեր մըն է բոլորիս համար, Պարարագ մը, որ կդառնա մեր կյանքի հայելին, որուն առջև կանգնած կրեսներն և կզգանք Աստուծո ներկալությունը, և նրն նսնմագած է մեր մեջ հավաքքի ուժը, այն ժամանակ հայելիի մեջեն յույսի ճառագայտումը կդառնա Քրիստոսի պարգամը. «Մի՛ նրկնչիր, բայց միայն հաւարա՛ն կեցցե՛»:

Աներկուղ պահենք մեր հավաքքը, մանուկին նման անստանք Քրիստոսի այս խոսքին և ապա մեր մեջ պիտի գրենք վերակերտումի ոգին ի խնդիր Տայաստանայաց Առաքելական մեր Մայր Սուրբ Էկեղեցվո և ի բարգավաճումն Սուրբ Էջմիածնի և ուրախություն մեզ և Ահապատ Տայրապետին այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից:

«Շնորհք, սիր և խաղաղություն եղիցիս ընդ ձեզ և ընդ ամեննեւեսեսայ. ամէն»:

**Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(2 հոկտեմբերի 2005 թ.)

«Ոչ կարևոր ինչ հակառակ կայ ճշմարտությանն, այլ վերակացու ենք ճշմարտությանն»:

«Չենք կարող հակառակ գնայ ճշմարտությանը, այլ պաշտպան ենք ճշմարտությանը»:

(Բ Կորնթ. ԺԳ 8)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Տօրոյն Սրբոյ, ամեն»:

Ճշմարտություն: Որքան առաձգական, որքան անհստակ է հնչում այն այսօրվա մարդկանց շրթների: Որքան անողոջ ընկալումների և հասկացողությունների րեղիք է փախս այս մեկ բառը: Յուրաքանչյուր անձ մեկ հասկացություն է դնում «ճշմարտություն» բառի փակ, բայց միաժամանակ՝ որքան պարզ, որքան հստակ, որքան մեկին է այն Պողոս առաքյալի շրթների: Տեթանոսաց առաքյալ է, որ վստահորեն, առանց երկմտության հայտարարում է. «Ոչ թե ճշմարտությանը հակառակորդ ենք, այլ ճշմարտության պաշտպաններն ենք»:

Այս էր առաքյալի պարզամը Տունաստանի քաղաքներից մեկում Կորնթոսում ձևավորված քրիստոնեական համայնքին, մի քաղաք, որը այդ ժամանակաշրջանում հայրենի էր իր վկայությամբ, ուր իր այցելություններով Պողոս առաքյալը ձևավորել էր քրիստոնեական առաջին համայնքը, ուր նաև մի շարք անձեր հայրենի էին իրենց ջերմնոտանդ բարեպաշտությամբ, ջերմնոտանդ վկայությամբ հանդես մեր Տեր Տիսու Քրիստոսը: Մակայն ժամանակի հոսանքները, ժամանակի թյուրընկալումները շփոթ էին առաջացրել այս համայնքում:

Քրիստոնեյա եղբայրների միջև վիճարկություն էր ծագել, և Պողոս առաքյալը Տիրոջից ընծայված բացարձակ հեղինակությամբ վերստին կոչված էր հարթեցնելու Կորնթոսի համայնքում հերձված դատնալու: սպառնալուցող վիճակը: Ի՞նչ էր նրան մեղադրում են, թե ինքը ոչ այնքան վճռական է, նա պարասխանում է. «Քավ լիցի, որ ես իմ իշխանությունը գործադրեմ քանդելու համար, որովհետև իշխանությունը ինձ տրվեց ոչ թե քանդելու, այլ կառուցելու, որովհետև ես ճշմարտության հերոսորդն եմ և ոչ թե հակառակորդը, և եթե ճշմարտությունը ինքնաբերաբար կարող է հաստատվել ձեր համայնքից ներս, ես ուրախ կլինեմ, եթե չօգտվեմ իմ այդ իշխանությունից»:

Ահա այս է այսօրվա Սուրբ Գրոց պարզամը՝ քաղված Պողոս առաքյալի՝ կորնթացիներին ուղղված երկրորդ նամակից, սիրելի հավաքագյալներ, որ մարտիցվեց այսօրվա

Սուրբգրային ընթերցվածների միջոցով ամենքիս խորհրդածությանը: Եվ հակառակ որ բազում անգամներ հնչել է «ճշմարտություն» բառը, այսօր պարամության սկզբնավորման ակունքներից սկսյալ փակավիճակի հստակ չէ, որոշ չէ «ճշմարտություն» հասկացության ընկալումը, բացարձկան մարդկանց մտածումների, ընկալումների մեջ:

Նույնպե՛ս այլևս իրենց կանխում փոքր գրամ անբարոյական դրսևորումներից, մարդկային հարաբերությունների մեջ փոքր գրամ անընդունելի երևույթներից, երբ արդեն անկալակի էր դարձել այդ հարաբերությունների մեջ նշմարել անգամ ջերմությունը, ազնվությունը, անկեղծությունը, շիտակությունը, իհն հոռուսացիները հակված էին ենթադրելու, որ ճշմարիտ էր միայն մեկ բան, որ ոչինչ ճշմարիտ չէ: Եվ սա ընտրոշ էր հոռեպետական այն փրամագրություններին, որով պայմանավորված էր մթնոլորտը, միջավայրը, բարոյական իրավիճակը մարդկության այդ ժամանակաշրջանի պարամության:

Տիև հույները ճշմարտությունը կապում էին գեղեցկության հետ, ոմանք կապում էին ուժի հետ՝ ուժը հայտարարելով ճշմարտության բացարձակ և միակ աղբյուր: Անցան ժամանակներ, և սակայն ո՛չ ուժով, ո՛չ գեղեցկությամբ և ո՛չ կյուծական արժեքներով անկարելի նդավ հաստատել ճշմարտությունը աշխարհի վրա: Այսօր՝ Քրիստոսի գալուստից երկու հազար փարիներ հեկու, փակավիճակի արդիական է, փակավիճակի այժմեական է այն հարցը, որը Քրիստոսին փվեց այն կուսակալը, որը հայրելի է իր չեզոք, անդեմ, անևկարագիր կեցվածքով, որին պարամությունը հիշում է Պիղատոս անուևով:

Քրիստոսին երբ փարան իր մոտ, ես հարցրեց, «Արդո՞ք դու թագավոր ես»: Քրիստոս պարասխանեց. «Ես չասացի, դու ասացիր, որ Ես թագավոր եմ, և Ես եկել եմ ճշմարտությունը ներկայացնելու»: Եվ այստեղ Պիղատոս հնչեցնում է հարցումը, որ զարեք շարունակ հուզել է բարոյախոսների, իմաստասերների և ընդհանրապես մարդկանց: Ինչ է ճշմարտությունը: Առաջին հայացքից մեներ, Ավևարանի մեջ չգրեկելով Քրիստոսի պարասխանը այս հարցումին, փարակուսանքի մեջ եներ հայրելվում: Արդոյր Քրիստոս Ինք ես չգիտե՛ր, թե ինչ է ճշմարտությունը: Բայց Ավևարանին, Սուրբ Գրքին համապարփակ իմացությունը միանշանակ պարասխան է փայխ այս հարցումին. «Ես, Ես եմ ճշմարտությունը և Ճանապարհը»,- պարասխանում է Քրիստոս: Եվ Իր կեցվածքը՝ լուռ, խոնարհ, հեզ կեցվածքը Պիղատոսի առջև ընդամենը հանդիմանություն էր՝ «կանգնում ճշմարտության առջև ճշմարտությունն ես փևփրում, լույսերի մեջ մո՛մ ես վառում»:

Ճշմարտությունը խաղաղություն է: Երբեք ու երբեք ճշմարտությունը հաստատվելու համար բոկի ուժի, բոևության, կուպության կարիքը չուկի: Ճշմարտությունը ի գորու է ինքը իրեն հաստատվելու, որովհետև ճշմարտության աղբյուրը Ինքը Աստված է, իսկ Աստված խաղաղության իշխան է: Երբ մարգարեն Աստծուն պիտի փեսներ, նրա առջևով հսկա փոթորիկ է անցնում, և Սուրբ Գրքում ասվում է, որ Աստված այնտեղ չէր: Ներևում է ավելի հզոր մի փոթորիկ, և վերստին պարզվում է, որ Աստված այդտեղ ես չէր, դրան հաջորդում է մի մեղմ գեկիտու, մեղմ քամի, հանդարտ մի քամի, և մարգարեն ասում է, որ ահա Աստված այդ հանդարտության, այդ խաղաղության մեջ էր:

Երկրորդ՝ ճշմարտությունը ծառայության մեջ է: Տեր Տիտու Ինքը ասաց. «Ես չեկա սպասավորությունը ընդունելու, այլ եկա սպասավորություն կարարելու, և ես, ով ցանկանում է մեր մեջ մեներ լինել, պարարավոր է առաջին սպասավորը լինել»: Ուրեմն ճշմարտու-

յան արտահայտման եղանակը սպասավորությունն է, ինքնագոհողությունն է և ծառայությունն է:

Էրրորդ՝ ճշմարտությունը չի կարող հարաբերվել աշխարհային պայմանականությունների հետ, մեկ մարդ չի կարող իրեն կաշկանդել աշխարհային կապերով, կյուրական արժեքներով և հավակնել, որ ճշմարտության ջարագով է:

Նաևորոս առաքյալը կշում է, որ բոլոր պարզևները, բոլոր նվերները մեզ ընծայված են Տիրոջից: Անա մենք ճշմարտության ջարագով, հեկոող, պաշտպան կարող ենք լինել այն ժամանակ միայն, երբ ընդունենք երկնքից եկած պարզևները, երկնքից եկած բարենասությունները, բարոյական արժեքների, հոգևոր արժեքների կրողը և զարգացնողը լինենք:

Չորրորդ՝ ճշմարտությունը անաչառ է, մերկ, չարչարված, ինչպես այն հաստատողը, փշե պսակով, ինչպես Քրիստոս երբ խաչափայտը բարձրացավ, բանգի ճշմարտությունը աչառություն չունի: Ճշմարտությունը աշխարհային կաշկանդումներով կապկպված և պայմանավորված չէ: Ուրեմն պիտի գնանք, սիրելի՛ հավաքացյալներ, ճշմարտությունը այս չորս բարենասությունների միջոցով հաստատելու ճանապարհով: Պիտի գնանք, պիտի ընթանանք ծառայության, պիտի ընթանանք անաչառության, պիտի ընթանանք աշխարհային կապանքներից ձերբազատվելու և խաղաղության հաստատման ճանապարհով, որպեսզի կարողանանք իրական ճշմարտությունը, Տիրոջ ավանդած ճշմարտությունը հաստատել այս աշխարհի վրա, և այն ժամանակ միայն կարող ենք հոչակել Պողոս առաքյալի նման, որ մենք ճշմարտության հակառակորդները չենք, մենք ճշմարտության սպասավորներն ենք, համեստ և խոնարհ սպասավորները: Եվ մեր այս սպասավորության մեջ թող օրինի մեզ Տերը, օրինի մեր ընթացքը այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն:

**Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԵՂԱ ՄԱՅԻԼՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(9 հոկտեմբերի 2005 թ.)

«Ամեն ասան ձեզ, զի այրին այն րատուապեայ՝ շար արկ քան զամենևնեան որ արկին ի գանձանակն, քանզի ամեննքին յաւերդոյաց իրեանց արկին, այլ եւ ի ջրաորոթենէլ իրմէ զամենայն ինչ զոր ունէր արկ, զոյի յափ զկեանս իր»:

(Մարկ. ԺԲ 43-44)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, ամեն»:

Միրելիներ, այսօր՝ Սուրբ Խաչից հետո հիևզերորդ կիրակիին, Եկեղեցու Տայերը Ս. Հովհան Ռսկեբերանից սկսած այս ընթերցվածն են կարգել որպես Ճաշու ընթերցված Ս. Պատարագին ընթերցելու: Ահավասիկ տեսնում ենք, որ մեր Տեր Հիսուս Քրիստոս Էրուսաղեմ բարձրանալուց և րեօրինական ամբողջ խորհուրդը լրացնելուց առաջ օգտագործում է ամեն մի առիթ՝ փրկության խոսքը, փրկության ավերիսը փոխանցելու մարդկանց և կրանց սովորեցնելու ճշմարտության ճանապարհը: Եվ ահավասիկ րաճարի մեջ կանգնած, գանձանակի առաջ, Հիսուս դիպում էր, թե ինչպես յուրաքանչյուր ուխարավոր գալով իր յուման էր ընձայաբերում րաճարին՝ լինի դա դրամ կամ որևիցե ընձա:

Տերը տեսնում է, որ գալիս է եան մի այրի կին, որը գանձանակի մեջ գցում է միայն երկու յումա: Եվ Տերը, կանչելով իր աշակերտներին, ասում է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ ջրավոր այրին ավելի շար գցեց գանձանակի մեջ, քան մյուս բոլոր դրամ գցողները, քանի որ ամենքը իրենց ավելորդից գցեցին, իսկ եւ իր ջրավորությունից, գցեց ամեն ինչ, որ ուներ իր ամբողջ ապրուստը»:

Այստեղ Տերը ուղղակի առարկայական օրինակով է խոսում իր առաքյալների հետ, որիչ անգամներ առակներով խոսեց նրանց՝ առակներով փոխանցելով այն ճշմարտությունը, որ թարված է առակների մեջ: Այստեղ Հիսուս ասում է, որ այդ այրի կինը ավելի շար գցեց, քան մյուսները: Ինչ է սա կշանակում, և ինչ կարող ենք ուսանել այս դեպքից: Հարկավ՝ առաջին բանը, որ մեր մտքից անցնում է, դա գոհողությունն է: Ինչ րեսակ գոհողություն, ինչպե՛ս մարդ կարող է հասկանալ գոհողությունը առանց ճշմարիտ հավարքի, առանց այն հավարքի, որ հիմնված է միայն ճշմարտության վրա, որ է՝ Քրիստոս: Այդ գոհողությունը, սիրելիներ, պահանջում է առաջին հերթին ճշմարիտ հավարք: Հավարքը, իհարկե, աստվածային շնորհ է, առաքիլություն, որ Աստված է մեզ պարգևում: Սակայն Աստված ընդատաջ է գնում մեր խնդրանքներին, ինչ որ խնդրում ենք մաքուր սրտով, ան-

կեղծ հավաքով, այն է, որ մեզ փոխանցում է, և ինչ որ մեր սիրտը փափագում է ուրիշներին անելու, այն է, որ մեզ փոխանցում է:

Այրի կնոջ այս բնձան չնչին բան էր, եթե առարկայական իմաստով վերցնենք, որպես դրամ, սակայն Տերը չգովեց նրա դրամի չափը, այլ նրա հոգով և սրտով մտքենայր փաճարին, նրա ամբողջ կեցվածքը փաճարի նկարմամբ, նրա հոգին ամբողջ, սիրտը, և թերևս ուրիշ անգամ լսել էր Քրիստոսի խոսքը, որ ասում էր. «Ով որ հեղնում է Ինձ, պեպք է թողնի ամեն բան, զա Ի՛մ հեղնից» կամ «պիտի սիրես քո Տեր Աստվծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով և քո ամբողջ զորությամբ»:

Միրելիներ, այրի կնոջ այս պարզ օրինակը, որի միջոցով Տերը մեզ փրկության խոսքն է փոխանցում մեր կյանքի, մեր կյանքի ամեն վայրկյանի, ամեն պարագայի, մենք հանդիպում ենք ոչ միշտ անպայման դրամի միջոցով, դա կարող է լինել սերը մեր մտքերիսի նկարմամբ, դա կարող է լինել տարբեր տեսակի գոհողություններ, չբամբասելը մեր սմանին, այն ամենը, ինչ որ կա մեր կյանքի մեջ, ինչ որ կա մեր հասարակության մեջ, ինչ որ մարդ հավաքը ունենալով, ճշմարիտ հավաքը, Նիսուսի և Սուրբ Եկեղեցու պարզամտները կարող է իր կյանքի մեջ իրագործել, իրականություն դարձնել և օրինակ լինել նրանց, որոնք թերևս ամեն վայրկյան նայում են իրեն, իրենից օրինակ վերցնելու:

Քրիստոսի պարզամտ բոլոր պարագաների մեջ մեկն է, ինչպես արդեն Տին Կրակարանից շեշտվում է այս խոսքը, այս նախադասությունը, որ «Սուրբ եղևք, որովհետև էս սուրբ են»: Այս սրբության ճանապարհն է Տերը մեզ ցույց տալիս տարբեր օրինակներով և ահա ես մեկ օրինակով, այրի կնոջ այս լուսայով, այս բնձայաբերումով Տերը ցույց է տալիս ամբողջական գոհողության և նվիրաբերման իմաստը:

Միրելիներ, հավաքի այս խորհուրդը, այս ճշմարտությունները մենք խոստովանում ենք և խոստովանում ենք կարարել Սուրբ Մկրտության ժամանակ, երբ որ ի պարասխան քահանայի հարցումին, եթե մենք հասուն տարիքում ենք մկրվում, իսկ եթե ոչ, կնքահորն հարցնում է քահանան՝ կնքահայր, ի՞նչ ես խնդրում, և կնքահայրը պարասխանում է՝ հավաքը, հույս, սեր և մկրություն: Նավաբքը, սիրելիներ, առանց ճշմարտության հավաքը չէ, իսկ ո՛վ է այդ ճշմարտությունը: Այդ ճշմարտությունը անձնավորված Աստված է, այդ ճշմարտությունը մարդ դարձած Նիսուս Քրիստոս է, Աստվածորդին է, որ Աստված բնձայաբերեց, չխնայեց Իր միածին Որդուն, ինչպես Նովիանեսն ավերարանիչն է ասում, և նրան փվեց աշխարհի փրկության համար: Այդ հավաքի պարագալուխը Տերը Ինքն է:

Մենք մեր հավաքը չենք կարող ոչ մի բանի վրա հիմնել, բացարձակապես ոչ մեկ բանի վրա, ոչ մեկ անձի վրա, ոչ մեկ եղելության վրա, բայց միայն այն ճշմարտության վրա, որ հենց Ինքն է՝ Նիսուս Քրիստոս:

Այդ հավաքի իրագործողները, այդ հավաքը կենդանություն դարձնողները բոլոր այն առաքելաշափղ հայրերն են, այն սուրբերն են, այն նվիրյալներն են, ովքեր այդ հավաքը իրականացրեցին, առարկայացրեցին իրենց կյանքի մեջ: Ընդամենը երեկ էր, որ մենք փոնեցինք Սուրբ Թարգմանիչների փոնը: Ի՛նչ էր, թերևս, Սուրբ Մեսրոպի արածը, եթե ոչ՝ այդ երկու լուսայի հավաքի չափը, ամբողջ սերն էր, ամբողջ նվիրումն էր, ամբողջ գոհողությունն էր, առաջինը՝ Տիրոջը, և երկրորդը՝ այն ազգին, որին նվիրաբերված էր, բնձայաբերված էր Քրիստոսի պարզամտ փոխանցելու, հայացնելու, հայաշունչ դարձնելու:

Տարկավ, դեպքերի բերումով մարդ կարող է երբեմն սխալ գործել, մարդ կարող է հեռու-հեռ այս երկու յումայի չափի հավաքքից, սակայն Ասրվամ մեզ միշտ կանչում է, Ասրվամ մեզ միշտ սիրում է: Ինքը սեր է, և այդ սիրով մեզ կանչում է ամեն անգամ Իր առջև կանգնելու և այդ կնոջ հավաքքի չափ մեր բնման մաքուցելու, լինի դա աղոթք, լինի դա ողորմություն, լինի դա պահեք կամ որևիցե մեկ բան, որ Քրիստոս Ինքը սովորեցրեց, որ մեր հայրերը փոխանցեցին մեզ:

Ճշմարիտ գոհողությունը, հարկավ, ամեն պարագայի Ասրվամորդին Ինքն է, որ բարձրացավ խաչը, սակայն չմնաց խաչի վրա, հարություն առավ և այդ հարությամբ մեզ բողոքացավ խաչը, սակայն չմնաց խաչի վրա, հարություն առավ և այդ հարությամբ մեզ բողոքացավ առաջնորդեց այնպեղ, ուր որ փափագն է յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյայի՝ հասնելու հավիրենական կյանք: Այդ հավաքքն է, որ Քրիստոս յուրաքանչյուր մեկ պարագայի միջոցով, Իր կյանքի յուրաքանչյուր առիթով եկավ մեզ սովորեցնելու, թե ինչպես կարող ենք փրկվել:

Սիրելիներ, իմ մաղթանքն է, իմ աղոթքն է, որ Տերը ճշմարիտ հավաքքի ճշմարիտ գոհողությունը պարզևի յուրաքանչյուր մեկիս, որ կարողանանք այն շնորհները, այն պարգևները, որ Ասրվամ մեզ տվել է, գորացնենք և առավելով բնմայաբերենք Իրեն, չլինենք այն ծառայի նման, որ բնդունեց պարզևր և փարավ-թաքցրեց: Ոչ: Այլ վերցնենք այդ պարզևր և այն արդյունավորենք ու բազմապարկենք:

Ամենաթանկ բանը մարդու համար կյանքն է, որ երբևէ մարդը կարող է բնմայաբերել, և Քրիստոսից բացի, մեր հավաքքի Պարագլուխից բացի ուրիշ մեկը չունենք ճշմարիտ առաջնորդ, որը կարող է հասցնել մեզ փրկությանը, ըղձացված և մեր կյանքի ողջ բերացքում փափագված ճշմարտությանը: Մաղթանքս է, որ Տերը այդ գոհողության հավաքքը, այրի կնոջ այդ երկու յումայի հավաքքը անպակաս դարձնի յուրաքանչյուր մեկիցս, որպեսզի ավելացնենք դա, գորացնենք և լինենք Քրիստոսի նման և կարարենք Քրիստոսի՝ մեզ պարզամամ գործերը:

Աղոթում եմ, որ Տերը մշտապես քաջատոջ և նվիրյալ ու բնմայաբերյալ պահի ամենքիս, և միշտ այրի կնոջ երկու յումայի հավաքքը ողնկցող լինի մեր ողջ կյանքի բերացքում:

«Շնորհք, սէր և սափրումային իսաղաղութիւն ւղիցի ընդ ձեզ և յւոյ ամենևնեանս. ամէն»:

**Տ. ՏԱՐՈՆ ԱԲԵՂԱ ՂՈՒԼԻԿՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ՆՈՒՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՅՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(6 նոյեմբերի 2006 թ.)

*«Զքևն գոհակասք հակասպագ, որ զանց
արասրէր զմերով սևարժանութեանքս, այս-
պիսի սեհաոր ևս սևսպարում խորհրդոյց կար-
գեցէր սպասասորս»:*

(Պատարագամարոյց)

«Յանուն Տօր ևս Արդոյ ևս Տօգոյն Արդոյ, ամեն»:

Միրելի՛ հավարացյալներ, Պատարագամարոյցի այս բառերն էին ինձ ոգեշնչում Մուրր Պատարագի ընթացքում: Շուրջ քառասուն օրեր առաջ՝ Վարագա Մուրր Խաչի րոնիկ, որ րոնախմբվեց սեպտեմբերի 25-ին, Մայր Աթոռ Մուրր Էջմիածնի Մայր Տաճարում, Իջման Մուրր Անդանի աօջև, օժակից վեց նղրայրներին հնար, ձերաղիր, կոչվեցինք քահանայութեան, ուխտըցինք վերցնել մեր խաչը և գնալ Քրիստոսի հնարնից, լինել Տայոց առաքելախիմն և լուսավորչաասարար Մուրր Եկեղեցու արժանի մշակներ՝ «առանց ամօթոյ»: Չեռևարութեանը հաջորդեց քառասնօրյա պահնգողութեան շրջանը՝ Մայրավանքի հինավուրց ու դարարոյր պարերից ենք:

Ահա այսօր, որպես լրումն այդ քառասուն օրերի, Մուրր Տայրերի աստվածաշնորհ րեծօրինությունը, մեր անդրանիկ և ուխտի Մուրր Պատարագն ենք մարտուցում առ Աստված կանչելով. «Մուրր, Մուրր, Մուրր Տէր գօրութեանց, լի են նրկինք ևս նրկիր փառօք Քո» (Պատարագամարոյց):

Այսօր, ի նշան մեր սկսվող քահանայագործման, ձնկի ենք զալիս Աստծու, բոյոր Մրբերի և Չեր աօջև, սիրելի՛ հավարավոր ու բարեպաշտ ներկաներ, վերստին նորոգում ու վերարձարծում ենք մեր ուխտը, քանզի «մերկանալով հին մարդուց և հագնելով նորը»՝ մենք խոստացանք օրինակ լինել «հավարացյալներին խոսքով, վարմունքով, սիրով, հավարով, մայրութեամբ» (Ա Տիմ. Գ 12), զի պարվիրվեց մեզ «Աստծու խոսքն ընթերցել, հորդորել և ուսուցանել հավարացյալներին», զանց չառնել «այն շնորհի, որ րրովեց մարգարեութեամբ նրեցների ձեռնադրումով» (Ա Տիմ. Գ 13-14):

Չեռևարության Մուրր խորհրդով Աստծուց ոչ միայն մեզ բաշխվեցին Մուրր Տօգու շնորհները, րրովեց նվիրապերական կարգ, նրկնային իշխանություն՝ յոթը խորհուրդներն ի կարար աճնելու, մեր Տիրոջ՝ Տիսուս Քրիստոսի փրկագօրծությունն ամենուր վարդապետելու և հուսո գավակներին քրիստոսահասարար կյանքի պարզեարտ շավիղներով րոնելու, այլև Քրիստոսի Ավերարանը քարոզելու, ուսուցանելու և ժողովրդին ապաշխարութեան կոչելու, հավարավոր հոբին քաչ հովիվ լինելու և նրան դեպի խաղաղ նավահանգիստ առաջնորդելու համար:

պարզվիրանը՝ այդքան ծանր չի թվա, որովհետև կհասկանանք նաև, թե ինչ է ուզում մեր Տերը մեզնից: Ուրեմն՝ նախ և առաջ կամենալ, գանկանալ է պետք: Ինչ է Տերը ուզում մեզանից, նոր մենք կամենում ենք Իր հետ լինել: Ուզում է, որ ուրանանք մեր անձը: Ինչ է նշանակում անձն ուրանալ: Անձն ուրանալ քրիստոնեական հասկացողությամբ մեր Տիրոջ՝ մեզ փոխանցած պարզամի մեջ շար հարակ է. նշանակում է նախ և առաջ ապրել ուրիշների համար, նախ և առաջ ապրել՝ ուրիշներին բարիք պարզանելու համար, ուրիշներին սեր, շնորհ փոխանցելու համար, դիմացինի մասին ավելի շար մտածել, քան՝ սեփական անձի: Այս է անձն ուրանալը: Դիմացինի մասին հոգ փանելով՝ դիմացինն էլ կհոգա մեր մասին: Դրանով փինգերական ներդաշնակությունը, որ խախտվել էր մարդկային մեղքի պարճատով, վերստին կհաստատվի, որովհետև յուրաքանչյուր կկարողանա դիմացինի մասին հոգալ այնքան, որքան անհրաժեշտ է:

Ուրեմն, սիրելիներ, մեր անձն ուրանալը նշանակում է դիմացինին նվիրվել օգրականության եւ անհրաժեշտության սահմաններում, որպեսզի դիմացինն նույնպես օգրակար և անհրաժեշտը փրամադրի մեզ՝ Աստվածային կամքի համաձայն: Եվ ահա Տերն ասում է. «Թող վերցնի իր խաչը հանապազ»: Ինչ է նշանակում սա: Նշանակում է մշտապես բավարարվել այնքանով, այն իրողությամբ, հնարավորություններով, ճակատագրով, ինչն Աստված է մեզ շնորհել, և այդ խաչը զանազան փորձությունների, զանազան զայթակողությունների մեջ փանել առաջ, հարաբերվել Աստծու կամքի համաձայն:

Ներկաբար՝ այսօրվա այս խորհրդածությունների հիման վրա պետք է կամենանք նախ և առաջ Տիրոջը հետևել: Երև այդ կամքը չկա, բնականաբար պիտի ասենք, որ Տերը մեզանից շար է պահանջել: Երկրորդ՝ իրապես դիմացիններին սիրենք ավելի, քան ինքներս մեզ, և դիմացինին ծառայենք ավելի, քան ինքներս մեզ: Վերցնենք մեր խաչը մեր ուսին, այն ամենը, ինչ Աստված մեզ շնորհել է՝ նրջանկությունից մինչև դժբախտություն, և հետևենք Իրեն Իր սիրուն քնդառաջ, փոխադարձելով Իր սերը համապատասխան սիրով, որպեսզի այդ սիրուն որպես պարասխան նաև մեր երկիրը (չվի Աստվածային օրհնությամբ, Աստվածային շնորհներով, և կարողանանք իրեն իրական, ճշմարիտ քրիստոնյաներ ապրել այս աշխարհի վրա, սրբեղծագործել, միմյանց բարիք ցանկանալ, եղածով զոհանալ և եղածը ավելացնել ու բազմապատկել Աստծու փառքի, այլ ոչ թե մեր սեփական կարիքների և շահախնդրության համար:

Սիրելիներ, իմ որդիական պարզքն նմ համարում նախ և առաջ նրախարազիություն և շնորհակալակքի խոսքս հղել առ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ճիշտ վեց փարի է, ինչ Ամենայն Հայոց Կաթողիկոսության լուսավորչահաստատ գահին բազմեց 132-րդ գահակալը՝ Գարեգին Երկրորդը: Այսօր, սիրելի՛ հավաքացյալ քույրեր և եղբայրներ, հարկ չկա մեկ առ մեկ թվարկել այն բոլոր իրագործումները, որոնք կյանքի կոչվեցին Հայոց Հայրապետի ձեռամբ՝ անցնող փարիներին, քանզի ով աչք ունի, կրեսնի: Մեծերը գնահատանքի խոսքերի անհրաժեշտություն չունեն: Նրանց գնահատում են ժամանակն ու պարմությունը:

Դեռևս ճնմարանական ուսումնառության փարիներից Վեհափառ Հայրապետն ամեն պարենի առիթ օգրագործում էր՝ իր եկեղեցակներ ու հայրենակառույց շունչը իրենից նրիփասարդներին փոխանցելու, նրիփասարդական իր ավյունն Աստծուն քնծայաբերման կեն-

ղանի օրինակ դարձնելու համար: Մեզ ես կոչելով դժվարին, սակայն բաղձալի ծառայութ-
ղանի օրինակ դարձնելու համար: Մեզ ես կոչելով դժվարին, սակայն բաղձալի ծառայութ-
յան՝ առ Աստված, Եկեղեցին, Հայրենիքը և հարազատ ժողովուրդը, հորդորում է միշտ հա-
վարտարիմ գավակն ու սպասավորը մնալ Սուրբ Էջմիածնի: Մենք, իբրև Նորին Սրբության
վարտարիմ գավակն ու սպասավորը մնալ Սուրբ Էջմիածնի: Մենք, իբրև Նորին Սրբության
վեցամյա բազմաբնույթ գործունեության միայն մեկ օղակի արգասիք, որպես մեր նվիրվա-
ծության և հավատարմության առեմամբ, այս Սուրբ Խորանից առաջի ձեր խոստա-
նում ենք իր կանչը չթողնել անարձագանք և մշտաբար ու անվարան անել «Ահա առիթ
ես, ինձ ուղարկիր» (Ես. Զ 8):

Ուստի, սիրելի՛ աղոթակիցներ, մեզ մնում է ազգովի, որպես մշտապես աղոթք, մաղթել
Նորին Սրբությանն արևշաղ օրեր, մրցի ոգեղեն թոփչք, որ վեր է ժամ ու ժամանակից, որ-
պեսզի Ամենայն Հայոց Հայրապետը շարունակի առաջնորդել իր աշխարհասփյուռ հոգր
նշմարտություն և փրկություն փանող ճանապարհով, որպեսզի իր օրինությամբ բացվեն
հայկական դարավոր երկրի արշալույսները, իսկ Նոյան ուրևաները կրող սուրբ լեռան
հովանու ներքո Աստվածապարզն յույ ճառագի առաքելախիմն Մայր Աթոռ Սուրբ Էջ-
միածնից՝ հայոց Թաթրո լեռից:

Երախտագիտության խոսք ենք ուղղում մեր հոգևոր ձնողին՝ Գերաշնորհ Տ. Տարոն եպս.
Ճերնճյանին, որ թևն պաշտոնավարում է Ֆրանսիայի Մարսել քաղաքում, սակայն սիրով
եկավ Մայր Աթոռ և արանձնեց հոգևոր ձնողի պարտականությունները՝ ձեռնադրելով և
օժելով մեզ:

Նաև երախտագիտության խոսք եմ ուղղում Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Գե-
րաշնորհ Տ. Գրիգորիս արքեպս. Բուխարյանին, որ սրանից 12 փարի տուայ մեզ՝ ձեր խո-
նարի ծառային, առաջնորդեց ղևակի Շիրակի թեմի կորաբաց հոգևոր ընծայարան, ուր մեր
առաջին քայլերը կատարեցինք: Աղոթենք Տիրոջը, որ առավել գորացնի Սրբազան Հորը և
արևշաղ օրեր պարզին:

Խորին շնորհակալություն Գևորգյան Հոգևոր Ճնմարանի փոխությանը, ինչպես նաև
դասախոսական կազմին, որ անդույ, անձանձիր ու երախտալուստ աշխարհանքով իրենց
նկատարն են բերում հայ հոգևորականի հոգեկերպմանն ու զարգացմանը:

Մենք երախտագիտություն ենք Մայր Աթոռի միաբանությանը, հարկապես՝ ավագ միաբան-
ներին, ովքեր աշխրջությամբ ու ձով համբերությամբ հերկեցին մեզ, եղան իմաստուն դաս-
տիարակներ՝ Հայոց Եկեղեցու և Մայրավանքի նվիրագործված ավանդույթների համա-
ձայն սիրով ու ջերմությամբ պարտրելով մեզ:

Սիրելի՛ հավատարացյալներ, այսօր ձեր աղոթքն ու բարեխոսությունն ենք հայցում մեզ
համար, որ Աստծու պահապան Սուրբ Աջը մեզ հովանի լինի՝ հոգևորականի մեր պարտա-
կանությունները կատարելիս մեր անվարան քայլերը Տիրոջ կանխորոշած ուղիներով
առաջնորդելու համար, որպեսզի, լինելով մեր Եկեղեցու նվաստ ու խոնարհ սպասավորը,
մի օր արժանի լինենք իրականացնել Տերունի այն պատգամը, թե «Նովի քաջ գանձն իր
ղն է վերայ ոչխարաց» (Տովի. Ժ 11):

Թող Աստված օրինի մեզ և փա ուժ, կարողություն՝ Իրեն հերկելու այժմ և հավիպյանս.
ամեն:

Տ. ՎԱԶԳԵՆ ԱԲԵՂԱ ՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 նոյեմբերի 2005 թ.)

«Յանուն Տօր և Որոյոյ եւ Տօգոյն Սրբոյ. ամէն»:

Միրելի եւ հարազատ եղբայրներ եւ քույրեր ի Քրիստոս, այսօր մեր Եկեղեցու Տայրերը Տիսակաց այս առաջին կիրակիին որպէս ավերարանական ընթերցում Ս. Պատարագի ընդրել են Դուկասու Ավերարանի անմիտ հարուստի առակը, որում ասվում է: Մի մարդ, որ հողեր ուներ, գտնում է թերթ է հավաքում և թերթը այնքան շատ է լինում փարեցորարի, որ նա մտածում է, ինչպէս ավելի մեծացնեմ ունեցվածքս, ինչպէս կալվածքներս ավելի մեծացնեմ, ինչպէս դրամս բազմապատրկեմ: Ավերարանիցը սակայն այս մարդուն անվանում է անմիտ (Լուկ. ԺԲ 16-24): Եկեք՝ թննենք այսօրվա մեր հայացքով, թե ինչո՞ւ է այս մարդը անմիտ և ինչո՞ւ է կայանում իր անմտությունը, չէ՞ որ մենք էլ յուրաքանչյուրս մտածում ենք, թե ինչպէս մեր վաղվա օրը կարգավորենք, թե ինչպէս առաջ գնանք:

Եկեղեցին ինքր միժնության մեջ լինելով միժնության մեջ չէ, այլ միշտ Սուրբ Տօգով աճում է: Նույնն է և մարդու պարագային: Մարդը, ճնողը մտածում է իր զավակի մասին, որն էլ մեծանալով, իր հերթին մտածում է իր զավակների մասին: Մարդկային հոգսը երբեք մեր մտքերից չի պակասում, սակայն այդ մեծահարուստին անմիտ ենք անվանում: Մենք նաև միշտ պետք է հիշենք Տակոբոս առաքյալի թուղթը, ուր նմանօրինակ մի դեպք է նկարագրվում: Մի մարդ ասում է, այսօր այստեղ եմ, վաղը պիտի գնամ այլ քաղաք, մեկ փարի այնտեղ պիտի լինեմ, պիտի ծախեմ և պիտի առնեմ և պիտի այսքան գումար վաստակեմ և պիտի եր վերադառնամ: Այս մարդը նա սակայն անվանվում է անմիտ (Տմար. Տակ. Դ 13-17):

Միրելիներ, այս մարդկանց անմտությունը կայանում է նրանում, որ իրենց կյանքից ենք Աստված րեղ չունի: Մարդկային իրենց դատողությամբ հաշվարկներ են անում և մարդկայնորեն փորձում են իրենց համար լավը գրենք: Լավն ու բարին, սակայն, Աստված մեր երկնավոր Տիրոջ արարացույտակն է աշխարհիս վրա: Առանց Աստծո հեղափոխ չէ լավն ու բարին րենել, լավն ու բարին գրենել, ունենալ: Եվ, հեղափոխ, այս մարդիկ առանց Տիրոջ կամքի է, որ ուզում են հարգվածել: Աշխարհիս վրա ամեն ինչ որ լինում է, Տիրոջ կամքի մեջ է և, հեղափոխ, Ավերարանիցը այսպէս է ասում նման մարդկանց, որ թերևս պիտի ասեք, որ Աստծո կամքով պիտի այսպէս լինի, որ Աստծո կամքով պիտի գնանք քաղաք, պիտի վաճառենք և պիտի ունեցվածք ունենանք: Տեղաբարձի է, որ նման մարդիկ մտանում են, թե ի՞նչ է ի վերջո հարստությունը, չէ՞ որ դրամ, չէ՞ որ նյութական ամեն բան նյութ է, արժեք երբեք չէ, այլ միջոց է: Որ պահից ի վեր, երբ մենք հարստությանը, դրամին, ունեցվածքին և կամ փառքին րանք արժեքի նշանակություն, այն պահից կղաղարենք մենք ինքներս մարդ լինելուց:

Ավերարանական նույն այս հարվածում անմիտ հարուստը այսպէս է ասում. «Կեր, խմիր և ուրախ եղիր»: Նույն բառերը րեսնում ենք նաև Սողոմոնի «Շողովողի» գրքում:

**Տ. ԶԱՎԵՆ ԱՔԵՂԱ ՅԱԶԻՉՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(27 նոյեմբերի 2005 թ.)

*«...զի ոչ եթ ի մթերից ընկից ուրուք իցևս
կեսեր կորսա»:*

*«...որովհևրև մարդու կյանքն իր կուրա-
կամ հարստության մեջ չէ»:*

(Ղուկաս ԺԲ 15)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Տօգոյն Սրբոյ. ամէն»:

Մարդկային պարմության մեջ հասարակությունը միշտ էլ բաժանվել է սոցիալական փոքրեր և անհավասար խավերի: Մեկը շար է վաստակում, մյուսը՝ ավելի քիչ, մեկն աչքը բացում է ծայրահեղ աղքատության և չքավորության, մյուսը՝ ժառանգություն ստացած ահեղ կարողության մեջ, և այսպիսով ակամայից առաջ է գալիս անհավասարությունը: Հասարակությունը բաժանվում է ունևորների և չքավորների:

Սիրելի հավաքացյալներ, ավերարանական այսօրվա ընթերցումը անմիջ մեծահարուստի պարմությունն է, մեծահարուստ, ով փորձում է իր ծրագրերն իրականացնել, ընդլայնել իր շրջնաբանները, հենքը քանդելով նորերը՝ մեծամեծերը կառուցել, բացում փարիների պաշար հավաքել և անհոգ ապրել, սակայն այս ամենի մեջ նա անբեռն է թերևս մուռացել էր մեծահարուստներից մեծահարուստի, թագավորների թագավորի՝ այդ ամենը իրականության կոչող Ամենակարող Տիրոջ գոյության մասին: Նրա գործնում բացակայում էր Աստծո կամքը: Այս մեծահարուստը չէր էլ պարկերացնում և նույնիսկ չէր էլ անդրադառնում, որ այդ ամենն իր մարմնի պահպանման համար է, բայց հոգիների Տերը վաղը նևթ պիտի առնի իր հոգին:

Դրամավերն իր ձեռքին ունի բանալի, որով կարողանում է բացել երկրային վայելքների գրեթե բոլոր դռները, որոնցից, անշուշտ, աղքատը չի կարող օգտվել: Դրամով կառուցվում են հիվանդանոցներ, դպրոցներ և հանրօգուտ այլ հասարակություններ: Բայց և դրամի համար է, որ շավերը թողնում են հայրենի տունը, հարազատներին և բռնում պանդխտության ճանապարհը: Դրամը վրանգավոր և կործանարար է դառնում այնժամ, երբ մեր՝ մարդկանց կողմից դառնում է ավելի պաշարելի, քան հարազատ օջախը, ընտանիքը, հայրենիքը, ավելի երկրպագելի, քան անգամ Եկեղեցին ու Աստված:

«ԻՆչ է դրամը» հարցին իմաստունը պատասխանում է. «Դրամն այն ուժն է, որով կարող ես մարդուն ամեն ինչ փայլ, բացի երջանկությունից, և կարող ես մարդուն փանել ամեն փեղ, բացի Երկնքի արքայությունից»: Արդարև, դրամով կարող ես շքեղաշուք պալատներ կառուցել, սակայն անկարող ես դրամով այնտեղ բնակեցնել Աստծո ներկայությունը, խաղաղությունը: Դրամով կարող ես վարձել աշխարհի ամենալավ բժիշկներին, սակայն չես կարող գնել առողջություն և հավիտենական կյանք: Օրվա ավերարանական ընթերցվածի

հերոսի միջոցով Զրիստոս մեզ մի օրինակ է փայլիս և պարզվիում, որ հոգին առավել է. բան մարմինը, և մարմինն առավել, բան հազուսար: Եթե մենք հերամուսր լինենք այս խոսքերին, ապա Տիրոջ խոսքի համաձայն ամեն բան մեզ ավելիով կարժի:

Արմաթաանք մարդը գլխավորաբար մրումում է շահի և դրամի մասին: Նա այլևս չի լսում իր խղճի ձայնը և պարտասր է ամեն րեանակի չարությունների, որովհետև, ինչպես լսում է առաքյալը, ամեն չարության արմարն արձաբսիրությունն է (Ա Տիմ. 2 10): Եթե ասում է առաքյալը, ամեն չարության արմարն արձաբսիրությունն է (Ա Տիմ. 2 10): Եթե ասում է առաքյալը, ամեն չարության արմարն արձաբսիրությունն է (Ա Տիմ. 2 10): Եթե ասում է առաքյալը, ամեն չարության արմարն արձաբսիրությունն է (Ա Տիմ. 2 10): Եթե ասում է առաքյալը, ամեն չարության արմարն արձաբսիրությունն է (Ա Տիմ. 2 10):

Միջնադարյան առակը պարունում է, որ մի իմաստուն՝ մեծահարուստի մուր գնալով, նրանից դրամ է խնդրում: Հարուստը ինքնավարան և հպարտ կեցվածքով փորձում է ամանակցնել իմաստունին և հարգելում է, թե ինչո՞ւ միշտ իմաստունն է ինչ-որ բան խնդրում հարուստից և թերևս երբևէ հակառակը չի եղել, որովհետև, պարասխանում է վերջինս, իմաստունը զիտի դրամի օգտակարությունը, միևնույն հարուստը չգիտի իմաստության օգտակարության մասին:

Սիրելիներ, հարուստ լինելը բնավ վար բան չէ, եթե, իհարկե, գնահատել զիտես և կարողանում ես աստվածահանո կերպով րեօրինել հարստությունը, կամ ամեն հարուստ չէ, որ չգիտի իմաստության արժեքը: Ծարեր շարժվում են առաքյալի խոսքի համաձայն՝ կարողայելների պակասությունը լցնում իրենց առատությամբ (Ա Կորնթ. Ը 14):

Չբավորությունը: աղքատությունը վար բաներ են, անշուշտ, բայց ավելի վար է, երբ մարդ, հարուստ լինելով, զրկում է կարույալներին, անարթերն է ազգի կարիքների նկատմամբ: Ազատ մարդու սրբում հնարավոր չէ զրկել ո՞չ հավար, ո՞չ սեր Աստծո հանդեպ և ո՞չ էլ վարստության հավիտենական անանց արժեքների հանդեպ: Նրա համար գոյություն ունի միայն ԵԱը, մարմին և կյուր, վայելք և շահ, ո՞չ հարազատ, ո՞չ բարեկամ, ո՞չ Էկեղեցի: Մակայն որքան կրթանիկ սիտի լինի այն մարդը, որ եթե ոչ ինքը, բայց գոնե իր ժառանգները ակնանարես են նրա ողորմությանը, բարեգործության արդյունքներին, լինի դա նկեղեցի, ձերանոց կամ հիվանդանոց: Որովհետև բարեգործությունը, ողորմությունն իրենց մեծ և փոքր բովանդակության մեջ ազնվական արարքներ են, որ հաճույք են պարճատում թե՛ բաշխողին և թե՛ սրբացողին: Երկուսն էլ գոհունակ հոգով են լցվում, բաշխողը, սրբացողի կրթանկությունը րեսնելով, ուրախությամբ է համակվում, իսկ սրբացող է կրախպագիտության մեծ զգացումով է պարտրվում ազնվական սիրտ ունեցող բարերարի նկատմամբ:

Ողորմությունը գործնական աղոթք է, այն մասնավոր ժամանակ կամ սահման չունի, ուստի բարիք գործնք ամենայն ժամ (հմմտ. Գաղ. 2 10):

Այս աշխարհի կյուրական ճոխությունները, վայելքները, ժամանակավոր հաճույքները չէ, որ արժեք սիտի րան մեր կյանքին: Այդ բոլորի բուն նպարակը մեր մարմնի սնուցումն է: Մենք՝ քրիստոնյաներս, զիտենք ու հավարում ենք, որ կյանքի իրական արժեքը մեր բարոյական բնությունը անաղարտ պահելու մեջ է և մեր հոգու ազնվացումն է, «...որովհետև մարդու կյանքն իր կուրակամ կյուրական հարստության մեջ չէ»:

Մեկնողմիշտ հիշենք, Նա, ով հարուստ էր և մեզ համար աղքատացավ, մենք Նրանով հարստանանք: Թոթախենք կարծրությունը մեր սրտից և համաձայն Ավելարսեսական պարվիրաններին ընթանանք այն ճանապարհով, որը մեզ կառասնորդի դեպ հավիտենականություն՝ միանալու արդարների ու սուրբերի դասին: Ամեն:

ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉԸ ՄԻՋՆԱԿԱՐՈՒՄ

Հայ միջնադարյան ցկարիչների, մասնավորապես մանրանկարիչների կենսագրության կամ աշխատանքի պայմանների մասին պահպանված տեղեկությունները շատ քիչ են: Բազմաթիվ մանրանկարիչների անունները մեզ առհասարակ չեն հասել: Պատմական հանգամանքների բերումով հայ վարպետները ավելի շատ ձեռագրեր են ծաղկել և քիչ որմնանկարներ, խճանկարներ ու սրբապատկերներ ստեղծել, ուստի, քննակամարար, հայ մանրանկարիչները թվով անհամեմատ ավելի շատ են եղել, քան հայ գեղանկարչության մյուս տեսակները հեղինակողները:

Թեև վերջին հարյուր երեսուն տարիների ընթացքում հարյուրավոր ցկարագաղղ հայկական ձեռագրեր են ուսումնասիրվել և դրվել գիտական շրջանառության մեջ, բայց, այդուհանդերձ, դժվար է քիչ թե շատ ճիշտ կերպով ասել՝ քանի մանրանկարիչ է ստեղծագործել միջնադարյան Հայաստանում: Մի քանի տասնամյակ առաջ տպված Պ. Դ'Անկոնայի և Է. Էշլիմանի հեղինակած Եվրոպայի մանրանկարիչների կենսագրական բառարանը ընդամենը մի հայ վարպետի՝ 15-րդ դարի Այուցիքի գրիչ և ծաղկող Հովհաննեսի անունն էր պարունակում¹, իսկ Ա. Գևորգյանի վերջերս պատրաստած աշխատությունը ամփոփում է 464 անուն՝ կենսագրական որոշ տեղեկություններով²:

Հայ մանրանկարիչների մասին զաղափար են տալիս նրանց ցկարագաղղած մատյանների հիշատակարանները, երբեմն նաև նրանց աշակերտների, իսկ ավելի սակավ՝ ուսուցիչների թողած հիշատակարանները: Ի տարբերություն արևմտյան իրականության³, հայ մատենագիրների երկերում⁴, ինչպես նաև մեկնություններում, վարքագրական հուշարձաններում, բանաստեղծություններում և առհասարակ ողջ հայ գրականության մեջ որպես կանոն ցկարիչների, մասնավորապես մանրանկարիչների մասին տեղեկություններ կամ հիշատակություններ գրեթե չեն հանդիպում: Հարկ է նկատել, որ թեև հայերեն ցկարագաղղ ձեռագրերի թիվը շատ մեծ է, բայց, այդուհանդերձ, ոչ բոլոր մատյանների ցկարագաղղողների անուններն են մեզ հասել: Հայ մանրանկարիչների համաստեղծությունից պահպանված առաջին անունները վերաբերում են 10-րդ դարին:

Անշուշտ հարկ է նկատի առնել, որ դարերի ընթացքում ահռելի քանակությամբ հայկական ձեռագրեր են ոչնչացել օտար նվաճողների ասպատակությունների ժամանակ:

¹ P. D'Ancona et E. Aeschlimann, Dictionnaire des miniaturistes du moyen age et de la renaissance dans les differentes centres de l'Europe, Milan, 1949.

² Ա. Գևորգյան, Տայ մանրանկարիչներ, Մատենադպրություն, IX-XIX դդ., Կապիկո, 1998:

³ The Medieval Artist at Work, By V. W. Egbert, Princeton, New Jersey, 1967, p. 19.

⁴ Կ. Մատենայան, Տայ մանրանկարիչների կիշապակարանները (Ժ-ԺԵ դդ.): «Սիոն», 1997, հուլիս-դեկտեմբեր, էջ 312:

Հատկապես մեծ են ձեռագրական կորուստները Օսմանյան Թուրքիայի կազմակերպած 1915-1922 թթ. Հայոց ցեղասպանության շրջանում: 989 թ. Էջմիածնի Ավետարանի 6-7-րդ դարերի չորս մանրանկարների բնօրինակն առիթով Յ. Ստրժիգովսկին ժամանակին նշել է, որ այդ շրջանում Հայաստանում հայ մանրանկարիչներ չկային, և հավանաբար դրանց հեղինակը ասորի է եղել⁵: Յ. Ստրժիգովսկու տեսադաշտից դուրս են մնացել նույն ժամանակի հայկական եկեղեցիների որմնանկարները, որոնք ընդհանրություններ ունեն հիշյալ մանրանկարների հետ⁶: Յ. Ստրժիգովսկու կյանքի օրոք և հետագայում տպված ուսումնասիրությունները հանգամանորեն ապացուցել են այդ մանրանկարների հայկականությունը: Յ. Ստրժիգովսկին ուշադրություն է դարձնում Տաթևի վանքի 930 թ. որմնանկարների կատարողների մասին հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի այն տեղեկությանը, որ այդ վարպետները եկվոր էին, և «գօգրաֆ» բառն է օգտագործում նրանց մասին: Այդ տեղեկությանը նա նույնպես օգտագործում է՝ ասելու համար, որ Հայաստանում այդ ժամանակ նկարիչներ չկային: Եկվոր վարպետների օգտին են խոսում Ն. Թիերիի և Ս. Մանուկյանի հոդվածները, որտեղ նրանք ցույց են տալիս Տաթևի որմնանկարների և արևմտյան որմնանկարների ընդհանրությունները⁷: Արևմտյան վարպետների աշխատելը Տաթևում չի բացառում նրանց կողքին նաև հայերի աշխատելու հանգամանքը: Այդ փաստի օգտին են խոսում Տաթևի որմնանկարների կատարման որոշ առանձնահատկությունները, որոնք տարբերում են այդ վարպետները արևմտյան օրինակներից: Այդ առանձնահատկությունների շարքը կարելի է դասել որմնանկարների ծեփի հաստությունը:

Յ. Ստրժիգովսկու տեսադաշտից դուրս են մնում, որ Տաթևից մի քիչ առաջ հայ վարպետները ծաղկել են Մլբեի 862 թ. Ավետարանը /վեցնտիկ, Մխիթարյան միաբանության հավաքածու, ձեռ. 1144/86/⁸, ինչպես նաև որմնանկարներով զարդարել Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին /915-922 թթ./⁹ և նույն 10-րդ դարի ընթացքում ձևավորել շատ այլ ձեռագրեր, որոնցից առանձին օրինակներ պահպանվել են¹⁰: Յ. Ստրժիգովսկուն այդ ժամանակ հայտնի չէր, որ հայ վարպետները իրենք էին գնում այլ երկրներ աշխատելու: Այդ մասին են վկայում 5-6-րդ դդ. հայկական խճանկարները Երուսաղեմում¹¹, կամ Եգիպտոսի առան-

⁵ J. Strzygowski, Das Etschmiadzin Evangehar, Beitrage zur Geschichte der armenischen, ravennatischen und syro-agyptischen Kunst, Byzantinische Dekalner I, Vienna, 1891, S.

⁶ Л. А. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, с. 139-154.

⁷ N. et M. Thierry, Peintures murales de caractere occidentale en Armenie: eglise S. Pierre et S.-Paule de Tatev. Byzantion, t. 38, fasc. I, Bruxelles, 1968, p. 180-224; С. С. Манукян, Фрески в Татевском монастыре. В кн.: Памятники культуры. Новые открытия, Ежегодник, 1975, Москва, 1976, с. 131-137.

⁸ Տն՛ս Մ. Janashian, Armenian Miniature Painting, Saint-Lazare-Venice, 1966, p. 16-23.

⁹ Տն՛ս Տ. Der Nersessian, Church of The Holy Cross, Cambridge, 1965, p. 36-49, fig. 57-70.

¹⁰ Տն՛ս Տ. Der Nersessian, The Date of The Initial Miniatures of the Etchmiadzin Gospel. Etudes Byzantines et Armeniennes-Byzantine and Armenian Studies, Louvain, 1973, p. 533-558; idem, La peinture armenienne au VII siecle et les miniatures de l'Evangile d'Etchmiadzin, p. 525-532; H. und H. Buschhausen, Das Evangeliar Codex 697 der Mechitharisten-Congregation zu Wien, Eine Armenische Prachthandschrift der Jahrtausendwende und ihre spatantiken Vorbilder, Berlin, 1981.

¹¹ Տն՛ս Armenian Art Treasures of Jerusalem, Ed. by B. Narkiss and M. Stone, Jerusalem, 1979, p. 21-28, fig. 32-40.

ծին վաճառքի 12-րդ դարի որմնանկարները¹²: Հայոց շրջանում անգամ հայտնի է եղել մոմաներկով (եմկաուստիկ եղանակով) նկարելու ավանդույթը: Այդ մասին իմանում ենք Ստեփանոս Այունեցու (8-րդ դար) շնորհիվ, որը գտնում է, թե ճշմարիտ պատկերը մոմով և ներկով է լինում¹³: Պահպանվել են այդ եղանակով ստեղծված վաղ քրիստոնեական շրջանի բյուզանդական սրբապատկերներ: Մոմաներկով կատարված հայկական որմնանկարներ հայտնաբերվել են Պողոս-Պետրոս եկեղեցու քարքարոսական բանդման ժամանակ, իրև համաշխարհային արվեստի պատմության եզակի երևույթ արձանագրվել հայ և օտար գիտնականների կողմից, որոնք սակայն այնուհետև անգթորեն ոչնչացվել են:

Դեռևս 5-6-րդ դարերում հայ մատենագիրների մոտ հանդիպում են «պատկերագործ», «նկարիչ», «նկարող» բառերը, իսկ «նկարիչ» բառը առաջին անգամ ի հայտ է գալիս 12-րդ դարում, օրինակ՝ 1181 թ. Դրագարկում (Կիլիկիա) աշխատող Թորոս գրիչը հիշատակում է նկարիչ Խաչատուրից¹⁴:

Գժբախտաբար միջնադարի հայ գեղանկարիչների, մասնավորապես մանրանկարիչների կրթությանն ու աշխատանքին վերաբերող տեղեկությունները բավարար չափով չեն պահպանվել:

Մեզ չեն հասել մանրանկարներ, որոնք ներկայացնեին նկարչական դասի ընթացքը, և ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների մասին կարող ենք դատել միայն ձեռագրերի հիշատակարաններում մնացած ժլատ տեղեկություններով: Առհասարակ միջնադարյան դպրոցի մեջ դասի ընթացքը ցուցադրող մանրանկարներ գրեթե հայտնի չեն և այդ իմաստով զարմանալի մի բացառություն է ճշանակող մանկավարժ և Մեծօփի, Ցիպնավանքի ու Տաթևի վանական դպրոցների հիմնադիր Գրիգոր Մերենց խյաթեցու 1419 թ. ծաղկած Ավետարանի (Մատենադարան, ձեռ. 3714) մեջ գտնվող պատկերը (թ. 14ր)¹⁵, որը ներկայացնում է նրան իր երկու աշակերտների հետ դասի ժամանակ¹⁶: Գրիգոր խյաթեցին այստեղ ինքն իրեն նկարել է աթոռից նստած, ձախ ձեռքից բռնած աշակերտին պատժելու համար նախատեսված ճիպտոը, իսկ աշուն՝ փոքրիկ գրատախտակը: Դասը պատասխանող աշակերտը ձեռքերը կրծքին խաչած, հյու-հնազանդ կանգնած է նրա առաջ, իսկ երկրորդ աշակերտը ուղքերը ծալապատիկ դիրքով նստած է՝ ձեռքին պատրաստ պահած ճիպտոների խուրձը:

Բարեբախտաբար, որոշ մանրանկարներ են մեզ հասել, որոնք ցուցադրում են միջնադարյան համալսարանների ղեկավարներին իրենց աշակերտների հետ: Այդ պատկերներից հնագույնը հայտնվում է մի պատառիկ թերթի վրա, որը գետեղված է իր հետ ոչ մի կապ չունեցող 1299 թ. Կիլիկիայում վարդան գրչի ընդօրինակած Եսայու մեկնություններն

¹² Տև՝ **A. Kapoian-Kouymjian**, *L'Égypte: vue par des Arméniens*, Paris, 1988, pl. I-III.

¹³ **Ա. Գեորգյան**, Ինչպես էին նկարագրվում ձեռագրերը: «Բարեր երևանի համալսարանի», 1991, թիվ 2, էջ 74.

¹⁴ **Կ. Մարթոսյան**, Նայ մանրանկարիչների հիշատակարանները (Ժ-ԺԵ դդ.), էջ 314:

¹⁵ **Ն. Ն. Նաիրոյան**, «Ասպորյանսի մանրանկարչությունը, գիրք Բ, երևան, 1982, էջ 79; **Ա. Մարթոսյան, Ա. Մարտոսյան**, Գրիգոր Մերենցի խյաթեցի, երևան, 2000, էջ 34:

¹⁶ Գտնվող վերագրությունը տես՝ **Գ. Բ. Առոնյան**, *Миниатюры Восточных XIII-XV веков*, Ереван, 1989, с. 56-58, табу. XX; **V. Nersessian**, *Treasures from the Ark*, London, 2001, p. 68, 171-172.

դարի վերջի կամ 15-րդ դարի սկզբի ընդօրինակությունը²¹: Ենթադրվում է, որ այն ծաղկաված է Թադեոս Ավրամենցի ձեռքով:

Գրիգոր Տաթևացին այս մանրանկարի մեջ ներկայացված է իր աշակերտների հետ, և անհայտ նկարիչը Տաթևացուն առանձնացրել է զգալիորեն խոշոր չափերով՝ պատկերելով կենտրոնում: Տաթևացին նստած է երկու ձեռքերով զավազանից հենված: Չափսից աշակերտների խմբի մեջ, իր ուղիղ պահած գլխով և դիտողին ասես զննող, շնչտակի հայացքով, առանձնանում է մի վանական, որը, ըստ երևույթից, անանուն նկարիչն է: Թե՛ Տաթևացին և թե՛ աշակերտները վեղար են կրում: Տաթևի համալսարանի ուսուցչապետի կոնակից երևացող շենքի վրա գրված է՝ «Գրիգոր Վարդապետ»: Գրիգոր Տաթևացու աչքերից մեկը մյուսի համեմատ փոքր է նկարված: Այդպիսով, անհայտ մանրանկարիչը ակնարկել է Տաթևի համալսարանի ուսուցչապետի ունեցած աչքի հիվանդության մասին:

Գծաբխատարար շատ քիչ բան է հայտնի հայ մանրանկարիչների աշխատանքային պայմանների մասին, և չկան ձեռագրեր, որ խտացված լինի միջնադարյան նկարչական հիմնական գիտելիքը: Պահպանվել են առանձին, այսպես կոչված, պատկերոտույց գրքեր, և «Կենտրոնիկ Մխիթարյան միաբանության գրադարանում գտվող այդպիսի մի ձեռագրի մասին է Ս. Տեր-Ներսեսյանի հոդվածներից մեկը²²: Գծանկարներ պարունակող այդ մատյանի մեջ կան պարզից դեպի բարդը գնացող զարդերի ուրվանկարներ, տերունական նկարներ, նաև նշված է, թե որ մասերում ինչ գույներով պիտի հաղորդվեն պատկերների բաղկացուցիչ մասերը և այլն:

12-րդ դարի արևմտյան նկարիչ Թեոփիլոսի կամ 13-14-րդ դարերի իտալացի նկարիչ Չենինո Չենինիի գրած արվեստի տրակտատները²³ հիշեցնող գրվածքներ չեն պահպանվել, որոնք հեղինակված լինելին միջնադարի հայ մանրանկարիչների կողմից:

Հայ մանրանկարիչների շրջանում ընդունված է եղել յալ նախագաղափար օրինակ հանդիսացող ձեռագրի ընտրությունը և վերջինիս ընդօրինակությունը: Այսպես, 12-13-րդ դարերի սահմանագծի հայ ծաղկողների կողմից քանիցս ընդօրինակվել է Գրիգոր Մուրղանեցու օրինակը, որը չի հասել մինչև մեր օրերը²⁴: Այդ մասին կարելի է կարդալ այս օրինակի հիման վրա ստեղծված տարբեր ձեռագրերի հիշատակարաններում:

Հայ մանրանկարիչները աշխատում էին փնտրել և գտնել ու ընդօրինակել իրենցից առաջ ապրած հայ վարպետների բարձրարվեստ զարդարվածությամբ մատյանները: Կարելի է հիշել 17-րդ դարի Սեբաստիայում ապրող մանրանկարիչ Բարսեղամի կողմից Թորոս Ռոսլիցի 1262 թ. Ավետարանից կատարված ընդօրինակությունը²⁵: Հայտնի է նաև, որ Ութ նկարիչների Ավետարանը 17-րդ դարում մի քանի անգամ ընդօրինակվել է

²¹ Գունավոր վերապրությունը փնտ. E. Korkmazian, I. Drambian, G. Hakopian, *Armenian Miniatures of the 13th and 14th centuries*, Leningrad, 1984, III 32.

²² Տե՛ս S. Der Nersessian, *Le carnet de modeles d'un miniaturiste armenien. Etudes Byzantines et Armeniennes* - Byzantine and Armenian Studies, p. 665-672.

²³ *The Medieval Artist at Work*, p. 19.

²⁴ Т. А. Измайлова, *Мурганский образец в армянской миниатюрной живописи*. Труды Государственного Эрмитажа. Культура и искусство народов Востока, т. 5, 1961, с. 76-97.

²⁵ L. Chookaszian, *Baralain*, Saur Allgemeines Künstlerlexikon, Bd. 6, München-Leipzig, 1992, S614-615

Վրիսի հայ մանրանկարիչների ձեռքով: Հետաքրքիր է նկատել, որ այս նույն ձեռագրի պատկերները կիրկիկայում մոտավորապես 1280 թ. շուրջ իրենց հերթին ստեղծվել են 11-րդ դարում ծաղկաված բյուզանդական նշանավոր Ավետարանի ձևավորումների հիման վրա (Ֆլորենցիա, Լատրենցիան գրադարան, Plut. VI. 23)²⁶: Այս մատյանը այդ ժամանակ գտնվել է հայկական միջավայրում, ինչի մասին վկայում են այս մատյանի լուսանցքներում եղած հայերեն հիշատակագրությունները²⁷: Ֆլորենցիայի ձեռագիրը լուսանցքներում եղած հայերեն հիշատակագրություններում, և այդ ապացուցված է հայ վարպետի ծաղկած մատյանների ու բյուզանդական Ավետարանի նկարազարդումների ընդհանրություններով²⁸: Հարկ է նշել, որ սա միակ բյուզանդական մատյանը չէ, որը հայկական միջավայրում է եղել և հասել մինչև մեր օրերը²⁹:

Հայ մանրանկարիչների համար գեղարվեստական գիտելիքի աղբյուր են ծառայել ոչ միայն նախազարափար օրինակները: Նրանք մասնագիտական լրացուցիչ պատրաստություն են ստացել նաև իրենց այլազգի գործընկերների հետ համատեղ աշխատելու ժամանակ: Երուսաղեմի Ս. Գերեզմանի վանքին կից խաչակիրների ստեղծած գրչատան մեջ 12-րդ դարի երրորդ քառորդին ընդօրինակված երկու ձեռագրերի նկարազարդումները (Փարիզ, Ազգային Գրադարան, lat. n. 276, վատիկան, Առաքելական Գրադարան, Lat. n. 5974), ըստ Հ. Բուխթալի, արդյունք են հույն, խաչակիր և հայ երեք վարպետների համատեղ աշխատանքի³⁰: Այլազգի վարպետների մոտ ուսանելու հանգամանքով պիտի բացատրել առանձին հայ մանրանկարիչների արվեստում մինչ այդ բոլորովին անծանոթ, նոր գիտելիքների հայտնվելը և մեծ թվով նորամուծությունների հանդես գալը:

Բյուզանդական արվեստից սկիզբ առնող գեղարվեստական երևույթների բուն դրսևորումը 12-րդ դարի հայ մանրանկարիչ կուստանդիցիի ձևավորած 1193 թ. Ավետարանում (վեներիկ, Մխիթարյան միաբանության գրադարան, ձեռ. 1635) հավանաբար հետևանք է հույն վարպետների մոտ սովորելու³¹: Նույն եզրակացությանը կարելի է հանգել Թորոս Ռոպինի արվեստում բյուզանդական կամ արևմտյան, մասնավորապես՝ իտալական արվեստից բխող առանձնահատկությունների ի հայտ գալու կապակցությամբ:

Արդեն նկատվել է, որ Թորոս Ռոպինին վերագրվող Լևոն արքայազմի (ապագա Լևոն Բ թագավոր) առաջին պատկերում (Մատենադարան, ձեռ. 8321) վերջինիս լուսապսակի ուկու վրա եղած որոշմամբ խաչերը հետևանք են որոշակի կնիքներով ռակին կնքելու³², ինչը

²⁶ T. Velmans, *Le Tetraevangile de la Laurettrice*, Florence, Laur. VI. 23 Paris, 1971;

²⁷ S. Der Nersessian, *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art*, Washington D.C., 1963, p. 44.

²⁸ *Ibid.*, p. 44, 45, 46.

²⁹ L. Chookaszian, *On the Portrait of Prince Levon (Ms. Yerevan 8321)*, *Revue des Etudes Armeniennes*, T. 25, Paris, 1994-1995, p. 299-335.

³⁰ H. Buchthal, *Miniature Painting in the Latin Kingdom of Jerusalem*, Oxford, 1957, p. 32; L. Chookaszian, *L'Ouvre de Toros Roslin et l'enluminure byzantine*, *Revue des Etudes Armeniennes*, T. 28, Paris, 2001-2002, p. 405-406.

³¹ S. Der Nersessian, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century*, vol. 1, Washington D. C., 1993, p. 16-21.

³² L. Chookaszian, *On the Portrait of Prince Levon (Ms. Yerevan 8321)*, p. 299-335.

տոսկանական արվեստին բնորոշ տեխնիկական գիտելիք է³³ և հանդիպում է նաև այդ ժամանակի ֆրանսիական գրքարվեստում³⁴: Այս երևույթը զույություն չունի Թորոս Ռուսի-նին նախորդող ժամանակաշրջանի հայ գրքարվեստում և հայ վարպետի ստեղծագործության մեջ կարող էր հայտնվել միայն իտալացի եկվոր նկարչի հետ շփվելու, կողք-կողքի աշխատելու շնորհիվ: Ուշագրավ է, որ նույն հախշը ունեցող կնիքի դրոշմը երևան է գալիս միայն Լևոն արքայազնի դիմանկարին ժամանակակից խաչակրաց արվեստում, մասնավորապես Սիմայի Ս. Կատարինն վանքի հավաքածուի սրբապատկերում, որը ներկայացնում է Աստվածամոր ննջման տեսարանը³⁵:

Պահպանվել են մեծ թվով հայկական մատյաններ, որոնք 13-րդ և 14-րդ դարերում ձևավորվել են հայ ու իտալացի նկարիչների համատեղ ջանքերով ինչպես Կիլիկիայում³⁶, այնպես էլ Հռոմի, Շենոփայի, Բիդնիայի, Պերուջիայի և այլ իտալական քաղաքների հայկական վանքերում³⁷: Միանգամայն բնական է, որ համագործակցության այդ մթնոլորտում այս արվեստագետները միմյանցից սովորում էին ինչ-ինչ գիտելիքներ:

Հայտնի է, որ հայ մանրանկարիչները, զրքի նկարագարդման արվեստը զարգացնելուն զուգընթաց, աշակերտներ էին պատրաստում վանական դպրոցներում, նաև նրանց ներգրավելով իրենց աշխատանքների մեջ: Պահպանվել են բազմաթիվ հայկական ձեռագրեր, որոնց հիշատակարաններում վարպետները արձանագրում են իրենց օգնած սաների անունները: Քիչ չեն նաև դեպքերը, երբ հիշատակարանները լրում են այդ մասին: Ծատ հաճախ աշակերտները հարգանքով և երախտագիտությամբ նշում են իրենց ուսուցիչների անունները, բայց բազմաթիվ դեպքերում նրանք նաև ոչինչ չեն հայտնում: Մեծ թվով մատյաններ առհասարակ գրկվել են իրենց հիշատակարաններից, որոնք ընկել-կորել են: Այսպիսի պարագաների բերումով դարերի ընթացքում հարատևած գեղանկարչական դաստիարակության սերնդից-սերունդ շարունակված գիծը վերականգնելը երբեմն անկարելի է:

³³ **Mojmir Frinta**, An Investigation of the punched decoration of Mediaeval Italian and Non-Italian Panel paintings. The Art Bulletin XLVII, no. 2 (June 1965), pp. 261-265, figs. 20, 25.

³⁴ **Idem**, Punched marks in the Ingeborg Psalter. The Year 1200. A Symposium, New York, 1975, pp. 251-260; **Ch. Maumene, L. D'Harcourt**, Iconographie des Rois de France, Première Partie, Paris, 1929 (=Archives de l'Art Française, t. XV), Paris, 1929, pl. I (1-4), p. 19.

³⁵ **K. Weitzmann**, Icon Painting in the Crusader Kingdom. Dumbarton Oaks Papers, vol. 20, Washington D. C., 1966, p. 56, figs. 16, 17.

³⁶ **S. Agénián**, Manuscrits Arméniens Enluminés du Catholicoscat de Cilicie, Préface de S.S. le Catholicos Karekine II, Antelias-Liban, 1991, p. 19-30, pl. H-K, XVIII-XXVI.

³⁷ **T. A. Измайлова**, Армянская рукопись, написанная в Генуе в 1325 году и ее серебряный оклад 1347 года. - Византийский Временник, т. XX, Москва-Ленинград, 1960, с. 243-258; **E. Korkhmazian, I. Drampian, and G. Hakobian**, Armenian Miniatures of the 13th and 14th Centuries from the Matenadaran Collection, p. 160, 164; **S. Der Nersessian, A. Mekhitarian**, Armenian Miniatures from Isfahan. Preface and Introduction by H.H. Catholicos Karekin II, Bruxelles, 1986, p. 57, 60, fig. 34; **E. Korkhmazian**, Deux manuscrits arméniens écrits et illustrés à Bologne. - Atti del Quinto Simposio Internazionale di Arte Armena, Venezia-Milano-Bologna-Firenze 1988 28 maggio-5 giugno, San Lazzaro-Venezia, 1991, p. 517-521; **Э. Корхмазян**, Армянские рукописи, иллюстрированные в Италии. «Պարմու-Բանասիրական հանդես», 1971, քիվ 3, էջ 247-255:

րակնու իիզանցուն ու նրա հետ ծաղկել մատյաններ⁴¹: Այս ընտանիքի անդամների ու աճյալ աշակերտների համատեղ գրած⁴² և Եկարազարդած ձեռագրերի թիվը հսկայական է դրանք այսօր ցրված են աշխարհով մեկ:

Մանրանկարիչ-ուսուցիչ և մանրանկարիչ-աշակերտ հարաբերությունները ուսումնարանի շատ կարևոր է պարզել, թե ո՞ր տարիքից է սկսում արվեստագետի ինքնուրույն շխտատանքը, որքա՞ն է տևում մեկ մատյանի պատկերազարդումը, ինչպե՞ս է այն կազմակերպվում արվեստանոցի ներսում պատվերը ստանալիս և թե առհասարակ ինչքա՞ն մապրել հայ ծաղկողները:

Առաջին հարցին պատասխանելու առումով ուշագրավ է արդեն վերը հիշատակված րիպոր Մերենց խյաթեցու թողած հիշատակարաններից մեկը: Երուսաղեմում 1415 թ. լիօրինակած մատյանում նա գրում է, որ ինքը վաթսուցվեց տարեկան է և քառասունութ արվա հոգևորական: Դա նշանակում է, որ նա ծնվել է 1349 թ. և, ըստ Ներսես քհն. Ներսայանի, մատյաններ սկսել ընդօրինակել 18 տարեկանից, այսինքն՝ 1367 թվականից⁴³: Այսին է, որ քրդերը հարձակվել են Արծկեի և Յիպնավանքի վրա, բռնել Գրիգոր Մենց խյաթեցուն և հավատքը չուրանալու համար նահատակել այնքան վաճակահին: Այդ սպր-կատարվել է 1425 թ. մայիսի 27-ին, այսինքն՝ Գրիգոր Մերենց խյաթեցին ապրել է թամասունցեց տարի⁴⁴:

Փաստորեն սա հազվագյուտ դեպքերից մեկն է, երբ հայտնի է մանրանկարչի ծննդյան մահվան ստույգ թվականը: Թուվմա Մեծուհեցին իր Պատմության մեջ Գրիգոր Մերենց խյաթեցու մասին գրում է, որ նա հիսունհինգ տարի շարունակ, վաճեցից վաճեց գնալով, օր իր շեր ձեռագրեր է ընդօրինակել: Իսկ Առաքել Բաղիշեցին նշում է, որ Գրիգոր Մերենց խյաթեցին տարվա բոլոր եղանակներին ամեն ժամ, օր ու գիշեր, տանը թե դուրսը, վաճում, թե գյուղում, թե քաղաքում մինչև իր նահատակության օրը մատյաններ է ընդօրինակել⁴⁵: Դրանք նա միտրել է նկերիցներից կամ վաճառել ու դրամը բաժանել աղքատներից:

Շատ քիչ է պատահում, որ պատմությունը այսպիսի ճշգրտությամբ պահպանած լինի միայն հայ ծաղկողի կյանքի մանրամասները, այլև գոնե ծննդյան ու մահվան թվականները: Ավելի հաճախ մասնագետները ստիպված են փորձել վերականգնել մանրանկարչի լճյան ու մահվան թվականները և կենսագրական մյուս տվյալները՝ ուշադրություն արձնելով բոլորովին կողմնակի թվացող փաստերին:

Այսպես, օրինակ, միջնադարի հայ մեծանուն մանրանկարիչ Թորոս Թոսլիցին առնչվող շազիր հատորների հիմնական մասը պահպանել է ընդօրինակության ստույգ ժամանակ, հետևաբար դժվար չէ որոշել, թե ինչ շրջան է ընդգրկում նրա գործունեությունը: Չեյնցի Ավետարանը ստեղծվել է 1256 թ., իսկ Մալաթիայի Ավետարանը՝ 1267-1268 թվականներից: Թորոս Թոսլիցին վերագրվող ամենահին մատյանը, որի մաս է կազմում Լևոն

⁴¹ Armenian Art Treasures in Jerusalem, p. 92-94, fig.129-136; S. Der Nersessian and A. Mekhitarian, Armenian miniatures from Isfahan, p. 30, fig. 7-11.

⁴² Մ. Գեորգյան, Ինչպես լին նկարազարդվում ձեռագրերը, Էջ 63:

⁴³ V. Nersessian, Treasures from the Ark, p.171.

⁴⁴ Մ. Մաթևոսյան, Մ. Մարտիրոս, Գրիգոր Մերենց հյաթեցի, Էջ 35:

⁴⁵ V. Nersessian, Treasures from the Ark, p.171.

շուրջ քսանչորս տարի ուսանել է Ջոտտոյի ձեռքի տակ: Ականակ նկարչի կյանքի այս փուլին Իտալիայում սովորաբար հաջորդել են որևէ վարպետի արվեստաճանցում օգնական աշխատելու՝ փորձառություն կուտակելու երկար տարիները:

Հայ մեծ նկարչի ծննդյան մոտավոր ժամանակը հաշվարկելու համար Չենցինիի տրամադրած տվյալները կիրառելը բնավ էլ հիմնազուրկ չէ⁴⁹: Տեղից է այստեղ նորից հիշել, որ 13-14-րդ դարերում հայ և իտալացի ծաղկողների համատեղ ջանքերով և՛ Կիլիկիայի, և՛ Իտալիայի հայկական գրչատներում զգալի թվով հայերեն ձեռագրեր են նկարազարդվել⁵⁰: Դա նշանակում է, որ հայ և իտալացի վարպետների մասնագիտական հմտությունն ու պատրաստվածությունը գտնվում էր համապատասխան բարձրության վրա: Այլապես դժվար է պատկերացնել, որ նրանց միջև որևէ համագործակցություն հնարավոր լիներ: Ասվածից հետևում է, որ թե՛ հայերի, թե՛ իտալացիների նկարչական մասնագիտացման համար աճեցրած շտապ էին մոտավորապես նույն բանակով տարիները:

Կարելի է ենթադրել, որ ինչպես բազմաթիվ երեխաներ, Թորոս Ռոսլինը ևս սկսել է նկարել սովորել առնվազն 13-14 տարեկանից:

Եթե ընդունենք, որ 1256 թվականին Ջեյթունի Ավետարանը ձևավորելիս Ռոսլինը եղել է 20-25 տարեկան (ինչպես գտնում է Լ. Ռ. Ազարյանը), ապա կստացվի, որ նկարիչը ծնվել է 1231-1236 թվականների միջև ընկած որևէ տարում: Եթե ճշգրիտ համարենք այս եզրակացությունը, ուրեմն հարկ է, որ ընդունենք, թե Ռոսլինը 13 տարեկան է եղել 1244-1249 թվականների միջև գտնվող ինչ-որ մի տարում կամ 14 տարեկան դարձել 1245-1250 թվականների ընթացքում: 1244-1249 կամ 1245-1250 թվականներից սկսած նա պիտի ձեռնարկեր նկարել սովորելու գործը: Քանի՞ տարի պիտի տներ աշակերտության շրջանը: Չենցինո Չենցինիի նման Ռոսլինը պիտի ուսաներ տասներկու տարի⁵¹, այսինքն՝ տարրական մասնագիտացման հասնել 1256-1261 կամ 1257-1262 թվականների միջև ընկած տարիներին⁵²: Սա այնքան էլ համոզիչ չի թվում, որովհետև նշված տարիներին հայ նկարիչը վաղուց արդեն մասնագիտական հասունացման էր հասել և գլխավորում էր Հոմսվայի մյուս երիտասարդներից:

Այստեղ է, որ Լ. Ռ. Ազարյանի կարծիքը քննություն չի բռնում: Հաշվարկներն իրենց չեն արդարացնում նաև այն դեպքում, երբ Ռոսլինից 20-25 տարեկան ենք համարում Լևոն արքայազնի դիմանկարը վրձնելու ժամանակ:

Կասկածից վեր է, որ Թորոս Ռոսլինը 1256 թվականի Ջեյթունի Ավետարանը կամ Լևոն արքայազնի պատկերը ստեղծելիս 20-25 տարեկանից բարձր է եղել և չի ծնվել 1231-1236 կամ, առավել ևս՝ 1225-1230 թվականների ընթացքում: Տարակույս չկա, որ նա ծնվել

⁴⁹ *Steu* Ченнио Ченниви. Книга об искусстве или Трактат о живописи. Перевод с итальянского А. Лужицкой. Под редакцией и со вступительной статьей А. Рыбникова, Москва, 1933, с.5, 60.

⁵⁰ *Steu* S. Agémian, *Manuscripts Arméniens Enluminés du Catholicosat de Cilicie*, p. 19-30, pl. H-K, XVIII-XXVI, T. A. *Измайлова*, *Армянские рукописи, написанные в Генуе в 1325 году в ее серебряный оклад 1347 года*, с. 243-258; E. *Korkhmazian, I. Drampian and G. Hakobian*, *Armenian Miniatures of the 13th and 14th Centuries from the Matenadaran Collection*, p.160, 164; S. *Der Nersessian, A. Mekhitarian, S. Der Nersessian and A. Mekhitarian*, *Armenian Miniatures from Isfahan*, p. 57, 60, fig. 34; E. *Korkhmazian*, *Deux manuscrits arméniens écrits et illustrés à Bologne*, p. 517-521; Э.Корхмази, *Армянские рукописи, иллюстрированные в Италии*, стр. 247-255.

պարզել, թե առհասարակ միջնադարյան նկարիչները ի՞նչ տարիքում են արժանանում հասարակական գնահատման ու ճանաչման, այլ կերպ ասած՝ ո՞ր տարիքում են նրանք առաջին անգամ հիշատակվում ժամանակակիցների կողմից: Գծաթխտարար հայ հին գեղանկարիչների կենսագրությունները մեզ փաստեր չեն տալիս այս հարցին պատասխանելու համար: Իտալացի նկարիչների պարագայում կարծես թե հնարավոր է որոշ վիճակագրական մոտեցում ցուցաբերել մեզ հետաքրքրող հարցին:

Այսպես, օրինակ, հնարավոր է պարզել, որ 13-րդ դարի իտալացի երփնագրողներից Չիմաբոնեն առաջին անգամ հիշատակված է 32, Սիմոնե Մարտինի՝ 31 և ավելի, Ջոտտո՝ 37-40՝ տարեկանում: Դուչչիոն 20-ից ավելի տարեկանում նշված է որպես «գարդարող», իսկ 30 և ավելի տարեկանում՝ իբրև «նկարիչ»: Թեև Լևոն արքայազանի դիմանկարն ու նրա մայր ձեռագիրը չեն պահպանել Ռուսիցի անունը և մատյանի ընդօրինակման ճշգրիտ թվականը, այդուհանդերձ մեզ թվում է, որ հայ նկարիչը, ինքնուրույն ստեղծագործություն հեղինակելու համար, իտալացի իր ժամանակակիցների նման պետք է անցած լիներ 30 տարեկանի սահմանը և մոտեցած լիներ 40 տարեկանին:

Ըստ երևույթին, Հռոմկլայի արվեստաճոցի ղեկավարությունը ստանձնելու համար Ռուսիներ պետք է բոլորեր իր չորրորդ տասնամյակը: Ճատ հավանական է, որ 1256 թվականին Ջեյթունի Ավետարանը ձևավորելիս նա իրոք անցել էր այդ սահմանը: Նույն տարիքում նա կարող էր առաջնորդել իրենից երիտասարդներին և նաև վայելել տարեցների կամ դեռևս ապրող ուսուցիչների հարգանքը:

Մեծ նկարչի ծննդյան մոտավոր ժամանակը որոշելու հարցում կարևոր է նաև մեկ ուրիշ հանգամանք. 1256 թվականի նրա ձեռագրի ավետարանիչների դիմանկարներում դիտվող ապրումներն ու խոհականությունը մտածել են տալիս դրանց հեղինակի ոչ միայն դիտողականության, այլև լուրջ կենսափորձի մասին: Մեզ թվում է, որ Ջեյթունի Ավետարանի Հովհաննեսի դեմքը նկարողն ամեն դեպքում պետք է որ անցած լիներ քառասուն տարեկանի սահմանը: Նկարչի ծննդյան շրջանը պարզելու առումով ուշագրավ է նաև մեկ այլ հանգամանք. արվեստաճոցի ղեկավար լինելու համար Ռուսիներ մարդկանց առաջնորդելու, ուղղություն տալու, խնդիր առաջադրելու և այն լուծելու ձևեր գտնելու որոշակի փորձառություն պետք է ունենար, խիստ ու պահանջկոտ լիներ նրանց նկատմամբ:

Նյու Յորքի համալսարանի Գեղարվեստի ինստիտուտի պրոֆեսոր Թ. Մեթյունը ժամանակակից ամերիկացի քիմիկոսների օգնությամբ կարողացել է բացահայտել, որ Կիլիկիայի գրչատներում շատ խիստ հսկողություն է եղել հատկապես ներկերի պատրաստման աշխատանքների նկատմամբ⁵¹:

Անփոփելիով մեր վերոհիշյալ դիտումներն ու հաշվարկները, կարող ենք ասել, որ Թորոս Ռուսիներ ծնվել է 1210-1216 թվականների ժամանակահատվածում: Եթե նույնիսկ մեր հաշվարկները որոշ չափով չափազանցված են, ապա՝ միայն մի քանի տարիների իմաստով:

Թերահավատ ընթերցողին համոզելու առումով օգտաշատ կարող է լինել նաև Թորոս Ռուսիցի մահվան մոտավոր տարեթվի և դրա հետ կապված որոշ պարագաների պարզա-

⁵¹ Տե՛ս Լ. Չուգասյան, Ամերիկայի քիմիկոսները և հայ մանրանկարչությունը: «Նանդես Ամսթերա», 1989, թիվ 1-12, էջ 151:

բանումը: 1268 թվականից հետո ստեղծված ձեռագրերի մեջ մեծ նկարչի անվան բացառությունը, ըստ Լ. Ռ. Ագաբյանի, կարելի է բացատրել նրա մահացած լինելու հանգալայությունը, ըստ Լ. Ռ. Ագաբյանի, կարելի է բացատրել նրա մահացած լինելու հանգալայությունը⁵²: Ա. Տեր-Ներսեսյանը ևս կարծում է, որ նկարիչը վախճանվել է կամ հետացել Հոռոմկայից⁵³: Մինչ այդ արվեստագետն իր օգնականների հետ նկարազարդել է այժմ վաշիցոտոսի Ֆրիդ Պատկերասրահում պահվող Ավետարանը: Այն, ինչպես գտնում է Ա. Տեր-Ներսեսյանը, ընդօրինակվել է Թորոս Ռոսլինի գործունեության վերջին շրջանում⁵⁴: Ա. Տեր-Ներսեսյանը մեկ այլ առիթով նշում է, որ հիշյալ ձեռագիրը ստեղծվել է պատվիրատուի՝ վասակ իշխանի՝ Եգիպտոսից վերադառնալուց, այսինքն՝ 1268 թվականից փոքր-իցն հետո⁵⁵: Ինչպես գիտենք, վասակը Եգիպտոս էր մեկնել իր եղբորորդուն՝ թագաժառանգ Լևոնին (ապագա Լևոն Գ արքային) գերությունից ազատելու նպատակով: Վերն ասվածից հետևում է, որ 1269-1270 թվականներին Թորոս Ռոսլինը դեռևս ողջ էր: Մեր բերած բոլոր փաստերն ու դիտողությունները հիմք են տալիս ենթադրելու, որ Թորոս Ռոսլինն ապրել է 1210-1270 թվականների ժամանակահատվածում, այսինքն՝ շուրջ 54-60 տարի:

Գծարխտարար, մենք չգիտենք, թե որքան էր կյանքի միջին տևողությունը կիլիկիայում և հատկապես նկարիչների կյանքի միջին տարիքը: Այս հարցում ևս մեզ կարող են օգտակար լինել իտալացի նկարիչների մասին պահպանված տեղեկությունները, մասնավորապես 13-րդ դարում ապրած հեղինակների կենսագրական տվյալները: Այսպես, օրինակ, հայտնի է, որ այդ հարյուրամյակի նշանավոր նկարիչ Չիմարուեն նույնպես ապրել է մոտավորապես 60 տարի՝ 1240-1300 թվականների ընթացքում⁵⁶: Ուշագրավ է, որ այս վարպետի անունն առաջին անգամ հիշված է 1272 թվականին, այսինքն՝ նրա 32 տարեկան եղած ժամանակ, իսկ ստեղծագործական ակտիվության շրջանը վերաբերում է 1285-1295 թվականներին, այն է՝ 45 տարեկանից հետո: Այս հանգամանքը մտածել է տալիս, որ 1256-1270 թվականներին Ռոսլինի ակտիվությունը հնարավոր է, որ զուգահեյակեր նրա 46-60 կամ 40-54 տարեկան հասակին:

Հայ նշանավոր երփնագրողի մյուս իտալացի ժամանակակիցը՝ նկարիչ Դուչչիո դի Բուոնինսենինան, ծնվել է մոտավորապես 1255 թվականին և մահացել 1319 թվականին, այսինքն՝ ապրել է շուրջ 64 տարի: Որպես նկարիչ նա առաջին անգամ հիշվել է 1278 թվականի մի փաստաթղթում⁵⁷, ուրեմն առնվազն եղել է 20 տարեկան կամ, ինչպես ենթադրում են՝ ավելի մեծ: 1275 թվականի մեկ այլ աղբյուրում նա հիշված է որպես «գործարող» (disegnatore), իսկ 1285 թվականին մի այլ տեղ՝ իրեն «նկարիչ» (pictor): 1285 թվականից սկսած և հատկապես 1302, 1308, 1311 թվականներին նա մեծ զեղանկարներ է ստեղծ

⁵² Տե՛ս Լ. Ռ. Ագաբյան, նշվ. աշխ., էջ 129:

⁵³ Տե՛ս S. Der Nersessian, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia...*, p. 76.

⁵⁴ Տե՛ս Idem, *L'Art Arménien des origines au XVII siècle*, Paris, 1977, p. 138.

⁵⁵ Ibid.

⁵⁶ Տե՛ս E. Benezit, *Dictionnaire critique et documentaire des Peintres, Sculpteurs, Dessinateurs et Graveurs*, Nouvelle Edition, t. 3, Paris, 1976, p. 34; *L'opera completa di Cimabue il momento figurativo pregiottesco*, Presentazione, apparati critici e filologici di E. Sindona, Milano, 1975.

⁵⁷ E. Benezit, *Dictionnaire critique et documentaire des Peintres, Sculpteurs, Dessinateurs et Graveurs*, p. 700.

ծել տարբեր տաճարների համար: Փաստորեն նրա զեղարվեստական ակտիվությունը ստեղծել է շուրջ 45 տարի, և մահավաճի բեղուն են եղել նկարչի կյանքի վերջին երկու տասնամյակները⁵⁸:

Կարելի է ուշադրություն դարձնել նաև Ջոտտո դի Բոնդոնի (1266^o-1337 թթ.) կենսագրությամբ: Նրա գործերից ամենից լավ պահպանվել են Պաղոսայի Կապելլա դել Արենա-լի կամ Ակրոպոլսի կապելլայի որմնանկարները (1303-1306 թթ.): Ջոտտոն այդ ժամանակ հավանաբար եղել է 37-40 տարեկան, իսկ ընդհանուր առմամբ ապրել է թերևս 71 տարի⁵⁹:

Հիշարժան է նաև Սիմոնե Մարտինիի օրինակը: Նա ծնվել է մոտավորապես 1284 թվականին և մահացել 1344 թվականին, այսինքն՝ ապրել է 60 տարի կամ մի փոքր ավելի: Նրա ամենավաղ հայտնի գործը մեծ որմնանկար է Սիենայի Պալացցո Պուբլիկոյում, քաղաքային վարչության շենքում, և վերաբերում է 1315 թվականին, երբ հեղինակը եղել է 31 տարեկան կամ մի փոքր ավելի: Սիմոնե Մարտինիի կյանքի առաջին երեսուն տարիների մասին ոչինչ հայտնի չէ: Հավանաբար այդ ժամանակ նա ճամփորդել է Ֆրանսիայում և ծանոթացել ֆրանսիական մշակույթին: 1317 թվականից մինչև 1335 թվականը նրա աճուրդը գրեթե ամեն տարի կամ երկու տարին մեկ հիշատակվում է որպես այս կամ այն ստեղծագործության հեղինակ⁶⁰: Այդ նշանակում է, որ նա 33 տարեկանից կամ մի փոքր ավելի բարձր հասակից մինչև 51 տարեկանը, կամ գուցե քիչ ավելի մեծ տարիքում է առավելագույն չափով դրսևորել իր ստեղծագործական կարողությունները:

Թորոս Ռոսլինի կյանքի մոտավոր տևողությունը որոշելու առումով արժե ուշադրություն դարձնել նաև անգլիացի մանրանկարիչների կենսագրականներին: Հանրահայտ փաստ է, որ նրանցից շատ քչերի անուններն են պահպանվել: Այսպես, նշանավոր անգլիացի մանրանկարիչ Մեթյու Փյարիսը ծնվել է մոտավորապես 1200 թվականին և մահացել 1259 թվականին⁶¹: Ինչպես Ռոսլինը, նա ևս եղել է գրիչ, ծաղկող և հայ մեծ նկարչի նման գրել չափածո ձևով: Իբրև այքի ընկնող նկարիչ, որը նաև թողել է անհամեմատ մեծ գրական ժառանգություն, նա բացառիկ երևույթ է միջնադարյան արվեստի պատմության մեջ⁶²: Այս վարպետների մյուս անգլիացի ժամանակակիցը՝ Վիլյամ դե Բրայլսը, ձեռագրեր է ծաղկել 1230-1260 թվականներին⁶³: Չի կարելի չնկատել, որ, ասես որոշակի մի օրինակաչության համաձայն, առավել բեղուն են նկարիչների կյանքի վերջին տասնամյակները:

Ամենատարբեր կողմերից մտնեցալով յնդրո առարկա հարցերին, կարելի է մտածել, որ Թորոս Ռոսլինը ապրել է 1216-1270 կամ, ինչն ավելի հավանական է՝ առնվազն 1210-

⁵⁸ Տե՛ս G. Vigni, Duccio di Buoninsegna. – Encyclopedia of World Art, Vol. IV, London, 1961, p. 503-510; G. Ragionieri, Duccio, Catalogo completo, Firenze, 1989.

⁵⁹ Տե՛ս J. Pop-Hennessy, Giotto. – Encyclopedia ..., vol. VI, 1962, p. 339-355.

⁶⁰ Տե՛ս G. Paccagnini, Martini Simone. – Encyclopedia ..., vol. IX, 1964, p. 502-507; P. Leone de Castris, Simone Martini, Catalogo completo, Firenze, 1989.

⁶¹ Տե՛ս J. Backhouse, VI Devotions and Delights, The Illuminated books of Gothic England. In: Age of Chivalry, Ed. by N. Saul, New York, 1992, p. 78.

⁶² X. Muratova, Vir quidem fallax et falsidicus, sed artifex praelectus, Remarques sur l'image sociale et littéraire de l'artiste au Moyen Age. Artistes, artisans et production artistique au Moyen Age, Colloque international, Organisé et édité par X. B. I. Allet, Volume I, Les hommes, Paris, 1986, p. 63-72.

⁶³ Ibid, p. 80.

Ռոսլիցի՝ 1267-1268 թթ. Մալաթիայի Ավետարանի (Մատենադարան, ձեռ. 10675) հիշատակարանի տվյալներից հայտնի է, որ այդ ձեռագրի ընդօրինակությունը ավարտվել է գերությունից և ևս կնիքներով փակվել է, որ 1266 թ. եզրակապված մամուլքները հարձակվում են Կիլիկիայի վրա և օգոստոսի 23-ին Աև լեռների մոտ, Անտիոքից ոչ հեռու գտնվող Մառի կոչվող լեռնանցքում, արյունահեղ ճակատամարտ է տեղի ունենում. արքայորդիներ Լևոնի ու Թորոսի գլխավորած հայկական զորքը, պարտություն կրելով, ցահանջում է: Այդ մարտում Թորոսը զոհվում է, իսկ Լևոնը գերի է ընկնում և մամուլքների կողմից տարվում Եգիպտոս⁶⁹: Այդ աղետալի իրադարձություններից հետո Հերոն թագավորը բանակցություններ է սկսում Ֆեդոստար սուլթանի հետ, հաշտության պայմանագիր կնքում և պարտավորվում հաճմենու նրա պահանջած շրջանները: Փոխարենը, այդ զիջումների դիմաց բանտից ազատ է արձակվում Լևոն արքայազնը: Հայտնի է, որ վերջիցս վերադարձը Եգիպտոսից տեղի է ունցել 1268 թ. հունիսի 24-ին: Մեր հաշվարկների համար այս թվականը հատուկ կարևորություն է ներկայացնում:

Ուշադրություն է գրավում, որ նույն մատյանի հիշատակարանում նկարիչը խոր կսկիծով արձանագրում է նաև իր հովանավորի և մեկենասի՝ Կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցու մահը 1267 թվականին: Ըստ պատմական աղբյուրների՝ Կոստանդին Ա-ն վախճանվել է 1267 թ. ապրիլի 9-ին⁷⁰, և քանի որ Մալաթիայի Ավետարանը նա է պատվիրել, ապա պարզ է, որ մատյանը սկսել են ձևավորել այդ թվականից առաջ: Քանի որ գիտենք ձեռագրի ընդօրինակության ավարտման օրը, ուրեմն կարող ենք մոտավորապես պատկերացնել, թե որքան ժամանակում է Ռոսլիցը իր գործընկերների հետ գրել ու ծաղկել ձեռագիրը: Հավանաբար Մալաթիայի Ավետարանի ստեղծման հետ կապված աշխատանքները սկսվել են 1267 թ. ապրիլի 9-ից մի քանի ամիս առաջ, և արդեն ստույգ է, որ դրանք հատկապես իրականացել են այդ թվականից մինչև 1268 թ. հունիսի 24-ը ընկած ժամանակահատվածում:

Նույն ձեռագիրը ծաղկելու համար երբեմն պատվերը տրվում էր մեկ կամ ավելի նկարիչների: Այսպես, օրինակ, 1166 թ. Ավետարանի (Մատենադարան, ձեռ. 7347) ձևավորման տարբեր մասերի կատարման ոճական տարբերությունը ստիպում են Ա. Տեր-Ներսեսյանին մտածել, որ մանրանկարիչ Կոզման հեղինակողն է միայն ավետարանիչների դիմանկարների, իսկ խորանների ու անվանաթերթերի վրձնողն ուրիշ մեկն է, այսինքն՝ մատյանը նկարազարդողները երկու վարպետներ են⁷¹: 1271 թ. Գրազարկում Կոստանդին զրչի գրած մատյանը ծաղկել է Գրիգոր քահանան, իսկ Ավետիսը՝ գրել գլխագրերը⁷²: Որոշ մատյանների, օրինակ արդեն հիշատակված Ութ նկարիչների Ավետարանի, ձևավորման մեջ իրենց մասնակցությունն են բերում մեծ թվով վարպետներ: Երբեմն հեղինակներից յուրաքանչյուրը մի շարք պատկերներ է վրձնում, ինչպես, օրինակ, Սպահանի Անե-ճափրկիչ վանքի հավաքածուի (ձեռ. 57/161) Կիլիկյան Ավետարանում, որը 13-րդ դարում

⁶⁹ Տե՛ս նույն տեղում:

⁷⁰ Տե՛ս Մաղաթիա արքայ. Օրմանեակ, Տայոց էկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարպետները, բարեկարգությունը, սրբապատիվները, գրավանությունը ու ներկայ կայսրիներ, Կ.Պոլիս, 1912, էջ 72-73, 201:

⁷¹ Տե՛ս S. Deo Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 12.

⁷² Կ. Մաղաթիայի, Տայ մանրանկարիչների հիշարժվարանները, էջ 319:

ծաղկվել է մի շարք վարպետների համագործակցությամբ⁷³։ Երբեմն ոչ միայն աշխատանքի այսպիսի բաժանում ենք տեսնում, այլև նույն ձեռագրում այդպիսի համատեղ գործունեության պարագայում նաև նույն նկարի մեջ երկու մանրանկարիչ միաժամանակ են աշխատում։ Ասվածի լավագույն օրինակն է Լուս Անջելեսի համալսարանի գրադարանի աշխատում։ Այս մատյանում Թորոս Տարոնացին, Սարգիսը և մնացած նկարիչները ունեն առանձին պատկերներ, որոնք միայն իրենք են կատարել, բայց «Ավետուհի» մեջ Սարգիսը հեղինակել է Գաբրիել հրեշտակապետի, իսկ Թորոս Տարոնացին՝ Աստվածամոր կերպարը։ Դրա հետ մեկտեղ նույն մատյանի մեջ ամբողջապես Սարգիս գործն են հանդիսանում ավետարանիչների դիմանկարները։

Միջնադարյան այս կամ այն մանրանկարչի աշխատանքը ուղղակիորեն ցուցադրող ստեղծագործությունները մեզ գրեթե չեն հասել, բայց հայտնի են այնպիսի պատկերներ, որոնք գաղափար են տալիս, թե ինչպիսին պիտի լինեին նման երկերը։

Վերջիններիս շարքից հիշարժան են 1269 թ. Աստվածաշնչի (Երուսաղեմ, Ս. Հակոբյանց վանքի հավաքածու, ձեռ. 1925) երկու սկզբնաթերթերը։ Այս ձեռագիրը ընդօրինակվել է Երզնկայում Մխիթար, Հակոբ, Մովսես գրիչների համագործակցությամբ և Սարգիս արքեպիսկոպոս Երզնկացու պատվերով։ Խնդրո առարկա հատորը առաջին հայկական նկարազարդ Աստվածաշունչն է, և մանրանկարիչը հավանորեն զիսավոր գրիչ Մխիթարն է։ Այս ձեռագրի՝ մեզ հետաքրքրող սկզբնաթերթերից մեկում ներկայացված է Մովսես մարգարեն «Ի» զարդագիրը գրելիս։ Նա նստած է աթոռին և մի ձեռքով բռնել է թանաքամանը, իսկ աջով՝ գրիչը, և ավելի շուտ զարդարում է «Ի» տառը, քան զրում այն։ Փաստորեն նա նկարում է զարդագիրը⁷⁴։ Նույն տպավորությունն է ստեղծվում Գործք Առաքելոցի նախաբանը ցուցադրող սկզբնաթերթից։ Այդտեղ Ղուկաս ավետարանիչը նույն ձևով գրում կամ նկարում է «Ջ» զարդագիրը, որի օղակի մեջ մարդու դեմք է զետեղված⁷⁵։ Հասանելի է նաև մանրանկարչի 1368 թ. ձևավորած Ավետարանում, այն էլ ոչ թե Աստվածամորը, այլ Խաչելությունը նկարելու պահին⁷⁶։

Հայկական Աստվածաշնչի նկարազարդումների կապակցությամբ հիշարժան է Դավիթ Անհրաթի «Մահմանք իմաստասիրութեան» երկի մեզ հասած հնագույն ընդօրինակություններից մեկը (Երևան, Մատենադարան, ձեռ. 1746) զարդարող պատկերը (նկ. 2)։ Այս մատյանը ընդօրինակվել է նույնպես Երզնկայում 1280 թ. Մխիթար Դպիրի ձեռքով և Պարոն Հովհաննեսի պատվերով։ Ձեռագրի միակ սկզբնաթերթը ներկայացնում է Դավիթ Անհրաթին, որի գրչից ծնվում են «Մահմանաց գրքի» առաջին բառերը⁷⁷։ Բացառված չէ, որ այս մատյանի մանրանկարիչը նույն Մխիթար Դպիրն է, թեև այդ մասին գրիչը լուր է

⁷³ Sliu S. *Der Nersessian, A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan*, p. 39-57, fig. 12-31.

⁷⁴ Sliu Armenian Treasures of Jerusalem, p. 66, fig. 84.

⁷⁵ Sliu Les Dossiers d'Archeologie, Paris, N.177, Decembre, 1992, p. 89.

⁷⁶ The Medieval Artist at Work, p. 72, pl. XXVI.

⁷⁷ Դավիթ Անյաթթ, Իմաստէսիրութեան, նմանախմբություն 1280 թ. ձեռագրի, Մուսաբանը Ա. Արևշատյանի, նմանախմբությունը տպագրության տարրապատկեր Ք. Լ. Չուգասյանը, Երևան, 1980, էջ Ժ-ԺԱ։

իր հիշատակարաններում: Ակզբնաթերթի մեջ ներկայացված Դավիթ Աճառաթը աթոռի վրա նստած, մի ձեռքում պահել է թանաքամանը, իսկ աջով՝ զրիչը բռնած գրում է «Ռք» բառի առաջին տառը: Նա ցուցադրում է գրչի աշխատանքը, բայց քանի որ գրվող բառը զարդագրերով է ներկայացված, ուստի մանրանկարի միջոցով կարելի է պատկերացնել, որ այդպիսին կարող էր լինել և մանրանկարչի աշխատանքը: Այլ կերպ ասած, Դավիթ Աճառաթին կարելի է ընկալել թե՛ որպես տառը գրողի և թե՛ որպես տառը նկարողի: Կարելի է ասել, որ Դավիթ Աճառաթի պատկերը իր մեջ խտացնում է պատմական հիշողությունը և՛ գրչի, և՛ մանրանկարչի աշխատանքի մասին: Գուցե այս և Աստվածաշնչի պատկերների հեղինակները Դավիթ Աճառաթին, Մովսես մարգարեին, Ղուկաս ավետարանչին նկարելիս աչքի առաջ են ունեցել վանական արվեստանոցի իր գործընկերներից մեկին կամ մյուսին:

Ս. Տեր-Ներսեսյանը նշում է, որ 1269 թ. Երզնկայում Սարգիս արքեպիսկոպոսի պատվերով ընդօրինակված վերոհիշյալ Աստվածաշունչը ունի որոշ սկզբնաթերթեր, որոնց ձևավորումները իրենց ոճով շատ մոտ են Դավիթ Աճառաթին ներկայացնող վերոհիշյալ մանրանկարին⁷⁸:

Համեմատվող երկու ձեռագրերի պատկերների ընդհանրությունները թերևս պետք է բացատրել այդ մատյաններում Մխիթար Դպիրի որպես մանրանկարչի ունեցած աշխատանքային ներդրումով:

Հետաքրքիր է նկատել, որ ընդհանրապես արվեստի գործերը ստեղծելու պահին ներկայացված նկարիչներին պատկերող արևմտյան երկերը վերաբերում են 13-րդ և 14-րդ դարերին⁷⁹: Իսկ մանրանկարիչներին իրենց աշխատանքի ընթացքում ցուցադրող արևմտյան գրքարվեստի օրինակները ի հայտ են գալիս 12-րդ դարում⁸⁰: Միջնադարյան ձեռագրերը ուսումնասիրելիս ակամայից մերթ ընդ մերթ մտածում են, թե առավելագույնը որքա՞ն նկարազարդ ձեռագրեր կարող էր հեղինակել այս կամ այն հայ մանրանկարիչը իր կյանքի ընթացքում: Այս հարցի պատասխանը շատ հարաբերական կարող է լինել: Գրչագիր հատորների փնտրվող թվին գոնե որոշ չափով մոտենալու համար պետք է պարզել, թե առանձին վերցրած մի մանրանկարչից մեկից ավելի քանի մատյանները հատկապես երբևեցի են պահպանվել, որ դարից և որ մանրանկարիչներից են մեզ հասել առավել մեծ թիվ կազմող նկարազարդ մատյանները և որքան են դրանք:

Այս հարցի պատասխանը տալու համար առաջին հերթին պետք է հաշվի առնել, որ զանազան հանգամանքների քերումով, որոնք անզամ անձնական պարագաների հետ կառող են կապված լինել, հայ ծաղկողների ձևավորած ոչ բոլոր մատյաններն են մեզ հասել:

6-11-րդ դդ. հայկական նկարազարդ ձեռագրերի մեջ գրեթե չկան առնվազն երկու նմուշներ, որոնց ձևավորումը կարելի լիներ վերագրել նույն մանրանկարչին: Սա նշանակում է, որ այդ վարպետների ստեղծած մեծ ժառանգությունից պահպանվել է շատ փոքր մասը, այն է՝ յուրաքանչյուր նկարչի ոճի մասին կարելի է դատել միայն մեկական ձեռագրով:

⁷⁸ S. Der Nersessian, *L'Art Armenien des origines au XVII siecle*, p. 218, fig. 166.

⁷⁹ *The Medieval Artist at Work*, p. 21.

⁸⁰ *Ibid.*, p. 30-32, pl. VI, fig. 5.

Առայժմ միակ բացատրությունը կազմում է Հովհաննես Սանդղկավանցեցի /1010¹-1070² թթ./, որի ծաղկած հատորներից մեկ են հասել երեք Ավետարաններ:

12-րդ դարի հայ մանրանկարիչների համաստեղություն մեջ կարելի է առանձնացնել չորս անուններ, որոնց գործունեությունը առնչվում է Կիլիկիայի հայկական թագավորության տարածքի հետ, և որոնց ժառանգության վերաբերյալ տեղեկությունները 11-րդ դարի համեմատ նույնքան սահմանափակ չեն:

Բարեբախտաբար, հայտնի են Կոստանդին Կոչիկ (1125³-1195⁴ թթ.) մանրանկարչի ծաղկած ձեռագրերը: Կոստանդինը հավանորեն, Ս. Տեր-Ներսեսյանի ենթադրությամբ, եղել է Հեթումյան ընտանիքի իշխանների սիրած արվեստագետը: Ըստ Նորայր արքեպս. Պողարյանի, Կոստանդինից մեզ են հասել չորս, իսկ Ս. Տեր-Ներսեսյանի համաձայն՝ երեք նկարազարդ ձեռագրեր: Կոստանդինը մասնակցել է հավանորեն Սկևռայի վանքում /Կիլիկիա/ 1173 թ. գրիչ և մանրանկարիչ Գրիգորի ընդօրինակած Ավետարանի ձևավորմանը: Այդ ձեռագիրը 1915 թվականից առաջ պահվել է Տիգրանակերտում, և նրա պահվելու այժմյան վայրը հայտնի չէ: 1173-1174 թթ. Հոռմկլայում, հայոց կաթողիկոսի աթոռամիստում, Գրիգորն ընդօրինակել է մեկ այլ Ավետարան, որը 1915 թ. առաջ գտնվել է Թոքատում և նույնպես կորսված է: Գրիգորի՝ Սկևռայում ընդօրինակած ու ձևավորած և, ըստ որում, մյուս մեզ հասած միակ մատյանը ընդգրկում է Գրիգոր Նարեկացու «Մատյան Ռդերբություն» պոեմը (Մատենադարան, ձեռ. 1568) և վերաբերում է 1174 թ.:

Նարեկի ձևավորող Գրիգորը հաճախ է նույնացվում անվանակցի հետ, որը ծաղկել է 1197-1198 թթ. նախկինում Լվովի Հայկական Արքեպիսկոպոսարանի գրադարանում⁸¹, իսկ այժմ՝ Գնեզնոյում (Լեհաստան) պահվող Ավետարանը⁸²: Այս ձեռագիրը սկսել է նկարազարդվել Միհրի վանքում, ապա վերջացվել Սկևռայում, և այդ պատճառով հատորի մանրանկարիչը ստացել է «Գրիգոր Միհնեցի» պայմանական անունը մասնագիտական գրականության մեջ: Նրա աշակերտ Գրիգոր Սարկավազը ձեռագրերից մեկում իր ուսուցչին անվանում է «Սկևռայի ամենահայտնի գրիչը»⁸³: Սկևռայում Գրիգոր Միհնեցին 1215 թ. սկսել է ծաղկել իր վերջին Ավետարանը (Սպահան, Հայկական Ամենափրկիչ վանքի հավաքածու, ձեռ. 546/25), բայց առաջացած տարիքում մահացել է, և Գրիգոր Սարկավազը վերջացրել է այն հաջորդ տարի Տարսուսում⁸⁴: Վերջինս այն վարպետն է, որի 1215 թ. մահվան պատճառով կիսատ մնացած Ավետարանը ծաղկել-վերջացրել է հաջորդ տարի: Հայ գրքարվեստի պատմության մեջ սա թերևս առաջին և հնագույն դեպքն է, երբ արձանագրվում է մանրանկարչի մահվան ճշգրիտ թվականը:

Գրիգոր Միհնեցի մանրանկարչի մեկ այլ ժամանակակցից՝ գրիչ ու մանրանկարիչ Կոզմայից մեզ են հասել չորս նկարազարդ մատյաններ՝ 1166 թ. Հոռմկլայի Ավետարանը

⁸¹ Sliu S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 13, 16-18, 36-37.

⁸² Das Lemberger Evangeliar, Eine wiederentdeckte armensche Bilderhandschrift des 12. Jahrhunderts, Hrsgb. von G. Prinzing und A. Schmidt (Sprachen und Kulturen des christlichen Orients, Bd. 2), Wiesbaden, 1997.

⁸³ Sliu S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 37.

⁸⁴ S. Der Nersessian, A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, p. 30, fig. 7-11.

(Մատենադարան, ձեռ. 7347)⁸⁵, 1205 թ. Խարբերդում ընդօրինակված Ավետարանը (Վեներեթիկ, Մխիթարյան Միաբանության գրադարան, ձեռ. 938)⁸⁶, Խարբերդի մոտ Բարգանջա վանքում 1219 թ. գրված Ավետարանը (Մատենադարան, ձեռ. 7734)⁸⁷ և նախկինում Կեսարիայում պահվող և կորած համարվող, բայց իրականում Գետրոյտի Ալեք Մանուկյան թանգարանում գտնվող Ավետարանը, որը մինչև 1269 թ. ստեղծվել է Հռոմկլայից հյուսիս-արևմուտք գտնվող Թարան ավանում:

Հաջորդ դարի ձեռագրական հունձքը այսօր տարօրինակ պատկեր է ներկայացնում: Մասնագիտական առումով բավականին հնուտ մանրանկարի: Ներքի առանձին դեպքերում մնացել են մեկական մատյաններ, բայց երբեմն նաև չորսից ավել ձեռագրեր:

Այսպես, օրինակ, 13-րդ դարի մանրանկարիչ Մարգարե Աբեղայի ողջ ժառանգությունից մնացել է միայն 1211 թ. նրա ծաղկած Հաղպատի Ավետարանը (Մատենադարան, ձեռ. 6288)⁸⁸:

Կարին քաղաքի 12-13-րդ դդ. սահմանագծի հայ գրքարվեստի վարպետների մասին գաղափար ենք կազմում միայն երեք ձեռագրերով, որոնցից առավել ճշգնավորը 1232 թ. Թարգմանչաց Ավետարանն է (Մատենադարան, ձեռ. 2743)⁸⁹: Թեև ուսումնասիրողները այս ձեռագրի ձևավորող Գրիգորի վրձնից են վերագրում մյուս երկու մատյանների պատկերագրողունը, բայց մեզ թվում է, որ Գրիգոր Ծաղկողի բացառիկ արվեստի մասին գաղափար ենք կազմում միայն Թարգմանչաց Ավետարանի մանրանկարչությամբ:

Հրաչքով կամ պատահականությամբ 13-րդ դարից պահպանվել են վեց Ավետարաններ, որոնց ձևավորմանն իր մասնակցությունն է բերել այդ ժամանակի լավագույն վարպետներից Իզնատիոս Հոռոմոսցին⁹⁰, նույն ժամանակաշրջանից մեզ են հասել ճշգրիտ թվական ունեցող նաև յոթ ձեռագրեր, որոնց նկարագրողունն իրականացրել է Թորոս Ռոսլինը իր գործընկերների և աշակերտների հետ: Նրա վրձնից են վերագրում ևս երեք այլ ձեռագրեր և երկու պատարիկ⁹¹: 1256-1268 թթ. ստեղծված այս ճշգրիտ թվագրում

⁸⁵ Տե՛ս S. Der Nersessian, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia*, p. 3-12, 21, 25. Լ. Ազարյան, Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ. - նկ 40-49:

⁸⁶ Տե՛ս M. Janashian, *Armenian Miniature Painting*, p. 50-53, pls. 59-67.

⁸⁷ Տե՛ս Т. А. Измаилова, Мургавский образен в армянской миниатюрной живописи. Труды Государственного Эрмитажа, Культура и искусство народов Востока, т. 5, 1961, с. 76-97, илл. 2, 4, 6, 8, 10, 12; ee же, Мастер и образен. Романистская модель, вторая половина XII-начало XIII века. Матрица-проблема армянской живописи, рիվ 3, 1989, էջ 189-191:

⁸⁸ Տե՛ս Վ. Իսահանյան, Մարգարե, Երևան, 1990:

⁸⁹ Տե՛ս Լ. Չուգասյան, Գրիգոր Ծաղկող, Երևան, 1986:

⁹⁰ Տե՛ս Ե. արթուկ, Թովաթան - Դոկտրին, Հայ եկարիչներ, էջ 15-17:

⁹¹ Д. Чугасян, Искусство Византии, стран Латинского запада и наследие Торока Россия. The 17th International Byzantine Congress, Dumbarton Oaks/ Georgetown University Washington, D. C., August 3-8, 1986, Abstracts of Short Papers, p. 61-63; նույնի, «Մենույան» քննան թորոս Ռոսլինի արվեստում: «Քսենոն Մադրասարանի», հար. 15, Երևան, 1986, էջ 145-172; նույնի, Գրվազներ թորոս Ռոսլինի ժառանգությունից: «Քսենոն-վես», հար. CXLV, թիվ 1-4, Ս. Ղազար-Վենեթիկ, 1987, էջ 253-286; նույնի, «Իսուկություն» քննան թորոս Ռոսլինի արվեստում: «Տաղին տնօրյա», թիվ 1-12, Վիննա, 1988, էջ 191-218; նույնի, Творчество Торока Россия и византийская монументальная живопись. «Քսենոն Ղազարյանի», թիվ 3, Երևան, 1989, էջ 103-108; նույնի, «Ղազարյանի նարություն» քննան թորոս Ռոսլինի արվեստում: «Քսենոն-վես», հար. CXLVIII, թիվ 3-4,

ունեցող մատյանները բացառիկ մեթոդաբանական կարևորություն են ներկայացնում ոչ միայն հայ արվեստի մասնագետների, այլև միջնադարյան արվեստի պատմաբանների համար առհասարակ. քանի որ թույլ են տալիս երեք տասնամյակի ընթացքում քայլ առ քայլ հետևելու 13-րդ դարի մի նկարչի ոճի մեջ տեղի ունեցող փոփոխություններին: Դա, քայլ հետևելու 13-րդ դարի մի նկարչի ոճի մեջ տեղի ունեցող փոփոխություններին: Դա, քայլ հետևելու 13-րդ դարի մի նկարչի ոճի մեջ տեղի ունեցող փոփոխություններին: Դա, քայլ հետևելու 13-րդ դարի մի նկարչի ոճի մեջ տեղի ունեցող փոփոխություններին: Դա, քայլ հետևելու 13-րդ դարի մի նկարչի ոճի մեջ տեղի ունեցող փոփոխություններին:

Հաջորդ դարի ձեռագրական հունձքը այսօր կարծես ավելի միախառնական պատկեր է ներկայացնում: 14-րդ դարի մանրանկարիչ Թորոս Տարոնացու ծաղկած և մեզ հասած տասնչորս ձեռագրերը ընդգրկում են 1307-1346 թվականները⁹²: Կասկածից վեր է, որ նրա ձևավորած մատյանների մի մասը չի պահպանվել: Առնվազն երեսուցինը տարվա ստեղծագործական ակտիվություն ունեցած վարպետը ամենաքիչը յոթանասուն տարի պետք է որ ապրած լիներ:

Այդ հարցում կարելի է առանց դժվարության համոզվել՝ ուշադրություն դարձնելով նրա պատկերազարդած ձեռագրերի թվականներին: 1307 թ. հեղինակել է Վենետիկի Լիսիթարյանների թիվ 1917 Ավետարանի մանրանկարները և Սարգսի ու այլ մանրանկարիչների հետ մասնակցել այժմ Լոս Անջելեսի համալսարանի (UCLA) գրադարանում (Arm. Ms. 1) պահվող Ավետարանի ձևավորմանը:

1317 թ. նա անձամբ կամ ուրիշ ծաղկողների հետ զարդարել է չորս ձեռագրեր: 1318 թ. ձևավորել է երկու և 1321 թ. այլ երկու մատյաններ: Ինչպես նկատվել է, 1317-1318 թթ. նրա գործունեության զագաթնակետն են⁹³: 1331 թ. հետո, 1346 թ., նա ծաղկել է հաջորդ մեզ հասած ձեռագիրը: Անկարելի է, որ այսքան շատ ստեղծագործած մանրանկարիչը ոչինչ ապրած չլիներ 1307 թ. հետո մինչև 1317 թ. կամ 1331-1346 թթ. միջև ընկած տարիներին:

Ս. Ղազար-Անևարիկ, 1990, էջ 437-459; Նույնի, Миниатюра Тороса Рослина – «Переход через Красное море». «Լուսերն հասարակական գիտությունների», թիվ 10, Երևան, 1990, էջ 32-43; Նույնի, Творчество Тороса Рослина и византийская книжная живопись. The XVIII th International Congress of Byzantine Studies, Moscow State University, Moscow, August 8-15, 1991, Summaries of communications, p. 232-233; Idem, Cilician Book Painting: Miniatures of Toros Roslin and Italian Art, Atti del Quinto Simposio Internazionale di Arte Armena, Venezia-Milano-Bologna-Firenze, 1988, 28 maggio-5 giugno, San Lazzaro-Venezia, 1992, p. 321-332; Idem, The Art of Toros Roslin, National Gallery of Art, CENTER 13, Record of Activities and Research Reports, Washington D. C., 1993, p. 53-54; Նույնի, Թորոս Ռոսլինի «Թովմայի տեսիլագրության» մանրանկարը: «Բաներն Լիսիթարյանի», հար. 16, Երևան, 1994, էջ 31-43; Նույնի, On the Portrait of Prince Levon (Yerevan, Ms. 8321). Revue des Etudes Armeniennes, t. 25, Paris, 1994-1995, p. 299-335; Idem, Once again on the Subject of Prince Levon's Portrait. Journal of Armenian Studies, vol. 10, Dearborn-Michigan, 1999, p. 47-69; Idem, On a Portrait of Prince Levon and Princess Keran. Journal of Armenian Studies, vol. VI, No.2, Boston, 2000-2001, p. 73-88; Նույնի, Творчество Тороса Рослина в контексте культурных связей киикийской Армении XIII. Автореферат диссертации, Москва, 2001; Idem, L'Ouvre de Toros Roslin et l'enlumineure byzantine, p. 399-424; Idem, Armenisk bokmaleri Kilikia i 1100-og 1200-arene. Kirke & Kultur, Eksofisk Kristen Kunst, 4, Oslo, Norway, 2003, p. 339-350.

⁹² Th. F. Mathews and A. K. Sanjian, Armenian Gospel Iconography, p.71.

⁹³ Ibid. p.67-68.

Պահպանված ցկարագարի ձեռագրերի թվով իր նախորդներին գերազանցում է 14-րդ դարի մանրանկարիչ Սարգիս Պիծակը: Նրա թողած մատյանների առատությունը, Ա. Ն. Ավիրիցի խոսքերով ասած, «բացառիկ երևույթ է գրքարվեստի պատմության մեջ»⁹⁴: Նրա հետ է աղերսվում Ա. Ն. Ավիրիցի համաձայն՝ տասնութ⁹⁵, ըստ Նորայր արքեպս. Պողարյանի՝ տասնութ⁹⁶, ըստ Վ. Ղազարյանի՝ երեսուցյոթ, և մեր կարծիքով՝ ևս տասնմեկ, այսինքն՝ շուրջ քառասուցյոթ մատյանների ձևավորումը⁹⁷: Ա. Տեր-Ներսեսյանը ճշում է, որ մոտավորապես հիսուն ձեռագրեր են ստորագրված նրա կողմից կամ կարող են վերագրվել նրան⁹⁸: Այս առեղծի թիվը պայմանավորված է այն հանգամանքով, որ բազմաթիվ հատորների մեջ մանրանկարիչը պատկերազարդել է միայն մանրանկարների ոչ հիմնական մասը կամ միայն ավետարանիչների դիմանկարները և, բացի այդ, երկար կյանք է ունեցել ու ստացել մեծ թվով պատվերներ:

Այսպիսի զարմանալի քանակության կողքին ցավալի է արձանագրել այն փաստը, որ նույն դարի ընտիր վարպետներ Կիրակոս Թավրիզեցուց պահպանվել է միայն մեկ, իսկ Մխիթար Անեցուց՝ երկու ձեռագրեր⁹⁹:

Հաջորդ դարերի ծաղկողների մատյանները ավելի շատ են պահպանվել: Ուշագրավ է, որ Վասպուրականում 1432-1482 թթ. և զուցե հետո ապրած մանրանկարիչ Միմասի ձևավորած հատորներից մեզ են հասել երեսուցութ ձեռագրեր¹⁰⁰, այսինքն պետք է ենթադրել, որ նա ծաղկած լինելու զուցե Սարգիս Պիծակի չափ կամ ավելի մեծ թվով մատյաններ: 1454 թ. նա զարդարել է երեք, իսկ 1456 թ.՝ չորս ձեռագրեր: Նկատի առնելով Միմասի զարդարած 1452 թ. և 1455 թ. երկու Ավետարանները, 1458 թ. Սաղմոսագիրք-Աղոթագիրքը, ինչպես նաև 1452-1457 թթ. ընթացքում ընդօրինակված ճշգրիտ թվագրում չունեցող Հայսմավուրքը, նաև 1460 թ. Ծաղոցը, 1461 թ. Ավետարանը, 1462 թ. երկու ձեռագրերը, 1464 թ. մյուս երկու մատյանները, 1465 թ. Ծարակնոցը, 1466 թ., 1467 թ. և 1469 թ. Ավետարանները, կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ 1452-1469 թվականներին նա վրձնել է քսանմեկ ձեռագրերի պատկերները¹⁰¹, այսինքն այդ տարիները նրա գործունեության զգալի մասն են: Առնվազն հիսունմեկ տարվա ստեղծագործական ակտիվություն ունեցած վարպետը ամենաքիչը յոթանասուց-յոթանասուցհինգ տարի պետք է որ ապրած լիներ:

⁹⁴ А. Н. Саврич, Миниатюра древней Армении, Москва-Ленинград, 1939, с. 81.

⁹⁵ Նույն տեղում:

⁹⁶ Նորայր արքեպս. Ծովական (Պողարյան), Նայ նկարիչներ, էջ 58-64:

⁹⁷ Վ. Ղազարյան, Սարգիս Պիծակ, էջ 141-142, ինչպես նաև այս գրքի մասին մեր գրած զրուցախոսակար, «Լուսինը հասարակական գիտությունների», Երևան, 1981, թիվ 6, էջ 116-118:

⁹⁸ S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 142.

⁹⁹ S. Der Nersessian and A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, p. 74, 78, 85, 86, fig. 51-63; Ա. արք. Ծովական (Պողարյան), Նայ նկարողներ, էջ 64, 69; E. Korkhmazian, I. Drambian, G. Hakopian, Armenian Miniatures of the 13th and 14th centuries, ill. 163.

¹⁰⁰ S. Der Nersessian and A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, p. 109; է. Վարդանյան, Մինաս մանրանկարչի գեղարվեստական մտանկությունը: «Պատմա-Բանասիրական Նստիկ» (Երևան), 1999, 2-3, էջ 268-282:

¹⁰¹ է. Վարդանյան, Մինաս մանրանկարչի գեղարվեստական մտանկությունը, էջ 271-281:

Միջնադարյան հայ մանրանկարիչները միշտ չէ, որ ծաղկած ձեռագրերի էջերում թողել են մանրամասն տեղեկություններ իրենց մասին, նաև ժամանակի պատմական դեպքերի ու մեծանկա շրջապատի մարդկանց վերաբերյալ: Այդ տեսանկյունից բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Թորոս Ռոսլինի թողած տեղեկությունները: Ընդհանրապես 13-րդ դարի քրիստոնեական արվեստում մեծ փաստեր շարադրող կամ առհասարակ ժամանակագիր նկարիչներ չկան և այդ իմաստով Թորոս Ռոսլինին գնահատելիս սարակ կարելի է դնել միայն վերը արդեն հիշված անգլիացի մանրանկարիչ Մեթյու Փյարիսի կողքին, թեև վերջինիս գրական ժառանգությունը անհամեմատ մեծ է: Չի բացառվում, որ այս երկու վարպետների միջև ինչ-ինչ, մինչև իսկ միջնորդավորված առնչություններ եղած լինեին, քանի որ Անգլիայում Մեթյու Փյարիսը հարաբերություններ է ունեցել այդտեղ եկած հայերի հետ, բայց այդ մասին կանոնադաշտանք քիչ հետո:

Թորոս Ռոսլինի կյանքն ու գործունեությունը անլսելիորեն կապված են Հոմկլայի գրչակենտրոնի հետ: Նրա ծաղկած ձեռագրերի մեծ մասի հիշատակարաններում որպես այդ հատորների ընդօրինակման վայր նշված է Հոմկլան: Ռոսլինի ստորագրությունը կրող և ճշգրիտ թվական ունեցող մատյանները ստեղծված են 1256-1268 թթ. ընդգրկող ժամանակահատվածում:

Թորոս Ռոսլինի ծաղկած մատյաններում նրա ժառանգության անքակտելի մասն են կազմում նաև արվեստագետի ձեռքով գրված ընծայականներն ու հիշատակարանները: Չափաժող բնույթ ունեցող ընծայականները վկայում են նրա բանաստեղծական խառնվածքի ու կարողությունների, իսկ հիշատակարանները՝ պատմագրելու ձիրքի մասին¹⁰²: 1267-1268 թթ. Մալաթիայի Ավետարանում Ռոսլինի թողած հիշատակարանը մեծ կարևորություն է ներկայացնում 13-րդ դարի իրադարձությունները հետազոտող պատմաբանների համար: Նկարիչն այստեղ նշում է ձեռագրի ընդօրինակման տարին Եգիպտոսի մամլուքների՝ Անտիոքը գրավելու, բազմաթիվ մարդկանց սպանվելու և գերեվարվելու, տաճարների հրո ճարակ դառնալու մասին: Խոր ցավ զգալով այդ տաճարների կործանման համար, Ռոսլինը հմայված վերջիններիս գեղեցկությամբ, այն բնորոշում է «հրաշատեսակ վայելչությունը գեղոյ» բառերով: Ըստ նկարչի, այդ տաճարների գեղեցկության «հրաշատեսակ» վայելչությունը ոչ ոք չէր կարող նկարագրել: Թորոս Ռոսլինը հաղորդում է, որ Անտիոքի անկման լուրը մեծ «երկիտ, զարհուրանք» առաջ բերեց շատ երկրներում և հատկապես «կիլիկեաց աշխարհում»¹⁰³:

Թորոս Ռոսլինի հիշատակարաններում արտահայտվել է ոչ միայն նրա վերաբերմունքը իր ժամանակի իրադարձությունների նկատմամբ: Այստեղ նա տալիս է նաև իրեն շրջապատող մարդկանց բնութագրերը: Որոշ ձեռագրերի հիշատակարաններում նկարիչը ստեղծում է Կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցու գրական հետաքրքիր դիմանկարը: 1256 թ. Ավետարանում Ռոսլինն իր հովանավորին անվանում է «հայր որբոց» և ավելացնում, որ «աղբիւր էր նա բարեաց»¹⁰⁴: Նույն ձեռագրում նա գրում է, որ Կոստանդին Ա-ն իր վարքով գերում էր բոլորին և այնքան սիրված էր ամենքից, որ նույնիսկ երկրներ նվաճած

¹⁰² Տե՛ս Լ. Ս. Խոսիկյան, Թորոս Ռոսլինի ձեռագրի վերջին հունգրվանը, էջ 59, 60:

¹⁰³ Տե՛ս Նայերնե ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 359:

¹⁰⁴ Տե՛ս Ա. Միրզանե, Մայր ցույցս..., էջ 139: Նայերնե ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 284:

միապետները նրան տեսնելիս՝ ընդատաչ էին գնում: Գ. Հովսեփյանը կարծում է, որ սա ակնարկություն է Եզիպտոսի և Հայաստանի մի մասի ու Միջագետքի սուլթաններ Մելիք Քեմսի և Մելիք Աշրաֆի փոստավոր ընդունելությանը իրենց բանակում, որը նկարագրում է 13-րդ դարի հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցիին իր «Հայոց պատմության» մեջ¹⁰⁵: Մեզ թվում է, որ Ռոսլինը նկատի ունի կաթողիկոսի հանդիպումը մոնղոլների Հուլաղու խանի հետ: Վարդան պատմիչը գրում է, որ սոնդոլները երբ զբաղվում են Միջագետքը, Կոստանդին Բարձրբերդցիին մեկնում է Եղեխա՝ Հուլաղու խանի մոտ, և օրհնում վերջինիս: Խանի ընդունելության վերաբերյալ պատմիչը նշում է, որ կաթողիկոսը «սիրեցաւ ի ճմառէ»¹⁰⁶:

1260 թ. ձեռագրում Ռոսլինը կաթողիկոսին նկարագրում է որպես արտակարգ բարի հոգևորականի, կարեկից և ուշադիր՝ մոտիկ ու անձանոթ մարդկանց, հայրենակիցների և օտարերկրացիների, նաև աղքատների ու կարիքավորների նկատմամբ: Նկարիչը իր մեծ քարեկամին բնորոշում է որպես զրքասեր անձնավորության, որը Հին ու Նոր Կտակարանները բովանդակող մատյաններ էր հավաքում և ոսկե կամ արծաթե անոթներ¹⁰⁷, սպասք, եկեղեցական իրեղեններ նվեր ստանալով բոլորը ընծայում էր մենաստաններին ու տաճարներին¹⁰⁸:

Իր հիշատակարաններում Ռոսլինը հաճախ է անդրադառնում Հեթում Ա թագավորին, նրա կնոջը՝ Ջապել թագուհուն, և նրանց որդուն՝ Լևոն արքայազնին: Երուսաղեմի 1262 թ. Ավետարանում նկարիչը նշում է, որ Լևոնը վարքով ճման է իր հորը: Վարպետն ապագա արքային բնորոշում է որպես մի մարդու, որը սիրում է ճշմարտությունը և ատում ամեն տեսակ անիրավությունը:

Թորոս Ռոսլինի հիշատակարանները կարևոր նշանակություն ունեն պատմական անձանց ծագումնաբանության ըննության տեսանկյունից: 1256 թ. և 1260 թ. ձեռագրերում նկարիչը տալիս է Կոստանդին Բարձրբերդցու մերձավորների անունները, իսկ 1265 թ. մատյանում նշում պատվիրատուի՝ Կեոան թագուհու ընտանիքի անդամներին: 1265 թ. Ավետարանում նա արձանագրում է իր ուսուցիչներից մեկի՝ Կիրակոսի անունը, բնորոշելով նրան որպես «չքնադազեղ զրչի»: Նույն տեղում, առանց անուններ տալու, խնդրում է հիշել իր ծնողներին, եղբայրներին, քույրերին, զավակներին: Միայն մեկ եղբոր՝ Անտոնի անունն է հանդիպում նկարչի հիշատակարաններից մեկում /1256 թ. Ավետարանում/¹⁰⁹: 1266 թ. Մաշտոցի մեջ մանրամասնորեն արձանագրված են պատվիրատուի՝ Վարդան եպիսկոպոսի հարազատների անունները: Թորոս Ռոսլինը նշում է, որ Վարդանը, որպես Կոստանդին Բարձրբերդցու աշակերտ, շատ սիրված է եղել ուսուցչի կողմից իր «զոհնութեան» համար:

Վերոհիշյալից երևում է, որ պատմական անձանց զովաբանումը կարևոր տեղ է զբաղեցնում Ռոսլինի հիշատակարաններում: Դրանով իսկ կամ անկախ դրանից նկարչի գրա-

¹⁰⁵ Տե՛ս Գ. Յովսեփյան, Կոստանդին Ա կաթողիկոս... , էջ 26:

¹⁰⁶ Տե՛ս Մեծին Վարդանայ Բարձրբերդցույ Պապմոթին փիկերմվան, ի յոյս բնծայեալ Մ. Եմին, Մոսկվա, 1861, էջ 198:

¹⁰⁷ Տե՛ս Ն. Պողոսյան, Մայր զուգակ... , էջ 18:

¹⁰⁸ Տե՛ս Ա. Սյորմեան, Մայր զուգակ... , էջ 139: Նայերեն ձևուպրերի հիշարձակություններ, ԺԳ դար... , էջ 284-287:

¹⁰⁹ Տե՛ս Ա. Սյորմեան, Մայր զուգակ... , էջ 140: Նայերեն ձևուպրերի հիշարձակություններ, ԺԳ դար... , էջ 285:

ուումներում արտացոլված են նրա հայրենասիրական զգացումները, ուրախությունն ու հպարտությունը հայրենակիցների ուզմական հաջողությունների ու հաղթանակների, նաև դառնությունն ու ցավը պարտությունների համար: Այս ձևով վարպետի հիշատականուններում դրսևորվել են իր երկրին ցվիրված քաղաքացու բնավորության առանձին գծերը: Իրադարձություններին կամ մարդկանց տրված գնահատականներում զգացվում է արվեստագետի դիտողականությունը, մարդկայնությունը, մարդասիրությունը, շնորհակալանքի զգացումը:

Այստեղ հանդիպում են նույնիսկ այնպիսի գնահատականներ, որոնք վկայում են Թորոս Ռոսլինի գեղագիտական ճաշակի մասին: Մասնավորապես, նկատի ունենք Անտիոքի տաճարներին, կամ ուսուցիչներից՝ կիրակոսին տրված բնորոշումները: Իր հիշատականուններում նկարիչը հանդես է գալիս որպես ճշմարիտ պատմագիր: Միջնադարյան արվեստի պատմության մեջ բացառիկ երևույթ է, որ Թորոս Ռոսլինը ոչ միայն մանրանկարիչ է և գրիչ, այլև իր դարի ժամանակագիրը: Դժվար է գտնել նույն շրջանի արևելյան կամ արևմտյան որևէ այլ նկարչի, որն այդքան գրավոր վկայություններ թողած լինի ապրած ժամանակաշրջանի վերաբերյալ: Եթե նկատի առնենք նաև վարպետի բանաստեղծական ձիրքի մասին վկայող հիշատակարանների չափածո բնույթը, ապա կարող ենք ասել, որ ի դեմս Թորոս Ռոսլինի գործ ունենք վերածնության իսկական մտավորականի հետ, որը և՛ գրիչ է, և՛ ժամանակագիր, և՛ բանաստեղծ, և՛ հատկապես՝ նկարիչ:

Առհասարակ վաղ քրիստոնեության սկզբնական շրջանի հայ հին արվեստագետների, օրինակ՝ ճարտարապետների, քանդակագործների, մանրանկարիչների դիմանկարները չեն պահպանվել: 6-7-րդ դարերի Զվարթնոցի տաճարի քանդակներում երևացող և գործիքները բռնած մարդկանց հարթաքանդակները դեռևս պարզ չէ, թե արդյոք ներկայացնում են այդ կառույցը կերտած քարգործ վարպետներին, թե ոչ¹¹⁰:

Հայ մանրանկարիչների հսկայական թվի համեմատությամբ զարմանալիորեն քիչ են մեզ հասած մանրանկարիչների դիմանկարները կամ ինքնանկարները:

Ընդհանրապես նկարչի հաուարակական կարգավիճակի խոր ձևափոխման հետ են աղերսվում մանրանկարիչների դիմանկարների 12-րդ դարից սկսվող ներմուծումը արևմտյան գրքարվեստում¹¹¹:

Հայ արվեստում առհասարակ նկարչի առաջին ինքնանկարը Սարգիս Փառչիկի (Փարչիկի) որմնանկարն է Անիի Ս. Փրկչի եկեղեցում (1193 թ.)¹¹², ուր նա ներկայացված է Մատթեոս ավետարանիչի առաջ ծնկած աղոթելիս¹¹³ (նկ. 3): «Փառչիկ» կամ «Փարչիկ»

¹¹⁰ С. X. Минакакири, Звартноц, Памятник армянского зодчества V-VI веков, Москва, "Искусство", 1971, (Памятники древнего искусства), с. 52-54, илл. 50-53.

¹¹¹ Ch. de Merindol, Les peintres de l'abbaye Corbie au XI^e siècle. Artistes, artisans et production artistique au Moyen Age, Colloque international, p. 325-326, fig. 9.

¹¹² Տե՛ս ն. Թորոսանյան, Երուսեր հայ ճարտարապետության, Երևան, 1942, էջ 166; Ս. Ա. Ավագյան, Ո՛վ Է Սանսինի արվեստագործը հիշարժակված Սարգիս Փարչիկը: Պարզա-Բանասիրական հանդես, 1977, N 1, էջ 221-230; S. Der Nersessian, L'Art Armenien des origines au XVII^e siècle, p. 206.

¹¹³ Գունավոր վերագրությունը վե՛ս Documenti di Architettura Armena, ANI.12, San Lazzaro-Venezia, 1984, p. 50.

ճշանակում է նկարիչ: Այս բառը վկայված է Գույնիսկ հայկական այդ ժամանակի ձեռագրերից մեկում:

Աճիի պատկերն ուղեկցող մակագրությունից պարզ է դառնում, որ նկարիչը խնդրում է Մատթեոս ավետարանչից՝ բարեխոսելու Քրիստոսի առաջ իր հոգու փրկության համար: Սարգիս Փառչիկի անվանն առնչվող բացառիկ հանգամանք է այն, որ Սանահնի վանքում 1216 թ. մի խաչարձանի կողքին պահպանվել է Երա տապանաքարը, որը եզակի դեպք է հայ արվեստում: Դժբախտաբար այդ շիրմաքարի վրա ճշված չէ նկարչի մահվան թվականը: Ելնելով այն հանգամանքից, որ Սարգիս Փառչիկը 1216 թ. հող է նվիրել Նժդկոցի վանքից, Թ. Թորամանյանը եզրակացնում է, որ նկարիչը այդ ժամանակ առաջացած տարիքում պետք է լիներ, այսինքն՝ շուրջ յոթանասուն տարեկան¹¹⁴: Հավանորեն Սարգիս Փառչիկը վախճանվել է դրանից փոքր-ինչ ուշ:

Ժամանակագրական կարգով երկրորդ ինքնանկարը հանդիպում է Ութ մանրանկարիչների Ավետարանի (Մատենադարան, ձեռ. 7651) Նաչելության մանրանկարում¹¹⁵ (Ոկ. 4): Այստեղ՝ խաչի ներքևի մասում ցուցադրված է ծնկաչոք և ձեռքերը աղոթելու շարժումով վեր բարձրացրած մի մարդ, որը, Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով, ինքն մանրանկարիչն է¹¹⁶: 13-րդ դարի 80-ական թվականներին այս ձեռագրի ձևավորումները սկսած մանրանկարիչների աճունները դժբախտաբար չեն պահպանվել և հայտնի է միայն, որ 1320 թ. հատորը ծաղկել-վերջացրել է Սարգիս Պիծակը: Նաչելության մանրանկարում ներկայացված նկարիչը հագիվ թե Սարգիս Պիծակը լինի, քանի որ վերջինս ոչ միայն իրեն բոլորովին այլ կերպ և մեծ չափերով է մի քանի անգամ պատկերել, այլև միշտ ինքնանկարների կողքին թողել է իր աճունը:

Հայ մանրանկարիչների դիմանկարների քննության տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում արքեպիսկոպոս Հովհաննես արքայեղբորը ցուցադրող մանրանկարները: Այս աճնավորությունը եղել է իր ժամանակի ամենագարգացած մարդկանցից մեկը և մեծ չափով նպաստել ձեռագիր գրքի ընդօրինակությունների ծավալմանը: Նրա պատկերով զրվել ու նկարագրողվել են բազմաթիվ մատյաններ, և նա աճնամբ ընդօրինակել ու հավանաբար ձևավորել է շատ հատորներ: Նրա հետ ձեռագրեր ծաղկած գրիչներ և մանրանկարիչներ Ստեփանոս Վահկացից, Գրիգոր Պիծակը և Կոստանդին Ավդիցի մատյաններից մեկի հիշատակարանում ճշված են որպես Հովհաննես արքայեղբոր աշակերտներ¹¹⁷:

Հովհաննես արքեպիսկոպոսի դիմանկարներից պահպանվել են չորս պատկերներ, և դրանք ինքնանկարներ չեն: Դրանցից առաջինը հանդիպում է Բարձրբերդի (Կիլիկիա) մոտ գտնվող վանքերից մեկում ընդօրինակված Հին և Նոր Կտակարաններ ընդգրկող

¹¹⁴ Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայ նարպարապետության, Երևան, 1942, էջ 166:

¹¹⁵ S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia... p. 160, fig. 468.

¹¹⁶ Գուտավոր վերագրությունը տես S. Der Nersessian, L'Art Armenien des origines au XVIIe siècle, p. 113.

¹¹⁷ Տե՛ս Լ. Ռ. Ազարյան, Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ., էջ 77; Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia... p. 78.

մատյանի (Մատենադարան, ձեռ. 4243) մեջ (թ. 15ա)¹¹⁸ (նկ. 5): Ամենայն հավանականությամբ Լիսոնկա վանքում ստեղծված այս մատյանի պատվիրատուն Հովհաննես արքանեղբայրն է. իսկ գրիչը՝ Ստեփանոս Վահկացին. որը հավանաբար և մանրանկարիչն է կամ մանրանկարիչներից մեկը: Այստեղ մեզ հետաքրքրող պատկերում, դեռևս եպիսկոպոսական աստիճան ունեցող, Հովհաննես արքանեղբայրը ներկայացված է Հովհաննես ավետարանչի առջև ծնկաչոք, և ավետարանիչը օրհնում է նրան¹¹⁹: Վերջինիցս Հովհաննես արքանեղբայրը խնդրում է բարեխոս լինել Ահեղ Գատաստանի օրը:

Չի կարելի չնկատել, որ այստեղ կարծես կրկնված է վերը քննված Սարգիս Փարշիկի որմնանկարի պատկերագրությունը: Ըստ երևույթին այս կարգի նկարները ժամանակին բավականին տարածված են եղել:

Լիսոնկա վանքի ձեռագրի մանրանկարների քննությունից ելնելով, Ս. Տեր-Ներսեսյանը գտնում է, որ մատյանի մանրանկարիչը Հովասափն է, որի անունը պահպանվել է 1273 թ. Ավետարանի (Ստամբուլ, Թոփդափու Սարայ թանգարան, ձեռ. 122)¹²⁰ մեջ:

Գոգերի վանքում 1263 թ. ընդօրինակված Ավետարանը (Վաշինգտոն, Freer Gallery of Art, 56.11) մեզ ծանոթացնում է Հովհաննես արքանեղբոր երկրորդ դիմանկարի հետ (թ. 293ա)¹²¹: Այս ձեռագրի պատվիրատուն ճորից Հովհաննես արքանեղբայրն է. իսկ գրիչը՝ Թորոս քահանան: 1263 թ. Ավետարանի հիշատակարանում Հովհաննես արքանեղբայրը նշում է, որ մատյանը նկարագրողված է տարբեր գրիչների կողմից. բայց չի նշում նրանց անունները¹²²: Նրա հետ աշխատած մի քանի գրիչների անուններն են հիշատակում է այժմ Մատենադարանում պահվող թիվ 196 ձեռագրում, որը ստույգ թվական չունի: Նա խնդրում է հիշել իր աշակերտներ Ստեփանոս Վահկացուն, մատյանը ծաղկողին՝ Գրիգոր Պիծակին, և ընդօրինակող գրիչին՝ Կոստանդին Ավզոցուն¹²³:

Բարեբախտաբար 1263 թ. Ավետարանի պատկերներից երեքի՝ Մարկոս, Ղուկաս, Հովհաննես ավետարանիչների դիմանկարների տակ Կոստանդինը նշել է իր անունը, և այդպիսով իմանում ենք, որ նա մասնակից է մատյանի ձևավորման աշխատանքներին և թե ինչ ոճով է նա աշխատել: Այդ ոճը միանգամայն տարբեր է այն ոճից, որով կատարված է Հովհաննես արքանեղբոր երկրորդ դիմանկարը: Վերջինս նրան ցուցադրում է սարկավազ ձեռնադրելու պահին: Դատելով ոճից՝ այս մանրանկարի հեղինակը, մեր կարծիքով, Հովասափն է, թեև Ս. Տեր-Ներսեսյանը գտնում է, որ դա Կոստանդինի գործն է: Հովհաննես արքանեղբոր և՛ առաջին, և՛ երկրորդ դիմանկարներում, ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Տեր-Ներսեսյանը, ճշգրտորեն, ամենայն մանրամասնությամբ վերարտա-

¹¹⁸ Տե՛ս Լ. Ազարյան, Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ., նկ. 22; D. Kouymjian, Chinese Elements in Armenian Miniature Painting in the Mongol Period - In: Armenian Studies, Etudes armeniennes. In Memoriam Haig Berberian, Lisbon, 1986, p. 415-468.

¹¹⁹ Գոնավոր վերապրությունը րևն Վ. Կազարյան, С. Матушкин, Матениадаран, Армянская рукописная книга VI-XIV веков (Матениадаран, Армянские рукописи VI-XIV веков), Том, Москва, 1991, с. 169-170; S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 84, 158, fig. 307.

¹²⁰ Տե՛ս S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 85.

¹²¹ Տե՛ս S. Der Nersessian, Armenian Manuscripts in the Freer Gallery of Art, p. 63, 65.

¹²² Ibid, p. 63, Idem, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 78, 158.

¹²³ Ibid, p. 78, note 15.

դրրված է նույն դեմքը¹²⁴, ինչը վկայում է ստեղծագործության հեղինակի նուրբ դիտողականության և հմուտ դիմանկարիչ լինելու մասին: Հովասափն այդտեղ հատուկ ուշադրություն է դարձրել արքաները եպիսկոպոսական հանդերձավորման բաղկացուցիչ մասերին¹²⁵:

Տարիներ անց ստեղծված Հովհաննես արքեպիսկոպոսի երրորդ դիմանկարում նկարիչը նրան ցուցադրում է պեհեր, տարիքն առած մարդու արտաքինով և արքեպիսկոպոսական շատ շքեղ զգեստներով: Այդ պատկերը մաս է կազմում Մատենադարանում գտնվող այն Ավետարանի (ձեռ. 197)¹²⁶, որն առաջ համարվում էր 1287 թ. գործ: Ա. Տեր-Ներսեսյանը համոզիչ կերպով ապացուցել է, որ այն ընդօրինակվել է 1289 թ.¹²⁷: 1289 թ. Հովհաննես արքեպիսկոպոսի մահից անմիջապես առաջ ծաղկված¹²⁸ այս ձեռագրի պատվիրատուն ինքը արքաներայրն է: Նա, ինչպես վկայում են Ավետարանի հիշատակարանները, նաև այդ ձեռագրի մի մասի գրիչն է¹²⁹:

Ձեռագրի ամենավերջին պատկերը հանդիսացող Հովհաննես արքաները երրորդ դիմանկարում (թ. 341բ) նա ցուցադրված է քահանա ձեռնադրելու պահին: Ըստ Ա. Տեր-Ներսեսյանի, երկու տարրեր մանրանկարիչների ձեռքի գործն են մատյանի ձևավորումները¹³⁰: Արքաները դիմանկարի կատարումը խիստ տարբերվում է այն պատկերներից, որոնք հեղինակել է Հովասափը, քայքայ առայժմ պարզ չէ, թե ով է այդ ստեղծագործության հեղինակը:

Ուսումնասիրողները նկատել են, որ Հովհաննես արքաները զգեստը զարդարված է ոսկե փշապով, որը, հավանաբար, չինական մետաքսի նմուշ է¹³¹: Վերջինս, հավանաբար, բերվել է արքեպիսկոպոսի՝ մոնղոլների արքունիք այցելած եղբայրների՝ Սմբատ Գուռղեստարի կամ Հեթում Ա-ի միջոցով¹³²:

Ա. Տեր-Ներսեսյանի կարծիքով, Հովհաննես արքաները չորրորդ դիմանկարը պետք է համարել այն մանրանկարը, որը ներկայացված է տարիներ շարունակ Բյուզանդի Ֆերոն-Սթորլեթ հավաքածուի կազմում գտնված պատառիկ թերթի վրա¹³³: Այդ պատառիկը մի քանի տարի առաջ դարձել է Նյու Յորքի Փյերիֆոնթ-Մորգան զբաղարանի սեփականությունը:

Վերոհիշյալ կարծիքը ներկայացնելու համար Ա. Տեր-Ներսեսյանին հիմք է տալիս պատկերի շրջանակի վրա ընթերցվող «Հովհաննես արքեպիսկոպոս» մակագրությունը: Այս դիմանկարի մեջ արքաները զգեստը զարդարված է շուշան ծաղկով (fleurs-de-lis),

¹²⁴ Ibid, p. 158.

¹²⁵ Ibid.

¹²⁶ Տե՛ս գուճավոր վերաբարձրությունը՝ B. Kazarian, C. Manjikian, *Matenadaran*, c. 178, ատ. 336, S. Der Nersessian, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia*, p. 158, fig. 645.

¹²⁷ Ibid, p. 96-97.

¹²⁸ Ibid, p. 93.

¹²⁹ Ibid, p. 96.

¹³⁰ Ibid, p. 97.

¹³¹ D. Kouymjian, *Chinese Elements...*, p. 415-468.

¹³² S. Der Nersessian, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia*, p. 158.

¹³³ Ibid, p. 158, fig. 646.

որը թույլ է տալիս Ա. Տեր-Ներսեսյանին մտածելու այդ կտորեղենի սիցիլիական ծագման մասին և Կիլիկիայում առևտրական մեծաշնորհներ ունեցող իտալացի վաճառականների ձեռքով քերված լինելու վերաբերյալ¹³⁴:

Այս մանրանկարում գահին նստած Աստվածամոր ու նրա զրկի մանուկ Քրիստոսի առջև պատկերված են երեք անձինք. որոնք, Ա. Տեր-Ներսեսյանի կարծիքով, Մարաշախտ Օշինցն ու նրա երկու որդիներ Կոստանդինցն ու Հեթումն են: Վերջին երեք անձանց ինքնուրույնը անվանի գիտնականը որոշում է՝ ելնելով մանրանկարի վրա մնացած հազիվ ընթերցվող գրերից: Այս կարծիքի օգտին են խոսում ներկայացված պատմական անձանց միջև եղած ազգակցական կապերը¹³⁵: Նկատելի է, որ արքաեղբայր ներկայացված է լուսապսակով, որը բացակայում է նրա նախորդ դիմանկարներում: Ինչ վերաբերում է Մարաշախտ Օշինցին, ապա, ինչպես գիտենք, նա պատվիրատուն է 1274 թ. Ավետարանի (Նյու Յորք, Փյերփոնթ-Մորգան գրադարան, ձեռ. 740)¹³⁶, որի գրչին է Կոստանդինը:

Ըստ Ա. Տեր-Ներսեսյանի, այս պատառիկը մաս է կազմում վերոհիշյալ Ավետարանի¹³⁷, հետևաբար այն ստեղծվել է 1274 թվականին, ուրեմն կարելի է ասել, որ ժամանակագրական իմաստով միջանկյալ դիրք է զբաղում Հովհաննես արքաեղբոր երկրորդ ու երրորդ դիմանկարների միջև:

Խնդրո առարկա պատկերում Աստվածամայրը իր թիկնոցը տարածել է Օշինցի ու նրա որդիների վրա, այսինքն՝ այստեղ գործ ունենք Գթություն Աստվածամոր (*Vierge de Misericorde*) պատկերագրության հետ, որը ծանոթ է նաև Վասակ իշխանի (Հեթում Ա թագավորի եղբոր) պատվիրած շուրջ 1270-1280 թթ. ստեղծված Ավետարանի (Երուսաղեմ, Հայկական Պատրիարքարանի հավաքածու, ձեռ. 2568) մանրանկարով¹³⁸:

Գթության Աստվածամոր պատկերագրության հնագույն մոտը Սիեմայի Պինակոտեկայում (*Pinacoteca*) պահվող Դուչչիոյի վրձնած փորրիկ պատկերն է՝ ստեղծված մոտավորապես 1280 թ.: Ավելի վաղ նկարված 1274 թ. հայկական մանրանկարի գոյությունը չի նշանակում, որ Գթության Աստվածամոր պատկերագրությունը ծնունդ է առել Կիլիկիայում: Այդ հանգամանքը բացատրվում է Կիլիկիայում Ֆրանցիսկյան և Դոմինիկյան միաբանությունների ներկայությամբ և իտալիայի տարածքում գործող հայկական մեծատանների առկայությամբ¹³⁹:

Հովհաննես արքաեղբոր դիմանկարի քննությունը ցույց է տալիս, որ դրանց մեջ գրչի և մանրանկարչի արքեպիսկոպոսը չի ներկայացված նկարելու կամ ձեռագիր գրելու պահին: Այլ կերպ ասած, Գոհների գրչատան ղեկավարի և ուղղակիորեն մատյանների ընդօրինակումով զբաղվող գրքասեր ու արվեստագետ անձնավորությանը պատկերող այս

¹³⁴ *Ibid.*, p. 158.

¹³⁵ *Ibid.*, p. 158-159.

¹³⁶ *Treasures in Heaven*, Cat. 64, p. 193-194; V. Nersessian, *Treasures from the Ark*, p. 189-190.

¹³⁷ S. Der Nersessian, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia*, p. 159.

¹³⁸ S. Der Nersessian, *Deux exemples arméniens de la Vierge de Misericorde*. In: *Etudes Byzantine et Armeniennes - Byzantine and Armenian Studies*, Louvain, 1973, p. 585-596; *Idem*, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia*, p. 159, fig. 647.

¹³⁹ *Ibid.*, p. 159.




Նկ. 1. Եսայի Նշեցին իր աշակերտների հետ
Եսայու մեկնությունների ընդգրկող ձեռագիր,
1299 թ.
(Երուսաղեմ, Տալոյ պապրիկաթոթյան
խախմատը, ձեռգ. հմր. 365)



Նկ. 2. Կավիթա Աննադթ, Կավիթա Աննադթի
«Մանանթ իմաստասիրութեան» երկի
1280 թ. ընդօրինակություն
(Երևանի Մարտեադարան, ձեռգ. հմր. 1746)



Նկ. 3. Սարգիս Փառչիկի (Փարցիկի)
ի նրանկարը
(Որմանկար Անիի Ս. Փրկչի եկեղեցում (1193 թ.)



Նկ. 4 Աննադթ մանրանկարչի ի նրանկարը
Որք մանրանկարչիների Ավետարանի
«Խաչելություն» մանրանկարը
(Մարտեադարան, ձեռգ. հմր. 7651)





Նկ. 5. Տոբիաննա Արքեպիսկոպոսի դիմանկարը:
Տոբ և Նոր Կրթակարանների գրքերի ժողովածու
(Մատենադարան, ձեռք հոթ. 4243)




Նկ. 6. Թորոս Մարտակաթը Ասորիանորը և Հրիագոսի առջև,
Դաւթարիկ թերթ (Տոբիտ), Տոբիասյան Ամբիկոյայի Արևմտյան թերթի
առաստեղծարարան, Տաթարյան հավաքածու, ձեռք հոթ. 142)



Այլ 7. Թարսու Տարրուացու ինքնանկարը
 1318 թ. Եսթվանդունու (ԻԲարժեմարարան, ձեռագր. հոկ. 206)



Այլ 8. Ավագ Ծաղկոյի ինքնանկարը
 Ավագարանու Օրորարարար. 1329 թ. (ԻԲարժեմարարան,
 ձեռագր. հոկ. 7681)





Նկ 9 Սարգիս Պրծակի ինքնանկարը
Աստվածաշունչ, 14-րդ դ. (Մարտինադարան,
ձեռագիր հմր 2627)



Նկ 10 Սարգիս ինքնանկարը
Աստվածամոր ու Մանկան առջև
(Աստվածաշունչ, 1390-1400 թվականներ, ինքնանկար
(Մարտինադարան, ձեռագիր հմր 346)



Նկ 11 Մեթոսի Փարիսի ինքնանկարը
Աստվածամոր ու Մանկան առջև
Historia Anglorum Chronica Maiora
(Բրիտանական թանգարան, Royal 14.C.VII)



Նկ 12 Մերոսի ժողովրդի ինքնանկարը
Ավերարան, 1391 թ. (Մարտինադարան, ձեռագիր
հմր. 8772)

մանրանկարները, ի տարբերություն, օրինակ, արևմտյան արվեստից հայտնի ստեղծագործությունների, միայն ծիսական բովանդակություն ունեն կամ առնչվում են Բարեխոսության թեմային:

Միջնադարյան նկարիչների ինքնանկարների քննության տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում 1311 թ. Մեր քահանայի ընդօրինակած և Թորոս Սարկավագի ծաղկած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. 10859) պոկված այն թերթերը, որոնք ցուցադրում են Թորոս Սարկավագի դիմանկարները: Դրանցից մեկում Դուրիլիցի Չեսթեր Բիթի գրադարանում (N 559) գտնվող պատառիկ թերթի վրա Աստվածամոր ճշման տեսարանում¹⁴¹ սարկավագի զգեստ հագած մանրանկարիչը պատկերել է ինքն իրեն որպես տեսարանի մասնակից՝ ձեռքին բռնած բուրվառ և խնկաման¹⁴¹: Թորոս Սարկավագի կողքին գրված նրա անունը կասկած չի թողնում, որ մանրանկարիչը պատկերել է ինքն իրեն: Այս անսովոր դիմանկարից բացի Թորոս Սարկավագը ինքն իրեն ներկայացրել է նաև երկու այլ մանրանկարներում, որոնք զբաղեցնում են միևնույն պատառիկ թերթի (Լուս Անջելես, Հայ եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի Առաջնորդարան, Հազարյան հավաքածու, ձեռ. 142, 2ա, բ) տարբեր երեսները: Այդ պատկերներից առաջինը (թ. 142, 2ա) ցուցադրում է Ահեղ Դատաստանի թեմային վերաբերող Մեռյալների հարության դրվագը, և այդտեղ մանրանկարիչը ներկայացրել է ինքն իրեն ներքին ծախ անկյունում, ծնկաչոք, ձեռքերը միացրած աղոթելու պահին¹⁴²: Վերևում քերականների շարքով հաղորդված դրախտից իջնող կապույտ հրեշտակները փող են փչում՝ հարություն տալու համար մանրանկարի ստորին մասում պատկերված մեռյալներին:

Հաջորդ մանրանկարում Թորոս Սարկավագը իրեն պատկերել է Աստվածամոր և Քրիստոսի երկարահասակ կերպարանքների միջև, նրանց ոտքերի մոտ, ծնկաչոք, աղաչական ձևով ձեռքերը Հիսուսին մեկնած (Ու. 6): Աստվածամայրը ծախ ձեռքը որդու կողմն ուղղած խոսքի շարժումով, ներկայացնում է Թորոս Սարկավագին¹⁴³: Թորոս Սարկավագի այս երես դիմանկարները անսովոր երևույթ են հայ գրքարվեստի պատմության մեջ: Այս երկերը անպայման պայմանավորված են հայոց շրջանում հայտնված փոքր հայելիների գործածության հետ: 14-րդ դարից մեզ պլելի շատ ինքնանկարներ են հասել, և այդ երևույթը թերևս վկայում է նաև մանրանկարչի կողմից սեփական աճճը մի փոքր պլելի կարևորելու հանգամանքի հետ:

Մեզ է հասել Գլաձորի համալսարանի հետ առնչվող մանրանկարիչ Թորոս Տարոնացու ինքնանկարը 1318 թ. Աստվածաշնչում /Մատենադարան, ձեռ. 206/, որը խորանի ուղղանկյան կողքին ներկայացնում է նրան գրելիս կամ նկարելիս /թ. 438 ա/¹⁴⁴: Այստեղ

¹⁴⁰ St/ F. Macler, Documents d'Art arméniens. De arte illustrandi. Collections diverses, Paris, 1924, pl. Cl, fig. 256;

S. Der Nersessian, The Chester Beatty Library. A Catalogue of the Armenian Manuscripts with an Introduction on the History of Armenian Art, Dublin, 1958, vol. I, p. 31-32.

¹⁴¹ Գունավոր վերապատկերումը տե՛ս V. Nersessian, Treasures from the Ark, p. 191.

¹⁴² Գունավոր վերապատկերումը տե՛ս Treasures in Heaven, pl. 22, p. 169.

¹⁴³ Գունավոր վերապատկերումը տե՛ս Ibid, pl. 23.

¹⁴⁴ Գունավոր վերապատկերումը տե՛ս Miniature Arménienne, Portrait, Compilation, introduction et commentaires A. Guevorkian, Erevan, 1982, ill. 25; E. Korkhmazian, I. Drampian and G. Hakobian, Armenian Miniatures of the 13th and 14th Centuries from the Matenadaran Collection, ill. 17.

րել է ավետարանչի առաջ ծնկաչոք դիրքով, աղոթելիս, այսինքն՝ նախորդ դարից մեզ հայտնի պատկերագրության համեմատ: Նա սևահեր մորուքով, համեմատաբար երիտասարդ անձնավորություն է:

Ներսես քհն. Ներսեսյանը կարծում է, թե Սարգիս Պիծակն այստեղ երեսուն տարեկան է, ինչի հետ դժվար է համաձայնել՝ Գևարտի առնելով, քանի որ նա, ինչպես տեսանք վերը, 1301 թ. արդեն օգնել է իր հորը՝ Գրիգոր Պիծակին, ձեռագիրը զարդարելու ժամանակ և մահավաճը 1312 և 1316 թթ. ինքնուրույն կերպով երկու մատյաններ ծաղկել: Նկատելի է, որ նրա գլխի զագաթը սափրված է, ինչպես կաթոլիկ հոգևորականների մոտ: Նրա զգեստավորումը այստեղ բաղկացած է պարնզուտից և թիկնոցից: Ջարմանայի է, որ նա ինքն իրեն ներկայացրել է լուսապսակով: Նրա գլխի երկու կողմերից ընթռնելի է «Սարգիս-մակագրությունը»:

Երկրորդ դիմանկարը գտնվում է ճշգրիտ թվական չունեցող 14-րդ դ. Աստվածաձայնի (Մատենադարան, ձեռ. 2627) մեջ (թ. 422բ): Այստեղ Գևարտի ինքն իրեն պատկերել է ճստած դիրքով գրելիս¹⁵⁰: Այս Գևարտի քրոնոլոգիա առանձնահատուկ է մինչ այժմ քննված բոլոր դիմանկարներից, որովհետև հեղինակը առանձին Գևարտի մեջ ներկայացրել է բացառապես իրեն, ճստած և գրելու կամ Գևարտելու պահին: Տարակույս չկա, որ ստեղծագործության հեղինակը վաստակավոր մանրանկարիչն ինքն է, քանզի պատկերի շրջանակի վերևի հատվածում գրված է «Սարգիս երեց շինել», այսինքն՝ Սարգիս քահանայի է Գևարտողը (ճկ. 9):

Գիմանկարի այս պատկերագրությունը հեղինակին թույլ է տվել որոշակի ուշադրություն հատկացնելու սեփական դիմագծերի հաղորդմանը: Սարգիս Պիծակը այստեղ արդեն սպիտակահեր մորուքով միջին տարիքի տղամարդ է («այնհեր ձերուցի» Ա. Ն. Սվիրիցի բնորոշմամբ)¹⁵¹: Ուշադրություն է գրավում նրա՝ բերետի նմանվող գեղեցիկ զիտարկը, որը, մեր համոզմամբ, անկասկած իտալական ծագում ունի և տեսանելի է նույն ժամանակի իտալական արվեստի տարբեր ստեղծագործություններում¹⁵²: Հավանորեն այն իտալացի գործընկերների հետ շփվելու արդյունք է: Այս դիմանկարը փաստորեն նոր խոսք է հայ միջնադարյան ինքնանկարի արվեստում, քանի որ չի կրկնում իրենից առաջ ստեղծված մյուս ինքնանկարների պատկերագրությունը: Այստեղ ևս, անկասկած, մանրանկարիչը ըստ ամենայնի օգտվել է փոքր հայելիից՝ իր դեմքը մանրամասնորեն ներկայացնելու համար:

Կասկածից վեր է, որ խնդրո առարկա անթվակիր ձեռագրի դիմանկարը Սարգիս Պիծակի կերպարը միջին տարիքում արձանագրելու պատճառով միջանկյալ դիրք է գրավում առաջին և երրորդ ինքնանկարների միջև: Երրորդ դիմանկարը թվագրվում է 1342 թ. և մաս է կազմում այդ տարին ծաղկված Ավետարանի (Դուրլին, Չեսթեր Բիթի գրադարան,

¹⁵⁰ А. Н. Свирин, Миниатюра древней Армении, с. 75, 80; Գտնվող վերապատկերված վրձն Miniature Armenienne, Portrait, ill. 33, S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, fig. 652, p. 159.

¹⁵¹ А. Н. Свирин, Миниатюра древней Армении, с. 75, 80.

¹⁵² E. Pirani, La miniatura gotica, Milano, 1966, p. 73, ill. 32.

ձեռ. 614) ցկարազարդումների (թ. 13բ)¹⁵³: Այստեղ Սարգիս Պիծակը իրեն նկարել է պատկերի աջ կողմում, զաֆի վրա նստած, Քրիստոսի կողքին ծնկաչոք աղոթելիս: Մանրանկարչի կերպարանքը իր չափերով շատ չի զիջում Քրիստոսին:

Համեմատաբար մեծ չափերով ցուցադրված լինելու շնորհիվ նկարչի դիմագծերն ավելի լավ են ներկայացված: Նա այս դիմանկարում արդեն հասակն առած սպիտակամորուս, բայց ջապիհոջ ծերունի է: Ա. Ն. Սվիրինը գտնում է, որ 1352 թ. ձեռագիրը ծաղկելիս Սարգիս Պիծակն արդեն վաթսույն տարին անց էր¹⁵⁴: Գլխին նույն իտալական գլխարկն է և թիկնոցն ամուր կոճկված կրծքի վրա: Նույն ծնկաչոք աղոթելու դիրքով նա ձախից ցուցադրել է մատյանի պատվիրատու Տիրացուն: Սարգիս Պիծակը սեփական անունն է արձանագրել իր կերպարանքից ոչ հեռու՝ շրջանակի վրա թողած մակագրության մեջ և սիմետրիկ ձևով Տիրացուի անունը՝ վերջիցիս կողքին շրջանակի վրա: Այս մանրանկարով հեղինակը շարունակում է հայ գրքարվեստի մեջ պատվիրատուին ու մանրանկարչին կողք-կողքի ծնկաչոք աղոթելիս ցուցադրող պատկերագրության, որը 14-րդ դարից սկսած բավականին հաճախ ի հայտ է գալիս նախորդ և հաջորդ դարերի հայ ծաղկողների գործերում:

Ընորհիվ Սարգիս Պիծակի այս երեք դիմանկարների, հնարավոր է դատնում ոչ միայն ըստ ամենայնի գաղափար կազմել հայ մեծանուն երփնագրողներից մեկի իրական դիմագծերի վերաբերյալ, այլև նկատել, որ նրա ծաղկած մատյանների գրեթե բոլոր Տերունական թեմաներով ներկայացված մանրանկարների աստվածաշնչական կերպարների դեմքերին հիմնականում դրոշմված են իր դիմագծերը: Սա մի զարմանալի երևույթ է, որ նրբեմն նկատելի է անգամ մեր ժամանակի նկարիչների աշխատանքներում:

Սարգիս Պիծակի վերջին դիմանկարի պատկերագրությունն ունեցող երկերի թվին է պատկանում Սարգիս Խիզանցու ինքնանկարը Հովհաննես Բարունու հետ Աստվածամոր ու մանկան առաջ ծնկաչոք աղոթելիս (նկ. 10): Այդ պատկերը հանդիպում է Խիզանում ստեղծված 1390-1400 թվականների Աստվածաշնչում (Մատենադարան, ձեռ. 346) և զբաղեցնում է էջի մի հատվածը (թ. 440ա)¹⁵⁵: Այս մանրանկարը զարմանալիորեն հիշեցնում է 13-րդ դարի անգլիացի մանրանկարիչ Մեթյու Փյարիսի ինքնանկարը՝ Աստվածամոր ու մանկան առաջ ծնկաչոք աղոթելիս նրա ծաղկած մատյաններից մեկում (Բրիտանական թանգարան, Royal 14. C. VII)¹⁵⁶ (նկ. 11): Չի բացառվում, որ այս վարպետի աշխատանքները հայ ծաղկողներից հայտնի լինեին դեռևս խաչակրաց շրջանից: Ջարմանալի է, բայց փաստ, որ Մեթյու Փյարիսը իր գրվածքներում պատմում է Անգլիա եկած հայ ուխտավոր վանականների հետ ունեցած շփումների ու զրոյցների մասին ու հիշատակում Հայաստանը և Նոյյան տապանը¹⁵⁷:

¹⁵³ S. Der Nersessian, *The Chester Beatty Library*, vol., p. 184, pl. 614; idem, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia*, fig. 654, p. 159. Գուխվոր վերարտադրյալը տես *Miniature Armenienne, Portrait*, ill. 32. V. Nersessian, *Treasures from the Ark*, ill. 124, p. 192-193.

¹⁵⁴ А. Н. Свирин, *Миниатюра древней Армении*, с. 81.

¹⁵⁵ Գուխվոր վերարտադրյալը տես *Miniature Armenienne, Portrait*, ill. 42.

¹⁵⁶ D. Düringer, *The Illuminated Book, its history and production*, London, w. d., p. 270, fig. V-13b; J. Backhouse, *VI Devotions and Delights*, p. 77.

¹⁵⁷ H. C. Evans, *Manuscript Illumination at the Armenian patriarchate in Hromkla and the West*, Ph.D. dissertation, Institute of Fine Arts, New York University, 1990, p. 140-141.

14-րդ դարի մանրանկարիչների դիմանկարներից պահպանվել են Վասպուրականի հայտնի մանրանկարիչ Մերուց Մաղկողի երեք ինքնանկարները: Գրանցից առաջինը մաս է կազմում 1391 թ. Ավետարանի (Մատենադարան, ձեռ. 8772)¹⁵⁸, երկրորդը՝ 1395 թ. Ավետարանի (Անկտ-Պետերբուրգ, Պետական էրմիտաժի հավաքածու, ձեռ. VP-1010) ձևավորման (թ. 11ա)¹⁵⁹, իսկ երրորդը զարդարում է Մատենադարանում պահվող պատահիկ ձեռագրերից մեկը (պատտիկ 1101)¹⁶⁰: Այս մանրանկարներից ավելի հայտնի է և հաճախ հրատարակվել է Մերուցի առաջին ինքնանկարը¹⁶¹: Այն ցուցադրում է Մերուցին թղթի թերթի վրա անվանաթերթ գկարելու պահից¹⁶²: Մանրանկարչի՝ ինքն իրեն պատկերելու ձևը առանձնացնում է դիմանկարը նախկինում ստեղծված ինքնանկարների շարքում, քանի որ նա զբաղված է այդտեղ իր բուն գործով՝ մագաղաթ էջը զարդարելով (նկ. 12):

Այս մանրանկարչի ինքնանկարի պատկերագրությունը կարծես իր ազդեցությունն է թողել Աստվածատուր Մաղկողի ինքնանկարի (թ. 8ա) վրա Արճեշի (Վասպուրական) 15-րդ դ. Ավետարանում (Մատենադարան, ձեռ. 4867)¹⁶³: Այստեղ նույնպես մանրանկարիչը ցուցադրում է իրեն թղթի թերթը ծաղկելու պահից: Դժվար է ասել, թե արդյոք այս երկու մանրանկարիչներից ծանոթ թե՛ են եղել նախորդ դարերում ստեղծված համանման արևմտյան ստեղծագործությունները, որոնց մասին խոսվեց վերը:

15-րդ դարի մանրանկարիչների դիմանկարների մասին զաղափար կազմելու առումով հիշարժան է նաև Տփղիսում աշխատած Մանուելի ինքնանկարը: Այն զարդարում է 13-րդ դարի կիլիկյան Ավետարանը (Մատենադարան, ձեռ. 5784), որը 1445 թ. եղել է Թիֆլիսում: Մանուելը ինքն իրեն ցուցադրել է այդ ձեռագրի լուսանցքներից մեկում (թ. 2բ) ծնկաչոք աղոթելիս¹⁶⁴, այսինքն՝ այն պատկերագրության համեմատ, որը հայտնի էր նախքան Սարգիս Պիծակի դիմանկարների երևան գալը:

Սարգիս Պիծակի վերջին դիմանկարի պատկերագրությունը հիշեցնող երկերի թվին է պատկանում, օրինակ, 17-րդ դարում ստեղծագործած հայ լավագույն մանրանկարիչներից Հայրապետի ինքնանկարը՝ իր պատվիրատու Գրիգորի հետ խաչի առաջ ծնկաչոք աղոթելիս: Ահեղ Դատաստանի թեման ներկայացնող այդ պատկերը հանդիպում է 1655 թ. Սպահանում ստեղծված Ավետարանի (Դուրլից, Չեսթեր Բիթի զբաղարան, ձեռ. 578)

¹⁵⁸ Փոխավոր վերապրությունը փն՝ Miniature Armenienne, Portrait, ill. 43:

¹⁵⁹ Т. А. Измайлова, Армянские иконопророчные рукописи Государственного Эрмитажа (Каталог). Труды Государственного Эрмитажа, т. 10, Ленинград, 1969, с. 119.

¹⁶⁰ Տ. Տ. Շախրյան, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Բ, էջ 52-65:

¹⁶¹ Л. А. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, с. 271, 273, 277, илл. 166; Г. Г. Акопян, Миниатюры Вастуракана XIII-XV веков, Ереван, 1989, с. 51-53, 73-76; L. Chookaszian, Cerun Stepannos. Saur Allgemeines Künstlerlexikon, München-Leipzig, Bd. 17, 1997, S. 614.

¹⁶² А. Н. Свириц, Миниатюры древней Армении, с. 112-114; L. A. Dumovo, Miniatures armeniennes, Paris, 1961, p. 160, pl. 161; Н. Nakobian, Tzerun, Editions Erebouni, 1984.

¹⁶³ Փոխավոր վերապրությունը փն՝ Miniature Armenienne, Portrait, ill. 62:

¹⁶⁴ А. Н. Свириц, Миниатюры древней Армении, с. 70; Փոխավոր վերապրությունը փն՝ Miniature Armenienne, Portrait, ill. 56.

անկարագրողումների (թ. 15բ) շարքում¹⁶⁵։ Այստեղ խաչի թևերի անկյուններից փողհարող հրեշտակներն ազդարարում են Ահեղ Դատաստանի գալուստը, և խաչափայտի կենտրոնում նստած դիրքով ներկայացված է պատանի Քրիստոսը։ 16-17-րդ դարերում տարածված այս պատկերի մեջ, ներքևում, հաճախ ներկայացվում են մանրանկարիչն ու պատվիրատուն։ Թվում է, թե դիմանկարի այս պատկերագրությունը հեղինակին թույլ չի տալիս որոշակի ուշադրություն հատկացնելու սեփական դիմագծերի հաղորդմանը, և դրա պատճառը ոչ միայն կերպարանքների փոքր չափերն են, այլև կենտրոնացումը այլ բաղկացուցիչ մասերի վրա։

Չպետք է բոլորովին քացառել, որ առանձին հայ ծաղկողներից կարող էին հայտնի լինել արևմտյան մանրանկարիչների դիմանկարները, և դրանք կարող էին որոշ ազդեցություն գործել հայկական ինքնանկարների պատկերագրության ձևավորման գործում։ Առհասարակ ուշագրավ է զեղարվեստական մամոթի(ն)ւյ երևույթների գրեթե միաժամանակ կամ ժամանակային փոքր տարբերությամբ հայտնվելը և՛ հայ, և՛ արևմտյան արվեստում։ Անշուշտ մեկ հողվածի սահմաններում հնարավոր չէ քննության առնել հայ մանրանկարիչների բոլոր մեզ հյասած ինքնանկարները, քանի որ նախ և առաջ բազմաթիվ ստեղծագործություններ դեռևս առհասարակ ուսումնասիրված չեն։

Նմանապես անկարելի է այստեղ ուշադրության առնել միջնադարյան հայ մանրանկարիչների կյանքի ու գործունեության մյուս պարագաները։ Հայ արվեստի երկերի մասին գալիք աշխատությունները հավանաբար կբացահայտեն տակավին մութ մնացած անթիվ այլ խնդիրներ, և գիտնականները հայ մանրանկարիչների արվեստագույների և դրանց առնչվող շատ ու շատ երևույթների վրա կսկսեն նայել միանգամայն այլ հայացքով։

¹⁶⁵ Գեմալոր վերադարձությունը րևն՝ V. Nersessian, *Treasures from the Ark*, ill. 128, p. 15, 193-194.

ՆԱԻՐԱ ԹԱՄԱՄՅԱՆ

ՏԵՍԻԼԸ ՈՐՊԵՍ ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Տեսիլի առաջացման ժամանակը դժվար է որոշել: Այն հնագույն ժազուս ունի և մշտապես ուղեկցել է մարդուն նրա ծնված օրվանից, դեռ այն ժամանակվանից, երբ բնության սերտ մաս կազմող մարդը ի գորու չէր տարբերել օրլեկտիվ իրակացության մեջ կատարվող դեպքերը իր մտապատկերում ձևավորվածներից: Տեսիլներ կան գրեթե բոլոր կանոնակարգված կրոններում: Հին և Նոր Կտակարաններում ևս տեսիլները մեծ թիվ են կազմում, որոնք բնութագրվում են իրենց խորիմաստությամբ և նպատակայնությամբ: Տեսիլները հիմնականում կոչված են կապ հաստատելու Աստծու և մարդու միջև: Օտար հաճախ այդ կապը լինում է միջնորդավորված, և միջնորդի՝ գերագույն էության խոսնակի դեր են կատարում պիտավորապես հրեշտակները կամ սրբերը:

Միայն Հին Կտակարանի վաղ շրջանի և Նոր Կտակարանի որոշ հատվածներում կարելի է հանդիպել տեսիլների, ուր մահկանացուներին հայտնվում է ինքը՝ Աստված: Հետագայում արդեն մարդու և Աստծու անմիջական կապը աստիճանաբար վերածվում է միջնորդավորվածի: Այս առուսով կարելի է հիշել արևելյան հրաշալի մի առակ, ուր աշակերտը հարցնում է ուսուցչին. «Հնում եղել են մարդիկ, ովքեր տեսել են Աստծուն. ինչո՞ւ այժմ նման մարդիկ չկան», և ուսուցիչը տալիս է հետևյալ պատասխանը. «Որովհետև այժմ չկա մարդ, որ կարողանա այդքան ցած խոնարհվել»: Այսինքն՝ փոխվել է մարդը. մեծացել է նրա նսասիրությունը, և մարդն այլևս վայր չի խոնարհվում, որ վեր էլնի:

Տեսիլները մեծ դեր ու նշանակություն ունեն պատմական դեմքերի, դեպքերի ու իրադարձությունների հետագա զարգացումն ընկալելու, ինչպես նաև դրանց առավել ճշգրիտ լուսաբանման ու մեկնաբանման հարցերում:

Աստվածաշնչյան տեսիլները բոլոր ժամանակներում մեկնաբանվել և շարունակվում են մեկնաբանվել տարբեր մեկնիչների կողմից: Առավելապես մեծ ուշադրության են արժանացել Եսայի, Ջաքարիա, Դանիել, Հովնան, Եզեկիել և մյուս մարգարեների տեսիլները: Մեկնությունների թվով առաջնությունը պատկանում է Եզեկիելի առաջին տեսիլին, որ պատկերված է Աստվածության չորեքկերպյան աթոռը:

Եզեկի Կողբացին իր «Եղծ աղանդոց» նշանավոր գործում սահմանում է տեսիլը՝ այն հստակ տարբերակելով սովորական երազից՝ բացատրելով, որ «Երազներն էլ զանազան պատճառներ ունեն: Դեպք է լինում, երբ մարդ ցերեկը մի բան է մտքով անցկացնում, նույն բանով միտքն զբաղվում է նաև մարմնի հանգստանալու ժամանակ, քնի մեջ, իսկ դեպք էլ է լինում, երբ (այդ) բանի մասին բնավ մտածած չի լինում, բայց երազում տեսնում է: Եվ դա երկու պատճառ ունի:

Կա՛մ Աստծու շնորհների ազդեցությամբ որևէ հաստատում բան տեսնում են որպես հայելու մեջ, օրինակով և ոչ թե բացահայտ ճշմարտությամբ. (դա լինում է) մարդուն լավ բաների մղելու համար. ինչպես Հովսեփին ու Դանիելին մեծամեծ երևույթների տեսիլներ

պետք է անպայման ինչ-որ կերպ առանձնացված լինի մնացած մահկանացուներից: Տեսիլ հայտնվում է միայն այն մարդկանց, ում հետ կապված է որևէ որոշակի նպատակի իրականացում: Նրան, ում հայտնվում է տեսիլը, սովորաբար անվանում են տեսանող: Աստվածաշնչում տեսանող են համարվել հրեա մարգարեներից ոմանք, իսկ հայ մատենագրության, հատկապես բանաստեղծության մեջ՝ Գրիգոր Լուսավորիչը³: Հաճախ չի նշվել նույնիսկ վերջինիս անունը և միայն Տեսանող մակդիրը բավական է եղել հասկանալու համար, թե խոսքն ում մասին է: Տեսանողն ունենում է բոլորովին այլ զգացողություններ, քան առօրյա կյանքում: Տեսիլից ստացած տպավորությունը անհմար է ամբողջությամբ ներկայացնել, քանի որ այն կրում է խիստ սուրբելտիվ, անհատական բնույթ, և ամեն տեսանող միայն ինքը կարող է պատկերացնել այն զգացողություններն ու ապրումները, որ ունեցել է այդ ընթացքում:

Որևէ վերերկրային տեսարան տեսնելու կամ երկնքից հնչող ձայն լսելու համար անհրաժեշտ է նախապայման: Նախ առկա է մտահոգությունը որևէ հարցի վերաբերյալ, որը կարող է և չգիտակցվել որպես այդպիսին: Տեսլատեսության համար կարևոր նախապայման է լարված վիճակը, գերհուզումը: Տեսիլներ կարող են առաջ բերել նաև հայլուցինածին միջոցները: Այս մասին մանրամասն խոսում է ամերիկյան ժամանակակից հեղինակ Կառլոս Կաստանեդան⁴, որն իր՝ հնդկացիների ուսմունքների մասին գրած տարբեր գրքերում նկարագրել է իրեն հայտնված տեսիլները: Դրանցից որոշները իրոք սարսափեցրել են իրեն, սակայն նախնապես Կաստանեդան խորապես համոզված է, որ տեսիլները հնարավորություն են տալիս տեսնել ու գիտակցել մարդու սահմանափակությունը և, միաժամանակ, նրան շրջապատող իրերի դրությունը՝ նրանց անչափելիությունն ու անսահմանությունը: Տեսանողը մեկ աստիճանով վեր է կանգնում իրականությունից՝ դիտելու այդ նույն իրականությունը: Վերջին հաշվով պարզ է դառնում, որ բոլոր իրերը հավասար են, և ոչ մեկն առավելություն չունի մյուսի նկատմամբ. այստեղ առանձնացնում է մարդը՝ միայն իրեն հատուկ հարաբերությունների աշխարհով, որը խիստ տարբերվում է վերզգայական աշխարհից: Իսկ մարդու կողմից դիտվող երկնայինը թվում է միանգամայն կատարյալ, բոլորի սիրուն արժանի: Ահա հենց այստեղ է կարևորվում տեսիլի դերը:

Ընդ որում տեսանելու համար ամենևին էլ պարտադիր չէ տեսողություն, կարելի է «տեսանել» նաև լսողությամբ, քանի որ այստեղ գլխավոր դերը վերապահվում է մտապատկերներից: Տեսլատեսության առիթ կարող են հանդիսանալ երբեմն նույնիսկ խիստ պարզունակ առարկաներ, քարի ստվերը, առվով հոսող ջուրը և այլն:

Քրիստոնեական զրականության մեջ ևս քիչ չեն դեպքերը, երբ տեսիլները սարսափեցնում են տեսողներին. այդ մասին ասում է նաև Եզմիրլը՝ օրինակ բերելով Հոբին: Որքան

³ Փ. Ինլիքիսական, Աստվածաշնչի և Հայոց սուրբ անվանյալ բառարան (ըստ V-XX դարերի հայ բանասերնություն), Երևան, 2001 թ., Տեսանող, հոդվածք:

⁴ Կառլոս Կաստանեդա (իրականությանն ավելի մոտ են այս թվականները՝ 1925-1998) - XX դարի խոշորագույն միստիկ և արևել, որի կենսագրությունը խիստ մշտույտ է: Նա իր մասին ոչինչ չի հայտնել, խուսափել է հարցազրույցներից, լուսանկարվելուց և առավել ևս՝ նկարահանվելուց: Իր գրքերում հնարագույնի փնտրանքները է կատարողական աշխարհը և կոչ արել հաղթել չարին ու երկրի վրա հաստատել ճշմարտության թագավորություն:

էլ սարսափելի լիճի տեսիլը՝ որպէս այնկողմնայինի հետ շփում, այնուամենայնիվ, այն արտասովոր ձգողական ուժով է օժտված. դա բացատրվում է նրանով, որ սուբյեկտը ընտրյալ է, նա տարբեր է մյուս մահկանացուներից. նա մի քայլ առաջ է նրանցից: Այստեղ ընտրյալ է, նա տարբեր է մյուս մահկանացուներից. նա մի քայլ առաջ է նրանցից: Այստեղ աստվածայինն ու սարսափելին միաձուլվում են՝ ստեղծելով հետաքրքիր մի երևոյթ, որի հատկանիշներն են անորոշությունը, խորհրդավորությունը, անհայտությունը (իսկ անհայտությունը միշտ էլ սարսափեցնող է), ինչը հատուկ է աստվածայինի ապրումներին: Մինչ-տուրությունը միշտ էլ սարսափեցնող է), ինչը հատուկ է աստվածայինի ապրումներին: Մինչ-դեռ մարդը համոզված է, որ աստվածության զրևերումն են երկու ձևերից՝ պատժից ու ողորմածությունից գերակշռում է վերջինը: Ուստի նա իրեն սարսափեցնող տեսիլների միջոցով նույնիսկ ցանկանում է աղտահայտել իր իղձերը՝ կապված տեսիլի օբյեկտի հետ:

Իրենց աշխարհագրական և ժամանակային ընդգրկումով տեսիլները տարբեր են: Կան տեսիլներ, որոնք վերաբերում են միայն մեկ երկրի, մեկ հասարակության, ունեն, այսպես կոչված, տեղային բնույթ ու նշանակություն՝ կոնկրետ որևէ դեպքի, դեմքի, իրադարձության մասին տեղեկացում, հաղորդում, ուղղորդում կամ էլ նախագուշացում: Մյուս կարգի տեսիլներն էլ ունեն առավել լայն ընդգրկում թե՛ ժամանակային, թե՛ տարածության առումով: Սրանք վերաբերում են ոչ միայն այդ մեկ, այլև հարևան երկրներին, երբեմն էլ՝ ողջ աշխարհին, քանի որ շնտ հաճախ աշխարհաքաղաքական զրևերումն են և պայմանավորվում տվյալ երկրի վիճակը: Այս բնորոշումը լիովին համապատասխանում է միջնադարյան Հայաստանում տարածված տեսիլներին:

Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը, Ագաթանգեղոսը, Եզնիկ Կողբացին, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Ղևոնդը, Արիստակես Լաստիվերտցին, Հովհաննես Գրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Կիրակոս Փանծակեցին և ուրիշներ իրենց երկերում այս կամ այն կերպ անդրադարձել են տարբեր տեսիլների:

Տարբեր կարգի տեսիլների օրինակներ գտնում ենք Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկում: Նա մեջբերում է Ստեփանոս Սյունեցու թարգմանած Սուրբ Լեթոդիոսի տեսիլը⁵: գրված Եզեկիելի տեսիլի հիման վրա և նմանությամբ, որին նախորդում են Սյունեցու կյանքի ու գործունեության պատկերումը, ուր ևս առկա են տեսիլներ: Բացի այս, Օրբելյանի մոտ կան տեղային այլ տեսիլներ, որոնք վերաբերում են Հայաստանի՝ մասնավորապես Սյունիքի եկեղեցիներին և եկեղեցական հայրերին:

Սյուժետային գիծն առկա է բոլոր տեսիլներում, սակայն երբեմն այն կարող է ընդհատվել կամ լիցել նվազ կարևոր, քանզի առավելապես ուշադրություն է դարձվում թողած ազդեցությանը, քան ձևին ու բովանդակությանը:

Վերոհիշյալ տեսիլներում առկա են գործող անձինք: Սակայն գրականության մեջ շատ կան տեսիլներ, ուր չկան գործող անձինք, կան միայն գործողություններ: Այնտեղ պատկերվում են միայն հրաշալի երևույթներ, որոնք անվանվում են պարզապես հրաշքեր: Դրանք կարող են լինել որևէ հրե գեղի երևալը, լուսավորության, լույսի սյան հայտնվելը, քանոն կամ մրրկի անսպասելի սկսվելն ու ավարտվելը, այսինքն՝ բնության տարբեր երևույթներ, որոնք միանշանակորեն ընդունվում են որպես վերին բանակաճության գոյության զրևեր: Տագնապայից ժամանակներում երկրի ընդերքում տեղի ունեցող երևույթ-

⁵ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և մատերագրությունները Ա. Ա. Արքունյանի, Երևան, 1986, էջ 156:

ները, լուսատուների շարժումները կապվում էին հայ ժողովրդի քաղաքական բախտի մեջ կատարվող շրջափոխումների հետ: Արեգակի կամ լուսնի խավարումը նույնպես համարվում էր նշան, որ ուղարկված էր երկնքից՝ որպես նախազգուշացում մարդկանց, ովքեր ոչ աստվածահաճո կյանք էին վարում:

Մատթեոս Ուոհայեցիին արեգակի խավարումը համարում է սատանայի ազատումը կապանքներից. «Այժմ սատանան արձակվեց իր կապանքներից՝ համաձայն Հովհաննես ավետարանչի տեսիլքի»⁷ վկայության, ինչպես նրան Աստծո հրեշտակն ասաց, թե հազար տարի սատանան կապված պիտի մնա և իր կապանքներից նորից պիտի արձակվի: Այսօր ահա սատանան արձակվեց իր հազարամյա կապանքներից. հայոց տոմարի 478 թվականն է, դրա վրա գումարի 552, լինում է 1030 տարի, դրանցից հանիր [Բրիտանոսի] նախքան մկրտվելու երեսուն տարին, կատացվի, որ մինչև օրս անցել է հազար տարի: Այդ պատճառով էլ ահա երկինքը պատուվեց»⁸:

Հայ գրականության մեջ, բացի պատմագրական երկերից, տեսիլների կամ տեսիլներից կատարված վկայակոչումների հանդիպում ենք նաև քնարական ստեղծագործությունների մեջ: Տասներեքերորդ դարի մեծանուն բանաստեղծ Կոստանդին Երզնկացից իր տաղերից մեկում, որում նա պատասխան է տալիս իրեն շարախոսողներին ու նախանշողներին, նկարագրում է մի տեսիլ, որի միջոցով ինքը երկնային շնորհ է ստանում բանաստեղծելու՝ առանց վարդապետների մոտ աշակերտելու: «...Այլ է աշխատիլն ես այլ շնորհքն ի հոգւոյն...»,- հավաստիացնում է բանաստեղծը⁹: Ներսես Օճորհայից էլ իր նշանավոր Ողբում առանց մատանշելու կոնկրետ տեսիլը, նկարագրում է խաչակիր «մեծառանց գնդերի» դաժան պատերազմը, որով հաստատվելու է երազած խաղաղությունը¹⁰: Նա այստեղ հենվում է Ներսես Մեծի տեսիլում նկարագրված գուշակությունների վրա:

Ավելի ուշ Եղիշե Չարենցն իր «Աթիլա» բանաստեղծությունում Աթիլայի տեսլային երազի իրականացումն է նկարագրում՝ գրելով.

Մոռացել էին արքա Աթիլին:
Եվ հեզնում էին երազը նրա...
Եվ կարծում էին, որ մեռել է նա...
Իսկ ես - բարձրացել, անցնում եմ կրկին¹¹:

Կամ «Մահվան տեսիլ» վերնագրված հայտնի բանաստեղծությունը, ուր մահը հայտնվում է «մի գորշ պարանի ու երկնուղեչ երկու փայտերի» պատկերով, իսկ ինքը տեսիլի նման է մոտ գնալու այդ կախաղանին, սակայն կախվածի աչքերում երևալու է մեկ այլ տեսիլ՝ լուսապսակ ապագայի տեսիլը: Չարենցն ունի շարք, որ կոչվում է «Տեսիլաժամեր», ուր ներառված բանաստեղծություններում տեսլային խոհեր են՝ իրականի ու անիրականի

⁷ Նայրուբյուն, Ի:2:

⁸ **Մատթեոս Ուոհայեցի**, ժամանակագրություն, քարգմեռությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Նրայ Բարթիկյունի, Երևան, 1973, էջ 35: Հնդիանրապես ցանկապես խոշոր ուղեղ միջնադարում համարվում էր աշխարհի կարարածի նախազգուշացում:

⁹ **Կոստանդին Երզնկացի**, Լոյսն առաւօրն, կազմել, ծանոթագրել Լ. Մկրտչյանը, Երևան, 1981 թ., էջ 60:

¹⁰ **Ներսես Օճորհայի**, Ողբ Եղիսիոյ, Երևան, 1973, էջ 129:

¹¹ **Եղիշե Չարենց**, Երկեր, Երևան, 1983, էջ 133:

սահմանագծին կատարվող: Անմարմին ու լուսե տեսիլն ուղեկցում է նրան ամենուր՝ և՛ երեկոյան զանգերի երգում, և՛ անմարդ քույվարում, և՛ դաշտերի մենակության մեջ, և՛ խավար սենյակում, և՛, իհարկե, հայրենիքում:

Վահան Տնրյանի «Տխրություն»¹⁰ բանաստեղծությունում հանդիպում ենք տխրության խորհրդաճանաչման պատկերի, որը հանդես է գալիս ճերմակազգեստ ուրուի տեսլային պատկերով:

Լևոն Շանթը «Հին աստվածներ» դրամայում ցանկանալով ցույց տալ իր հերոսի՝ երիտասարդ արեղայի հոգեկան տվյալտանքները՝ դիմում է տեսիլի օգնությանը, որը հայտնվում է ճակատագրական պահին: «Միզանման քողով» պատված Սեղան՝ արեղայի «մտքերի թագուհին», հայտնվում է տեսիլի միջոցով և դիմում երազների օգնությանը, որոնք իջնելով՝ իրենց հետ հույս են բերելու և հավատ: Տեսլային Սեղան հորդորում է արեղային. «Այ մի՛ ըլլար տխուր»¹¹: Այսինքն՝ տեսիլը նաև միջոց է՝ դուրս գալու դժվարին ու անելանելի թվացող իրավիճակից:

Տեսիլների կամ երազների միջոցով իրենց ստեղծագործություններին միս ու արյուն են տվել ոչ միայն գրական աշխարհի ներկայացուցիչները: Որպես գեղարվեստական մտածողության ցայտուն դրնորում՝ տեսիլները, որոնք պատկերում են գեղարվեստական ստեղծագործության էությունը, առկա են արվեստի տարրեր բնագավառների գործերում: Կոմպոզիտորներից շատերը իրենց տեսիլ-երազներում լսել են երաժշտություն, ապա ձայնագիշերով արտահայտել (Բեթհովեն, Շոման, Ռիմսկի-Կորսակով):

Երազային և հայլուցինացիոն պատկերների ու մտահղացումների զաղեցության տակ նկարիչները կերտել են իրենց կտավները (Ռաֆայել, Գոյա, Դալի)¹²: Հաճախ բանաստեղծները, ինչպես նաև այլ ստեղծագործողներ, արթուն ժամանակ հայտնվում են այնպիսի հոգեվիճակում, որոնք հոգեբանական բոլոր չափանիշներով մնան են երազային տեսլային: Սրանք արթնի երազներն են, անուրջները, որոնք էլ տեսիլի տարատեսակներ են: Մեկ գաղափարի վրա կենտրոնացած անձանց մոտ մտածական ու հոգևոր գործընթացները տեսիլային երազներում տալիս են իմացական նոր արդյունք¹³:

Այս հոգեվիճակներում շատ գրողներն ստեղծել են իրենց գործերը: Լոնգֆելլոն իր առակներից որոշները ստեղծել է երազում, Վոլտերի, Պուշկինի մի շարք բանաստեղծություններ երազի արդյունք են և այլն:

Արտասահմանյան գրականության մեջ ևս բազում են տեսիլների, աստվածային

¹⁰ «Լահան Տնրյան, երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1972, էջ. 25:

¹¹ Լևոն Շանթ, երկեր, Երևան, 1989, էջ. 385:

¹² Մ. Դալին ունի մի շարք ստեղծագործություններ, որոնց անուններն ու բնույթը որոշակիորեն մարքանշում են դրանց կյոթի երազներից վերջաված լինելը: 1932 թ. կերտված «Երազ» նկարը, ուր աստիճան սցյունով կնոջ խոշոր գլուխ է պարկերկրված, իսկ հետին պլանում մարդկային մեքը մարմիններ, ասվածի լավագույն ապացույցներն են: Տեսիլային մրանկայկերպ գերիտապաշտության (սյուրռեալիզմի) հազուկ մրանկյանն երկի է:

¹³ Հաճախաղեյ է նաև գիտության փարերը ճյուղերում գյուրերի րնելային աղաղծը (Նայ մարենազրույթյան մեջ ցրերի գյուրը համարվում է րնելի արդյունք, կըր աղաղածային Աջն է գծազրում րնաղըր, իսկ Մաշրուղը՝ միայն աղաղաղըրերում դրանք): Նույնիսկ րնաղըրության մեջ կան նման երևույթներ: ազգույթար սերը գյուրարար Ն. Տնայի (1856-1943) էլնկըրաղըրնիկայի և ռաղըրնիկայի րնաղաղաղներում կաղաղած գյուրըրում իրենց դըրն ռնեն րնելիները:

երազների կամ պարզապես երազների ցկարագրություններ:

Հերման Հեսսեն¹⁴ իր ստեղծագործություններից մեկում ունի այսպիսի տողեր, ուր ցկարագրվում է բանաստեղծության տեսլային հայտնությունը. «Մի անգամ՝ գիշերը, երբ արթըմի պատկած էի, հանկարծ իմ մեջ արթնացավ բանաստեղծությունը, այնքան գեղեցիկ և այնքան հրաշալի բանաստեղծություններ, որ մտքով չանցավ անգամ դրանք գրի առնել, իսկ առափոխյան այլևս չէի հիշում, քանզի պարփակված էի իմ մեջ, ինչպես ծանր ընկույզը՝ դյուրարեկ կեղևի մեջ: Մեկ ուրիշ անգամ նա երևաց, երբ ընթերցում էի մի բանաստեղծի, խորհրդածում Դեկարտի, Պասկալի դատողությունների շուրջ, մեկ այլ անգամ երևաց կրկին և ինձ ոսկեղեն ճանապարհով տարավ դեպի երկինք, երբ ինձ հետ էր իմ սիրելին»¹⁵:

Անտիկ զրականության մեջ ևս կարելի է հանդիպել մարգարեական երազների ցկարագրության՝ Հոմերոսի «Իլիականում», Վերգիլիոսի «Էնեականում»¹⁶: Հետագա դարերի զրականության մեջ ևս հանդիպում ենք նման երևույթների. Դանթեն իր երազներում հանդիպում էր Բեատրիչեին և սոցետներում երզում նրան:

Ա. Ս. Պուշկինի՝ Աննա Կերնին Գլիրված հայտնի բանաստեղծությունում հերոսուհին հայտնվում է որպես վաղաճցիկ տեսիլ.

Այն ակնթարթն են հիշում ես պայծառ,

Երբ երևացիր հրաշքի պես.

Տեսիլքի նման դու ինձ տեսլացար,

Որպես գեղեցիկ հանճարը կեզ:

(թարգմ. Ռ. Դավոյան)¹⁷

Я во мню чудное мгновенье:

Передо мной явилась ты,

Как мимолетное виденье,

Как гений чистой красоты¹⁸.

Գրականության մեջ լայնորեն օգտագործվել է երազների կամ տեսիլների օգնությամբ կերպարների հոգեկան աշխարհը բացահայտելու զրական-հոգեբանական հնարանը: Պուշկինն իր լայնակտավ գործերում, ինչպիսիք են «Եվգենի Օնեգինը», «Բորիս Գոդունովը», «Կապիտանի աղջիկը», ցկարագրում է երազներ, որոնք ոչ միայն ինքնանպատակ չեն, այլև լավագույն միջոց են՝ ամբողջական պատկերացում տալու այն հոգեվիճակների մասին, որոնց մեջ հայտնվել են հերոսները՝ Տատյանան, Գրիճյովը, Գոդունովը: Որպես առանձին սյուժե ունեցող փոքրիկ պատումներ՝ երազ-տեսիլները միաժամանակ մաս են կազմում սյուժետային ընդհանուր գծերի:

Երազի, տեսիլի կարևորությունը հատկապես շեշտված է Ն. Չեռնիշևսկու «Ի՞նչ անել» ծրագրային վեպում, որում հեղինակի հիմնական գաղափարները դրսևորվում են գլխավոր

¹⁴ Ներման Հեսս (1877-1962) - XX դարի գրականության ամենաինքնաբերական ղեկավարներից մեկը: Նրա գործերը, որոնք ստեղծվել են գրական գրքերի թուր հիմնական մասերին, խորապես ինքնակենսապրական են, իսկ արձակը՝ խիստ բազմաշերտ ու փարթև ուղղությունների ու մտածողությունների կեկրև իր վրա կրող:

¹⁵ Ներման Հեսս, Տափաստանի գայլը, Երևան, 2003, էջ 29:

¹⁶ Ընդհանրապես իհն հույների և հռոմեացիների մտք սովորություն կար ընայ և քնել աստվածների տաճարներում, որպեսզի աստվածները երազներում այն զան ու օգնեն իրենց:

¹⁷ Ա. Ս. Պուշկին, Ընկիր երկեր, Երևան, 1985, էջ 147:

¹⁸ А. С. Пушкин, Полное собрание сочинений, т. 2, ст. 238.

հերոսուհու՝ վերա Պավլովնայի չորս երազների մեջ:

Իր գործերում երազներին մեծապես անդրադարձել է Լ. Տոյստոյը: «Պատերազմ և խաղաղություն» վեպում հեղինակը նկարագրում և բացատրում է հերոսների՝ Պիեռ Բեզուլտովի, Անդրեյ Բալկոնսկու երազները, դրանց պատճառները: Նույնը կարելի է տեսնել նաև «Ահհա կարեհիհա» վեպում, ուր պատկերված են գլխավոր հերոսուհու երազները:

Ն. Վ. Գոգոլը «Օիճելը» պատմվածքում խոսում է մի տեսիլի մասին, ուր աստիճանավորի տեսքով մի մեռել հայտնվում էր շինելավոր մարդկանց և պոկում նրանց շինելները՝ կարծես վրեժ լուծելով իր իսկ շինելի համար, որք այդպես էլ չհասցրեց վայելել:

Ռուս գրականության հսկաներից մեկը՝ Ֆ. Դոստոևսկին, նկարագրում է բարդ մի հոգեվիճակ. կարամազով եղբայրներից մեկին՝ Իվանին, հայտնված տեսիլի գլխավոր հերոսը սատանան է, որին միայն հոգեկան ծայրահեղ լարված դրության մեջ գտնվող Իվանն է տեսնում: Այս տեսիլը հիանալի հնարավորություն է տվել հեղինակին՝ ցույց տալու, թե ինչպես արտաքնապես հավասարակշռված թվացող անձը կարող է ներքուստ բոլորովին էլ այդպիսին շլիճել, այլ ունենալ հոգեկան խիստ փխրուն կերտվածք: Դոստոևսկին այս կերպարի միջոցով նաև ցույց է տվել հոգեբանական մեկ այլ երևույթ՝ անձի երկվածությունը:

Այստեղ անպայման պետք է հիշել Օեքսպիրի հայտնի ողբերգության մեջ պատկերված տեսիլը՝ հոր ուրվականի հայտնությունը որդուն՝ Համլետին, որը ամբողջ ողբերգության համար հենք է ծառայում և առաջնիչ ուժ: Արքայազն Համլետի հետագա գործողությունները պայմանավորված են հենց այդ տեսիլով, որի միջոցով ճշմարտությունն է հայտնի դառնում: Տեսիլների նկարագրություններ կան XX դարի այնպիսի նշանավոր հեղինակների ստեղծագործություններում, ինչպիսիք են Կ. Համսունը, Ռ. Մուզիլը, Օ. Հաքսլին, Է. Բրոքսեր և ուրիշներ: Գեղարվեստական ստեղծագործության վրա տեսիլ-երազների ունեցած ազդեցությունների հարցով լրջորեն ու հետևողականորեն զբաղվել են և գերիրապաշտները¹⁹:

Տարբեր հեղինակների երկերում պատկերված տեսիլները հոգեկան գործունեության, մտածական տարբեր գործընթացների շնորհիվ առաջացած գեղարվեստական ինքնուրույն պատումներ են, որոնք կոչված են լրացնելու, զեղարվեստորեն համեմելու գործող անձանց ու նկարագրված դեպքերի ու իրադարձությունների նկարագրությունները:

¹⁹ Roger Fayolle, *La critique*, Paris, 1978, p. 173-174

ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՆԱՐԵԿԵԱՆ ՄԵՂՍԱԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆՆ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ ԲԱՆԱԼԻ

Ս. Գրիգոր Նարեկացին հայոց միջնադարեան մշակույթի հրաշափառ դեմքերից է:

«Մատենան ողբերգության» անուամբ երկը, իբրև աղօթարան, բժշկարան եւ իմաստարան, քրիստոնեական մշակույթի չհնացող պարծանքն է, որն այսօր էլ նույնքան գործածական է, ինչպես եւ Միջին դարերում:

Իբրև զեղարուեստական ստեղծագործություն՝ այն եզակի է: Նարեկը չի ունեցել ո՛չ իր նախօրինակը, ո՛չ էլ յետոյ է ստեղծուել նման երկ, որպեսզի հնարատր լինէր խօսելու ժանրային նույնության մասին: Նմանապես՝ կարելի չէ Նարեկն ամուսնել պոեմ, որովհետեւ այն պոեմի ժանրային որևէ յատկանիշ իր մէջ չի կրում:

Նարեկն ունի Սուրբգրական երկերի բոլոր յատկանիշները, կտակարանային պատգամախօսություն, անտարանական փրկալոյս լուսայեղումներ, մտքի մարգարէական պայծառություն, հոգեվարժական լիցքատրող լորդոր, ճանապարհի յստակ տեսողություն, առաջնորդական կոչ, շերմեռանդ աստուածապաշտություն: Նարեկի ելակէտը, հեռակէտն ու վախճանական նպատակը Սուրբ Գիրքն է՝ իր երկու կտակարաններով: Նարեկն, այսպիսով, Սուրբ գրական երկերի շարքին կարող ենք դասել ե՛լ իր մակարդակով, ե՛լ առաքելությամբ:

Ողբամատենաի խոնարհագոյն հեղինակին յատուկ է եղել իր երկի փրկարար զօրութեան գիտակցումը, այլապէս այն չէր յանձնարարուի համայն մարդկութեանը: Նարեկացու Մատենանը Սուրբգրական այն երկն է, որ նախատեսուած է բո՛լոր մարդկանց համար, նրանց, ովքեր նորածին են, նոր են արբուցքի հասած կամ ծերութեան շեմին են: Այսինքն այն յանձնառելի է՝ անկախ տարիքից, ազգային և դասային պատկանելությունից: Նարեկը, իբրև բուժման, ապաքինման, սրբացման, հոգեճորդման, փրկութեան հրաշալի ձեռնարկ, յանձնարարուել է ինչպէս ոսմիկին, այնպէս էլ ազնուականին, անզէտին եւ իմաստունին, աշխարհականին եւ բարեկրօն ու առաքինի հոգեւորականներին, ամենքին եւ բոլորին (տե՛ս՝ Բան Գ,բ):

Նարեկը մարդու զօրատր աղօթքն է առ Աստուած, մեղքերի խոստովանութեան, զղջման ու ապաշխարութեան հոգեխորքային արտայեղումներով, աղերսներով, խորհուրդների լուսաբանումներով: Բացի մարդկային հանճարից՝ Նարեկի մէջ առկայ է Աստուածային նեղորձական ուժը: Կորովամիտ մեկնություններն ու լուսապայծառ յայտնությունները նշաններ են Սուրբ Հոգու կենարար զօրութեան, որ Նարեկի մէջ եւ նրա միջոցով առատարաշխուտ է համայն մարդկութեանը: Մարդկային եսականութեան ու եսասիրութեան իսպառ բացակայութիւնը նախապայման են Նարեկի համընդհանուր մատչելիութեան եւ ընդհանրական օգտագործման: Մաքրուած սուրբ մարդն է մենախօսում Աստուծոյ հետ՝ ներկայացնելով համայն մարդկութեան մեղքերը եւ քաւութիւն աղերսում:

Մարդը խնդրել է եւ Աստուած տուել: Նարեկը դարձել է կեցութեան համապիտանի գիրք, հոգեվարժարան, բժշկարան, ազատութեան լուսածիր եւ արդիմագօր ծրագիր: Հեմելով մեղքի քրիստոնէական պատկերացման վրայ՝ Նարեկացին անլի է խորացնում էկեղեցու Հայրերի ուսմունքը եւ համապատկերում է մարդկային մեղսալից կեանքը, տալիս նրա ամբողջական ախտանկարագիրը իբրեւ իր ներանձնական կեանքի դրամայ եւ ողբերգութիւն:

Մեղսագիտակցութեան շնորհիւ մարդ նախ խորացնում է իր ինքնանաճաչողութիւնը՝ կապուելով համայն մարդկութեան պատմութեան բոլոր շրջափուլերին, նախահօրից մինչեւ գալիք սերունդները եւ, երկրորդ, դառնում է պատասխանատու, հետեւեալք՝ նաեւ գործիչ, գործնէութեան Ենթակալ: Այլզբ է առնում մարդկութեան հետ անհասի նոյնակացութեան գիտակցման (իդենտիֆիկացում) շարժընթացը, որը մարդուն դարձնում է Քաղաքացի, բառի ճշմարիտ իմաստով՝ մարդկութեան ընկեր:

Մարդու մեղսական բնոյթի ինքնագիտակցութեանը նախորդել է հեթանոսական դարաշրջանին յատուկ հաճոյքամետ ինքնասիրահարուածութեան (հեղոնիկ-նարկիսութիւն) եւ անհատապաշտական (ուշ հելլենական դարաշրջանի ինդիվիդուալիզմ) վերաբերմունքի եւ արժեքաբանութեան տիպարային ձեւերը, որոնք շատ են սահմանափակում մարդու ինքնանաճանչման եւ աշխարհիմացութեան հնարաւորութիւնները: Բացի այդ, քրիստոնէական ժամանակաշրջանին ուղեկից վարքաոճի մի շարք ձեւեր առանել քան մերժելի են եւ անլի վտանգաւոր (աճող ազդեցիւթիւն) արդի հասարակական կեանքում, դաժանահակութիւն (սադիզմ), տանջասիրութիւն (մազոխիզմ), թմրամոլութիւնը, սեռամոլութիւն եւ բազմաթիւ ընկերային կեանքի հիւանդութիւններ, որոնց գլխաւոր պատճառը ճշմարիտ հաւատքի հուճից դուրս գալն է: Իրապէս, ժամանակակից աշխարհում խառնուել է ամէն ինչ եւ Սիզիփոսի նման նորից ու նորից է կատարում անարդիմաւետ աշխատանք (մեր պարագային՝ մարդու մեղսալից վիճակի բերումով) եւ քարը մնում է իր նպատակակէտից՝ լնտան կատարից շատ հեռու:

Ժամանակակից աշխարհը, ցաւօք, կարծես անլի է մօտենում հեթանոսական դարաշրջանին՝ մաքրուելու կամաւոր ճիզերի եւ վշտակրութեան անհրաժեշտութեան անտեսմամբ: Այն լեցուն է աղանդամտութեամբ ու զեխութիւններով: Ներկայիս հոգեբաններն ու հոգեբոյժները իրաւամբ համոզուած են, որ տարանջատման յստակ սահմանագիծ գոյութիւն չունի մարդու հոգեկանի լիառողջ եւ ախտաբանական վիճակների միջեւ: Քրիստոնէութիւնը եւս անմեղին ու մեղաւորին խտտագոյնս չի հակադրում, քանի ղետ մարդ չէ հասած իր կեանքի լրումին: Չնոռանանք՝ Յիսուս Քրիստոսի էջըը ոչ թէ անմեղներին փրկելու համար էր, այլ մեղաւորներին: Մեղքի եւ մեղսագիտակցութեան այս փաստի ընդունումը նշանակալից է մարդու ինքնանաճանչման եւ ինքնադրսելուման պատմական գոյընթացում: Կարելի է ասել՝ այն հոգեւոր կեանքի սկիզբն է:

Անկասկած է, որ Նարեկացին մեղսագիտակցութեան միջոցով հասել է մարդու էութեան ճշմարիտ եւ ամբողջական ըմբռնումին: Մեղքի գաղափարը Նարեկացուն հնարաւորութիւն է ընձեռել մարդկութեանը դիտարկելու օրգանական եւ ընկերային մէկ ամբողջականութիւն, նախամարդուց մինչեւ իր ապրած ժամանակաշրջանը եւ գալիք բոլոր սերունդները:

Նարեկեան մեղսագիտակցութիւնը եւ առհասարակ մարդացիտութիւնը նոր մակարդակ է քրիստոնէական եկեղեցու Հայրերի ուսմունքի մէջ, որով Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը դարձել է համաշխարհային մշակոյթի պատմութեան ամենանշանակալից երեւոյթներից: Նարեկի իւրացումը մարդկութեան կողմից եւ գործնական կիրառութիւնը հանրային կեցութեան մէջ առաջ կը բերի յեղաշրջող բարեփոխութիւններ:

Նարեկեան մեղսագիտակցութեան առանցքային գաղափարներից է մեղքը, որի յստակ գիտակցումն ու անաչառ մեկնաբանութիւնը բարոյական, իմացական եւ հոգեվարժական հսկայական նշանակութիւն ունի: Մեղսագիտակցութեան ծիրով եւս կարելի է ըմբռնել Նարեկը եւ վերջինիս միջոցով՝ մարդուն եւ աշխարհը:

Հանրամատչելի է մեղքի պատկերացումն իբրեւ չարահակութիւն եւ այնպիսի գործերի կատարում, որոնց վախճանը կորուստն է, աներն ու մահը:

Նարեկի մէջ յստակ է մարդու քրիստոնէական ըմբռնումը. Աստուած արարիչ է, մարդը՝ արարած: Դրախտում երանելի կեանք վայելող աստուածանման մարդը՝ Աղամը, ուխտազանց լինելով՝ ճաշակում է իմացութեան ծառի պտուղը, համակում է դատապարտելի կրքով, մեղանշում եւ փտարում է Դրախտից:

«Ողբալի դժբախտութեամբ կորստեան մատնելով իմաստութեան եւ անմեղութեան բարձրագոյն շնորհի եւ մեղքերից գերուելով մեր նախաստեղծ հայրը, ապականութեան հետ անգերձանելի հանգոյցով կապուելով, եւ իմացութեան ծառի պտուտած անկասելի կործանման մէջ գլորուելով՝ յոյսից զրկուած խաւարի մատնուեց» (տես՝ Բան ՂԳ, 26-31): Եայր է առնում մարդկութեան ողբերգական պատմութիւնը: Նախահօր մեղքն ընկնում է այնուհետ ամէն մի նոր ծնողի վրայ: Այսպէս՝ նախնական մեղքը ընդհանրական է, համամարդկային, որ ժառանգում է սերնդէսերունդ, ի տարբերութիւն անձնական մեղքերի, որոնք չեն փոխանցում ծնողից զաւակին: Մարդկանցից որեւէ մէկը եթէ նոյնիսկ բարեբախտութիւն ունենայ անձնական կեանքում մեղք չգործելու, միեւնոյնն է՝ նա իր մէջ արդէն կրում է այդ մեղքը:

Մեղսահակութեան եւ մեղսագործութեան առարկայական հիմքը (անխուսափելիութիւնը) մարդու բնոյթն է: Քանզի մարդն իբրեւ արարած՝ ի բնէ կաւից է, հետեւաբար՝ ենթակայ քայքայման, ապականութեան: Տարրակազմ գոյացութիւնը որքան էլ կառուցուածքորէն բարձր լինի, միեւնոյնն է, քայքայում է եւ ապականում: Մարդն իր բնոյթով (կառուցուածքով) մեղսահակ է: Աղամական մեղսագործութիւնը անխուսափելի էր: Հողեղէն մարդը, բնականաբար, ենթակայ է տարերքի ներգործութեան եւ ապականութեան: Այո՛, մարդ մեղսահակ է իր բնոյթով իսկ: Այդ իսկ պատճառով Աստուած օրէնք է սահմանել մարդու համար, որին համապատասխան նա պարտաւոր էր կազմակերպել իր կեցութիւնը: Օրէնքի գոյութիւնը վկայում է մարդու անկատար բնոյթի մասին, որի անտեսումը կորստաբեր է մարդու համար: Համենայն դէպս մեղքը բխում է մարդու գոյութիւնից: Գոյութիւնից, բայց ոչ էութիւնից: Կազմակերպ կաւից Աստուած հոգի է ներշնչել: Մարդ էականօրէն կապուած է Աստծուն եւ ստեղծուած է ըստ Նրա պատկերի: Աստուածային, անմիթական, կենդանաբար հոգին է մարդու էութիւնը, որի յայտնութիւնով եւ գիտակցումով է սկսում բուն մարդկային կեանքը:

Հակասութիւնը մարդու էութեան եւ գոյութեան միջեւ ի յայտ է եկել առաջին մեղքի

աւկայական չեն, այլ դեռ նոյնիսկ մեր բնութեան մէջ հոյովորոջ թերութեանց ամբողջութիւնը չեն: Եւ ես այստեղ բիրաւոր չար գործերի մի մասը միայն ցոյց տուի, որպէսզի դրանց միջոցաւ այլերը հետեւեցնենք, թէ եւ ոչ ամբողջովից» (ԲԱՆ, Ձ, 105-125):

Նարեկացից հոգեւոր երեւոյթները մատչելի դարձնելու համար յաճախակի կիրառում է լուսաբանման համեմատութեան եւ համանմանութեան (անալոգիա) եղանակները: Նա հոգու կրքային դոսեւորումները համեմատում ու հարադրում է բնութեան ակնագնահակաւ երեւոյթներին. *«Այնեօժ ծովի պէս ծփեցաւ եւ Քո հրամանիդ սաստկութիւնից չարսեցի եւ ետ շքաշունցի ծովի ալիքների եզերքից. իմ գործերի շափն ու թիր առաւել եղան աւագակոյտերից. նրանց անբաւ շեղչերից առաւել եղան իմ անօրէնութիւնների զուսար»:*

Չ Բանի մէջ իր (մարդու) մեղքերը համեմատելով ծովի աւագների հետ, միաժամանակ նշում է այդ երկշարք երեւոյթների զանազանութիւնը՝ նշելով, որ ի տարբերութիւն մարդկային մեղքերի, ծովի աւագները ծնելիութեան եւ աճի յատկութիւններից զուրկ են, իսկ մարդու մեղքերը՝ անընթացելիօրէն բազմազան: *«Մանաւանդ որ ջրափից հաւաքուածները թէ եւ բազմաթիւ են, բայց զուրկ են ծնելիութեան ու աճումի յատկութիւններից, իսկ իմ յանցանքներն ու մեղքերը անթիւ են ու անընթացելի՝ ոմանք իրենց ծննդով, ոմանք շատափողով, ոմանք բծերով... ոմանք արմատներով... հիստուածքով, պտուղներով, նշխարներով, ճիւղերով, ոստերով, արմատներով, ճիրաններով, մասերով...»* (ԲԱՆ, Ձ, 33-40):

Մեղքի ծնելիութեան եւ աճի յատկութիւնները ընդգծել ենք այն պատճառով, որ մէկ անգամ գործած մեղքը իր համար ճանապարհ է գտնում նորանոր ձեւերով արտայայտուելու եւ դառնում է հոգու հակաուժութիւն, բնատրութեան զիծ եւ դժուար է դառնում դրանց ազատուելը: Մեղքերն արմատակալում են մարդու ենթագիտակցութեան մէջ եւ ուղղութիւն են տալիս նրա վարքից ու գործունէութեանը, նախապատրաստում նորանոր չարքեր անհատի եւ հանրութեան համար:

Նարեկեան մեղսագիտակցութիւնը իրօրինակ է ենթակայի իմաստով: Մեղքի ենթական Նարեկի մէջ ո՛չ թէ մարդկութիւնն է, այլ հենց ինքը: Աշխարհի քոյր մարդկանց միջոցով գործած բովանդակ մեղքերի, յանցանքների, անօրէնութիւնների, վայրասուցքի, թշուառութիւնների, աղէտների, փլուզումների պատճառ Նարեկացից տեսնում է ինքն իրեն. *«Ոչ որ մեղաւոր իբրեւ զիս, ոչ որ անօրէն, ոչ որ ամբարիշտ, ոչ որ անիրաւ, ոչ որ վրիպեալ, ոչ որ սխալեալ, ոչ որ սոյեզնեալ, ոչ որ խարդախեալ, ոչ որ շաղախեալ, ոչ որ ամաչեցեալ, ոչ որ դատապարտեալ, ես միայն եմ եւ այլ ոչ որ, ես ամենայն եւ զիս ամենեցուն: Ոչ հեթանոսք, զի ոչ գիտէի, ոչ հրէայք, քանզի կուրացան, ոչ տզէտք եւ խառնիճաղանքք, քանզի հիմարք էիս իմաստից»* (Բան ՀԲ,բ):

Նարեկի ազգային եւ համամարդկային արժէքն ու արժանիքը պայմանաւորուած են առաւելարար այն հանգամանքով, որ Գրիգոր Նարեկացից Մատեանը ստեղծել է ոչ թէ պարզապէս իր անճատական փրկութեան համար, իբրեւ իր անձնական մեղքերի ամփոփ խոստովանութիւն, այլ համայն մարդկութեան մեղքերը վերցրել է իր վրայ որպէս իր իսկ գործածը եւ ներկայացել է Աստծուն քաւութեան աղերսաւքով:

Ինչպէս նկատելի է, Նարեկացու մեղսագիտակցութեան մէջ առանձնակի կերպով շեշտուած չէ մարդկային ողբերգութեան սոցիալական կողմը, դասակարգային մօտեցումը, տարբեր խաւերի, դասերի, ազգերի ու դասակարգերի, հաստատութիւնների ու հիմնարկ-

Գերի, սոցիալական կեանքից ծնունդ առած մեղքերը:

Յստակ ըմբռնում ունենալով հասարակության ընդհանուր կառուցումների՝ նա չի գնացել մտայնարարման (ոացիոնալիզացիա), ինքնարդարացման եւ իր իսկ մեղքերը այլոց վրայ տարասփռելու ճանապարհով, ինչով որ ներկայումս զբաղուած են անհատ մարդկանց մեծամասնութիւնը եւ հաաքականութիւնները՝ իրենց զարգացրած գաղափարախօսութիւնների մէջ: Այլ կերպ՝ Նարեկացիին չի գնացել երևոյթի մասնական եւ անջատական ըմբռնման ուղիով, այլ ընդհակառակը՝ մեղսագիտակցութիւնը զարգացրել է իր անձնակենտրոն եղանակով, ինքը իրեն դարձնելով մեղքի ենթակայ:

Աշխարհում կատարուած բոլոր չարագործութիւնների, անօրինութիւնների, մեղքերի, յանցանքների պատճառ Նարեկացիին համարում է ոչ թէ որեւէ դասակարգի, սոցիալական որեւէ խմբի կամ հաստատութեան, այլ ինքն իրեն: Բոլոր մարդկանց, բոլոր դարերում գործած մեղքերը: Ակնյայտ է, որ այս ըմբռնումը հակառակ է սովորական ողջախոհութեանը, մասը չի կարող իր վրայ կրել ամբողջի յատկութիւնները, մասը ամբողջին հաասարուել չի կարող:

Առողջ տրամաբանութեան համար անկարելի է, որ մէկ մարդ մեղաւոր լինի բոլոր մարդկանց փոխարէն, եւ իր վրայ վերցնելով համաշխարհական մեղքերը՝ նաեւ ապաշխարի դրանց համար: Դա նոյնն է, ինչ մտածելը՝ թէ *մասը մեծ է ամբողջից*: Միանգամայն պարզ ու հասկանալի է, որ ամբողջը մեծ է մասից, եւ դա ապացուցման կարիք չի զգում: Նմանապէս՝ երկու զուգահեռ ուղիղները որքան էլ շարունակուեն՝ չեն հատուի: Սակայն հաշտուման այլ համակարգերում քսիոմատիկ այդ եւ ուրիշ ճշմարտութիւններ կորցնում են իրենց ուժը, եւ դրանց ակնյայտութիւնը վերանում է:

Ոչ մեխանիկական տիրոջութիւն, պարզում է, ամբողջն այլեւս մեծ չէ մասից: Այսօրինակ մտածողութիւնը իմաստաւոր է նորագոյն բնագիտութեան համար, որը լրումն ու ամբողջացումն է դասական բնագիտութեան, որ դարերի ընթացքին դարձել է մեզ համար ողջախոհութեան հիմք: Նորագոյն բնագիտութեան հիմնական ճիւղերն են՝ Յարաբերականութեան տեսութիւնը, Քուանտային կամ միջուկային ֆիզիկան, Ռիմանի եւ Լորաշանկու երկրաչափութիւնը: Դասական բնագիտութիւնը, կիրառութեան իր կորոյրինացիոն սահմանափակ համակարգով, դարձել է նորի մասնաւոր դէպք: Մտածողութեան քսիոմատիկ այդ համակարգը փաստարկման հնարաւորութիւն չի տալիս եզրակացութիւն անելու ամբողջից մասի մեծ լինելու վերաբերեալ:

Ի՞նչպէս է Նարեկացիին հասել այդպիսի լայնախոհութեան՝ պատասխանատութիւն յանձն առնելով համայն մարդկութեան մեղքերի համար: Սուրբի մտածողութիւնն իր խորութեամբ հասկանալի է դառնում նորագոյն բնագիտութեան լայնագործութիւններով: Նշանակալից է այն հանգամանքը, որ հենց Նարեկացիին է իւրայատուկ ձեւով կանխատումներ արել Յարաբերականութեան տեսութեան վերաբերեալ՝ զարգացնելով 20րդ դարի մտածողութիւն, մի մտածողութիւն, որը խարսխուում է նոր՝ ոչ աւանդական տրամաբանութեան եւ բնագիտական ըմբռնումների վրայ:

ՂԳ Բանի մէջ Նարեկացիին աներեւակայելի մի համեմատութիւն է անում Աստուծոյ ամենագործութիւնը ի ցոյց բերելու համար. *«Բանգի այն, որ երկիցքն իր ամենայն բարձրութեամբ, երկիրը՝ լայնարձակութեամբ եւ անդունդների անտակ խորութեամբ, ծովերն ի-*

րենց անցորոթեամբ անկարող են իրենց մէջ առնելու, եւ պարունակուում են ինչպէս փոքոր մեծամեծի մէջ՝ Դու գորութեամբ պարփակեցիր Գիթի մի չնչին գոյացութեան մէջ՝ (Բան ՂԳ,Ժ):

Նարեկացու հենց այս միտքը հազար տարի առաջ կանխաձեւել է Յարաբերականութեան ընդհանուր տեսութեամբ հիմնադրուած ճոր աշխարհըմբռնման հիմնական մօղէլը, որն իր «ամորամարանականութեամբ» մերձենում է հրաշքին: Ոչ դասական, այսիճքն ցորագոյն բնագիտութիւնը մերձենում է հրաշքնեղի բացատրմանը, որովհետեւ այն որոշ իմաստով աշխարհը դիտում է իբրեւ անցիթական:

Բնագիտական միտքը մօտեցել է մի սահմանի, որի վրայ Գիթը կորցնում է իր Գիթականութիւնը եւ ձեռք բերում այլ յատկութիւն: Նոր մտածողութիւնը վերջ է տալիս, դուրս է մղում Գիթապաշտական ըմբռնումները բնագիտութիւնից, քանի որ պարզում է, որ Գիթը (կորպուսկուլյա) ընդամենը Գիթապատրանք է եւ ցրա վրայ կարելի չէ կառուցել գիտութեան շէնքը: Նիթը չքանում է, վեր է ածում այլքի, որն ունի երկակի բնոյթ: Այսիճքն՝ Գիթական աշխարհը պատրանքային է, իրականը աստուածայինն է, գաղափար է, ոգի է, եւ դրանց ծնունդ տուողն է՝ Աստուած:

Հոգեւոր իմաստով այս երեւոյթը փաստարկելը դժուար չէ, որովհետեւ հոգին հրաշագոյն, գերբնական երեւոյթ է: Հոգին վեր է չափերից ու չափումներից, տեղից ու ժամանակից, պատճառականութեան օրէնքներից: Հոգու համար կիրառելի չեն քանակն ու որակը, ծաւալային արելուայ բնութագրումներ: Հոգին ցերքից մարդն է՝ արտածամանակեայ եւ յաւիտեանական: Մարդը պիտի հոգին իր մէջ յայտնագործի եւ արքի հոգեւոր կեանքով: Հոգեւոր իրողութիւնը կամ հոգու աշխարհը, այսպիսով, մենք ընկալում ենք իբրեւ հրաշք, որն անբացատրելի է հին բնագիտութեան լեզուով:

Վերոշարդրեայից բխում է, որ մէկ մարդու հոգին փոքր կամ ցուազ չէ մնացեայից, որովհետեւ ցա հոգի է: Հոգին ի գօրու է իր մէջ պարփակելու ամէնը, զի ունի ամէն ինչ ընդգրկելու անսահմանօրէն «ընդարձակուելու» յատկութիւն: Հոգին անհաշտարկելի փոքր ժամանակաընթացքին կարող է պարուրել ամբողջ տիեզերքը: Ինչպէս ոչ դասական բնագիտութեան համար հիմք չէ դասական արսիոմատիկ համակարգը, այնպէս էլ հոգու համար չափորոշիչներ չեն բնագիտական ստորոգելիները, բնութեան օրինաչափութիւններն ու սկզբունքները: Հոգին քանակ եւ որակ չունի: Հոգին միտք է, որ արտածաւալային է, սակայն մեր սովորական պայմաններում հոգու մասին դատողութիւնները ենք անում Գիթական աշխարհի համանմանութեամբ կամ անայրգներով, որը մեր լեզուի եւ մտածողութեան անկատարութեան հետեւանքն է: Հոգեկան աշխարհի խորհուրդները շատ թէ քիչ բացալայտում են մեկնարանութիւններով, լուսարանումներով, օրինակներով, որոնք վերցում են Գիթական կամ ֆիզիկական աշխարհից:

Ելնելով այս սկզբունքներից՝ մեզ համար լիովին պարզում է, թէ ինչպէս Նարեկացին (անհատը, մասը) իր վրայ է վերցնում մարդկութեան մեղքերը: Հոգեւոր աշխարհում է Մուրքը ի գօրու վերապրելու մարդկութեան կեանքը եւ վերաիմաստաւորելու: Մարդկային սովորական երեւակայութեան համար անըմբռնելի փաստ է այն, որ Նարեկացին իր վրայ է վերցրել համայն մարդկութեան մեղքերը, զղջացել, խօստովանել է Աստուծոյն եւ ալաշխարել: Այս պարագային մասը, իրօք, հաւասար կամ մեծ պիտի լինի ամբողջից, ինչ-

պէս մարմնացեալ Քրիստոսն է մեծ աշխարհից: Ներկայիս մարդկանց համար Նարեկացու սխրանքը դժուարըմբռնելի է, որովհետեւ ժամանակակից մարդը հակուած չէ ո՛չ միայն մեղքերը խոստովանելու, այլեւ իր իսկ մեղքերն է տարասպառում աշխարհի վրայ եւ առաջնորդում է այլ սկզբունքներով: Խօսքը մարդկանց մեծամասնութեան մասին է, որոնց առհասարակ անձանօթ են հոգեւոր կեանքի օրէնքները:

Նարեկեան հրաշքի լուսաբանման երկրորդ տարբերակն այն է, որ մարդն ըստ էութեան հաւասար է մարդկութեանը, ինչպէս թագաւորը՝ թագաւորութեանը: Որովհետեւ հրաշքային է ոչ միայն մարդու հոգին, այլեւ մարմինը: Մարդկային մարմինը կառուցուած, այսինքն արարուած է այնպէս, որ արդէն բջջային մակարդակի վրայ ի յայտ է գալիս անհատի հաւասարութիւնը մարդկային հաւաքականութեանը: Բջջային բազմացման հնարատրութեան տեսակէտից մարդը իբրեւ ներքոյ հնարատրութիւն՝ գրեթէ հաւասարում է մարդկութեանը, մեր ամէն բջիջին համապատասխան կայ մէկ մարդ արտայայտ վիճակով: Մարդը մարդկութիւնն է: Մարդու առաքելութիւնը ինքնիրականացումն է, իր մէջ մարդկութեան յայտնագործումը, Աստծուն եւ մարդկութեանը ծառայելու միջոցով կատարելիս՝ աստուածային արքայութեան հասնելն է: Ահա՛ Նարեկացին սցում է չիրականացւած մարդկութեան համար, որը մեղսագործութեան հետեւանք է:

Մարդն իր էութեամբ, այսինքն մարդու հասկացութիւնն իր մէջ ներառում է բոլոր մարդկանց, որովհետեւ մարդը իր էութեամբ հոգի է, գաղափար է, որի մէջ մտնում են բոլոր մարդիկ: Գրիգոր Նարեկացին իր անձի միջոցով, շնորհիւ իր սրբութեան, ճանաչել է մարդուն, մարդկութեանն առհասարակ: Սուրբ Գրիգորը իր էութեամբ մարդ է եւ միաժամանակ՝ մարդկութիւն: Եւ հրաշալից այն է, որ նա իր անձնական, ժամանակաւոր գոյութեան ընթացքին է ճանաչել մարդկութիւնը, վերապրել մարդկութեան պատմութիւնն իբրեւ իր իսկ կենսական ընթացք: Կարեւոր չէ, թէ նա որքան ժամանակուծ է վերապրել մարդկութեան կեանքը՝ մէկ ամսուայ, տարուայ կամ տասնամեակի ընթացքին: Բացայայտել է մարդկութեան գործած մեղքերը եւ դրանք վերապրել, ներկայացել է Աստծուն իբրեւ մեղքի ենթակա, իբրեւ գործող անձ: Գործող անձը, քանի որ գործում է իր իսկ ազատ կամքով, պատասխանատու է Աստուծոյ առջեւ:

Նարեկով Սուրբ Գրիգորը ներկայացել է Աստուծոյ դատաստանին: Սակայն, ինչպէս արդէն կոհանելի է, Նարեկը ոչ թէ դատաստանագիրք է, այլ բժշկարան, այսինքն՝ փրկութեան գիրք: Նարեկացին զարգացրել է անձի մի տեսութիւն, որը կարելի է անուանել միջուկային, այնպէս, ինչպէս միջուկային ֆիզիկան է յայտնաբերել միկրոաշխարհի օրինաչափութիւնները՝ ուժականութեան անելի ճուրք ձեւերի ձեռքբերման գաղտնիքները: Նարեկացին իր անձի մէջ տեսել է համայն մարդկութեանը: Տեսել է, ճանաչել է, հասել է ճոր աշխարհըմբռնումի, որով լուծելի են դառնում միջմարդկային հակասութիւնները, մարդը քաւում է իր մեղքերը եւ պարզերես դուրս գալիս Աստուծոյ առջեւ, ներկայանում աստուածային դատաստանին սրբուած վիճակով:

Նարեկը կեցութեան գիրք է, վարժուելու, առաջնորդուելու, քաւելու, բժշկուելու, իմաստնանալու, կատարելագործուելու, Աստծուն հասնելու, Նրա թագաւորութեան մէջ մտնելու... Նարեկը միաժամանակ մարդկութեան հոգեբանութեան, բարոյագիտութեան, աստուածաճանաչման, մարդագիտութեան յանրձայն դասագիրքն է: Նաեւ ինքնաճանաչման եւ ինքնամաքրման, հոգեճորդման եւ բժշկման գործնական յանրձայն ձեռնարկ՝ լիպելցուն լոյսով, գիտելիքով, էներգիայով եւ զսպանակուած զգացմունքային ե-

ուանդոյժ կենսակաճութեամբ, որն առատապէս բաշխուիմ է բոլորին եւ, ինչպէս աստուածային ողորմածութիւն, փոքրերին աւելի, քան թէ աշխարհի մեծամեծերին:

Թէեւ մարդկային մեղքերը կորստաբեր են, որոնց շարունակական կրկնութիւնը ողբերգական է դարձնում կեանքը, սակայն մեղքի գիտակցումը եւ յատկապէս թոթափումը մարդուն հնարաւորութիւն է տալիս հասնելու էական ինքնաճանաչման:

Նարեկացիք բացայայտել է մարդկային հոգեբանութեան օրէնքները մեղսագիտակցութեան միջոցով: Անցեալը, ներկան եւ ապառնի հոգեւոր գործունէութեան տեսանկիւնից գրեթէ նոյնանշանակ են, եւ ժամանակը կարծես մի ընդհանրական ներկայութիւն է, անցեալը, կատարեալը ներկայանում է իբրեւ կատարելիք, իբրեւ դաս, որի իդեալին դեռ նոր պիտի հասնենք, իսկ անցեալ մեղքերը, որոնք քաւուած չեն, անցնում են մի սերունդից միւսը, եւ ծանրանում է մարդկութեան բեռը:

Իր ոգու զօրութեամբ Նարեկացիք վերապրել է մարդկութեան անցեալ կեանքը որպէս ներկայութիւն եւ ամէնը վերապրել է, որպէս թէ պատմութեան դերակատար եւ թերակատար, այսինքն մեղսական մարդն ինքն է, ամէն ինչ պարփակող իր հոգով, որ ընկալում է մարդկութեան պատմութիւնը որպէս իր կեանքի պատմութիւն: Սոյն պարագային Նարեկացու անձն իրականանում է մարդու էութեան միջոցով: Նարեկացիք հասել է էական ինքնաճանաչման եւ ինքնիրականացման բացել իր հոգու ներքին ծալքերը, որոնք միաժամանակ մարդկութեան պատմութեան էջերն են:

Նարեկացիք նաեւ դատաստան է խնդրել 'Նրանից' ներում եւ քաւութիւն աղերսելով: Խոստովանելով մարդկութեան մեղքերը որպէս իր իսկ կատարած՝ նա նաեւ ապաշխարել է դրանց համար: Այնքան դժուարին չէ Նարեկացու գաղափարների խորհրդաւոր աշխարհի մէջ թափանցելը, որքան նրա հոգեւոր տրամադրութեան ելելէջերը ընկալելը, Սուրբի հետ նրա հոգեւոր կենսափորձը վերապրելը: Վերջինս պահանջում է մարդու հոգեւոր ուժերի տեսական կենտրոնացում, որը հնարաւոր է երկարատեւ ճգնակցութեամբ, հոգու զգացմունքային նուրբ եւ խորունկ շերտերը բացելու համար:

Նարեկացիք ոչ միայն համայն մարդկութեան մեղքերն է իր վրայ վերցնում, այսինքն ցուցաբերում բանական մեղսագիտակցութիւն, այլեւ հոգեբանական խորքային ներմաքրումով թափանցում է մարդու էութեան մէջ, բացայայտում նրա ներքին աշխարհի մութ ծալքերը, մտքի, խօսքի եւ գործի նոյնակաճութիւնը կրօնաբարոյական աշխարհայացքով. *«Եւ արդ, յոյս բարիքների տնկուած սրտիս մէջ, անձն իմ կործանուած, եւ ցօտովմ հաւատքի ամրապնդած երկամասնեայ երկկամունքդ՝ կրկնապղտոր խորհուրդների տարփացանկական գործարան, խոստովանի՛ր բարերար Աստծուն մտածածներդ՝ իբրեւ գործած, խորհածներդ՝ իբրեւ կատարած, չտեսնուածները՝ իբրեւ յայտնուածներ, սրտիդ գաղտնիքները՝ իբրեւ բարբառուած բարձրածայն, ակնարկուածներդ՝ իբրեւ արդունագործ մեղքեր* (Բան Խէ.ա, 1-5):

Ժամանակը ի զօրու չէ ներգործելու Գրիգոր Նարեկացու զուխգործոցի վրայ: Այն մեր պատմութեան ընթացքին ոչ միայն չի հնացել, այլ գնալով աւելի թարմաշունչ պայծառութեամբ է ընթերցողի սիրտն ու հոգին գերում՝ իբրեւ համապարփակ հանճարի յայտնաբերած յափտենական ճշմարտութիւնների կենդանագրութիւն: Մարդը իբրեւ տիեզերական իրողութիւն՝ Նարեկի մէջ բացայայտուած է առաւելագոյն ճշգրտութեամբ՝ իր կենսընթացքի հոգեկան եւ հոգեբանական զարմանահրաշ նրբութիւններով, ահասարսուտ անկեղծութեամբ:

ԵՂԻՇԵ ԲԱԶՈՅԱՆ

ՆԱՅ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Կանոնական իրավունք է կոչվում Եկեղեցու սահմանած այն բոլոր օրենքների ամբողջությունը, որով կարգավորվում են ներեկեղեցական բոլոր հասարակական հարաբերությունները: Այս օրենքները պետության սահմանած օրենքներից տարբերելու համար անվանում են կանոն, հետևապես կանոնը եկեղեցադիր օրենքն է: Կանոնական իրավունքը, որպես հասարակական երևույթ, զուտ քրիստոնեական է և առաջացել է վաղ քրիստոնեական համայնքների ստեղծման հետ մեկտեղ, ապա ձևավորվել է ու զարգացել Հռոմեական Կայսրությունում քրիստոնեության հաղթանակից հետո Եկեղեցիների ծավալած բուռն զործունեության ընթացքում: Կանոնական իրավունքի երևան գալը պայմանավորված է եղել քրիստոնեական առաջին համայնքների համար վարքագծի որոշակի կանոններ սահմանելու անհրաժեշտությամբ, որոնց համար հիմք են դարձել Հին Կտակարանի տասը պատվիրանները: Նոր կրոնի քարոզիչները աշխատել են ստեղծել նոր, աշխարհիկ օրենքներից տարբերվող այլ օրենքներ, որոնց մեջ դրվում էին միանգամայն մարդասիրական գաղափարներ՝ հիմնված քրիստոնեական հեզության, հավասարության և ժուժկության սկզբունքների վրա:

Եկեղեցին, որպես հասարակական կազմակերպություն և հավաքական մարմին, կարիք ուներ իր սեփական որոշակի պարտադիր օրենքների, որից կախված էր իր կենսագործունեության կանոնավոր ընթացքը: Որպեսզի կանոնական իրավունքը կարողանար կատարել իր այդ կարգավորիչ դերը, անհրաժեշտ էր, որ այն լիներ հաստատ և պարզորոշ: Այն տարածվում էր Եկեղեցու բոլոր հոգևորականների վրա, անկախ նրանց հոգևոր աստիճանից, և նպատակ ուներ կարգավորելու բազմաբնույթ հասարակական հարաբերություններ: Ընդ որում, սկզբում նպատակ ունենալով կարգավորել սեփականատիրական իրավունքից առաջացող գույքային հարաբերությունները, այնուհետև՝ հոգևոր միաբանությունների գործունեությանը զուգընթաց, կանոնական իրավունքը իր կարգավորիչ շրջանակի մեջ է առել նաև բազմաթիվ հասարակական երևույթներ, որոնք դասվում են անձնական, ոչ գույքային հարաբերությունների ոլորտը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել ամուսնաընտանեկան հարաբերությունների՝ կապված ինչպես քահանաների կողմից հարսանիքների և պսակադրությունների անցկացման կարգի հետ, այնպես էլ՝ բազմամուսնությունների, մերձավոր ազգակցների, հեթանոսների ամուսնությունների և բազմաթիվ տարբեր բացասական երևույթների դեմ պայքարելու մտադրությամբ:

Հայ կանոնական իրավունքը ձևավորվել և զարգացել է Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունելուց հետո, չնայած որ կանոնական իրավունքի ազգային մի քանի աղբյուրներ, ըստ ավանդության, ստեղծվել են դեռևս Ք.ծ. I դարում¹: Հայ կանոնա-

¹ Ս. Տովհանիսյան, Ամուսնությունների իրավունք վաղ սվաքավես Տայաստանում, Երևան, 1976 թ., էջ 19:

կան իրավունքը, ի տարբերություն հոտմեակացի և բյուզանդակացի, բոլորովին ուրիշ՝ ավելի կարևոր նշանակություն է ունեցել հայ իրականության համար, քան որ V դարում, մեր պետականության կորստից հետո, այն հարստացվել է նաև աշխարհիկ իրավաճորմերով և դարձել կիրառելի ամբողջ ժողովրդի համար: Իսկ ամուսնաընտանեկան իրավունքը կարգավորող կանոնական իրավաճորմերը գործածական են եղել ընդհուպ մինչև XX դարի I տասնամյակը:

Հայ Առաքելական Եկեղեցում կանոնադիր իշխանություն ունեցող են համարվում ինչպես Ընդհանրական Եկեղեցու, այնպես էլ Հայոց Եկեղեցու հայրերը, որոնց սահմանած կանոնները եկեղեցական իրավունքի մեջ կանոնական իրավունքի աղբյուրներ կամ «կանոնադիր աղբյուր» են կոչվում: Նախ կանոնադիր բարձրագույն հեղինակությունն է Քրիստոս: Եկեղեցու ամբողջ գործունեությունը իր բոլոր մասնակի երևույթներով, իր ամբողջ էությամբ պետք է լինի քրիստոնեական բարոյական սկզբունքների իրականացումը: Ինքնընտանցյալն հասկանալի է, որ Քրիստոսի պատվիրանների սկզբունքները միշտ պարտադիր պիտի մնան քրիստոնեական Եկեղեցու համար և չպիտի կարողանան վերացվել որևէ մի իշխանության ձեռքով, ուստի եկեղեցական աստվածաբանության մեջ քրիստոնադիր կանոնական սկզբունքներն աստվածային կամ «աստվածադիր իրավունք» անվանումն ունեն:

Հայաստանում Ք. ծ. IV դարում ընդունված քրիստոնեական նոր կրոնի հոգևոր հայրերը, մինչև առաջին տեղական և Տիեզերական ժողովների գումարվելը և դրանցում ընդունված պարտադիր կանոնների կիրառումը, գլխավորաբար առաջնորդվում էին Սուրբ Գրքով և առաքելական ավանդությանը: V դ. հայ պատմիչները նշում են, որ IV դ. սկզբից Հայաստանի հոգևոր հայրերը իրենց քաղաքական և կանոնական գործունեությունը կառուցում էին Սուրբ Գրքի և նրա վկայությունների՝ «Քրիստոսի օրենքների» վրա:

Այն բազմաթիվ շփման եզրերը, որ մենք տեսնում ենք հեթանոսական Հայաստանում գործող կարգերի (բազմակնությունը, հարճությունը, մերձավոր ազգականների միջև ամուսնությունը, ազատ ամուսնալուծության իրավունքի գոյությունը և այլն) և մովսիսական իրավունքի սահմանումների միջև, խոսում է ոչ թե վերջինիս ազդեցության, այլ Հայաստանում Հրեաստանից անկախ արմատացած ճուլնպիսի հասարակական հարաբերությունների մասին: Նշանակում է Հին Կտակարանի՝ մասնավորապես ընտանեկան նորմերը Հայաստանի համար ունեցել են սահմանափակ նշանակություն:

Առաքելական կանոններ - Հայ կանոնական իրավունքի այս աղբյուրը առանձին կանոնախմբերի տեսքով իր հաստատումն տեղն է գրավել «Կանոնագիրը Հայոցում»²: «Առաքելական» անունով երկու կանոնախումբ կա Հայոց Կանոնագրքում: Առաջինը կոչվում է «Ասհմանք և կանոնք զոր եղին աշակերտքն Քրիստոսի եկեղեցույ սրբոյ յետ վերանալոյ Տեառն» և բաղկացած է 34 կանոնից: Դրանք պարտադիր են միայն հայկական և ասորական Եկեղեցիների համար, սակայն մտել են նաև ուրիշ Եկեղեցիների ժողովածուների մեջ:

Երկրորդ կանոնախումբը՝ «Երկրորդ Առաքելական կամ Կղենայ կանոնիս», բաղկա-

² Կանոնագիրը՝ Տայոց, աշխարհաբոլորայնը՝ Կազվեն Տավորյանի, հար. Ա, Երևան, 1964 թ., հար. Բ, 1971 թ.:

ցած է 85 կանոնից: Դրանք ընդհանուր են հունա-լատինական և հայկական եկեղեցիների համար:

Հայ կանոնական իրավունքի կարևոր աղբյուր են համարվում Տիեզերական և արտաքին տեղական ժողովների կանոնները:

Մեր եկեղեցից ընդունում է արտաքին տեղական միայն վեց ժողովների ընդունած կանոնները՝ Անկյուրիայի (314 թ.), Կեսարիայի (314-315 թթ.), Նեոկեսարիայի (315 թ.), Լավդիկայի (365 թ.), Գանգրայի (370 թ.), Անտիոքի (341 թ.) և Սարդիկայի (344-347 թթ.): Պետք է ասել, որ Հայ Առաքելական եկեղեցից կանոնական իրավունքի աղբյուրի տեսակետից պակաս կարևոր տեղ չէ հատկացնում նաև Ընդհանրական եկեղեցու հայրերի կանոններին: «Կանոնագիրք Հայոցում» տեղ են գտել միայն մինչև Քաղկեդոնի ժողովը գործած Ընդհանրական եկեղեցու հայրերի կանոնները:

Հայ կանոնական իրավունքի համար մեծ արժեք ունեն Բարսեղ Կեսարացու (վխճ. 378 թ.) և Կյուրեղ Ալեքսանդրացու (վխճ. 444 թ.) վավերական կանոնախմբերը, ինչպես նաև Աթանաս Ալեքսանդրացուն (վխճ. 373 թ.), Սևանոս Եպիսկոպոսին, Եպիփանեսին և Գրիգոր Նազիանզացուն վերագրվող կանոնախմբերը: Մեծ թիվ են կազմում հատկապես Բարսեղ Կեսարացու անվամբ մեզ հասած կանոնախմբերը: Եթե «Կանոնագիրք Հայոցի» Ա գրքում տեղ գտած «Կանոնք Բասղի առ Ամփիլոդոս» վերտառությամբ կանոնախմբը ընդհանուր է մեր և օտար եկեղեցիների համար և բաղկացած է 51 կանոններից, ապա այդ չի կարելի ասել «Կանոնագիրք Հայոցի» Բ գրքում տեղ գտած, Բարսեղ Կեսարացուն վերագրված «Վասն պեսպես և քիւրապատիկ աղտից»՝ 272 կանոնից բաղկացած կանոնախմբի մասին:

Վ. Հակոբյանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ծանոթ չէր Հույն և Ասորի եկեղեցիներին և ակնհայտորեն հայկական ծագում ունի: Հետաքրքիր է նաև Կանոնագրքում տեղ գտած մեկ այլ կանոնախումբ, որը կրում է «Կանոնք երկրորդ Նիկիականք գորեղին ՅՄԸ Եպիսկոպոսը կրկնաբանելով կարճ ի կարճու» վերնագիրը: Այն ստեղծվել է Հայաստանում և, հավանաբար, հայ հեղինակի կողմից: Բաղկացած է 114 կանոնից, որոնք քաղվել են Նիկիայի, Անկյուրիայի, Գանգրայի և Անտիոքի ժողովների հունական աղբյուրների հայերեն հնագույն թարգմանություններից: Ինչպես ճիշտ նկատում է Ս. Տիգրանյանը, կանոնագիրք-ձեռագրերի բովանդակությունը նյութի դասավորության տեսանկյունից այնքան փոփոխական է և անորոշ³, որ միջին դարերում, դրանք զրվելու ժամանակ կամ ընդօրինակվելիս՝ գրիչների ձեռքով դիտավորությամբ կամ ակամայից, հայկական ծագում ունեցող կանոնախմբերը կարող էին հայտնվել ընդհանուր եկեղեցական հայրերին վերագրվող կանոնների թվում:

Վերը նշված արտաքին աղբյուրներից բացի հայ կանոնական իրավունքը ճանաչում է նաև հայկական ծագմամբ մի շարք աղբյուրներ, որոնք ըստ իրենց բնույթի բազմազան են: Հայաստանի հոգևոր և աշխարհիկ տերերը, չսահմանափակվելով Տիեզերական ժողովների և ընդհանուր եկեղեցական հայրերի սահմանված կանոններով, հայ կյանքի թելադրանքով այն հավելում էին նորանոր կանոններով: Ընդհանուր կանոնները որքան էլ որ

³ Ս. Տիգրանյան, Կանոնագիրք և մեր կանոնական իրավունքը, «Արարատ» ամս., 1902 թ., էջ 121:

դասական էին, այնուամենայնիվ կտրված էին հայկական միջավայրից և չէին բավարարում ներքին կյանքի բազմապիսի պահանջներին: Ազատագրողը վկայում է, որ Նիկիայի ժողովին մասնակցած Լուսավորչի որդի Արիստակեսը 325 թ. իր հետ Հայաստան է բերում ցիլիկական կանոնները և Լուսավորիչը «ի նոյն լուստոր կանոնս լաելելալ»⁴:

Այդ ազգային կանոնախմբերը, ըստ ավանդության, ստեղծվել են դեռևս Ք.ծ. I դարում: Դրանցից են՝ «Յետ առաքելոց հարանց հետևողաց» կանոնախմբերը և Թաղեոս ու Փիլիպպոս առաքյալներից վերագրված կանոնախմբերը, որոնք բերվում են կանոնագրքի մի քանի խմբագրություններում: Հայագիտության մեջ ազգային-եկեղեցական կանոնախմբերը բաժանվում են երկու խմբի.

ա) Հայոց եկեղեցու հայրերի կանոնախմբեր

բ) Ազգային և եկեղեցական ժողովների կամ կանոնական սահմանումներ:

Առաջին խմբին են դասվում. 1) «Կանոնք յետ առաքելոց Հարանց հետևողաց», 2) «Սահմանք Կանոնաց սուրբ առաքելոյն Թաղեոսի ի քաղաքին Ուռհայ ի լուստորել գոնա», 3) «Կանոնք տեսոց Փիլիպպոսի առաքելոյն», 4) «Կանոնք Սրբոյն Գրիգորի», 5) «Կանոնք Սրբոյն Սահակայ Հայոց Հայրապետի», 6) «Սահմանք և կանոնք կարգի եկեղեցոյ Սրբոյն Ներսէսի Հայրապետի Հայոց»: Այս կանոնախմբերը պատկանում են Հայ եկեղեցու ամենաերևելի և համբավավոր հայրերին՝ Գրիգոր Լուսավորչին և Սահակ Պարթևին: Ցավոք, ինչ վերաբերվում է Ներսէսի կանոնախմբին, ապա գիտական աշխարհի համար տակավին պարզված չէ, թե Ներսես անուրը կրող հայոց շորս հայրապետներից ում է այն պատկանում: Միայն հայտնի է, որ Ներսես Օհորհալուց դեռևս 70 տարի առաջ այդ կանոնախումբը մտել էր կանոնագրքի XI դարի հավաքածուի մեջ: Մելիք-Թամզյանի ու Ղլտոնյանի կարծիքով այդ կանոնախումբը հետագայի թորիցվածք է. հետևաբար՝ անվավեր: Արսեն վարդապետ Ղլտոնյանը նույնիսկ ավելի հեռու է գնում՝ պնդելով, թե իբր այդ կանոնախմբի խմբագրողը օգտվել է Գոռի Դատաստանագրքից⁵: Բայց եթե նույնիսկ այդ կանոնախումբը մտած է եղել կանոնագրքի XI դարի հավաքածուի մեջ, ապա Գոռն է օգտվել հիշյալ կանոններից, քանի որ նրա գործը գրվել է դրանցից 100 տարի հետո: Ավելի ճիշտ է Ա. Հովհաննիսյանը, որն այդ կանոնախումբը համեմատելով Պարտավի և Օահապիվանի ժողովների ընդունած կանոնների հետ՝ իրավացիորեն մշում է, որ վիճարկվող կանոնախումբը IV դարի ծնունդ է⁶, հետևաբար պատկանում է Ներսես Ա Մեծի գրչին:

Կանոնական իրավունքի ազգային աղբյուրների երկրորդ խմբին դասվում են ազգային եկեղեցական ժողովների ընդունած որոշումներն ու սահմանումները: Հայ մատենագիրների տվյալներով հեթանոսական ժամանակներում Հայաստանի համար կարևոր պետական որոշումներ կայացնելու համար հայոց թագավորները բաց դաշտում հրավիրում էին աշխարհաժողովներ, որոնց մասնակցում էին երկրի բոլոր դասերի ու խավերի ներկայացուցիչները: Այդ ժողովների որոշումները պարտադիր էին համարվում երկրի համար և

⁴ Ազատագրողայ Պատմության Հայոց, Թիֆլիս, 1914 թ., էջ 445:

⁵ Ա. Ղլտոնյան, Սահմանք և կանոնք եկեղեցոյ սրբոյն Ներսիսի Հայոց Հայրապետի, «Նանդա ամսօրնայ», 1908 թ., N 5, էջ 134:

⁶ Ա. Հովհաննիսյան, Աղվանի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղբյուր Աշոփաարի ժողովի կանոնների հետ, ՊԲՏ, 1967 թ., N 4, էջ 265:

օրենսդիր նշանակություն ունեին: Երբ IV դ. քրիստոնեությունը Հայաստանում դարձավ պետական կրոն, իսկ հայոց կաթողիկոսը ստացավ «Մեծ դատավարության» գործակալությունը, ապա սկսած IV դարի 50-60-ական թթ. այդպիսի ժողովներ հրավիրելու իրավունքն այլևս պատկանում էր հայոց հայրապետներին, բայց ժողովներին մասնակցում էին նաև երկրի աշխարհիկ իշխանության տերերը:

Ազգային-եկեղեցական ժողովների կանոններն ունեն ատավել կարևոր նշանակություն, որովհետև դրանք, ձևով և բովանդակությամբ լինելով զուտ ազգային, ուղղակիորեն կարգավորում են դարաշրջանի ընտանեկան և ժառանգական-իրավական հարաբերությունների ողջ համակարգը և ուրվագծում էին այն տեղաշարժերը, որոնք տեղի էին ունենում մարդկանց իրավական աշխարհայացքում կապված կյանքի նյութական պայմանների ցարգացման և փոփոխման հետ:

Պատմական վկայությունների համաձայն IV- IX դդ. կայացել են 10-ից ավելի ազգային եկեղեցական ժողովներ, որոնցից միայն Աշտիշատի (354 թ.), Օահապիվանի (444 թ.), Դվինի երկրորդ (554 թ.), Դվինի չորրորդ (645 թ.), Դվինի հինգերորդ (719 թ.), Պարտավի (768 թ.) և Աղվենի (372-375 թթ.) ժողովների կանոններն են աղբյուրագիտական առումով ավելի հետաքրքրություններ կայացնում: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրը հասարակական անհրաժեշտությունից ելնելով անդրադառնում էր նոր ծագած կամ երկար ժամանակ անհրաժեշտությունից դուրս մնացած հասարակական իրավական հարաբերությունների կարգավորման խնդիրներին: Մասնավորապես Օահապիվանի ժողովի՝ նախարանից և 20 կանոնից բաղկացած կանոնախումբը և այն ընդունած ժողովականները համակված էին այն գաղափարով, որ հարկավոր է հնարավորինս ամրապնդել հայկական հասարակության հիմնական բեռը՝ ընտանիքը, որը նեցուկ պիտի դառնար պետականությունից զրկված հայ ժողովրդի համար: Այդ ժողովների մասնակիցները հատկապես մեծ ուշադրություն էին նվիրում հոգևորականների կյանքին և համապատասխան կանոններ ընդունում, որոնք վերաբերվում էին կենցաղավարմանը:

Բացի կանոնական իրավունքի վերահիշյալ աղբյուրներից կան ևս երկուսը, որոնք թեև իրենց բովանդակությամբ զուտ իրավական չեն, բայց աղբյուրագիտական կարևորություն ունեցող միանգամայն յուրօրինակ փաստաթղթեր են: Դրանցից մեկը Հայ Եկեղեցու ծիսարան «Մաշտոցն» է, մյուսը՝ «Գիրք թղթոցը»: Մաշտոց անվանումը, ըստ Օրմանյանի, ծագել է Բ.ծ.ա. I հազարամյակի սկզբին Հայաստանում գործածվող «Մաշտու» («սուրբ», «սրբազան») և նույն հազարամյակի երկրորդ կեսին Աքեմենյան Իրանում տարածված «Մազդա» անունից:

Գեոևս Հին Հայաստանում հեթանոսական ծոցերի, ծեսերի, օրհնությունների և աղոթքների գիրքը Մաշտոց է կոչվել, իսկ համաձայն Հայոց եկեղեցական ավանդության «Մաշտոց» ծիսարանը ստեղծել է հայ մշակույթի մեծ երախտավոր Մեսրոպ Մաշտոցը, և այն էլ հետագայում կոչվել է Ս. Մեսրոպի անունով: Ջեռաց կամ Փոքր Մաշտոցը բովանդակում է այն կանոնները, որոնք վերապահված էին՝ մկրտություն, դրոշմ, պսակի տարբեր օրհնություններ կատարելուն: Մայր Մաշտոցը պարունակում է եպիսկոպոսական իշխանությանը վերապահված ծեսերն ու արարողությունները (ձեռնադրում, զավագան տալը, եկեղեցու օծում, քահանայաթաղ, մեծ օրհնություններ), Հայր Մաշտոցը պարունակում է ար-

դեմ կաթողիկոսին վերապահված չորս արարողությունները՝ կաթողիկոսի օծում, մյուռոն-օրհնեք, թագավորօրհնեք և եպիսկոպոսական ձեռնադրություն: Ընդ որում հատկապես կան է, որ բոլոր ձեսերն ու արարողությունները ձևակերպված են կանոնների տեսքով, որոնք մեկը մյուսին հետևում են խիստ տրամաբանական հաջորդականությամբ: Երևի նաև այդ պատճառով է Բաստամյանը «Մաշտոցը» որակել «մի տեսակ եկեղեցական օրենսգիրք»⁷:

«Գիրք թղթոցը» Հայ Եկեղեցու պաշտոնական գրությունների ժողովածուն է, որում ամփոփված վավերագրերի մեծ մասը կրոնա-դավանաբանական բնույթի է: Ենթադրվում է, որ նրա հիմնական մասը կազմվել է VII դարում՝ Կոմիտաս Ա Աղջեցի Կաթողիկոսի օրոք: Հետագայում նրան կցվել են այլ թղթեր, որոնց թիվը հասել է 98-ի: Ժամանակագրական կարգով դրանք ընդգրկում են V-XIII դարերը: «Գիրք թղթոցը» բացվում է Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոս Պրոկիի՝ Սահակ Ա Պարթև Կաթողիկոսին ուղղված թղթով, որի մեջ, դատապարտելով Նեստորին և նրա հետևորդներին, հեղինակը կոչ է անում զգուշացալ Հայաստանում ցեստորականության տարածումից:

Վերջապես, հայ կանոնական իրավունքի գրավոր ամենամեծ աղբյուրը «Կանոնագիրք Հայոցն» է՝ բաղկացած 24 կանոնախմբերից, որը վաղ ֆեոդալական Հայաստանի անգույակական իրավաբանական և պատմական հուշարձանն է: Հայկական այդ յուրատեսակ «Corpus juris canonici»-ը կյանքի է կոչվել VIII դ. 20-ական թվականներին, Իսիդորոս Մերկատորի համանուն գործից շուրջ 100 տարի շուտ՝ իբրև նշանավոր գործիչ և Հայրապետ Հովհաննես Խմաստասեր Օձնեցու փայլուն մտքի արգասիք: Այն ունեցել է 12 դարերի անընդմեջ և լիարժեք կյանք: Օձնեցու հետնորդները շարունակեցին նրա գործը՝ հարքստացնելով Կանոնագիրքը նոր կանոնախմբերով, և XI դարում դրանց թիվը հասավ 40-ի: «Կանոնագիրք Հայոցը» անգնահատելի սկզբնաղբյուր է հատկապես հայ ընտանեկան և ժառանգական իրավունքի պատմության հետազոտման համար: Կանոնագրքի խմբագրումների թիվը այնքան շատ է, և դրանք ցրված են այնքան տարբեր «մատենադարաններում», որ հայ իրավունքի պատմության վաստակաշատ մասնագետ Խաչիկ Սամվելյանը կարծիք էր հայտնել, թե Կանոնագրքի գիտական հրատարակությունը մեկ մարդու և կարճ ժամանակվա գործ չի կարող լինել⁸: Բայց պրոֆ. Սամվելյանը ճիշտ էր մասամբ: Հայոց Կանոնագիրքը լույս տեսավ 1964 թ. Վազգեն Հակոբյանի տրեմաշան աշխատասիրությամբ: Այդ գիտա-բնական բնագրի հրատարակումը լայն հնարավորություններ ստեղծեց հայագիտության մի շարք ճյուղերի հետագա զարգացման համար:

⁷ Վ. Բաստամյան, Միջնադար Գոշի՝ մատուցանագիրք Հայոց, «Լեզոսրշուրագ», 1880 թ., էջ 14:

⁸ Խ. Սամվելյան, Տիե հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1940 թ., էջ 53:

ՎԱՐԴԱՆ ԳԵՎՐԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ ԲԱՆՈՒԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց Գրերի Գյուտի պատմության երկու գլխավոր սկզբնաղբյուրներն են Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը և Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

Կորյունը գրում է, որ Մաշտոցը, ձեռնամուխ լինելով գրերի ստեղծմանը, իր աշակերտների հետ գնում է Ամիոյ և Եղեսիա, ապա, նկարագրելով բուն գյուտը, ասում է, որ Մաշտոցը այնուհետև Սամոսատ գնաց¹:

Խորենացին գրում է, որ Մաշտոցը գնում է Եղեսիա, ապա այնտեղից՝ Սամոսատ, ուր և տեղի է ունենում Գրերի Գյուտը²:

Ինչ վերաբերվում է Գրերի Գյուտի մասին գրող հինգերորդ դարի երրորդ պատմիչին՝ Ղազար Փարպեցուն, ապա, ինչպես նշում են գրեթե բոլոր հետազոտողները, նրա պատմության այս հատվածը, որը թերի է և անհասկանալի, ամենայն հավանականությամբ եղծվել է ու որոշակի վերախմբագրման ենթարկվել հետագայում: Ըստ Փարպեցու մեզ հասած այժմյան բնագրի, Հայոց Վոամշապուհ թագավորի պատվերով Վահրիճ անունով մեկը գնում է Միջագետք՝ Հարել քառանյայ մոտ, որը մերձավոր գործակիցն էր Դանիել Ասորու և վերջինիցս էլ վերցնում է Դանիելյան անվանված նշանագրերը և դրանք ուղարկում Հայաստան, ուր այդ գրերը համապատասխան կարգավորվածության են ենթարկվում և որոշակի գրային համակարգի մեջ դնում Ս. Մեսրոպյն ու Ս. Սահակը իրենց աշակերտների հետ միասին³:

Փարպեցու այս հատվածից, որին դեռ կանդորադանանք, այն տպավորությունն է ստեղծվում, որ Մաշտոցը նշանակալից դեր չի կատարել գրերի ստեղծման հարցում, և որ այս գրերն էլ Միջագետքից պարզապես բերվել են Հայաստան: Միաժամանակ, այսպիսով, անհրաժեշտ է նշել, որ Փարպեցին ևս փաստորեն մատնացույց է անում աշխարհագրական այն տարածքը՝ Միջագետքը, որը կապվում է Հայոց Գրերի Գյուտի հետ: Ահա այս պատճառով Գրերի Գյուտի բուն տեղի հարցում բանասիրության մեջ եթե եղել են տարակարծություններ, ապա դրանք վերաբերվել են Ամիոյին, Եղեսիային և Սամոսատին, որովհետև թե՛ Կորյունը, թե՛ Խորենացին և թե՛ Փարպեցին հիշյալ երեք քաղաքներն ընդգրկող տարածքն են մատնանշում որպես Գրերի Գյուտի վայր:

Այսպիսով, թեև հիշյալ երեք պատմիչները որևէ հիշատակություն չունեն Գրերի Գյուտի՝ Բալուի հետ որևէ աղերս իսկ ունենալու մասին, սակայն սկսած XI-XII դարերից,

¹ Տե՛ս Կորյուն, «Վարք Մաշտոցի, աշխարհասիրությամբ Մ. Աբելյանի, հրատարակության պատրաստելը են Գիվազյան, Երևան, 1980, էջ 94-96:

² Տե՛ս Մովսես Խորենացի, Պարմութին հայոց, աշխար. Մ. Աբելյանի և Ս. Հարությունյանի, Տիֆլիս, 1913, գիրք Գ, գլ. 59, էջ 326-327:

³ Տե՛ս Ղազար Փարպեցի, Պարմութին հայոց, աշխար. Գ. Տեր-Մկրտչյանի և Սպ. Մալխասյանի, Տիֆլիս, 1904, էջ 14-15:

ապա և առաջել ընդհանրացված ձևով XIII դարից ասվում է, թե Գրերի բուն Գյուտը տեղի է ունեցել Բալուի լեռան վրա գտնվող մի այրում:

Առաջիցց այս մասին գրում է Կարապետ Սասնեցին, որն, ըստ Աճառյանի, XI դարի հեղինակ է, և որից մեզ է հասել միայն մեկ ստեղծագործություն՝ վկայված հետևյալ ծավալում խորագրով. «Ներքողեան պատմագրարար ասացեալ սրբազան եպիսկոպոսի և վարդապետի Կարապետի Սասնացոյ ի խնդրոյ համազմեայ եղբար ճգնաորի. Յաղագս վարուց և մահուան սուրբ և երջանիկ վարդապետին Մեսրոբայ թարգմանչի և Լուսաւորչի»⁴:

Սասնեցու այս ներքողյանի պատմական մասը միահյուսումն է կորյունի, Խորենացու և Փարպեցու հաղորդած տեղեկությունների, որոնց վրա ինքը ավելացրել է մի շարք նոր մանրամասներ, որոնք թեև որևէ արժեք չունեն որպես պատմական սկզբնաղբյուր, սակայն կարևորվում են գրական-մշակութային առումով՝ ցույց տալով, թե Գրերի Գյուտը ինչպես է վերամեկնարանվել և վերիմաստավորվել միջնադարում: Այս հանգամանքով է բացատրվում նաև ձևավորված որոշակի ավանդույթով հետագա մի շարք հեղինակների կողմից Գրերի Գյուտը Բալուում ներկայացնելը:

Հայոց գրերի հարցով Ս. Մեսրոպի՝ Ս. Սահակին դիմելը Սասնեցին զեղեցիկ ձևով այսպես է ներկայացնում. «Եւ ապա յիշեցուցանէր վեհն [Ս. Մեսրոպը] վեհագունին [Ս. Սահակին] զպակասութիւն եկեղեցոյ իւր»⁵: Ասես «Ո տայր ինձ զծովս ծխանի»⁶ ճշմարտոր խոսքերի հետևողությամբ Ս. Սահակը «յոզուց հանեալ» պատասխանում է. «Ո՛վ տայր ինձ տեսանել զորչմ տառի ըստ մերում բառի»⁷:

Մաշտոցի ցանկությունը Սահակ Պարթևը հայտնում է Վոանշապուհ թագավորին, որը կանչում է Գանիել Ասորում, որն այստեղ անվանվում է «զմաստունն Գանիել»: Վերջինս գալով, իր հետ բերում է «զվազուց արարեալ ճշմանս զկրկին տասն և զերկու տասն»՝ այսինքն՝ հնից հայտնի քանակի գրերը: Ինչպես Կորյունի մոտ, այնպես էլ այստեղ ասվում է, որ սկզբնապես ուրախանում են երանելիները, ապա և տրտմում, որից հետո Ս. Սահակը Ս. Մեսրոպին պատվիրում է զնայ Ամիդ և այնտեղ տեղի մասնագետների հետ այդ գրերը հարմարեցնել հայոց լեզվին, որը, սակայն, չի հաջողվում: Մաշտոցը այնուհետև զնում է Եղեսիա՝ Պղատոն ճարտասանի մոտ, որը ևս չի կարողանում այս գրերը հարմարեցնել հայոց լեզվին և «սրբոյն յուսահատ եղեալ՝ դիմէ ի Սամուս, առ Հռոփանոս իմաստասէր և կրօնաւոր»: Վերջինս էլ բավական ջանալուց հետո «զպարտութիւն խոստովանէր»⁸:

Եթե մինչ այստեղ Սասնեցին գրեթե բառացի հետևում է հինգերորդ դարի մեր երեք պատմիչներից, ապա շարունակությունը արդեն չի հանդիպում նախորդող շրջանի և ոչ մի մատենագրի մոտ: Ըստ Սասնեցու, Մաշտոցը տեսնելով, որ չի կարողանում իր նպատակին հասնել, վերստին տրվում է պահքի և ճգնության, «ընթանալով գառ ի վեր ընդ

⁴ Կարապետ Սասնեցի, Ներքողեան, Վաղարշապատ, 1897, էջ 3:

⁵ Նույն տեղում, էջ 39:

⁶ Գրիգոր Մազապրտուի թղթերը, աշխ. և Կոստանյանի, Անթանդրապոլ, 1910, էջ 87:

⁷ Կարապետ Սասնեցի, Ներքողեան, էջ 39:

⁸ Նույն տեղում, էջ 42:

ափունն եփրատայ, յայրէ յայր անցանելով մինչև ի դղեակն Պալունեաց⁹:

Բալուի այս դղյակում նա յոր շարաթ, այսինքն՝ Մեծի Պառոց մի շրջան է անցկացնում պահքով և աղոթքով, որից հետո տեսնում է, թե ինչպես «զՏէրն հրեշտակաց՝ մարգարեպահքով և աղոթքով, որից հետո տեսնում է խորենացու հետևողությամբ՝ տրված աստվածային տեսիլով: Սասնեցին, սակայն, ունի մի էական հավելում. «Եւ ուսուցեալ զգաղափար զրոյն որպէս և զայլ տառս, որ և զարիճակն ճշանէր ի վերա քարի, որ կա մինչև ցայսար»:

Այսպիսով, ըստ Սասնեցու, այն գրեթե, որոնք աստվածային տեսիլով դրոշմվել էին Ս. Մեսրոպի սրտի սային, այնուհետև Մաշտոցը ճշանագրում է քարի վրա, և այդ քարը պահպանվել է մինչև ներքոյյանի գրության ժամանակը: Նա այսպես է գրում ոչ միայն իր ասածին պատմական վավերականություն հաղորդելու համար, այլև Կորյունի հետևողությամբ կատարելու հետևյալ համեմատությունը: Կորյունը եթե Ս. Մեսրոպին համեմատում էր Մովսես Մարգարեի հետ՝ ասելով, որ Հայոց Այրուբենը բերող Մեսրոպը ավելի երջանիկ էր, քան Սինա լեռից Տասնաբանյայի կավեղեն տախտակները իջեցրած Մովսեսը, ապա Սասնեցին Հայոց Այրուբեն-Տասնաբանյայի տախտակներ զուգահեռով գրում է. «Առաջին սայն խորտակեցաւ, և երկրորդն վիմաւ ծածկեցաւ, իսկ մերս երկոբեանս պահեցան յաւեո»:

ԺԳ դարում Գրեթի Գլուտի մասին երիցս գրում է ճշանավոր մատենագիր Վարդան Արևելցին: Իր ճշանավոր Աշխարհացոյցում նա ճշում է. «Աթախ և Հեճի, Դերջան և Բալու, ուր զգիրն եզիտ Մեսրոպ վարդապետն»¹⁰:

Գրեթի՝ Բալուում տրվելու մասին նա իր Պատմությունում գրում է. «Սուրբն Մեսրոպ յօրինէ դպրութիւն հայերէն. քսան և երկու գիր առ Դանիէլի Ասորոյ գտեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս, անհոգացեալ եղև յառաջնոցն, յոյն և ասորի և պարսիկ գրով շատացեալք. և ոչ Մեսրոպ կարէր ճոքօք փոխել զԱստուածաշունչ մատենան ի հայ բարբառ: Վասն որոյ աղօթից տունեալ զանճն գործակցութեամբ Սրբոյն Սահակայ, տայ մնա Աստուած զխնդրելին, չորեքտասան գիրս, Աջով Խրով դրոշմեալ առաջի ճորս, որպէս Մեծին Մովսէսի ի լեռն Սինայ, և սմա ի լեռն Բալուայ, որպէս տակաւին ցուցանի դրոշմն աստուածագիծ վիմին և նկարք գրերոյն, և պատուի տեղին խընկօք և շահիք միշտ ի (տանկաց և քրիստոնէից) բնակչաց տեղոյն»¹¹:

Ի տարբերություն Սասնեցու խոսքի բարձրածն և ընդհանուր ներքողականության, Վարդան Արևելցին ասելիքը ձևակերպում է հստակ և պարզ պատմական շարադրանքով: Արևելցին ևս ասում է, որ Դանիել Ասորու մոտ կային 24 ճշանագրեր՝ մնացած հին ժամանակից: Դրանք կիրառելի չլինելով հայերենի համար, սոռացության էին մատնվել, և հայերը գրում էին հունարեն, ասորերեն և պարսկերեն լեզուներով: Հատկանշական է, որ Արևելցին գրում է, թե Ս. Մեսրոպը հունարեն, ասորերեն և պարսկերեն գրերով չի կարողանում հայերեն թարգմանել Աստվածաշունչը, որի համար էլ ձեռնամուխ է լինում հայոց գրերի ստեղծմանը: Այսինքն՝ ըստ պատմիչի, հայոց գրերի ստեղծումը թելադրված էր

⁹ Եւոյն պեղում, Էջ 42:

¹⁰ Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, Փարիզ, 1960, էջ 47:

¹¹ Տասնութն Պաղտմութեան Վարդանայ վարդապետի, Ս Ղազար, 1862, էջ 49-50:

Մուրբ Գրքի, որով և ընդհանրապես՝ եկեղեցական արարողությունների հայերեն թարգմանությամբ:

Սասնեցու հետևողությամբ Արևելյին ևս գրում է, որ Աստվածային Աջով տրված գրերը դրոշմված են Բալուի այրում, սակայն ի տարբերություն Սասնեցու, որը գրում էր, թե իր արտի սային գրվելուց հետո այնուհետև քարի վրա Ս. Մեսրոպն է դրանք դրոշմել Բալուի այրում, ապա Արևելյին գրում է, որ Աստված իր Աջով է դրանք դրոշմել այրի վեմին, և ավածին դարձյալ հաջորդում է Մովսեսի և Սիմա լեռան հետ տարված զուգահեռը: Եթե Սասնեցին գրում էր, որ գրերով դրոշմված քարը կա մինչև այսօր, ապա Արևելյին արդեն գրում է, որ այն ոչ միայն կա, այլև պաշտամունքի առարկա է թե՛ քրիստոնյաների և թե՛ մահմեդականների համար:

Վարդան Արևելյին հեղինակն է նաև Սրբոց Թարգմանչաց նվիրված հետևյալ ներբողյանի. «Բան պատմագրարար վասն Սրբոյն Սահակայ և Մեսրոպայ և այլոց թարգմանչացն»¹²: Նկատելի է, որ այս ներբողը գրելիս Արևելյին որոշակիորեն ազդվել է Սասնեցուց: Արևելյին թեև չի գրում, որ Գրերի Գյուտը տեղի է ունեցել Բալուում, բայց և միաժամանակ Գրերի Գյուտի կատարման համար որևէ վայր չի մատնանշում: Ավելին, նա գրում է, որ Ս. Մեսրոպը ո՛չ Ասորիքում, ուր Գանձիլն էր, և ո՛չ էլ Ռոմայում (Եդեսիայում) Եպիփան ճարտասանից չկարողացավ ստանալ իր ցանկացածը, որը բացատրվում է հետևյալ հոգևոր վերմաստավորմամբ. «Եւ այս վերնական խնամոցն տնօրէնութիւն, զի ելք իրացն լիցի յԱստուծոյ և ոչ ի մարդկանէ, որպէս հնոյն Իսրայէլի յԱստուծոյ պարզեալ զիր աւրինացն ի ձեռն Մովսէսի: Եւ այս մեծագոյն շնորհ ընձեռեալ ազգիս մերոյ յԱստուծոյ»¹³: Համաձայն նման մեկնաբանության, եղած գրերը հնարավոր չէր լինում հարմարեցնել հայոց լեզվին, քանի որ Հայոց Գրերի Գյուտը վերապահված էր Աստուծոյ:

Նույն ժԳ դարում Բալուի այս ավանդությունը իր արտացոլումն է գտել նաև Մխիթար Այրիվանեցու «Սրբոց թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ» գանձում, ուր ևս շեշտվում է, թե հայոց գրերը գտնելու ջանքերը զուր եղան, և Գրերի Գյուտը վերապահված էր Աստուծոյ:

Բազում աշխատեալ, և ոչինչ ազտեալ, ձեռն յԱստուած ձգեալ,

ի Բալու տընեալ, Մեսրոք արտասուեալ, աստ հրեշտակ իջեալ¹⁴:

Բալուի մերձակա լեռը կոչվում է Ս. Մեսրոպ. որի վրա գտնվող ուրարտական հին բերդի այրերից մեկի վեմին, համաձայն ավանդության, դրոշմվել են հայոց գրերը: Այս ավանդությունը Բալուում պետք է տարածված լիներ զոցն ժԲ դարում, որովհետև ժԳ դարի վերջում այստեղ արդեն կար Ս. Մեսրոպ եկեղեցին: Այն հիշվում է Գրիգոր վարդապետ Բալուեցու վկայարանությունում: 1290 թ. կատարված նրա ճահատակության պատմությունը բերված է «Յայսմաուրքի» մի շարք օրինակներում և գտնվում է հոդիի 4-ի և փետրը-

¹² Տե՛ս «Բաներն Մազրնեալսրաբի», 1964 թ., հմ 7, էջ 377-397 (աշխարհ. Փ. Անթարյանի): Տե՛ս և «Մուխրթ Տայվական», հր. Բ. Վենիքի, 1853 թ.:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Մխիթար Այրիվանեցի, Գանձեր և զտղեր, աշխարհ. Է Նորոքյուկյանի, երևան, 2005, էջ 113:

վարի 10-ի ներքո: Վկայաբանության հեղինակն է Գրիգոր Բալուեցու քրոջ որդին՝ Դավիթ երեք Բալուեցին, որը նրան աշակերտել է և ակամատես եղել նրա նահատակությանը¹⁵:

Այս վկայաբանությունում ասվում է, որ նա Բալուից գնում է «յԱյրարատեան գաւառն» ի վանքն Վիրապի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի՞ն՝ առ հռչակաւոր իմաստաւէր վարդապետն հայոց Վարդան»¹⁶:

Այնուհետև վերադառնալով Բալու, այստեղ ընդունվում է մեծ պատվով, և նրան հովվության են տալիս «գտորք Մեսրոպայ աղօթանոցն և կայարանն...»¹⁷:

Այսպիսով, Ս. Մեսրոպի վանքը նվազագույնը 1290 թ. արդեն հիշվում է և ընդ որում հիշվում է ոչ թե որպես նորակառույց, այլ Բալուի գլխավոր սրբավայր, որից կարելի է եզրակացնել, որ այն շատ ավելի վաղ է կառուցվել:

Գրերի Գյուտի՝ որպես թե Բալուում կատարվելու ավանդությունը իր աստիճանական արտացոլումն է գտել նաև «Յայսմաւորք»-ում: Այս ժողովածուի առաջին երկու խմբագրություններում եթե տրե՛ի 17-ի և նույնների 25-ի ներքո հիշվող տոնը անվանվում է «Թարգմանութիւն Սրբոյն Իսահակայ և Մեսրոպայ և այլոց թարգմանչացն և փիտ գրոցն և յիշատակ Սրբոյն Պետրոսի Աղէկսանդրոյ Հայրապետի՞ն»¹⁸, ապա այս ժողովածուի՝ Գրիգոր Մերեանց խլաթեցու խմբագրության այս օրվա պատմության վերնագիրն է «Փիտ գրոյն հայոց ի Բալու»¹⁹:

Գրերի Գյուտի պատմությունը թեև հիմնականում նույնն է վերը հիշված երկու ձեռագրերում էլ, սակայն երկրորդի վերնագրում հստակորեն շեշտվում է, որ այս տոնը նվիրված է Բալուում կատարված գյուտին, ինչպես նաև բուն վերնագրից հանգել է Պետրոս Հայրապետին նվիրված հիշատակությունը, համառոտվել է նրա պատմությունը և այն այս օրվա վերջում հիշվում է միայն մեկ նախադասությամբ. «Յայսմ աւոր վկայաբանութիւն Սրբոյն Պետրոսի Աղէքսանդրոյ պատրիարզի՞ն և Աբիտղոմայ սարկաւազի՞ն»²⁰:

Ինչ վերաբերվում է Գրերի Գյուտի պատմությանը, ապա ինչպես ասացինք, այն հիմնականում նույնն է երկու ձեռագրերում էլ, որը վկայում է, որ Գրերի Գյուտի պատմության Հայսմավորքային տարբերակում ևս հենց սկզբից եղել է որոշակի միտում Գրերի Գյուտը չկապել Ամիրի, Եփեսոսի և Սամոսատի հետ: «Յայսմաւորք»-ում բերվող պատմությունը ևս հիմնված է Բալուի մասին գրող նախորդ շրջանի մատենագիրների գործերի վրա: Բուն շարադրանքում թեև Բալու տեղանվան հիշատակությունը չկա, սակայն դարձյալ հստակորեն ասվում է, որ Միջագետքի տարբեր քաղաքներում Ս. Մեսրոպը չկարողանալով գտնել Հայոց գրերը, այնուհետև վերստին տրվում է պահքին ու աղոթքին և «Տեսանէր, զի թաթ ձեռին Աջոյ գրէր ի վէմն, որ հանդէպ կայր նմա: Եւ փորուած գրին որպէս ի ձեան տպաւորէր ի վերա փմին: Եւ հանգամանք գրոյն և անուանքն ի միտսն Մեսրապայ տպա-

¹⁵ Տե՛ս Հայոց երբ վկայները, աշխարհ Մանանդյանի և Ն. Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 117:

¹⁶ Նույն տեղում, էջ 105:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Մաշտոցի անվան Մազնեպատարան, ձեռք հմր. 2695, Ժ՛-դ., 42բ:

¹⁹ Մաշտոցի անվան Մազնեպատարան, ձեռք հմր. 4472, 1452-1457 թթ., 192բ:

²⁰ Նույն տեղում, 4472, 193բ:

տրեր»²¹:

Բալուի ավանդությունը արտացոլվել է և հայկական ձեռագրերի հիշատակարաններում: Ինչպես հայտնի է, գրիչները, ավարտելով ձեռագրերը, նշում էին, թե այն ո՞ր թվականին և որտե՞ղ գրվեց՝ բնորոշելով իրենց ապրած ժամանակը և այն վայրը, որտեղ իրենք գրել են այդ ձեռագիրը: Համանման ձևով 1468 թ. Բալուում ընդօրինակված Մաշտոցի հիշատակարանում ասվում է, որ այս ձեռագիրը գրվել է.

Յամուր դդեակս երևելի,
Որոյ անուց Բալու կոչի,
Ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի,
Որ Հտավանք վերակոչի,
Աթոռ մերոյ հայրապետի,
Հրեշտակատիպ տիպ տեճալի
Մեսրովպ անուց վարդապետի...²²

Այս հիշատակարանում, ինչպես տեսնում ենք, Բալուց անվանվում է անգամ Ս. Մեսրոպի աթոռ, որովհետև, ըստ Գրա հետ կապված ավանդության, այստեղ է ճգնել և հայոց գրերը արարել Ս. Մեսրոպը:

Համանման ձևով Ստեփանոս արքեպիսկոպոսը 1481 թ. Խարբերդում ընդօրինակած իր Շարակնոցի հիշատակարանում Բալուի մասին գրում է. «ի յերկին Բալուայ՝ աղաթատեղն Մեսրոպայ»²³:

Այս ըմբռնումը ընդհանրաճալով արտահայտվել է և ժամանակագրություններում: 1673 թ. վախճանված Դավիթ Բաղիշեցին «Մաղկաքաղ արարել ի բազում պատմագրաց» խորագրված իր ժամանակագրությունում գրում է. «Յայսմ ժամանակի Մերովպ սքանչելի այրն Աստուծոյ եգիտ զձայնաւոր գիրսն, տուելովն Աստուծոյ ի վիմին տպաւորեայ ի Բալու»²⁴:

Այս ավանդությունը ներառվել է նաև հայ ուխտավորության երթուղիներում՝ դառնալով ուխտագնացության կարևոր կայաններից մեկը, իր կցիքը թողնելով և այդ ուխտագնացություններից ծնվող ուղեգրական երկերի վրա: Մեր քննած հարցի տեսանկյունից այս ուխտագնացությունները կարևորվում են նաև Գրանով, որ եթե նախորդ շրջանի մատենագրական երկերում առավելաբար ներբողվում էր Բալուց²⁵, և կամ էլ Բալուի այրը ներկայացվում էր Հայոց գրերի Աստվածային Աջով տրվելու՝ Խորենացու «Հայոց պատմության» հետևողությամբ, գեղարվեստորեն պատկերվելով ըստ այդ հեղինակների ստեղծա-

²¹ Լույս տեսնում, 1933, փնն և Ս. Էջմիածնի ձեռագրատուն, ձեռք հնր. 74, 166բ:

²² ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, կազմեց Լ. Ս. Խոսիկյան, Երևան, 1958, էջ 276:

²³ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, կազմեց Լ. Ս. Խոսիկյան, Երևան, 1967, էջ 11:

²⁴ Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հր. Բ, կազմեց Վ. Ա. Նավորյան, Երևան, 1956, էջ 326:

²⁵ Մյակ բալատությունը՝ Կարդան Արևելցու «Գաղտնիքայն համալսարանայն հավրվածն է, որ նկարագրված է անգամ այրը: Կարելի է ենթադրել, որ Արևելցին ինքը անձամբ է եղել այնպեղ և կամ էլ այս ավանդությունը յակ՝ անցնելով այդ վայրերով:

գործական երևակայության, ապա ուղեգրական երկերում արդեն ականատեսների կողմից է նկարագրվում Բալուխ Ս. Մեսրոպի այրը:

Ս. Մեսրոպի այրի առաջին ծավալում նկարագրությունը գտնում ենք 17-րդ դարի մատենագիր Սիմեոն Լեմացու Ուղեգրությունում: 1608 թ. նա Լվովից սկսում է իր ուխտագնացություն-ճանապարհորդությունը՝ այցելելու Եվրոպայի, Երուսաղեմի ու Հայոց աշխարհի մի շարք սրբավայրեր, լինելով նաև Բալուխ, որի մասին գրում է. «Եւ էր Բալուխ իբրև կղզի, զի Եփրատն բոլորեալ էր զնայ, սակաւ մի ցամաք մուտ ունի. և ունէր բարձր անառիկ բերթ մի, որպէս Օսմաննուխին. և կայր անդ եկեղեցի մի և աղօթատեղ Մեսրոբ վարդապետին, զոր մտեալ ի ներքս՝ աղօթեցաք, մեղաց թողութիւն խնդրեցաք մեզ և մեր ննչեցելոց: Եւ հանդէպ նմին կանգնած վէտ մի կայր, որպէս տապան հրէից և ի վերայ գիր, զոր ոչ կարացաք ընթեռնուլ, և ասէին, թէ այս նշանագիրքն են, որ լլատուծոյ տուաւ հայոց»²⁶:

Բալուխ հիշվում է և Հայոց աշխարհի սրբավայրերի՝ Կոմիտաս Քյոմուրճյանի 1694 թ. կազմած քարտեզում, ուր ասվում է. «Բալու. եպիսկոպոսարան, զուր և քարն գրոյն և գերեզման ի մէջ բերդին. Սուրբ Մեսրոպ կոչի»²⁷:

Գնալով ավելի ու ավելի նվիրական մի սրբավայր դարձող Բալուխ Ս. Մեսրոպի այրը նկարագրել են նաև 19-րդ դարի ուղեգրողները և հեղինակները:

1860-ական թթ. Բալուխի առաջնորդական փոխանորդ եղած Գողոս ծ. վրդ. Նաթանյանը Բալուխ լեռան մասին, որի վրա է գտնվում և Ս. Մեսրոպի այրը, գրում է. «Այս լեռը թեպետ հիսխսային կողմէն ելլելու ատեն այնչափ բարձր չերևիր, բայց երբ որ քաղաքի մէջէն դէպի վեր նայիս նոյն լեռան այնքան բարձր ըլլալուն, կը զարմանաւ բնութեան այդ հսկայական ամբարտակին վրայ: Եւ Բալուխ քաղաքի հիսխսային կողմ ինքնարոյս բարձր ապառաժ քարէ իւր վրայ հեթանոսական ժամանակներէ մնացած տակաւին բերդիւր կան. այժմ կիսակործան: Հաւանականաբար կը պատմեն, թէ ժամանակին քաղաքը նոյն բերդին մէջ հաստատուած է եղեր, զի բնակութեան հետքերը կը տեսնուէին ցարդ. արևմտեան կողմը բարձր մը քարի մը վրայ սեպանիկ նման տեսակ մը գրուած գրեր կային, որուն օրինակը կան պատկերը առնելու համար շատ աշխատութիւն կրեցի, բայց տեղին անյարմարութիւնը չի ներեց ի կատարում ըղծիցս: Ներքևը դրան պէս մի տեղ կայ, որ կ'առաջնորդէ ըստ բաւականին քարէ փորուած մի քանի մեծ սենեակները, որոց մէկուն մէջ գերեզմանի ձևով մի քար կայ՝ աւանդութեամբ Ս. Մեսրոպբայ գերեզման կանուանոյ ի վաղուց անտի մինչև ցայսօր. և տեղացի հայ բնակիչք երբեմն երբեմն ոխտի կ'երթան հոն և կը պնդեն աւանդութեամբ, թէ հայոց գրերը հոս գտնուեցան»²⁸:

Բալուխ նկարագրությունների քարծրակետը, սակայն, Գարեգին եպիսկոպոս Սրվանձրոյանցի ուղեգրական հետևյալ հատվածն է. «Հին և վիթխարի պարսպաց անբներ ու բեկորները կոխելով վեր կ'ելնենք. քայքայեալ մեծ դռնէ մը կը մտնենք միջնաբերդը, ուր շտեմարանաց և սենեկաց անբածներ, գետնայարկ կամարափուլ շէնքերը մէկը միսին ետև կը ներկայանան մեզ. դեռ ողջ է զնդանատունը և մի քանի սենեակ, բայց ասոնք բան

²⁶ Սիմեոն Կալիբ Լեմացի, Ուղեգրութիւն, իրա Շ. Ա. Ալիկյան, «Տանդես ամսօրնայ», Վիննա, 1934, էջ 159:

²⁷ Gabriella Ullahogian, Un antica mappa dell' Armenia, Bologna, էջ 133:

²⁸ Գողոս ծ. վրդ. Նաթանյան, Արքայապետ Նայասարսի կամ քրիկեպար Բալուխ, Քարբերդի, Չարսանձագի, Ճուղաղ քորի և Երզնկայու, Կոստանդնուպոլիս, էջ 26-27:

մը չեն արժեր իմ աչքին: Կը դառնանք ի հիսիս, ուր ապառաժ և լեռք քարեր են մեծամեծ, հոն եզերքին վրայ քարին երեսը տաշւած, վրան բնեռագիր անեղծ, մաքուր, 22 տող վերը և 7 տող վարը քանդակուած, մէջ տեղը բաց ձգուած էր, ուր տող մը արաբերէն գիր փորագրած էին, Այս «Գրման քարի» կողէն գառի վայր, նեղ, սանդղաձև, գրեթէ մըջման շափով իջանք քարայրի մը բերան, որոյ մէջ փոքրիկ քարայր մի ևս կայ, երկուքին ալ առաստաղն ու պատերը սևցած, երկուքի մէջն ալ բեմի պէս անկոփ քարերով շարուածք, և պատերուն վրայ բազմաթիւ խաչեր փորուած: Ահա Ս. Մեսրոպբայ ճգնարանն, ըսաւ Տէր Մեսրոպբն:

Մուկններուս վրայ ինկայ, հոն, ուր Սրբոյն ծնկները մաշուած էին, լզեցի այն քարեր և փոշիները, յորս շրթունք և ճակատ Սրբոյն բիրիցս քսուեր էին նուիրելով իր խորհուրդն և իղձերը Աստուածային իմաստութեան. հոն դրի երեսներս, և չէի ուզեր վերցնել այն ժայռերէն, ուր նստեր, կոթներ, խոկալով և տքնելով Հայ ազգին և Հայաստանեայց եկեղեցոյն լոյս և կեանք ճարելու ճգնութեամբ...: Քա՛ր , ո՛ր քարայր, Հայոց արևուն լուսնակամար, ուստի ծագեցաւ մեզ ճառագայթ դպրութեան. «Յոր խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց անեղին նկարագրեցաւ մեզ գիր կենդանի յարգանդ մաքուր մեծին Մեսրոպբայ, անմատոյց լուսոյն երկրպագեսցուք»: Կից քարայրիս, արտաքոյ դրան, կայ մի տաշածոյ երես մեծ գրատախտակի նման, արդեօք Հայ տառերը ձևակերպելու տախտակն էր Սրբոյն: Ինչպէս նա երկու այլ քարայրեր, որոց առաջինն անելի լուսաւոր և ընդարձակ է, ունի սրահ մը, և երկրորդն՝ կրկին պատերով սեմեակ մը, որոյ առաջին սեմեակէն ներսը, դրան հանդէպ, քարայրին ճակատը փորուած և կոկուած մեծ քառակուսի մը, և փորուածոյի աջ անցիկը վերէն ծակեր կան ակաճաճան, յորմէ մարդ մը կրնայ իր ձեռքն երկնցնել, եթէ արմուկը կիսածալ ընես դէպ ի յանջքդ՝ գրեթէ նոյն ծակին ձևը կ'առնու, և այն դիրքով կրնայ մարդը իր թևը դնել այդ ծակին մէջ. - Ս. Մեսրոպբայ դպրոց կ'աճուանեն այս քարայրը, ըսաւ Տէր Մեսրոպբն, և կ'աւանդեն թէ՛ այդ ծակէն ելած է ԹԱԹԸ և այս տաշածոյին վրայ գրեր է Ա. Բ. Գ.-: Արդարև երբ այդ տախտակին յառէր էր խոկալով Սուրբն իր ուշքն ու աչքը, պէտք էր որ այս անկեան ծակէն ելնէր Թաթն և գրէր «ոչ իրև ի քուն երագոյ», այլ քաջորոշ յայտնութեամբ Աստուածային:

...Կան երկու այլ քարայրեր ալ, միոյն մէջ կը գտնուի ջրի հոր մը: Ասոնց մէջը յունկի և մոմի մուխերը սևցուցած են, մանաւանդ ճգնարանին, ուր բարեպաշտօն կանայք կ'երթան կ'աղօթեն իրենց զուակաց համար:

- Աւելորդ է ըսել, թէ Ս. Մեսրոպբ պատրաստ գտած է այս այր ու վայրը, որ իրմէն յառաջ ո՞վ գիտէ ի՞նչ նպատակի համար կոեր կոփեր են, դուրսի բնեռագիրն ալ մտածել կուտայ թէ՛ շատ հինուց գործ է, թերևս յիշատակարանաց դիւանը կազմելու մտքով տաշուած լինին, եթէ այսպէս, զուգադիպութիւն մ'է Ս. Մեսրոպբին:²⁹

Հայոց մեծ եղեռնից հետո հայրենակցական տարրեր միութիւններ տպագրեցին Պատմական Հայաստանի տարրեր նահանգներին, զավառներին և բնակավայրերին նմիրված հատորներ՝ հաջորդ սերունդներին փոխանցելու համար կորսված Երկրի գոնն պատմական հիշատակը: Եվ Ս. Մեսրոպի այրը վերջին անգամ, որպէս ականատեսի, արդեն անց-

²⁹ Գարեգին վրդ. Մովսէսեան, Թորոս սարգս ճամբորդ Նայասպանի, Կ. Պոլիս, 1884, էջ 154-155, 159-161, 162:

ճող վերհուշ գտնում ենք Հարություն քհն. Սարգիսյանի՝ Բալուից նվիրված տեղագրական-հուշագրական գործի հետևյալ հատվածում. «Ջէթ՝ զիդից արևմուտքը բարձրադիր լեռան մը գագաթը կը գտնուի Սուրբ Մարտոսյ. ուր գաւառին մէջ ապրող աւանդութեան մը համաձայն, Սուրբ Մեսրոպ աղօթած, ճզնած և հայ տառերը գտած է:

Ասիկա մասնաւոր մատուտ շուհի. իր բարձրաբերձ գագաթին վրայ իրարու կից երկու երեք քարուկիր սեմեակներու կիսաւեր հետքերը կանգուն կը մնան, և զոյգ մը մէջիմէջ վիճափոր սեմեակ լեռան գագաթէն՝ անոր հիսսիսային արևմտեան ուղղաձիգ կողմի վըրայ, 7-8 ճեղ աստիճանոց սանդուղքով մը մատչելի: Այս սանդուխից վրոյն կը գտնուի մէկուկէս երկու մէթր բարձրութեամբ և մէկ մէթրէն անէի լայնութեամբ բևեռագիր արձանագրութիւն մը»³⁰:

Այս ավանդությունը անգամ 19-րդ դարում այնքան նվիրական պատմական մի հիշատակ էր ընկալվում, որ Ալիշանը գրում է. «Ունի բերդ անուր, յորում պատուի անձաւանման տեղի. ուր աւանդի Ս. Մեսրոպայալ ընկալեալ յաղօթս զօրինակ հայերէն տառից և ստեղծեալ գնոսի»³¹:

Այս ավանդության վավերականությունը դեռևս 18-րդ դարում մերժել է Հ. Մ. Չամչյանը: Վկայակոչելով Վախճան Արևելցու՝ Բալուից վերաբերվող հատվածը, Չամչյանը նշում է, որ Արևելցին դա բերում է որպես ժողովրդական ավանդություն և ինքն էլ իր հերթին ավելացնում է. «Եւ յիրաի իսկ ոամկաց աւանդութիւն լինելոյ ապացոյց է այն, զի ասի, թէ վէմն այն, յոր դրոշմեցան տառքն Մեսրոպայ՝ կայ մինչև ցայսօր, և երևին ի նմա նկարք գրերոյն, որ է գրոյց անտեղի. զի այն վէմ ի տեպեան երևութացաւ պոռաչի մտաց սրբոյն, և ոչ թէ էր քար թանձրացեալ յերկիր, որպէս և յայտ է: Եւ արդարև եթէ իրական վէմ լինէր, ոչ թողոյր Սուրբն Մեսրոպ զայն անդանօր, այլ՝ տայր բառնալ և տանիլ և պահել ի կաթողիկոսարանի և կամ արքայն Վոանշապուր տայր բերել և դնել յարքունի պալատան յանջնջելի յիշատակ այսր գործոյ: Եւ դարձեալ, եթէ այնպիսի վէմ էր այն, Կորիւն, որ նմանեցուցանէ զսուրբն Մեսրոպ Մովսեսի, և զտառս նորա պատգամացն գրելոց, տյնպէս նմանեցուցանէր և զքարեղէն վէմն զայն՝ քարեղէն տախտակացն»³²:

Այսպիսով, Չամչյանը Բալուի այդի վեմի վրա որպես թե դրոշմված տառերի պատմությունը մերժում է՝ ճշելով, որ ինչպես խորեանացին է գրում, Ս. Մեսրոպին Հայոց գրերը տրվել են ոչ թե իրական վեմի վրա գծագրվելով, այլ տեսիլում, և տեսիլի հետ էլ անբերույթ են դարձել: Եվ երկրորդ, որ եթե իրապես քարին դրոշմվեին հայոց գրերը, ապա Ս. Մեսրոպը դրանք որպես աստվածատուր մի սրբություն իր հետ կբերեր և ոչ թե կթողներ Բալուում: Եվ երրորդ, քարեղեն տախտակի վրա գրերի գծագրման մասին հիշատակությունները գրական հետևողություն են Աստուծո կողմից Մովսեսին տրված Տասնաբանյայի տախտակների:

Գրերի Գլուտի՝ Բալուի ավանդության մասին Աճառյանն էլ գրում է. «Միակ պատմական աստաղը, որ կարող է իբր հիմք ծառայած լինել այս ավանդության, թերևս մի կարճ

³⁰ Զարուբին քհն. Սարգիսեան, Բալու, իր սովորոյթները, կրթական ու իմաստական վիճակը և բարրուր, Գաւիթը, 1932, էջ 263-264:

³¹ Հ. Ա. Ալիշան, Տեղապիր հայոց մեծայ. Վենեպիկ, 1855, էջ 65:

³² Հ. Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հր. Ա. Վենեպիկ, 1784, էջ 762:

դադար է Մեսրոպի վերադարձի ժամանակ՝ Սամուատից վաղարշապատ³³:

Նույն ձևով այս ավանդության պատմական հիմքը որոնելով, Հ. Մ. Հովհաննիսյանը գրում է. «Ս. Մեսրոպ պետք է, որ Եղեսիա-Սամուատ-Մելիտիցն Խարրերդ-Բալու ճամբով մտած ըլլայ Հայաստան, այսինքն Արածանիի հովիտէն, ապիկա հոռուէական հիցն և գլխաւոր ճամբաներէն մէկն էր դեպի Հայաստան, որ Պատինգերեան քարտէսին վրա ևս նշանակուած է: Ս. Մեսրոպ այս ճամբէն անցնելով՝ կանգ առած պետք է ըլլայ Բալու, մանաւանդ թէ ժամանակ մըն ալ հոն կեցած, ինչպէս որ ցոյց կուտան ժԲ դարու մեր յիշած պատմիչները: Ահա այս անցքին պատճառաւ է, ըստ մեր ենթադրութեան, որ ծագում առած է ժողովուրդին քով Բալուի բերդին աւանդութիւնը հայ գրերու գիտին մասին»³⁴:

Հայոց գրերի՝ Բալուում տրված լինելու մասին մատենագրական աղբյուրների քննությունը, սակայն, վեր է հանում մի շարք օրինաչափություններ, որոնք վկայում են, որ այս ավանդությունը ոչ այնքան խարսխված է Մաշտոցի՝ այս ճանապարհով Հայաստան վերադառած լինելու վրա, այլ հիմնված է Գրերի Գյուտի պատմությունը ազգային-հոգևոր մի նոր վերանենկաբանմամբ ներկայացնելու ձգտման վրա: Այս հանգամանքը միանգամայն հստակորեն արտացոլվել է Սասնեցու ներքոյումի այն հատվածում, ուր ասվում է, թե աստվածային նախասահմանվածությամբ էր, որ Միշագետրի քաղաքներում տեղի չունեցավ Հայոց Այրուբեցի կարգավորումը:

Ինչպես Սասնեցին է գրում՝ «Եւ այս ի խնամոցն Աստուծոյ մատակարարէր, ոչ ամենայնի առնել զմեզ մուրացիկս՝ շնորհակալս այլոց. գրովանդակ պարզևսն ի ձեռսն այլազանցի շնորհել մեզ՝ որպէս գառաքելութիւնն, զբահանայութիւնն և զարքայութիւնն, այլ պահէր զայսպիսի բարիս և մերով արեան զանկլիւծովս ձիւրէր մեզ»³⁵:

Ընդգծված այս տողի բացատրությունում Հ. Մ. Հովհաննիսյանը գրում է. «Այսինքն հրեա էին առաքելները՝ Թաղէսը և Բարդուղիմէոսը, Պարթև Լուսատրիչը և Արշակուցի վաղարշակը»³⁶: Եվ այս երեքի կողքին, Գրերի Գյուտը, ըստ Սասնեցու, վերապահված էր Ս. Մեսրոպին և այն էլ արդեն Հայաստանի սահմանագավառ Բալուում, այսինքն բուն Հայաստանում, որով Գրերի Գյուտը միջնադարյան ազգային ինքնագիտակցությունում սկսում է ընկալվել որպես գուտ հայկական երևույթ, որն էլ իր հերթին կատարվել է բուն Հայաստանում և ոչ թե նրանից դուրս:

Փարպեցին ժամանակագրորեն հաջորդում է Կոլյունցին և Խորենացուն, ու Գրերի Գյուտը Հայաստանում դնելու միտումով է, որ թերևս նա չի հիշում բուն գյուտի պատմությունը և կամ էլ նույն միտումով են նրա Պատմության այս հատվածը ոչ այնքան հաջող խմբագրել հետագա խմբագիր-գրիչները, որով այն տպավորություն է ստեղծվում, թե Ս. Սահակը և Ս. Մեսրոպը հայոց գրերը կարգավորել են հենց Հայաստանում: Հատկանշական է, որ եվրոպական հայագետներից Մարկվարտը Փարպեցու այս հատվածը հենց այդպես էլ հասկանալով գրում է. «Մաշտոցի Ասորիք՝ այսինքն Միշագետը ուղեգնացութիւնը ու յարակից պարագաները կը լո՛ւ Դազար ամրոջովին: Այս՝ դիտումնաւոր փոփոխութիւն

³³ Տ. Անտոյան, Տայոց գրերը, Երևան, 1984, էջ 151:

³⁴ Հ. Մ. Հովհաննիսյան, Տայուարանի թերթերը, Ս. Դազար, 1970, էջ 95:

³⁵ Կարապետ Սասնեցի, Արքայոյան, էջ 42:

³⁶ Տ. Մ. Հովհաննիսյան, Տայուարանի թերթերը, էջ 96:

մըն է, որ կապ ունի հարկաւ Ղազարա ցոյց տուած այն չափազանց քանքին հետ, որով ո՛չ միայն Ս. Գրոց թարգմանութեան, այլև նոյնիսկ հայ գրերու կազմակերպութեան գլխաւոր արդիւնքը կը դիտէ վերագրել Սահակաւ, որով յափշտակուած է, այս պատճառով ալ, ինչպէս բնական է, դէպքիս հանդիսավայրը հարկ է փոխադրել Հայաստան³⁷:

Գրերի Գլուտի՝ Բալոյի ավանդութեան մեջ վերախմբագրման է ենթարկվել նաև տեսիլի պատմությունը: Եթէ Պատմահայրը գրում է, որ տեսիլում Աստվածային Աջը վեմին գրեց հայոց գրերը, ապա Բալոյի ավանդութեանը հետևող հեղինակները արդեն գրում են, որ այդ գրերը դրոշմվեցին Բալոյի այրի պատին, որով առավել է շեշտվում Հայոց գրերի աստվածատուր լինելը՝ այն ներկայացնելով արդեն առարկայական նյութականությամբ, ոչ թե տեսիլատուր՝ տեսիլում տրված, այլ անմիջականորեն Աստծո կողմից: Ասվածն առավել հստակ է երևում, երբ իրար կողք ենք դնում տեսիլի՝ Պատմահոր և Վարդան Արևելցու հատվածները:

Մովսես Խորենացի	Վարդան Արևելցի
Եւ տեսանէ ոչ ի քուն երագ և ոչ յարթ- նութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգոյն աչաց թաթ ձեռին Ա- ջոյ՝ գրելով ի վերա վիմի:	Աջով իւրով դրոշմեալ առաջի նորա, որ- պէս մեծին Մովսեսի ի լեառն Սինայ, և սմա ի լեառն Բալուայ, որպէս տակաւին ցուցանի դրոշմն աստուածագիծ վիմին և նկարք գրե- րոյն:

Բալոյի ավանդությունում կան Խորենացու և Կորյունի վկայություններից տարբերվող ևս երեք էական նրբերանգներ, որոնք նույնպես պայմանավորված են Հայոց գրերի աստվածատուր լինելը առավել հստակ և առարկայորեն ներկայացնելու ձգտմամբ:

Հստ առաջին այս տարբերության, Հայոց գրերը տրվել են ոչ թե պարզապես Բալուում, այլ նրա մոտ գտնվող լեռան վրա, և ինչպես երևում է արդեն բերված հիշատակություններից, այս լեռը զուգահեռի մեջ է դիտվում Սինա լեռան հետ, ուր Մովսեսին տրվեց Տասնաբանյան, որով Հայոց գրերի աստվածատուր լինելը շեշտելու համար ստեղծվում է նաև գլուտի տեղագրական ընդհանրությունը:

Նույն այս նպատակով վերախմբագրման է ենթարկվում նաև Մովսես-Մեսրոպ զուգահեռը: Կորյունի մոտ եթե այս զուգահեռը հանգում էր այն մտքին, որ Հայոց գրերը ստացած Մեսրոպը երջանիկ էր իր վերադարձին, քանի որ ընդունվեց Հայոց ավագանու և ժողովրդի կողմից, իսկ Տասնաբանյան բերող Մովսեսը տրտմեց, որովհետև վերադառնալով Սինա լեռից, տեսավ ոսկե հորթին երկրպագող ժողովրդին:

Հայոց գրերի աստվածատուր բնույթի հետագա ընդգծումը թելադրել է այս համեմատության տարբերությունը ընդհանրության վերածել, և Բալոյի ավանդության մեջ արդեն ոչ թե հոգեվիճակների տարբերությունն է ներկայացվում, այլ գլուտի իրավիճակային ընդհանրությունը, որով երկուսին էլ աստվածատուր պարզեր տրվեց լեռան վրա, և Ս. Մեսրոպը այնտեղից եկավ՝ իր հետ բերելով Հայոց գրերը այնպես, ինչպես Մովսեսը Սինա լեռից

³⁷ Պատմություն հայ նշանակություն, 19 35:

Տասնաբանյան:

Երրորդ տարբերությունն այն է, որ Գրերի Գյուտը Բալուում ներկայացնող բոլոր հեղինակները նշում են, որ Ս. Մեսրոպը ոչ թե ստեղծել է ընդհանրապես Հայոց Այբուբենը, այլ պակասող այն տառերը, առանց որոնց թերի և անկենդան էր այդ Այբուբենը: Հատկանշական է, որ այդ գործերում ասվում է, թե Մաշտոցին տրվել են ձայնավորները, որոնք յոթն են եղել, և կամ էլ ասվում է, թե տասնչորս գրեր են տրվել, որը դարձյալ հավասար է երկու յոթի:

Այս հանգամանքը ևս պայմանավորված է Հայոց Այբուբենի աստվածատուր լինելը շեշտելու նույն ձգտմամբ: Ինչպես նշվում են միջնադարյան քերականագիտական աշխատանքներում, ձայնավորները անընդհատ լինելով՝ առանց ընդհատման հնչելով աննյութական են և ըստ այդմ աստվածային բնույթ ունեն, իսկ բաղաձայնները ընդհատվող հնչյուն ունեն, ուստի և մարդկային մահկանացու բնության նման մարմնավոր և նյութական են:

Նաև, ինչպես հայտնի է, յոթը աստվածության թիվ է համարվել սկսած պլուրալության հանգանակից, որը հոգևոր մի նոր վերամեկնաբանմամբ արտահայտվել է և քրիստոնեական միջնադարում: Նույն այս պատճառով հայերենում յոթի գրային համարժեքն է Է-Ց, որը խորհրդանշում է աստվածությունը³⁸:

Ահա այս պատճառով Բալուի ավանդությունը ներկայացնող գործերում երբ ասվում է, թե Ս. Մեսրոպին տրվեցին ձայնավորները և կամ էլ յոթ գրերը, դրանով մեկ անգամ ևս շեշտվում է տրված գրերի աստվածային բնույթը, թե՛ որպես ձայնավոր գրերի և թե՛ դրանց աստվածային խորհրդանշող յոթը լինելով:

Այսպիսով, Բալուի ավանդությունը ոչ թե խարսխված է պատմական որևէ հիմքի վրա, այլ Գրերի Գյուտի պատմության զգալի մեծ մասը վերախմբագրումն է կատարված միջնադարում, որի բուն նպատակն է եղել Գրերի Գյուտը ներկայացնել կատարված Պատմական Հայաստանի տարածքում: Բալուի՝ որպես Գյուտի տրման տեղը ներկայացնելը պայմանավորված է եղել երկու հանգամանքով: Նախ որ այն արդեն պատմական Հայաստանի սահմանային գավառներից էր, այսինքն՝ Հայաստան էր համարվում, և որ այնտեղ եղած բնեռագիր արձանագրությունը որպես հմից եկած պաշտամունքային վայր նորոգի վերիմաստավորմամբ որպես գրման քար ներկայացվում է աստվածատուր գրերի գրման սալ և աստվածատուր լինելու ըմբռնումը արտահայտվում է նաև այն մեկնաբանությամբ, թե Մաշտոցին տեսիլքում տրվել են աննյութական՝ աստվածային բնույթ ունեցող ձայնավորները, որոնց աստվածատուր լինելու հաշորդ հատկանիշն էլ այն է, որ դրանք, լինելով յոթը, խորհրդանշում են աստվածության յոթ թիվը և գրային համարժեքը:

³⁸ Ձայնավորների աննյութական լինելու և յոթի պարունակած այլաբանական խորհուրդների ու աստվածային թիվ լինելու մասին տե՛ս Գ. Պուլոսյան, Գանեկյան գրերի հարցը միջնադարյան բնագիտական ըմբռնման ժամանակակից, «Եջմիածին», 2005, Զ, էջ 87-98, Է-Ը, էջ 110-125:

ՄԱՐԻԱՄ ԾՈՒԻՆՅԱՆ

ԻՆՏՐԱՅԻ «ՆՈՃԱՍՏԱՆ» ՍՈՆԵՏԱՇԱՐԸ

Հարցերը, որոնք շոշափված են Ինտրայի «Նոճաստան» բանաստեղծական ժողովածուում, նորություն չեն: Այդ հարցերին հեղինակն անդրադարձել էր «Ներաշխարհում»: Սակայն բանաստեղծությունների այս փոքրիկ ժողովածուում, որը ներքին թեմատիկ-գաղափարական կապով «Ներաշխարհի» շարունակությունն է, «Ներաշխարհի» գլխավոր հերոսը՝ ներքին ես-ը, հետաքրքիր հոգեբանական զարգացում է ապրում:

Ի հակադրություն «Ներաշխարհի» ես-ի, որն աշխարհն ընկալում է պատանեկան խանդավառությամբ և հույսերով, «Նոճաստան»-ում ես-ը փորձառու է՝ հասած թեքնյանական «տրտում գիտության»՝ հոգևոր հասունացման մի բարձունքի, որից միայն վար են նայում և ծիծաղում աշխարհ-բեմի և դերասանների վրա, որոնցից մեկն էլ սեփական անձն է, սակայն Ինտրայի «Նոճաստանի» քնարական հերոսը՝ ներքին ես-ը, այնքան փորձառու է, իմաստուն, որ ճիզջեական «զվարթ գիտությամբ»¹ անգամ չի կարող ծիծաղել վար նայողի հոգեբանությամբ: Նա իր հոգում չի կարողանում հաղթահարել կյանքի ցավը, նրա հոգու խորխորատներում տևական պատերազմ է:

«Նոճաստան» (նոճին իբրև Ափրի սրբազան ծառ և վերանցականի, տրանսցենդենտալի խորհրդանշան²) վերնագրված փիլիսոփայական այս սոնետաշարի քնարական հերոսը (ի հակադրություն «Ներաշխարհի» ես-ի) հոգևոր, ինտելեկտուալ, բարոյական հասունացման մի ճոր որակ է ձեռք բերել: «Ներաշխարհում» առաջ քաշված բարոյական կատարելության հարցը, որ սկսվում է անձի ես-ից և ծավալվում մինչև համայնական, համագր ես-ը, «Նոճաստան»-ում վերաճում, վերածվում է ես-ի՝ իքնակատարելության հասնելու ուղու քննության, որին հասնելով միայն մարդը կարող է միտել հոգու խաղաղության՝ Հավերժում լուծվելով: Եթե «Ներաշխարհը» ներթափանցված է անասնման լավատեսությամբ, նույնը չի կարելի ասել «Նոճաստանի» մասին: Թվում է, թե լավատեսության հակառակն այս պարագայում ևս պետք է լինի հոռետեսությունը: Սակայն «Նոճաստանի» քնարական հերոսը հոռետես չէ, նա ռեալիստ է՝ իրականությունը շատ սրափ և խոր տեսնող, ընկալող, վերլուծող, այնքան խոր, որ այդ ճանաչումը վերածվում է տեսանողության: Ինտրայի քնարական հերոսը, որ աներկբա բանաստեղծի ես-ն է, իր էկզիստենցիալ՝ զլորալ, տարածական մտակառուցվածքով է գնում աշխարհը³:

Ծարբում շոշափված հարցերի սուկ թվարկումն իսկ կարող է պատկերացում տալ քնարական հերոսի՝ իրական, օբյեկտիվ, էկզիստենցիալ աշխարհընկալման մասին: Նա

¹ Տե՛ս Нилоте Ф., Веселая наука (в книге "Утренняя заря. Переоценка всего лишнего. Веселая наука", Минск, 2003).

² Տե՛ս Пифагор, Золотой канон. Фигуры эзотерики. М., 2004, стр. 275.

³ Տե՛ս Maslow A., Motivation and Personality, New York, Harper, 1970:

<http://www.atheism.about.com/library/glossary/general/bldef-maslowabraham.htm>,

<http://www.who2.com/abrahammaslow.html>

բզկտվում է ներքին երկվությունից, երկփեղկումից, այդ ինքնաձաղկման խորքում, այդ ներքին կոնֆլիկտի խորքում ծանր շնչառությամբ, մոայլ հնքով նստած է *մահվան գիտակցությունը*: Ի հակադրություն մահվան՝ որոնվում է կյանքի իմաստը, որը հանգեցվում է, կրոնական իմաստով, անմահության, հարության երազանքի: Կյանք-մահ-հավերժություն,- փիլիսոփայական այս տիրույթում են քննվում հարցերը, և քնարական հերոսը փիլիսոփայական կամ որևէ այլ միտաբանիչ պատասխան չի փնտրում, նա զարթնած է, նա հոգևոր հասունացման այն «բարձր լեռների» կատարին է, որին հասնելով՝ լցվում են «տրտում գիտությամբ» և բարձր քրքիջով՝ սեփական անձի և աշխարհի վրա: Քնարական հերոսը մահվան ելակետից մոայլ խորհրդածում է իմացության պատճառած ցավի շուրջ, ավելի շուտ՝ թղթից է հանձնում իր տառապանքը, ցավը, ինքնապատերազմը, որ բխում է աշխարհին իջած «մոայլամած ճշմարտությունն ար»⁴: Եվ քանի որ կա մահը, մարդկային կյանքի իմաստը բանաձևվում է որպես ինքնաճանաչման, ինքնակառուցման, ինքնարարման ուղի:

Քնարական հերոսի սիրտը կեղեքվում է մարդու անցողիկության ցավից, և ինքնագիտակցող անհատը երազում է հարություն, անմահության հույս: Սակայն «Նոճաստանի» ես-ը՝ որպես քնությունապաշտ, սթափ գիտակցում է, որ դա միայն երազանք-անուրջ է, իսկ իրականությունն այն է, որ մարդը կորչում է հողում, իսկ հողին՝ լուծվում անսահմանության, անվախճանի մեջ: «Ներաշխարհում» աշխարհի հետ բացված վեճն այս բանաստեղծական ժողովածուում ստանում է նոր որակ. եթե «Ներաշխարհն» անսահման սիրտ փառաբանություն է, այստեղ հասուն անհատը՝ իրական կյանքն ապրածը, ում երազանքները, անուրջները շրջվել են իրականության ցավից, սարսափով խորհում է, թե տիեզերական այն այգը, լուսաբացը՝ Քրիստոսով հարության առափոստը, որին բաղձում է հեզ հողին, եթե սին է ու դատարկ, ինչպես նյութական կյանքում՝ անուրջները, ուրեմն՝

Լա՛վ է փշոց հետ գլխիկոր չբանալ այժմեն:

(«Աշնան երգ», էջ 214)

«Աշնան երգ» վերնագրված այս բանաստեղծությունն իր բնակարային գույներով տերյանական «Գիշեր և հուշեր»-ին հոգեհարազատ մի ապրում է: Զարթնած, իրականությունն իր գույներով ընկալողի համար հոգու աշուն է կամ հոգու գիշեր:

Փիլիսոփայական տոնետների «Նոճաստան» ժողովածուում բացվում է «վերադարձ» բանաստեղծությամբ, որում նոճիներին վերադառնալն ստանում է խորհրդանշական քնույթ. նոճիները «Ներաշխարհի» նույն նոճիներն են, որոնք խորհրդանշում էին երկիր → երկինք, մարդ → անսահմանություն, երկրային կյանք → հավերժություն, ներքին ես → վերանցական, համազո ես փոխանցումը: Նոճիները դառնում են հավերժության խորհրդանշիչ («Հավերժություն», «Կարվեր»), որ միտում են դեպի տիեզերական եթեր, դեպի Անվախճանը: Անսահմանին ձուլվելու, անճանալու ուղիով այդ սլացքը ենթադրում է հանգում հոգու խա-

⁴ Չրոքյան Տ., Երկեր, Ե., 1981 թ., էջ 60 («Ներաշխարհ»): Այս գրքից հայտնի մեջբերումների (կազարված են «Նոճաստան» շարքից) Լեյեր կարգին փեղում:

դադուության («Պայծառ օր», «Հովին մեջ», «Պաշտամունք»): Այս երգերում ուրախություն, լուսի ծփանք չկա: Տիեզերական հավերժությունը կարծես անտարբեր է մարդու լինել-չլինելու խնդրի հանդեպ: Մի շարք երգերում մահվան ցավը, սարսափը, անսիրտ թանձր թախիծը մութ դող են փոխանցում ընթերցողի հոգուն («Նվագի ձայն», «Իդձ»), ինչպես է. Տեսիլոհայաշյանի «Անգղը», ճոհների անտառակից լսվող անուշ մեղեդին թունավորվում է ազոավների՝ մահը խորհրդանշող կոնցըով:

Գերաշխարհի տեսիլներով լի, հավիտյան հավատարիմ վեճ անուրջին՝ գիշերային աղ-ջանուղջում ճոհները լուռ երազ են հատաչում Աճճունի մեջ: Բայց ողբագին վայում է մի բու, որը խորհրդանշում է իմացության վայումը մարդկային հոգում, «խավարակյաց մտա-ծություն մը սրաչվի» բուի պես միապաղաղ վայում է մարդու ներսում («Բուն»): Արթնացած միտքը շարունակ տանջվում է «վաղանցության իր ցավով» («Իդձ»): Մեռած հույսերի գե-րեզմանոցից ճոհների պես դեպի Աճանը հառնած «եսը լքում» ճման է բացվող այգի ֆո-ցի վրա ավելի «պիշ ու մոայլ» դարձող ճոհների, քանի որ երազներից լքված ես-ին ո՛չ Նիրվանան կփրկի, ո՛չ էլ որևէ երկնային Հայր («Նոճերուն պես»):

Բնարական հերոսի հոգին չի հագնում «անանց իրերեն»՝ գեղեցիկից, այնինչ՝ շուրջը միայն անցողիկությունն է, քայքայում: Նոճիները հավերժ սլացք են դեպի Աճնակականը: Ճնորք է ամեն բան, ինքնախաբկանք: Մարդը մահացու է.

... որս մ՝ են դուն անսրխա՛լ ջնջման:

(«Ցնորք», էջ 226)

Մարդու մահկանացությունը պարտադրում է հավերժական կյանքի երազանքի, սա-կայն երկնանմվեր ընտրյալների շարքն այնքան էլ ստվար չէ: Եթե ճոհներն անդրհայաց, այսրատյաց, գերերկրյա հոգիներ են, որոնք միտում են «մայր խավարին լուսաղբյուր»՝ աստվածային տիեզերական Օրենքների փիճը, կույր սխալների կապանավոր մարդը խար-խափում է կասկածանքներում («Ցավ»): Լուծվելով ճոհների հզոր սոսափյունի մեջ՝ քնա-րական հերոսը փորձում է փախչել ինքն իրենից («Օրոր»), ճշմարտության իմացությունից, անհուսությունից: Սարսափելի եզրահանգում, չկա վերերկրային կյանք, ոնալ է միայն գե-ղեցիկը, որն, իբրև պատրանք-երազանք, փոխարինում է ճշմարտության գիտակցման տառապանքին:

Արվեստը սիմվոլներում փակված ծանր ճշմարտության վեճացումն է, խաբկանք և ինքնօրորում («Մահիկը»): Եթե «Ներաշխարհում» ես-ը մարդու անցողիկության, մահվան գիտակցության տառապանքից մղվում էր դեպի իրական կյանքի հեթանոսականություն՝ եթերային սիրո խորհրդանիշ Իոննան, ինչպես Շանթի «Հին աստվածներ»-ում՝ Աբեղան, որը գերադասանց կյանքի ծովը՝ իր մոայլով և սիրո լույսով, ապա «Նոճաստանի» քնարա-կան հերոսը, որը հոգեբանորեն ավելի հասուն է և ձևավորված անհատականություն, հի-շեցնում է Վանահորը՝ իր «լեռան» բարձունքից վար ճայող: Եվ ճա ևս Վանահոր պես կա-րող է մարդկությանը կոչ անել՝ գտնել ինքն իրեն, գիտակցել սեփական գոյության իմաս-տը՝ ասելով. «Մինչև հոս կարելի է մարդը բերել, բայց հուսկն անդին մարդ ի՛նքը պիտի եր-

թա⁵:

Ճշմարտության որոնման ուղին իմաստունին հասցնում է սեփական հոգու «բարձր լեռներ», որից վար նա տեսնում է երեք ուղի՝ ոչնչապաշտություն, որն ինքը կործանում է, դեպի Աստված կամ Անեզրություն և դեպի գերմարդ: Եթե շանթյան վաճառայրը, որ գիտակցում էր, թե «մինչև հոս կարելի է մարդը բերել», հույսը դրած մարդու վրա՝ ձգտում է ինքնարարման, Ինտրայի «Նոճաստանի» իմաստունը փորձում է թանձր իրականությունը խելդել դեպի Անճառն ու Անճունը հավատի պատրանք-անուրջներում: Այսինքն՝ քնարական հերոսը մահվան գոյության ցափից «մեռնում» և «հարություն» է առնում՝ փառաբանելու հարության երազանքը: Մահ → կյանք → սեր → ցավ հավերժական պտույտը Ինտրայի «Նոճաստանում» իմաստավորվում է տիեզերական լույսին ձուլվելուն արժանի լինելու և հարության վերադարձով անմահանալու նոր նրբերանգով:

«Նոճաստանում» ծավալվում է թախծաշաղախ երազանք-անրջանքի մի երգ, լույսի փառաբանության երգ, մեծարենցյան լուսառատ, ինտրայական «խաժասփյուն» գիշերը նոճիների լուսեղեն կարտուն է և նաև քնարական հերոսի հոգու կարտուր, լույսն իրեն հոգու կարտու: Ողջ տիեզերքը ծփում է տավղի մեղեդիով, անճառ Լույսի դեմ խելը աղչամուղչը ծուր է իջել, նյութը՝ դարձել աղոթք («Լուսնագիշեր»): Իջնող երեկոյի շշուկները «գաղափարների անթարշաճ կյանքին» մեծ խղճմտանքին հարելու զուգորդումներ են ծնում («Երեկո»): Արշալույսի լույսերի մեջ վերասույց նոճիներն իրենց գոյությամբ զուգորդում են մեկ այլ միտք. «Ճշմարտության գութը» կամ հավիտենական կյանքի հույսը աներկբայելի են («Արշալույս», «Մագունը»):

Լուսահայաց նոճիները շարունակում են մնալ մների՝ նյութից դեպի հոգի վարից վեր հավիտենական փոխանցման սիմվոլ: Վարի հաճույքներից, ցափից, մոխրոքից, վաղանցիկությունից կյանքի, հավերժականի խորհրդանիշ նոճիներն անմասն են և «դեպի վեր կպակնուն միայն»՝ մխրճվելով ադամամութի մեջ: Այդպես էլ մարդու հոգին պիտի փնտրի խաղաղության ուղին, որը նա ստանում է Քրիստոսի ծննդյամբ: Մարդկային հոգու «թյուր ու մոայլ... ձորերուն խորերեն» իր ծննդյամբ Քրիստոսը բերում է Ստուգության Ողի, իսկ նոճիներն օրհներգում են. «Օրհնյալ է սերն ու ճանաչումն Օրհնաց» («ՄՃՃՃյան գիշեր»), օրհնաց, որ Քրիստոսն ինքն է՝ որպես փրկիչ օրենք, դուր, ուղի... Սակայն այս որոնումը՝ հանգումը Քրիստոսին, վերջնական չէ, ներքին երկփեղկված նս-ը շարունակ հակասության մեջ է. երազ-անրջանքը զարթնածին այլևս խաղաղություն չի կարող բերել, կասկածը պառակտում է նրա հոգին: Եթե չկա հոգու անմահություն՝ «հարակյանքն երկնածեն», և մահը սոսկ «անէացում է խավար»՝

Թողե՛ք գիս, նոճը, որ տխրագին մեղանչեն:

(«Ըսեք»)

Ինչպես Սուրբ Գրքում է ասվում, իմացության կամ կենաց ծառի պտուղն ուտելը հանգնում է դրախտի կորստյան: Ասել է, թե հարուստ կենսափորձը պատճառ է դառնում

⁵ Շառք Լ., երկեր, Ե., 1989, էջ 429:

հոգու դրախտից մարդու վտարման՝ զարթոնմի, արթնության, սթափ մտածողության: Սակայն մարդու բնույթն այնպիսին է, որ նա ի գորտու չէ սանձելու սեփական մտքի վերսրլացումը, և, թերևս, մարդու կյանքի իմաստը հենց իմացության աստիճաններով վեր էլնելն է և տիեզերքի անսահմանությունը պեղելը, ողջ անսահմանի կառուցում իր տեղի ու դերի իմաստը հասկանալը: Այսինքն՝ զարթոնումը բերում է անհուսություն, դրա համար էլ «տրտում գիտության» հասածը՝ Ինտրան, հետագայում կզարմանա, թե լուսառատ «Նե-րաշխարհը» երբևէ ինքն է գրել:

Նարեկացիական երկփեղկման տառապանքի ծվատող ցավը ծավալվում է նաև նրա հոգում, և մեղանշման տենչի հեթանոսական ճիշը խելղվում է «Նոճաստանի» «Ջղջում» բանաստեղծության մեջ, որը հավաքական ես-ի զղջման խոսք է: Նոճիները դառնում են «շիջյալ սերնդոց» քավության, ապաշխարանքի, հույսի խորհրդանիշ, որ կարկառված են դեպի «Օրենքն անանջ»՝ դեպի տիեզերական կարգ ու կանոնը, դեպի Քրիստոսը՝ որպես «դուռ», «ես եմ դուրը...» (Հովհ. Ժ 9): Նոճիները նաև նախկին մեղանշումների գիտակցությամբ լեցուն հող դարձող ոսկորների անպատում թշվառությունը Անսահմանության մեջ լուծելու, Աստծուն ապավինելու սիմվոլն են («Ջղջում»):

Պատարագի, քարոզի ժամանակ ավետարանական շատ էական հատված բացատրելիս բոլորի ուշադրությունը կենտրոնացվում է մի բառով՝ *պրոսխումեն*, որ հունարենից թարգմանաբար նշանակում է ուշադրություն: Համանուն սոցետում ամփոփված է «Նոճաստանի» ողջ ասելիքը, Նոճիների սիմվոլը հարստանում է մի նոր նրբերանգով: Վերջին օրը՝ մահվան դեմադեն, վեհատավիղ օրհներգուները՝ նոճիները, կպատմեն իղձերի, վալելման ունայնությունը: Ունայն է անգամ մեղանշումը: Կհիշեցնեն անհաս բարձունքների, չնվաճված իրերի տոչորող կարտի մասին, սակայն ավերել է պետք անգամ հուշն ու երազը: Ինտրան ճշմարիտ ուղի է տեսնում միայն կամքի, ինքնասանձման հաղթանակով հլության տոնը, որով մարդը կարող է հոգու ամոթից մաքրված ներկայանալ Անմատուցին, Անսահմանին: Որպես պրոսխումեն-ուշադրություն՝ Ինտրան «ցուցադրում է» միակ ճիշտ ուղին, Անէլին ձուլվելու միակ պայմանը ներքին մաքրությունն է («Պրոսխումեն»):

Փիլիսոփայական սոցետների այս շարքը, որ «Նոճաստան» է կոչվում, մահ-կյանք-ցավ-հաճույք-ներազանք-պատրանք տարածքում կյանքի իմաստը որոնող հասուն անհատականության՝ ցավից տառապող և դրանից դեպի պատրանքապաշտություն մղվող հոգու ապրումների գեղարվեստական բյուրեղացումն է: Նոճիներն իբրև սիմվոլ հանդես են գալիս նույն՝ «Ներաշխարհում» ունեցած դերով՝ խորհրդանշելով մարդու ինքնակատարելագործման տենչը և անմահության երազանքը: Սոցետների՝ երեսունչորս բյուրեղներից հյուսված պսակում, իբրև երեսունչորս յուղաներկ կտավների ամբողջություն, նոճիները դառնում են հետին պլանում վեր խոյացող սիմվոլներ, որոնք համադրում են տիեզերական համատարած քայքայումն ու կենսածին գեղեցիկը և խորհրդանշում գեղեցիկի պաշտամունքը:

«Նոճաստան» XIX դարավերջին և XX դարասկզբին տարածված էսթետիզմի, որպես գրական հոսանք, հստակ հակվածությամբ ժողովածու է, որտեղ պատրանքապաշտությունը բխում է էսթետիզմի այն սկզբունքից, թե գեղեցիկը, վեր լինելով իրականությունից և բացարձակ, կարող է ձևավորել այդ իրականությունը: Թերևս տեղին է մեքբերել էսթե-

տիզմի հայրերից մեկի՝ Օ. Ուայլդի խոսքերը. «... Արվեստի իսկական նպատակը Ստի, այսինքն՝ հիասքանչ խաբկանքի մատուցումն է»⁶:

«Նոճաստանը» - «Ներաշխարհի» անմիջական շարունակությունն է՝ գերհասունացած ես-ի նոր աշխարհայացքը, որում մահվան ցավը մեղմվում է տիեզերական լույսին ձուլվելու, հոգու խաղաղության հասնելու, Հավերժի անսահմանության մեջ հարություն առնելու և տևելու երազանքի փորձով: Կյանքի և մահվան հարատև վերադարձի պտույտը «Փոխում» սոնետում ներկայացվել է վաղանցիկի և Անանցի միջև վեր հառնած սիմվոլիկ նոճիների բնանկարով, որը կազմում է ինտրայական մտածողությանը բնորոշ սիլլոգիզմի առաջին եզրը, իսկ երկրորդ եզրը նոճիների ոտքերի տակ փոխված սնուցող հողն է՝ լի մարդկային մարմինների և աճուրդների խոնարհ աճյունով: Այդ աճյուններից Տիեզերքի մասնիկը՝ ես-ը, ասես -ակճի՛ր կընե- (ոտքերի թաթերին կանգնած ձգվել)՝ հալվելու նոճիների մեջ և սլանալու եթեր, ահա և կյանքի ու մահվան հավերժական գոյապտույտի գեղարվեստական ձևակերպումը:

Եթե ամփոփելու լինենք Ինտրայի ես-ի հոգեբանական զարգացման ընթացքը «Ներաշխարհից» - «Նոճաստան» ընկած ճանապարհին, պետք է նշել, որ ներքին ես-ը անցնում է կյանքի ցավի Գողգոթան, որից հանգում է իրապաշտության, իրականության պաշտամունքի՝ թաթախում սիրո պատրանքով, սակայն է՛լ ավելի իմաստնաճալով՝ զարթնելով, տառապում է կյանքի անցողիկության այրող զգացումից՝ մահվան փաստի գիտակցումից, որից փրկություն է տեսնում նոր պատրանք-երազանքի՝ տիեզերական Անճառին ձուլվելու արժանի լինելու հույսի, անրջանքի մեջ:

⁶ Уайльд О., Замыслы, М., 1906, стр. 35.

ԳՐԱՆՈՍԱԿԱՆ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆ ԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա Ասրվաձարանական կենտրոնը» լույս է բն-
ծայել արվեստագիտության դոկտոր Վիգեն Ղազարյանի «Մեկնությունք խորանաց» խո-
րագրված աշխատությունը, ուր բերված են ավելարանական փաստ խորանների հայ միջ-
նադարյան փաստերք մեկնությունների բնագրերը և վերջիններիս ոուսերեն թարգմանու-
թյունները¹:

Բուն բնագրերի հրատարակությանը նախորդում է աշխարասիրողի՝ խորաններին
եկիրված ուսումնասիրությունը:

Ինչպես հայրնի է, ձեռագրերում չորս Ավետարաններից առաջ գեղեղված են եկեղեցա-
կան պարմագիր Եվսեբիոս Կեսարացու (ծնվ. շուրջ 265 թ.) Կարպիանոսին ուղղված թուղ-
թը և չորս Ավետարանների՝ Եվսեբիոսի կազմած համաբարբառը (համաձայնության փախ-
փակներ), որոնք հայ մարենագրության մեջ անվանվում են խորաններ: Վամաբարբառա-
յին փախփակները այսպես են անվանվում խորանակերպ (կամարակերպ) ձևավորման
համար:

Խորանների մեկնությունները վերաբերվում են ոչ թե համաբարբառի համաձայնության
փախփակներին (աղյուսակներին), այլ հենց այդ փաստ խորանանն էջերի գեղարվեստա-
կան ձևավորմանը: Այսինքն՝ ոչ թե բուն փեքսսը է վերլուծվում, այլ վերջինիս ձևավորումը
եղող սյունաշար-կամարան խորանները:

Այս մեկնությունների հեղինակները իրենց բացարթություններում շեշտում են երկու կա-
րևոր հանգամանք: Նախ, որ հիշյալ խորանների ձևավորումը հեղինակների գուր ստեղծա-
գործական երևակայության արդյունքը չէ, թե նրանք ըստ իրենց ճաշակի կարող էին այս
կամ այն զարդանորիվները և պարկերները գեղեղել խորանների կամարների ներքո և
սյուններին կից լուսանցքներում, այլ պայմանավորված էր համաբարբառաային աղյուսակնե-
րի պարունակած փեսական-ասրվաձարանական ըմբռումներով և դրանց արքաահայր-
ման համապարասխան գեղագիտական յուրահարկություններով:

Երկրորդ՝ ոչ միայն գուր ստեղծագործական երևակայության արդյունք չեն այս խորան-
ների գեղարվեստական ձևավորումները, այլև դրանց մեկնությունները: Այսինքն՝ մեկնիչնե-
րը ոչ թե պարզապես վերլուծել են ներկայացվող խորանաթերթերի պարկերները, այլև
վեր հանել խորհրդարանական և գեղագիտական այն սկզբունքները և ընկալումները,
որոնք պայմանավորել են համաբարբառաային այս աղյուսակների նման գեղարվեստական
ձևավորումը: Վերջինս պայմանավորող փեսության ընդհանուր հայեցակարգի մասին, որը
այս խորանները ներկայացնում է որպես մուտքը չորս Ավետարանների, Վ. Ղազարյանը
գրում է. «Ավետարանն սկսող խորանապարկերները դիրվում են իբրև «նախադրություն

¹ Տե՛ս Մեկնությունք խորանաց (Արվեստի փեսություն՝ միջնադարյան հայկական բնագրեր), աշխար. Վ. Ղա-
զարյանի, մասնագիտական խմբագիրներ Շ. Ղուխանիսյան և Գ. Տեր-Վարդանյան, Ս. Էջմիածին, 2004, 480 էջ:

փառագարդ և աստուածապայծառ մբառոր գանձուցն» (իմա՝ Ավեփարանների խոսքի): Տեփևարար խորանապարկերները, ըստ մեկնությունների, իրենց գույներով, զարդամոփվներով, խորհուրդներով (սիմվոլներով), հոգու վրա զգայական ներգործումով կազմում են Ավեփարանագրքի բաղկացուցիչ մասը, ծառայում իբրև նախադուր, իբրև նախագիտելիք, իբրև հոգեբնախոսական ներշնչում ավեփարանական «սրբազնագրությունների» (Գիտելիսու Արիտպալագացի) խորքերը մտնելու համար»²:

Միաժամանակ հեփագոփողը նշում է, որ խորանների մեկնությունների բուն նպատակը, սակայն, խորանների պարկերամոփվների իմաստաբանության վերհանումն է: Աներաժեշտ է նաև նշել, որ այդ մեկնությունները իրենց հերթին դարձնել են նաև խորանների նկարագրող միասական փեսական հույեցակարգ՝ թելադրելով և ձևավորման պարկերամոփվների համապատասխան պարկերագրություն:

Խորանների մեկնությունների և խորանների ձևավորման հարաբերակցությունը կարևոր մի հարց է, որի քննությունը, ինչպես նշում է Վ. Ղազարյանը, վեր է հանում փաստ խորանների ձևավորման մի շարք կարևոր սկզբունքներ: Եվ այս գրքի կարևոր արժանիքներից մեկը հենց այն է, որ այսօրվո վեր են հանված այդ սկզբունքները: Աշխատասիրողը չի սահմանափակվում միայն խորանների մեկնությունների այլաբանական իմաստների և արվեստի փեսության հարցերի վերլուծությամբ, այլ հենց ավեփարանական խորանների նկարագրողումները «կարդում է» այդ մեկնությունների միջոցով: Գույների համադրումից մինչև առանձին բուսամոփվները և կենդանածները ներկայացնելով ցույց է տալիս դրանց բացարթության գրական սկզբնաղբյուրները խորանների մեկնություններում: Ավելին, հայկական մեկնությունների հիման վրա նա քննում է նաև վաղ շրջանի արևելաքրիստոնեական և շրջանադարձական մի շարք ձեռագրերի խորանների փարթեր պարկերները՝ դրանց բացարթությունը ներկայացնելով ըստ հայկական նյութի:

Ներագոփողը դիմում է նաև բնագրային-գրական զուգահեռների՝ խորանների մեկնությունները համեմատելով հայկական «Չայնից մեկնություններից» մինչև Գյոթեի գույների փեսությունը ձգվող սարեղծագործությունների հետ:

Ուսումնասիրությունում առանձին մի բաժնով ներկայացված են բերվող փաստերը մեկնություններից յուրաքանչյուրը պարունակող ձեռագրերի նկարագրությունները: Տիշյալ մեկնությունները պարունակող ձեռագրերի քննությունը կարևորվում է կրկնակիորեն. նախ, որ պարկերացում է փայխ այն ձեռագրերի մասին, ուր որ գրվում են փայլ բնագրերը: Երկրորդ՝ ներկայացնելով խորանների մեկնություններին նախորդող և հաջորդող նյութերը, ուրվագծում է ձեռագրային-թեմատիկ այն միջավայրը, որում հանդես են գալիս և բերվում փայլ բնագրերը:

Մեկնություններից յուրաքանչյուրի բնագիրը բերվում է հնարավորինս շարք ձեռագրերի օգտագործմամբ: Ասվածը վերաբերվում է հատկապես վաղ շրջանի մեկնություններին: Այսպես, առաջին մեկնության քննական բնագիրը կազմված է քսան, իսկ երրորդ մեկնությանը՝ երեսունմեկ ձեռագրերի համեմատությամբ: Այս հանգամանքը ոչ միայն հնարավորություն է փայխ քննական բնագրերը առավել մեծ թվով փարթերթրցվածներով կազմելու, այլև ավելի մեծ վստահությամբ բերելու կազմվող բնագրի յավագույն ընթերցվածները պարունակող կապակցություններն ու նախադասությունները, ինչպես նաև փեսական ավե-

² Նույն փեղում, էջ 16:

ի մեծ ընդհանրացումների հանգևու գրության ժամանակը, հեղինակային պարկանելութունն ու այլևայլ խնդիրներ որոշելիս:

Առանձին մի բաժին է նվիրված խորանների մեկնություններում արտահայտվող թվերի խորհրդարանությանը և հատկապես փաստ թվին, որպես կապարյալ թվի: Միջնադարյան խորհրդարանությամբ՝ փաստ կապարյալ թիվ է համարվում ոչ միայն այն պարբանով, որ միավորների լրումն էր, այլև կազմված էր առաջին չորս միավորների գումարից: Այսինքն, ինչպես որ չորսը խորհրդանշում է աշխարհաստեղծ չորս փարբերը, այնպես էլ փաստ հավասար է առաջին չորս թվերի գումարին՝ $1+2+3+4$:

Նեց խորանների, այդ թվում և վաղ շրջանի ընդհանուր քրիստոնեական, օրինակով ցույց է տրվում, թե փաստ նման այլաբանական մեկնությունը ինչպես է պայմանավորվել փաստ խորանների համաբարբառային հերկյալ կառուցվածքը: Նախ ներկայացվում են ավերարանական այն դրվագները, որոնք կան չորս Ավերարաններում, ապա նրանք, որոնք երեք Ավերարաններում են, այնուհետև՝ Ավերարաններից երկուսում, և, վերջապես, այն դրվագները, որոնք չորս Ավերարաններից միայն որևէ մեկում են հիշվում: Նման գուգորդման մեջ խորանների ընդհանուր թիվը պետք է լիներ փաստերկուսը, սակայն էվանգելիստիստ համաբարբառային այս շարքից դուրս է թողել «Մարկոս-Ղուկաս-Նովիանես» և «Մարկոս-Նովիանես» գուգորդումները, այլապես խորանների թիվը փաստ փոխարեն կլիներ փաստերկուսը: Սա մի բնորոշ օրինակ է այն իրողության, թե ինչպես միջնադարյան այլաբանական մտածողության շրջանակում թվերն են թելադրել կյուրթի ներկայացման կառուցվածքը և վերլուծությունը:

Մինչ մեկնությունների բուն բնագրերը ներկայացնելը, հնարագործը նախ բերում է փաստ խորաններից յուրաքանչյուրի խորանագարդերի բացատրությունները՝ համաձայն միջնադարյան մեկնությունների: Այսպիսով, այսօր ոչ թե փաստերեք մեկնությունների բնագրերում առկա բացատրություններն են ներկայացվում մեկնություն առ մեկնություն, այլ հսկառակը՝ յուրաքանչյուր խորանի ներքո բերվում է թե՛ այդ խորանին և թե՛ նրանում առկա խորանագարդերի մասին փաստերկու մեկնություններից յուրաքանչյուրում եղած բացատրությունները:

Ընորհիվ նման մտքեցման, փաստ խորաններից յուրաքանչյուրի միջոցով ներկայացվում է փաստերեք մեկնությունների՝ փվյալ խորանին նվիրված բացատրությունների համահավաք վերաշարադրանքը: Ուր յուրաքանչյուր բացատրության դիմաց կշվում է, թե այն մեկնություններից որում է հիշվում:

Քանի որ խորանաթերթերից ամեն մեկը կազմված է փարբեր պարկերներից, ուստի խորանների մեկնությունների այդ բացատրությունները կարևորվում են ոչ միայն խորանների, այլև ընդհանուր պարկերագրության շրջանակում, քանի որ նույն այդ մտքիվները հանդես են գալիս թեմաթիկ այլ պարկերներում, ինչպես նաև մեկնաբանվում ավերարանական և բնագիտական այլաբան մեկնություններում: Ահա այս պարբանով՝ Վիգեն Ղազարյանի աշխարհափրությամբ հրատարակված «Մեկնութիւն խորանաց» աշխատանքը կարևորվում է ոչ միայն խորանների բացատրության ու վերջինիս հեր կապված արվեստաբանական և գեղագիտական խնդիրների, այլև միջնադարյան գրականության և մշակույթի մի շարք գիտակարգերի ուսումնասիրության փեսանկյունից:

ԳԻՏԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

ՈՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՆԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Նոկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ, իր աշխարանքը սկսեց Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը նվիրված միջազգային գիտաժողովը:

Ե դարում, Տայոց Գրերի Գյուրից անմիջապես հետո, հայ թարգմանիչները ձեռնամուխ եղան Սուրբ Գրքի հայերեն թարգմանությանը, որ հիրավի համարվում է «թարգմանությունների թագուհի»: Տայոց Գրերի Գյուրի 1600-ամյա հորեյլանական րոնակարարությունների շրջանակում կազմակերպված այս գիտաժողովին մասնակցում են Տայասարանի, ինչպես նաև ԱՄՆ և նվորպական մի շարք հեղինակավոր համալսարանների մեկ րասնյակից ավելի գիտնականներ:

Տերունական աղոթքից և Մայր Աթոռի միաբան ու գիտաժողովի կազմակերպիչ Տ. Ահան վրդ. Նովհաննիսյանի ողջույնի խոսքից հետո գիտաժողովի մասնակիցներին իր օրհնությունը րվեց Ամենայն Տայոց Տայրապետը՝ ասելով. «Մեզ համար հոգու առանձնակի խնդություն է Տայ Գրի 1600-ամյա հորեյլանի առիթով Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը և հայ հոգևոր գրական ժառանգությանը նվիրված միջազգային այս գիտաժողովի բացումը Սուրբ Էջմիածնի հարկի ներքո:

Մեր ժողովրդի քրիստոնեական կյանքի ու պարսմության ակրածան մասն է կազմում այրբնական Տայ Գիրը, որն սրևդծվեց Աստվածաշունչը հայերենով ուսուցանելու նպատակով: Այդ մեծ նպատակի նախանշանները՝ Մահակ Դարթն Կաթողիկոսը, Մաշտոց Աարդապետը և նրանց համամիտ ու գործակից Առանչապուհ թագավորը, ջանքեր ներդրեցին աղոթքով ու այն հավատով, որ մայրենի լեզվով Աարծոն հոսքը առավել լսելի դառնալով ժողովրդին, գրվելով սրբերում ու հոգիներում՝ օրհնությանը է լցնելու նրա կյանքը: Արդարև, հավատի յույր առաքորեն սիրովելով՝ աստվածնակաչ հոգու ակհամար ու ակցին պրոտիներ պարզեց հայոց կյանքին՝ աստվածային շնորհի և օրհնություն դարձավ ոսկե դարյան այդ օրերից ի վեր: Սկզբնավորվեց ու ակընդմեջ ժառանգակառությանը 16 դարերի մեջ աղոթքով ու ակնանձիր ջանքով սրևդծվեց հարուստ գրական ժառանգություն՝ ակիական և թարգմանական, գիտական ու գեղարվեստական:

Գիրն ու դարությունը մեր ժողովրդի համար դարձան նախապարհ նախ և առաջ Աարծոն հոսքին ոսկեղիր լինելու, Աարծուն նախակառ ու հավատի մեջ հաստատուն մնալու: Բնական է, որ Աստվածաշունչը, ինչպես ակնևոր քրիստոնյա աշխարհում, հայ իրականության մեջ ակնևաշարև էր ընդօրհնակվում և հերտ նակ՝ րպագրվում՝ ջանալով ակիսաթար պահպանել Ե դարից ակակեղված հայն-

րեն «Թագուհի թարգմանության» Ազգամշակույթի Մարչյանը: Տափարի լույսը, որ առաջարկում է առաջնություն էր մեկնողական, ջարդագողական, վարքագրական, պարմանական ու բնագիտական-նախադասական, այլև՝ գեղարվեստական գրականությունից, մեր ժողովրդի համար եղած էսան փրկության առաջադր՝ իր դժվարին պարմության փորձությունների մեջ ապրելու և վերածնվելու: Տայրենիքում ապրեց մեր ժողովուրդը, թե հայաժանրներից ափովեց այլ երկրներում, իր հավատով միշտ միասնական մեաց հայության հոգին, մեաց իր հողի հեր ու աւարածասեր հայրերի, մեաց փրկության հույսի ու հավատի հեր:

Ենզ համար մեծ ուրախություն է, որ գիտաժողովը սեղրադատելով Ազգամշակույթի Մարչյանի հայերեն թարգմանության հարցերին, ինչպես և՛ մեր ժողովրդի հոգեղոր գրական ժառանգության արարեր ինդիքներին, մասնավորելով գիտական առումով դեռևս չուսարանված կողմերն այդ ժառանգության, մեկ ակզամ ևս կարևորելու է ևրս հոգեղոր ու մշակութային արժեքն ու րեղոր համաշխարհային մշակույթի ու պարմության մեջ: Եներ հավատում ենք, որ այս գիտաժողովի հրավիրումը հավատի ևորդության արիթ ու իրախույս է դատելու և դատելու է հրավեր՝ Ազգամշակույթի Մարչյանը սեղրարար պսիպակելու և սերունդներին փոխակելու:

Գիտաժողովի սիրելի մասնակիցներ, րարի գալուստը ենք մաղթում ձեզ և հաջողություններ՝ գիտաժողովի աշխարակներին: Գիտաժողովի կազմակերպման համար Տայրապետական Եներ գեղարարներ ենք բերում Տոգելտրի Տ. Ասիան վարդապետ Տոգիաննիսյանին և ևրս բոլոր աշակիցներին:

Տայցելով րարխոսությունը Սուրբ Սահակ և Սուրբ Մաշտոց մեր մեծ Ոստոցապետների, ոգեկոչելով սեղնաի հիշարարը հայ գրի ու դպրության կիրարարների, մեր գրական ժառանգությունը կերարողների, աղոթք ենք րարձրակում առ Փրկիչ Տերը մեր, որ Իր օրեկության ենքքո պսիպակի աշխարիը համայն և ազգս հայոց ու պարգևի հավատի, հոգու և մրքի ևոր արգասիքներ: Աղոթում ենք, որ Տերը րաջատող պսիպակի բոլորիդ, շնորհներով գարդարյայ և օրեկի գիտական Ձեր ջակները՝ ի սեր մարդկակ ու Իր Սուրբ Անվան:

Ողջ լերուք ի Տեր, գորակակ շնորհօր Սուրբ Տոգոյն և յակեր օրեկակ ի Ենեջ. ամեն»:

Գիտաժողովի առաջին օրը գեկուցումներով հանդես եկան Օրաֆորդի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Թոմսոնը՝ «Սուրբ Ներսես Լամբրոնակին և Տայրության գիրքը», Ժենի համալսարանի պրոֆեսոր Բեռնարդ Ուրինը՝ «Տոգիաննե Իմաստարներ և աւրվածաշեյան ինդիքներ. Սուրբ Գրքի հայկական և վրացական մեկնությունները», Մարենտդարանի գիտաշխարողներ Մանես Ժիրինյանը՝ «Սուրբգրային վկայակոչումները վաղ շրջանի հայ մարենագրության մեջ», և Մուսանես Գրիգորյանը՝ «Աւրվածաշեյի հայ միջևաղարյան մեկնությունները» թեմաներով:

Գիտաժողովի երկրորդ օրը գեկուցումներով հանդես եկան Գերմանիայի Տյուրինգենի համալսարանի պրոֆ. Գարրիելյա Վինկլերը՝ «Աւրվածաշեյան վկայակոչումների աւար-

վաճառանական ազդեցությունը Գրիգոր Լուսավորչի կարգավորած Պապարագում», Ֆրանսիայից Նայր Շարլ Աննուն՝ «Ավագ Ուրբաթին Քրիստոսի գերեզման դրվելու արարողությանը կապարժող սաղմոսների քննություն», Կանադայի Մակգիլ Տամայսարանի պրոֆ. Մանուել Ջինրաշյանը՝ «Մենեղոզ գրքի» հայերեն թարգմանության բնագիրը», Երուսաղեմի Եբրայական համալսարանի պրոֆ. Մայքլ Մթոունը՝ «Պարականոն գրքերը և հայկական ավանդությունը», նույն համալսարանի դասախոս փիլ. Նիքա Մթոունը՝ «Գրախարհ չորս գեղերը հայկական մանրանկարչության մեջ», և Նյու Յորքի Ս. Ներսես ճեմարանի դասախոս Տ. Վահան վրդ. Նովհաննիսյանը՝ «Տանգիստ Երանելույն Յովհաննու» գործի հայկական խմբագրությունը և նրա հարաբերությունը «Գործք Յովհաննու» պարականոն գրությանը» թեմաներով:

Նիսիների ավարտին զիպաժողովի մասնակիցները ներկա գրնվեցին երեկոյան ժամերգությանը:

Գիպաժողովի երկրորդ օրը զեկուցումներով հանդես եկան ԱՄՆ-ից դոկտ. Ջոզեֆ Ալեքսանյանը՝ «Գործք առաքելոց»-ի զբարբար բնագիրը և նրա կարևորությունը Նոր Կրակարանի բնական բնագրի պարբասարման համար», Կանադայից Կլոդ Քոքսը՝ «Տոր»-ի հայկական բնական բնագիրը», Մալբենադարանի զիպաշխարհող, «Մալբենադարանի բարեկամներ» հիմնադրամի գործադիր տնօրեն Արշակ Բանուշյանը՝ «Եվթաղյան տնայումները Նոր Կրակարանի հնագույն օրինակներում», արվեստարան Վիգեն Ղազարյանը՝ «Խորանների մեկնությունը Աստվածաշնչի ձեռագրերում» թեմաներով:

Գիպաժողովը փակվեց Նայր Վահանի խոսքով: Նայր Սուրբն իր երախտագիտությունը հայրենց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսին՝ զիպաժողովի կազմակերպման աջակցելու, և զիպնականներին՝ մասնակցության համար: Նա հույս հայրենց, որ նման զիպաժողովներ պարբերաբար կկազմակերպվեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո և կհամախմբեն հայազեպներին:

Գիպաժողովի մասնակիցները այնուհետև մեկնեցին Օշական, ուր մասնակցեցին Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվող Սուրբ և Անճահ Պապարագին: Սրբազան Պապարագից հետո ներկա գրնվեցին եկեղեցու բակում զեպեղված խաչքար-տափերի օրհնության արարողությանը:

Նովեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց հովեմբերի 6-8-ը Մայր Աթոռում կայացած Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը նվիրված միջազգային զիպաժողովի մասնակիցներին՝ զիպաժողովի կազմակերպիչ Տ. Վահան վրդ. Նովհաննիսյանի ուղեկցությամբ:

Ողջունելով զիպաժողովի մասնակիցներին՝ Տայոց Տայրապետը բարձրորեն զեհապեց զիպնականների նպաստը հայագիտությանը: Նորին Սրբությունը նշեց նաև, որ նմանապիպ հանդիպումներն այսուհետ ավելի հաճախ պետք է կազմակերպվեն Սուրբ Էջմիածնում: *«Տասնամյակներ շարունակ զրկված ենք եղել սեպանի զիպնակսաների հեպ շիպելու, երանց զիպնիքներից ու զիպական փորձառությունից օգտվելու հնարավորությունից: ...Ձեր ներկայությունն այստեղ վարտահարար իր դրական*

անդրադարձն է ունենում ինչպես մեր հավատարմոր զավակաց, այնպես և մեր երիտասարդ հոգևորականների կյանքում»,- ասաց Նորին Սրբությունը:

Գիրևականների անունից Ամենայն Տայոց Կաթողիկոսին՝ օրհնության, բարձր հովանավորության և Մայր Աթոռում հյուրընկալության համար, որդիական իր երախտագիտությունը հայտնեց Վահան Տայր Սուրբը:

Տանդիպման անդրադարձ եղավ նաև երիտասարդ միաբանների ուսմանը: Նշվեց, որ ավելի քան քսան երիտասարդ եկեղեցականներ ուսանում են ԱՄՆ-ի և Եվրոպայի փարբեր համալսարաններում, իսկ հինգ միաբաններ, համայնելով իրենց կրթությունը Եվրոպայի փարբեր բարձրագույն կրթական հաստատություններում, արդեն իրենց ծառայությունն են բերում Մայր Աթոռի համալսարանի կառույցներում:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԻՏԱԼԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՐԵՐԸ ԵՎ Ս. ՂԱԶԱՐԻ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՅՈՒՅԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՅԱՍԱՆՈՒՄ

Տոկոսներին 5-ից նոյեմբերի 5-ը հայաստանում անցկացվեցին հայ-իսրայելական բարեկամության օրեր՝ բարձր հովանավորությամբ հայաստանի հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Իսրայիլայի հանրապետության նախագահ Կառլո Կոժնիո Չամչիի:

Սկսվող հանդիսությունների նախերգանքը դարձավ հոկտեմբերի 2-ին Այ. Մայնեդիարյանի անվան օպերայի և բալետի Ազգային ակադեմիական թատրոնում Զուգեպպե Վերդիի «Տրավիատա» օպերայի կատարումը:

Հայ-իսրայելական բարեկամության օրերի հանդիսավոր բացումը փեղի ունեցավ հոկտեմբերի 5-ին հայաստանի ազգային պարկերասրահում: Միջոցառումների շարքի կազմակերպիչներին և մասնակիցներին հայրապետական օրհնության իր խոսքը ուղղեց Ն.Մ.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը: Կորին Սրբությունը բարձր գնահատելով բարեկամության այս օրերի ընթացիկ նպաստը հայ-իսրայելական դարավոր կապերի և երկու երկրների փոխհարաբերությունների առավել սերտացմանը և ամրապնդմանը՝ ի մասնավորի ասաց. «Նոգու ատանձևակի խեղությունք մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից գալիս ենք ողջունելու հայ-իսրայելական բարեկամության օրերի ծրագիրը, որն իրականացվում է հայաստանի հանրապետության և Իսրայիլայի հանրապետության նախագահների բարձր հովանավորությամբ: Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում այս զեղեցիկ նախաձեռնության և ընդարձակ ծրագրի բարեխաղերին, կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին:

Նազույն մեր երկու ժողովուրդների դարավոր բարեկամության դրսևորման և ամրապնդման և ուղղված միջոցառումները մեկ ամիս շարունակ տոնականությամբ են համակելու: Երեսներ և մեր մշակութասեր հասարակությամբ:

Չրապի, դարերի խորթից են գալիս առևտրություններն ու բարեկամությունը թրիստոնյա մեր ժողովուրդների: Ընկերական ու տնտեսական կապերին ժամանակի հետ զուգարվել են ու լայնորեն զարգացել մասնավոր մշակութային սերտ հարաբերությունները՝ թողնելով թանկ ու կիրական հիշատակներ: Հայրենի է, որ հայաստանի համար դժվարին ժամանակներում մեր ժողովրդի գալակները հանգրվանել են ևս և Իսրայիլայի հողում, զբաղվել արհեստներով, վաճառականությամբ, կառավարությամբ ու կազմակերպությամբ, ինչի մասին տեղեկություններ են պահպանվել հայկական ձեռագրերի հիշատակարաններում: 12-13-րդ դարերից հայկական համայնքներ են եղել Տոմսում, Միլանում, Ֆլորենցիայում, Լիվոռնոյում, Վենեթիկոյում, Պիզայում և այլուր: Իսրայելական մեծ կապիտալիզմի և քաղաքների տնտեսական աշխույժ կապեր են ունեցել Կիլիկյան հայաստանի հետ, հայ վաճառականների հետ՝ մինչև Իրան ու Նեղիկաստան: Այս տնտեսական առևտրությունները մերձեցրել են մեր ժողովուրդներին և փոխադարձաբար

հարստացրել: Մեր ժողովրդին իր բարձր զարգացած արվեստով, մշակույթով ու գիտությանը մշտապես հետաքրքրել է Իրախան, ուր այցելել և ուսանել են եկեղեցական ու աշխարհական շատ նշանավոր հայորդիք: Իրախական հողից է սկիզբ առնում հայ տպագրությունը, որը, ինչպես բոլոր ժողովուրդների կյանքում, նշանակալի իրադարձություն էր հայտնի սեան հայոց պարմության մեջ: Երբ Տայասարներ հեծում էր օտարի անողոր լծի ներքո, Վենետիկում լույս տեսավ հայերեն առաջին տպագիր գիրքը, Տոմսն ու Լիվոռենո դարձան հայ տպագրության օրրաններ: Հայ մշակույթին անտիսարիենի վաստակ է մատուցել Վենետիկի Մխիթարյան միաբանությունը՝ 300-ամյա հակայածամյա գիրական ժառանգությամբ: Մխիթարյան գիտնական միաբանների համաարևդությունը միշտ լուսավորելու է հայ մշակույթի երկիները և երախարագիտությամբ է հիշվելու մեր ժողովրդի հոգում: Սոր ժամանակներում առավել ընդարձակ են հայ-իրախական մշակութային առնչությունները՝ օպերայի, թատերական և կինոարվեստում, ճարտարապետության, հոգևոր ու աշխարհիկ երաժշտության, գեղարվեստի և այլ ասպարեզներում: Եվ Մենք հավարում ենք, որ հայ-իրախական օրերը մեծ խանդավառություն են պարգևելու միջոցառումների մասնակիցներին և նոր լիցք ու զորություն են հաղորդելու մեր ժողովուրդների բարեկամությանը և մեր պետությունների հարաբերություններին:

Աղոթք ենք բարձրացնում երկինք, որ Բարձրյալ Աստուծոյ խաղաղության մեջ պահպանի աշխարհը համայն և օրհնի ժողովուրդների միջև բարեկամության ճանապարհները: Բարի սկիզբ ու ընթացք ենք մաղթում Տայասարանում հայ-իրախական բարեկամության օրերին և արեղծագործական հաջողություններ՝ մասնակից արվեստագետներին:

Ճնորք և սեր մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենակենսուն, ամեն:

Այնուհետև ողջույնի խոսքով հավաքվածներին դիմեց ՀՀ Արքաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը՝ ասելով. «Ես կարծում եմ, որ սա լավագույն արվասիպություն էր և դրսերումն է հայ-իրախական և անցյալի խորը կապերի ու այսօր առկա միջպեղական հարաբերությունների»:

Իրախական կառավարությունը ներկայացնող Իրախայի առնարի նախարար ԱղոյՖո Ուրսուն ասաց. «Մեր դարավոր և ընդհանուր պայմությունը պերք է մեզ օգելի, որպեսզի կարողանանք կերպել ընդհանուր ապագա: Ես վարահ եմ, որ Հայ-իրախական բարեկամության օրերով կնշվի մի շարք կարևոր փուլ մեր երկու երկրների պարմության մեջ»:

Հայ-իրախական բարեկամության օրերի հանդիսավոր բացմանը զուգընթաց րեղի ունեցավ նաև «Հայ Վենետիկ. Սուրբ Ղազարի գանձերը» ցուցահանդեսի բացումը: Հայ-իրախական կապերի շրջագծում ներկայացնելով Վենետիկի Մխիթարյան միաբանության գործունեությունը՝ միաբանության ընդհանուր աբբահայր Եղիա ժայրագույն վարդապետ Քիլաղայանը ասաց. «Բոլորս էլ գիբենք, թե հայերի համար ինչ է նշանակում Իրախան թե՛ իբրև երկիր և թե՛ իբրև հայկական հիշարակների օրրան: Այսօր իրախահայերի համար ինչ է նշանակում Տայասարանը: Իրախացիները, իբենք էլ լինելով մշակութային ժողովուրդ,

հայրնաբերեցին Նայաստանը մշակույթի ճանապարհով, հայրնաբերեցին Պապի այցելությամբ: Այսօր ժամանակն է, որ Իրախիան հայրնաբերի Նայաստանը բնաշխարհը, հայ ժրպատ, սրբազան, սրբազան, սրբազան ժողովուրդը, հայ մշակը»:

Նույն օրը Խնկո Ապր անվան գրադարանում տեղի ունեցավ «Նայերն Իրախիայում. Իրախիայի հայ համայնքն իր մասին» խորագրված հանդիպումը Իրախիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում Միլանի Նայ Տան գանձապահ Արմեն Ջորջո Բեզդեմիրյանը Նայաստանին նվիրեց իր հոր՝ Միրան Բեզդեմիրյանի՝ ժամանակին Նայաստանի համար հավաքած 500 կտոր գրականությունը:

Արամ Խաչատրյան համերգադաստիում երեկոյան Նայաստանի ֆիլիհարմոնիկ նվագախմբի (գեղ. ղեկավար՝ Է. Թովչյան) կատարմամբ տեղի ունեցավ իրախական սիմֆոնիկ երաժշտությանը նվիրված համերգ, որի ընթացքում հնչեցին հարվածներ «Արդիի «Նաբոկո», «Գող կաչաղակ», Ռոսինիի «Վիլիելմո Տել» և մի շարք այլ օպերաներից:

Բոլոր այս, ինչպես նաև հայ-իրախական փոփոխական հարաբերություններին նվիրված գործարար համաժողովները ու քննարկումները փնեցին մեկ ամիս, որի ընթացքում կազմակերպվեց 36 միջոցառում:

«Մոսկվա» կինոթատրոնում երկու շաբաթ ներկայացվեցին համաշխարհային կինոյի հայրենի վարպետներ Պաուլո և Վիկտորիո Տավիանի եղբայրների ֆիլմերը: Ցուցադրությանը ներկա էին հանրաժանոր բեմադրիչները:

Իրախիայի վերջին 100-ամյակի պատմությունը ներկայացվեց ֆորենտագի Ալինար եղբայրների կատարած լուսանկարների ցուցահանդեսով:

Բարեկամության այս օրերի շրջանակում չէր մոռացվել անգամ իրախական խոհանոցը, որին էր նվիրված իրախական «Կոնգրես» հյուրանոցում կազմակերպված «Իրախական խոհանոցի 50 փարին» լուսանկարչական ցուցահանդեսը, որին ներկա էր այդ հասարակության նախագահ Ջուզեպպե Դել Օստե:

Երեսնի պերական համալսարանում, Վ. Բրյուսովի անվան պերական լեզվագիտական համալսարանում և Իրախիայի դեսպանությունում կազմակերպվեցին իրախերենի և իրախական գրականությանը նվիրված գիտաժողովներ և զեկուցումներ:

Իրախիայի մշակույթը, պատմությունը և փոփոխությունը ներկայացնող բոլոր այս միջոցառումների կողքին բնականաբար առանձնակի տեղ էր փրկված հայ-իրախական կապերին և Իրախիայի հայկական հիշատակներին:

Այս առումով խոստով էր հարկապես Ս. Ղազարի հոգևոր-մշակութային արժեքների ցուցահանդեսը, որն, ինչպես ասացինք, բացվեց Ազգային պարկերասարահում, որտեղ հայ միջնադարյան մշակույթի արժեքների կողքին ցուցադրվում էին նաև այն գործերը, որոնք սրբազան էին Ս. Ղազարում և Իրախիայում: Այստեղ առանձին մի բաժնով ներկայացված էին Մխիթարյան հրատարակությունները, որոնք իրենց փորագրանկարներով և շքեղ ձևավորմամբ մի նոր էջ բացեցին 18-19-րդ դարերի հայ գրքարվեստի պատմության մեջ:

Նայ նկարչության պատմության ուրույն մի էջը կարելի է համարել Մխիթարյան միջավայրում իրախացի նկարիչների կողմից հայկական թեմատիկայով սրբազան գործերը: Այս պարկերների բովանդակությունը Ս. Ղազարի վանականները ներկայացրել են իրախացի նկարիչներին, և վերջիններս էլ այդ թեմատիկայով սրբազան են համապատասխան

նկարներ, որոնք վերաբերվում են ազգային-հոգևոր կյանքի նշանակալից դրվագներին Տայոց Դարձից մինչև Գրեքի Գյուրը և Վարդանանց ճակատամարտը: Այս կրավներն ու փորագրանկարները երկու մշակույթների յուրօրինակ միաձուլումն են, որտեղ հայկական թեմաները ներկայացված են իրապացի նկարիչների ընկալմամբ և ժամանակի կրասիցիս-տրական արվեստի սկզբունքներով:

Մեծ հեղափոխությամբ դիտվեց նաև Երևանի քաղաքապետարանում բացված «Տայկական հիշարարկները Իրալիայում» ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին Իրալիայի տարբեր քաղաքների հայկական հիշարարկները սկսած հոռոմեական կայսրության շրջանից մինչև Իրալիայի հայկական նկղեցիները և կրթամշակութային հաստատությունները:

Ողջ Իրալիայով շրջելով հայկական այս հիշարարկների հեղբերով, դրանք գեղարվեստական մեծ վարպետությամբ նկարել է կանադահայ նկարիչ Նոյր Բագեն: Տայերի ներկայության հեր կապված վայրերի ցանկն էլ կազմել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամներից Ն. Տարություն վարդապետ Պարիկյանը: Անհրաժեշտ է նշել, որ Տայր Տարությունը ընդհանրապես մեծ մասնակցություն է ունեցել հայ-իսրայական օրերի պատմա-մշակութային մասի կազմակերպման գործում:


Իրալիայում հայ հոգևոր ավանդների ինքնօրինակ մի արտահայտությունն է Ս. Վազարի նկղեցական երգեցողությունը: Ինչպես նշում են Մխիթարյան հայրերը, այստեղ վանական մի սերնդից մյուսին է փոխանցվել Պատմական Տայաստանից Մխիթար Սեբաստացու բերած ձայննդանակները: որոնց գրառման և նուրագրման հարցերով երկար տարիներ զբաղվում է Մխիթարյան հայրերից Վրթանես Ուլոտոյանը: Վենետիկում գրելով հայ մշակույթի վավերագրման կենտրոնի ջանքերով վերջերս թողարկվեց մի ձայնասկավառակ, որն ընդգրկում է Մեծի Պատից շրջանի Ապաշխարության շարականները Տայր Վրթանեսի կատարմամբ:

Տայ-իսրայական օրերի շրջանակում հոկտեմբերի 8-ին Առևտ Բարաջանյանի անվան համերգատրահոմ տեղի ունեցավ այս ձայնասկավառակի շնորհանդեսը, որի ընթացքում հիշյալ շարականների կատարմամբ հանդես եկավ Տայր Վրթանեսը: Տայ հոգևոր երաժշտությանը նվիրված նման գործերի հրատարակության կարևորության մասին խոսեց Փարիզի հայկական հոգևոր երգի կենտրոնի «ԱԿՆ» երգչախմբի ղեկավար Արամ Քերովյանը: Վենետիկի հայ մշակույթի վավերագրման կենտրոնի ղեկավար Մինաս Լուրյանն էլ ներկայացրեց կենտրոնի աշխատանքները:

Տայ-իսրայական պատմա-մշակութային կապերի գիտատեսական բնությունը դարձավ Տայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայում կազմակերպված վենետիկյան երկօրյա ընթերցումները: Գիտաժողովի ընթացքում առանձին բաժանումներներում ներկայացվեցին այդ կապերը գրականության, ճարտարապետության, քանդակագործության, նկարչության և երաժշտության բնագավառներում:



ԵՐԵՅՈՒՆՆԱԿԵՑ ԽԱՅԶԱԳԻՆՆԵՐԻՆ ՕՐՆԱՊԻՏԱՅԻՆ
ԱՐԿԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՆՑԱՊԻՏ



ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՈՆԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Տոկերների 8-ին Օշականում առանձնակի հանդիսավորությամբ փոխանակեց Ս. Թարգմանչաց փոքր:

Տայոց Գրերի Գյուրի 1600-ամյակի առիթով Տայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արագածուրնի թեմի և ՏՄ Մշակույթի և երիտասարդության հարցերով նախարարության համարեղ ջանքերով կազմակերպվել էր ուխտագնացություն Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի: Վաղ առավոտյան Տայաստանյան թեմների, երիտասարդական միությունների, բուհերի և հոգևոր հասարակությունների բազմաթիվ երիտասարդներ համախմբվել էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ս. Տրդատ Բաց Խորանի առջև: Այսօրեղից ուխտավորները 36 բազմամարդ խմբերով, հոգևորականների առաջնորդությամբ, հոգևոր և հայրենասիրական երգերի հոգեզմայլ երգեցողությամբ սկսեցին իրենց թայլերթը դեպի Օշական: Յուրաքանչյուր խումբ իր հեղ փանում էր Տայոց Այբուրենի զարդարուն մեկ փառ, որոնք պերք է զեպրեղվին Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հարևանությամբ փեղադրված խաչքար-փառերի կողքին:

Մինչ ուխտավորների թայլերթը կհասներ Օշական, այնուրեղ մեկնեց նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսը: Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու առջև Նորին Մերությանը դիմավորեցին թեմի հոգևորականները՝ Արագածուրնի թեմի առաջնորդական փեղապահ Տ. Թորգոմ վրդ. Տոնիկյանի առաջնորդությամբ, Արագածուրնի մարզպետ Տրաչ Գյոզալյանը, Աշտարակի թաղաքապետ Ա. Ղալայանը, մարզային իշխանությունների այլ ներկայացուցիչներ ու պաշտոնյաներ: «Տրաշափառ»-ի երգեցողության ներքո Տայոց Տայրապետը առաջնորդվեց եկեղեցի, ուր մափուցվեց Սուրբ և անմահ Պափարագ: Պափարագիչ էր Արարափյան Տայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կոռյանը: Պափարագին իր մասնակցությունը բերեցին նաև ՏՄ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը և կառավարության մի շարք անդամներ: Տրեթացս Ս. Պափարագի Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանն ընթերցեց Տայոց Գրերի Գյուրի 1600-ամյակի առիթով Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի սրուափառ կոնդակը:

Պափարագի ողջ ընթացքին անընդափառ հոսքով ժամանող ուխտավորները և բարեպաշտ ժողովուրդը իջնում էին Ս. Մեսրոպի շիրմին ճնրադրելու և հայցելու Մրրի բարեխոսությունն ու օրինությունը:

Տավարտ Սուրբ Պափարագի հոգևորականների թափորն Ամենայն Տայոց Կաթողիկոսի գլխավորությամբ կափարեց եկեղեցու բակում փեղադրված 36 խաչքար-փառերի օրինության մասնավոր արարողությունը: Տայոց Այբուրենի բոլոր փառերի պափկերմամբ այս

յուրօրինակ խաչքարերի սրբոճմանը բանդակագործ Ռուբեն Նալբանդյանը ձեռնամուխ էր եղել ավելի քան երկու տարի առաջ՝ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ:


Խաչքար-տառերի օրհնության արարողությունից հետո Նորին Սրբությունն իր պատգամն ուղղեց բարեպաշտ ժողովրդին: «Միրևյի հայրդրդիներ, ձեզ հետ միասին եկել ենք ևսիրական սրբավայր՝ խոնարհվելու շիրիմին Ս. Մեսրոպ Մաշտոցի, հարդրդ դատնալու հայոց գրերի խորին խորհրդին, անհաս ու անսկիզբ խորհրդին, որ դարերի մեջ եղել է մեզ համար այնկոծյալ ծովում փարոս լուսավոր: 1600 տարիներ առաջ Աստված մեր ժողովրդին պարգևեց 36 կշանագրեր: Մեր լուսամիտ սուրբ վարդապետ Մեսրոպ Մաշտոցը աստվածապարզև խորհուրդը արձանագրեց դարերի ու սերունդների համար, արձանագրեց որպես պարզամ: ...Այս ճշմարիտ խորհուրդը դարերի մեջ մենք դարձրինք մեր կյանքի կշանաքան և ապրեցինք այն Զրիստոսով, Նրա սիրո ու միասնության լույս պարզամներով:

...Հայցենք Աստծոց, որ զորացնի ամենքիս՝ մեր հայրերի ուղենշած ճանապարհը քայլելու հայրենակերտումի և եկեղեցաշինության սուրբ զգացումներով, անմնացորդ ևսիրումով, որպեսզի հայոց գալիքը լինի միշտ լուսավորված, պարծառ և միշտ ժպտացող մեր ժողովրդի զավակներին բոլոր դարերի ընթացքում»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայրենեց ևսև ՏՏ վարչապետին այն բոլոր միջոցառումների համար, որ կազմակերպվեցին ՏՏ կառավարության կողմից՝ փառավորապես փոխախմբելու Հայոց Գրերի Գյուլի 1600-ամյակը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆՄՈՎԱԿԱՐԳ



Ս. ԵՐԵՐՈՎՈՒԹՅԱՆ ԵՎԵՂԵՅՈՒ ՕՍՏՆԱՆ ԱՐԿԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅԳՈՒՄ





ՆՈՐԱՑՍ Ա. ԵՐԿՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎԵՂԵՅԻՆ

ՕԾՎԵՅ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ Ս. ԵՐՐՈՐԳՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 20-ին, ծնունդի և Մ.Ս.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի, օծվեց Երևանի Նարավ-արևմտյան թաղամասի նորակառույց Ս. Երրորդություն եկեղեցին: 2001 թ. հունիսի 7-ին Ամենայն Տայոց Տայրապետի հանդիսապետությամբ կախարվել էր եկեղեցու հիմնարկների, իսկ 2004 թ. նոյեմբերի 9-ին՝ խաչերի օծման արարողությունները: Եկեղեցին կառուցվել է ազգային բարերար փիլ. Լուիզ Սիմոն Մանուկյանի ազնիվ բարերարությամբ: Նորակառույց եկեղեցու ճարտարապետն է լուսահողի Բաղդասար Արզումանյանը:

«Տրաշափառ»-ի երգեցողության ներքո, եկեղեցականների հանդիսավոր թափոռի ուղեկցությամբ, իր օրհնությունը բաշխելով հավաքացյալ ժողովրդին, Նորին Սրբությունը մուրաբ գործեց նորակառույց փառաբան: Եպիսկոպոսաց դասի հեղ մեկտեղ Տայոց Տայրապետ Սրբալույս Մյուռոնով օծեց եկեղեցու Սուրբ Սեղանը, ապա Սրբազաններն օծեցին եկեղեցու Ս. Խորանի սյուները և Մկրտության ավազանը: Եկեղեցու մյուս սյուները դեռ ևս-խորդ օրը, երկնյան ժամերգությունից առաջ, օծել էր Արարարյան Տայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կոնյանը՝ թեմի հոգևոր դասի հեղ մեկտեղ:

Նավարար արարողության խոսուներամ հավաքացյալներին դիմեց Նավասարդ Սրբազանը. «Եկեղեցի կառուցելը աստվածահաճո և սրբազան, նվիրական գործ է, բայց եկեղեցին պահելը ամենքիդ գործն է: Այս եկեղեցին պիտի լինի վկայությունը մեր երկհազարամյա հավաքի գոյության: Եկեղեցին պահելով՝ մենք ինքներս եկեղեցի ենք դառնում, և այդ եկեղեցու կենդանարար գոյությունը կապված է մեր անսասան հավաքի հետ: Մեր Աստված Տայրապետը սկսել է աննախնայաբար եկեղեցաշինության մի գործընթաց, որով ամեն մեկ վայրում աստվածային երբեցանքով աղոթքի փուն է կառուցվում, որպեսզի երկինքը խոսեցնենք մեր մեջ այդ աղոթքներում և մեր աղոթքների մեջ ևս հիշենք մեր Տայրապետին», - ասաց Սրբազանը՝ հայցելով Նորին Սրբության օրհնությունը բարևալաշար ժողովրդին:

«Գոհարանակալան աղոթքը մեր շուրթերին Մենք եկել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնից՝ օրհնելու ձեր հոգևոր ուրախությունը, որ ապրում եք այս պահին սրբազան այս փառաբանի օծման արարողությամբ: Երկար փարիներ, սիրելի բարևալաշար Մեր զավակներ, դուք չունեիք հևարավորությունը ձեր աղոթքի փունե ունենալու Տարավ-արևմտյան այս թաղամասում: Այսօր, գոհություն և փառք Աստուծո, շնորհիվ ձեր գորեղ հավատքի Աստված պարզեց մեզ այս շնորհը, այսօրեղ դեպի երկինք վեր բարձրացնելու նորակառույց Ս. Երրորդություն եկեղեցին:

...Եվ այսօր լուսավոր փառաբան իր դրոները բացել է Մեր հավատավոր զավակաց աթոն, ովքեր վարասարար բանուկ պիտի պահեն այս եկեղեցու ճանապարհը, սիրտի գան այսօրեղ հաղորդվելու նվիրական այս Ս. Սեղանին՝ մեր Տիրոջ մարմնով ու արյամբ: Պիտի գան իրենց հավատքն ու կամքը գործանելու, որպես-

գի օրհնությունն Աստուծո հեղիի հայոց կյանքի վրա, լցվի մեր զավակաց ընտանեկան հարկերից ներս: Այստեղ պիտի գան Մեր զավակները մկրտվելու և ընդունելու Զրիարությանը՝ կենթը հայկականության և իրենց զավակներին Տիրոջ պատվիրանների ու պարգանների մեջ առաջնորդելու, որպեսզի երևան աստուծային սիրով ու նախանձախեղրությանը մեր հայրենի երկիրը: Այստեղ պիտի գան մեր ժողովրդի զավակները ընտանեկան պատկառության ուխտը կատարելու, ամուր ընտանիք հաստատելու սիրո հիմքերի վրա, որով և ամուր պիտի լինի Տայոց պետությունն ու պետականությունը:

...Մենք հավատում ենք, որ շնորհիվ մեր գործը հավատքի, դեպի մեր հայրենի եկիրական սուրբ հավատքն ունեցած հավատարմությանը մենք պիտի կարողանանք վերաբերել 1700-ամյա քրիստոնեական մեր հավատքը պարտաբեր դարձնել հայոց կյանքում: Պիտի կարողանանք մեր հավատքի ամրության մեջ հարազատ զավակները կոչվել մեր հայրերի: Մենք հավատում ենք, որ մեր հավատքը, աստվածասիրությունը, մեր հայրենասիրությունը պիտի գան մեզ գործացնելու, որ ի վիճակի լինենք հեռու վանել մեզանից բոլոր այն օտար, խորթ՝ երևույթները, որոնք որ վրասեզում են մեր հայրենի կյանքը և մեր հոգևոր կյանքը»,-նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:


Վեհափառ Տայրապետը իր գևահարանքը հայրենց եկեղեցու ազնիվ բարերարին՝ պիկին Լուիզ Սիմոն Մանուկյանին, ում առաքաձնոն և ազնվահոգի հանձնատության շնորհիվ հնարավոր եղավ Ա. եկեղեցու կառուցումը: Վեհափառ Տայրապետն իր գոհունակությունը հայրենց հայրենի պետությանը՝ ի դեմս օձմանը ներկա Երևանի բաղաբապետ Երվանդ Զախարյանի՝ եկեղեցաշինության նվիրական գործին մշտապես աջակցելու համար: Վեհափառ Տայրապետը իր մասնավոր գևահարանքը հայրենց Նավասարդ Սրբազանին և թեմի հոգևոր սպասավորներին: Նորին Սրբությունը իր գևահարանքը բերեց եկեղեցու շինարարներին՝ գլխավորությամբ Ա. Եղիկյանի, ինչպես նաև Մալաթիա-Մերաստիա համայնքի թաղապետ Ա. Գրիգորյանին՝ եկեղեցու շինարարական ընթացքին մշտական ուշադրություն ցուցաբերելու համար:

Այնուհետև Ա. Պատարագ մարտեց Արարաբյան Տայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպ. Կճոյանը: Տավարո Պատարագի մասնավոր հոգեհանգստյան արարողություն կատարվեց բարերարի յուսահոգի ձնողների՝ Այնք և Մարի Մանուկյանների, ինչպես նաև եկեղեցու ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի հոգիների հանգստության համար:

Օձման արարողությանը ներկա էին Տ. Ներսես արքեպ. Պողոպալյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպ. Պեպրոսյանը, Մայր Աթոռի ղեկավարապետ Արշակ եպ. Խաչատրյանը, Մայր Աթոռի միաբաններ, եկեղեցու խորանի Աստվածամոր պարկերի նկարիչ Վարուժան Վարդանյանը, հրավիրյալներ և բազմաթիվ հավատացյալներ:



Ս. Ղազար ԲՆԵՂԵՍՏՐՈՒՄԸ, ԱՐԿԱՊՄԱՐՇԱՆԸ, ԸՆԹԵՍՏՈՒՄԸ
ՊԱՐԿՐԱՆՈՒՄԸ, Բ. ՎԵՏՈՒՄԸ, ՏԻՊԱՐԱՆԻՔԸ, ՊԱՐԿՐԱՆԻՔԸ, ԱՐԿԱՐՄԱՐՇԱՆԻՔԸ, ԸՆԹԵՍՏՈՒՄԸ
ՏԻՊ ԵՎ ՏԻՊԱՐԱՆԻՔԸ, ԵՎ ԱՐԿԱՐՄԱՐՇԱՆԻՔԸ, ՊԱՐԿՐԱՆԻՔԸ, ԱՐԿԱՐՄԱՐՇԱՆԻՔԸ,





ՄԵՏԱՍՏՈՒԻ ՆՈՒՆՎՈՐՑ ԻՆ ՂԱԳՐԱՆ ԵՎԵՂԵՑՈՒՆ

ՕԾՎԵՑ ՄԵԾՎԱՄՈՐԻ Ս. ՂԱԶԱՐ ԵԿԵՂԵՅԻՆ

Տոկոսների 22-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի, օծվեց Արմավիրի թեմի Մեծամոր քաղաքի միակ՝ Ս. Ղազար երթակառույց եկեղեցին: Էկեղեցին կառուցվել էր դեռևս 2002 թ. ամերիկաբնակ Կրեյն և Կրիկին Ջավեն և Ազատուհի Դսղեկյանների ազնիվ բարերարությամբ:

Ամենայն Տայոց Կաթողիկոսին և իր շքախմբի անդամներին Արշալույս գյուղի սահմանագլխին դիմավորեցին Արմավիրի մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները՝ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Միոն եպ. Աղամյանի և մարզպետ Ալբերտ Տերոյանի գլխավորությամբ: Ապա ամենքն ուղղվեցին դեպի Մեծամոր, ուր բարձունքի վրա վեր խոյազամ եկեղեցու առջև հավաքված խանդավառված ժողովուրդը, փարեց և երիտասարդ, ծաղիկներով, աղ ու հացով ողջունեցին Ամենայն Տայոց Գարեգին Բ Տայրապետին:

Էկեղեցականների թափոռի ուղեկցությամբ, Տայրապետական իր օրհնությունը բաշխելով ժողովրդին, Նորին Սրբությունն ուղղվեց դեպի Ս. Ղազար եկեղեցի, ուր կատարեց եկեղեցու օծման արարողությունը: Աղոթքների ընթերցմամբ և հոգեգնալ շարականների երգեցողության ներքո Տայոց Տայրապետն օծեց եկեղեցու Սուրբ Սեղանը, ապա Ներսես արքեպ. Գոգապալյանն օծեց Խորհրդարանները, իսկ Միոն Սրբազան՝ Մկրտության Ս. ավազանը: Օծումից հետո Վեստափառն օրհնեց նաև եկեղեցու բարերարներին:

Արարողության ավարտին ներկաներին դիմեց թեմակալ առաջնորդ Տ. Միոն եպ. Աղամյանը: «Այսօր պատմական օր է, քանզի այսօր, կամոքն Աստուծո, բախարավորությունն ունեցանք օծելու Մեծամորի այս եկեղեցին: Տիրավի, այս եկեղեցին օղի և ջրի պես անհրաժեշտություն էր այս համայնքի և շրջակա գյուղերի համար: Մենք շար լավ գիտենք, թե ինչ վիճակում է գտնվում այս համայնքը հոգևոր իմաստով՝ այլազան կրոնական շարժումների բույն դարձած: Սակայն այս եկեղեցին, հատկելով քաղաքի այս բարձրադիր տեղում, դարձավ փրկության փարոս մեր ժողովրդի համար», - ելեց Սրբազան Տայրն իր խոսքում՝ կրկնակի ուրախություն հայտնելով Նորին Սրբության ներկայության համար և հայցելով Ամենայն Տայոց Կաթողիկոսի հայրական օրհնությունն ամենքին:

«Բոլորս ընդկրանքի և խնդության մեջ ենք, որովհետև երկկրից այսօր, օծմամբ Ս. Ղազար եկեղեցու, օրհնություն է հեղվում վերստին Տայոց աշխարհի և մեր անձնի վրա: Այս բարձունքի վրա Տայոց Եկեղեցու խաչը պարզվեց դեպի երկիր ու հովանի դարձավ Մեծամոր քաղաքին:

...Եկեղեցին 1700-ամյա մեր պատմության ընթացքին, երբ չենք ունեցել պետություն, զորք ու բանակ՝ մեր Տայրենիկ, մեր փուեր պաշտպանելու, եկեղեցին դարձել է ամրոցը մեր ժողովրդի ու համախոսը, միասնակաև ու ապահով պահել իր հարկի ներքո և առաջնորդել է դեպի երբ ժամանակներն ու դարերը: Եկեղեցու մեջ մենք գտել ենք մեր ինքնությունը, այդ ինքնությունը պահպանելու խորհուրդը: Եկեղեցու մեջ մենք կերտել ենք մեր մշակույթը և մեր պատմությունը:

...Որքան ուրախ ենք, որ մեր ժողովրդի զավակներն այլևս Մեծամոր քաղաքում ունեն այն փայրը և աղոթարևոդին, ուր սիրտի զան իրենց հավատարմություն

ևր պահելու իրենց հայրերին, մեր պատմությանը ու մշակույթին, դարերի մեր կրթականին և ուխտելու այս Սուրբ Սեդակի առջև՝ անշեղ ընթացքով կյանքի կոչել այն իղձերն ու փեսիթները, որ դարերով ծրարած պահել ենք մեր հոգիներում՝ ունենալու հզոր Հայրենիք, պայծառ ու շնչ Եկեղեցի և լուսավոր ու բարեկեցիկ կյանք:

Վարսի ենք, որ ևորած այս ևկեղեցին ևորովի պիտի սևոդրադարձումի առաջևորդի ձեզ, սիրելի մեծամորցիներ, որ Եկեղեցին է ևղել փրկության փապա-
 ևր մեր ժողովրդի և այն շարունակելու է իբրև այդպիսին գործել մեր կյանքում: Այս գիտակցությամբ, հավատքով ու համոզումով մենք պիտի հեռու վանենք մե-
 զանից ամեն օտար ու խորթ կրոնական քարոզություն, որ գալիս է մեզ շեղելու
 մեր հայրերի հավատքից, շեղելու մեր ընթացքից, որ անշեղորեն առաջևորդել է
 մեզ 1700 փարիներ դևալի Մարտի, որ ևրաշխիթն է ևղել մեր հարապևնության, լի-
 նևություն և գոյություն»,- ասաց Հայոց Հայրապետը՝ շնորհավորելով ներկա բարե-
 պաշար ժողովրդին իրենց քաղաքի ևկեղեցու օձման առիթով: Նորին Սրբությունն իր գնա-
 հապանքն ու օրհնությունը բերեց ևկեղեցու բարերարներին, որոնց կանքը եղել է ևվիրում
 ու անմնացորդ ծառայություն Հայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցուն, ազգին և Հայ-
 րենիքին:

Վեհափառ Հայրապետը նաև իր բարձր գնահատակքը բերեց թեմի բարեջան առաջ-
 ևնորդին և թեմի բոլոր հոգևոր սպասավորներին՝ հորդորելով սիրով և ևվիրումով շարունակել
 իրենց ծառայությունը: Այս առիթով Նորին Սրբությունը շնորհավորեց նաև Մեծամորի քա-
 ղաքապետ Աշոտ Գրիգորյանին, որի անմիջական ջանքերով է կառուցվել ևկեղեցին և բա-
 րեկարգվել շրջակա փարածքը:

Օձման արարողությունից հևար Վեհափառ Հայրապետը ներկա գրևմեց համերգային
 ծրագրին՝ պարասարված քաղաքի գեղարվեստական խմբերի և արվեստի դպրոցի սանե-
 րի ջանքերով:

Նորին Սրբության շքախմբի կազմում էին Տ. Ներսես արքևա, Պոզապալանը, Կոբայ-
 քի թեմի առաջևնորդ Տ. Առաքել եպա, Քարամյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ
 եպա, Խաչատրյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետի պաշտոնևակարար Տ. Ար-
 փակ վրդ, Տիգրանյանը, ազգային բարերարներ:

Ներկայիս Արմավիրի թեմում կան 16 գործող ևկեղեցիներ, որոնցում սպասավորում են
 15 հոգևորականներ:

ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ
 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄՆԱԿԱՐԳ

ՕԾՎԵՅԻՆ ՎԱՆԱԶՈՐԻ Ա. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՅՈՒ ԳՄԲԵԹԻ ԽԱՉՆ ՈՒ ԶԱՆԳԸ

Նոկտեմբերի 10-ին Գուգարաց թեմում առանձնահարուկ խանդավառություն էր փրում: Վանաձորի Ա. Գրիգոր Նարեկացի կորակառույց եկեղեցու գմբեթը պսակվեց օծյալ խաչով: Եկեղեցու կառուցումն սկսվել էր շուրջ երեք փարի առաջ՝ ամերիկարենակ փեր և փիկին Սարգիս և Նորթ Բեդլյանների ազնիվ բարերարությամբ:

Իսաչի օծումը կապարեց Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սևադուի եպս. Չուլջյանը: «Իսաչն օծվելով՝ բոլորիս համար դարձավ երկրպագելի սրբություն, որ փրվել է մեզ Երկնավոր Տիրոջից՝ մեր Տեր Նիսուս Քրիստոսից, խաչի վրա էր արյան հեղմամբ: Իսաչն է պարծանքն ու մխիթարությունը քրիստոնյայի, գործի սկիզբն ու ավարտը, մեր անդնդախոր ցավերի դարմանն ու Երկնքի Արքայության առաջնորդողը»,- նշեց առաջնորդ Սրբազանն իր խոսքում:

Սրբազան Նայրը Ա. Մյուռունով օծեց նաև եկեղեցու զանգը:

Արարողության ավարտին թեմի հոգևոր դասը և ներկա հավաքացյալ ժողովուրդը մոտրեցան և համբուրեցին օծված սուրբ խաչը՝ քաջատոգչություն ու արևշարություն մաղթելով եկեղեցանվեր բարերարի ընտանիքին:

ԿԱՏԱՐՎԵՅ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ ԻԶԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Ա. ԱՄԵՆԱՓՐԿԻԶ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԻՄՆԱՐԿԵՔԸ

Նոկտեմբերի 13-ին Գուգարաց թեմի Տավուշի մարզում, նախագահությամբ թեմի առաջնորդ Տ. Սևադուի եպս. Չուլջյանի և մասնակցությամբ Տավուշի մարզի փոխառաջնորդ Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխայանի ու հոգևոր դասի, կապարվեց Իջևան քաղաքի Ա. Ամենափրկիչ եկեղեցու հիմնարկերը:

Եկեղեցին կառուցվում է փիար Անդրանիկ Ղազարյանի բարերարությամբ:

Արարողությանն իրենց մասնակցությունն էին բերել Տավուշի մարզակեր Արմեն Ղուլարյանը, Իջևանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ և բազմաթիվ հավաքացյալներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԸ ԷԶՄԻԱՄԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ*

ՕԾՎԵՅ ՎԱՆԱԶՈՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՅԻՆ

Գուգարաց թեմում Սուրբ Խաչի Գյուրի փոքր նշանավորվեց Վանաձորի առաջնորդա-
նիստը եկեղեցու օժանդակով: Հոկտեմբերի 23-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տա-
յոց Կաթողիկոսի, օժվեց Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի նորակառույց եկեղեցին: 2002
թ. մայիսին Ամենայն Տայոց Կաթողիկոսի կողմից կապարվել էր այս եկեղեցու հողօրհնեքը,
իսկ 2003 թ. հունիսին՝ հիմնարկեքը: Ի նշանավորում 2003 թ. փոխախմբվող Ս. Գրիգոր
Նարեկացու «Մալբայն ողբերգության» աղոթագրքի 1000-ամյա հոբելյանի՝ եկեղեցին կոչ-
վեց Ս. Գրիգոր Նարեկացու անվամբ: Եկեղեցին կառուցվել է շնորհիվ ամերիկաբնակ փոքր
և փիկ Մարգիս և Հռութ Բեղկյանների ազնիվ բարերարության: Եկեղեցու նախագծի հեղի-
նակն է ճարտարապետ Ռուբեն Ազարյանը:

Առաջնորդանիստը եկեղեցու առջև խմբված հավաքացյալ ժողովրդի բազմությունը, Գու-
գարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ Լապ. Չուլջյանի և հոգևոր դասի գլխավորությամբ, աղ-
ու հացով դիմավորեց Ամենայն Տայոց Կաթողիկոսին: «Վրաշափառ»-ի երգեցողության
ներքո Նորին Սրբությունն առաջնորդվեց նորակառույց եկեղեցի, ուր կապարվեց եկեղեցու
օժանդակ արարողությունը:

Հայցելով Աստուծո օրհնությունն ու հովանավորությունը՝ Հայոց Հայրապետը Սրբալույս
Մյուռոնով օժեց եկեղեցու Սուրբ Սեղանը: Ձեռամբ թեմակալ առաջնորդի օժվեց Մկրտուր-
յան ավագանը:

«Դեռ այս օրվան երկու փարի առաջ էին պատրաստվել, և օր ավուր մեր սիրտը փրո-
փում էր՝ սպասելով, թե երբ Ձերո Սրբությունը Հայրապետական իր Սուրբ Աջով պետք է
թակի դռները Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու, ներս մտնի և իր օրհնությամբ մեզ օրհնի»,
- նշեց Սեպուհ Սրբազանը:


Ապա համախումբ հավաքացյալ ժողովրդին իր Հայրապետական խոսքն ուղղեց Ամե-
նայն Տայոց Կաթողիկոսը:


*«Փառք և գոհություն ենք բարձրացնում առ Աստված, որ Տերն արժանացնում է
Մեզ այսպիսի շնորհների. Հայոց ազատ ու անկասի հողի վրա հասնում են եկեղե-
ցիներ, որպեսզի մեր ժողովրդի աղոթքով և մեր եկեղեցիների օրհնությամբ գո-
րուսա ու առաջնորդաց սպրի ազատ մեր կյանքը»*, - ասաց Հայոց Հայրապետը: Նո-
րին Սրբությունն իր գնահատանքը, սերն ու օրհնությունը բերեց եկեղեցու ազնիվ բարե-
րարներին, ովքեր մեր ժողովրդի ազգային եկեղեցական կյանքին իրենց նպաստն են բերել
ինչպես հեռավոր ԱՄՆ-ում, այնպես և Հայրենիքում: Հայոց Հայրապետը փոքրիկացրեց
նաև, որ փոքր և փիկ Մարգիս և Հռութ Բեղկյանների բարերարությամբ ծրագրվում է եկեղե-
ցուն կից հիմնել Հայոտյաց փոքր, ինչպես նաև առողջապահական կենտրոն և բարեգոր-
ծական ճաշարան:

Վեհափառ Հայրապետն իր բարձր գնահատանքը հայրենց նաև թեմի բարեջան առաջ-
նորդին և թեմի բոլոր հոգևոր սպասավորներին, ովքեր իրենց ծառայությունն են բերում



ԵՒԵՆՅՈՒ ՕՅՈՒՆ ԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՏՐՈՄ





ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԻԳՈՐԻԱՆԻ Ա. ԳՐԻԳՈՐ ՆԱԲԵՑՈՒՄԻ
ՆՈՐԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ

ղծվարին պայմաններում: Նորին Սրբությունն իր շնորհավորանքը ուղղեց նաև Վանաձորի բնակիչներին՝ հորդորելով հավաքարքիմ մնալ իրենց հայրենի հողերը արժևներին: «Մուսկի չափով այս փարսաձաշքթսևում կրոնական փարքեր կազմակերպություններ ու աղանդներ հարձակվել են մեր հավաքավոր հորի վրա և փորձում են ցրել այն, խախտել հովեր ու ազգային մեր միասնությունը: Եվ ես վաքահ եմ, սիրելի բարևարաշք հայրդդիներ, որ մեր նախանձախնդդի ոգին պարենը պիրի դնի կրանց առջև, և կրանք չափի կարողանան արմարներ ներել Տայոց պարսնական այս հողի մեջ, որ 1700 փարսվա քրիստոնեական հավաքով է շնչում:

...Տավաքում ենք, սիրելի վանաձորցիներ, որ դուք պիրի շարունակեք մեր սերդդ աուաքորեն դրանդրել դեպի մեր Տայրը՝ Բրիսպոսի Ավերարանն, ու հսնդեպ մեր մայրը՝ որ է Աուքնյական մեր սուրբ Եկեղեցին: Արդարև, կրանք ձնողական գուրգուրանքով ու սիրով պահել ու պահպանել են մեզ մեր պարսնոքյան բոլոր դժվարությունների ու փորձությունների մեջ, ինչպես ձնողը կպաշտպակի իր գավակին տկարության մեջ: Ազգը հայոց ապրել է միշտ ապավինեամ Մուրք Ավերարանին, ապավինեամ իր Աուքնյական Մուրք Եկեղեցուն:

Ճարունակեք փարսվեամ մնալ մեր Մուրք Եկեղեցուն, ապավինեամ մնալ մեր հայրերի Մուրք Աարձուն, կրանց սուրբ հավաքքին, որպեսզի փորձություններդդ շկարողանան շնդել մեր ճանապարհը, և մենք քայլեր դեպի մեր ազգի ու մեր պերություն վաղվա յուսավոր ու պայծառ օրը»,- մասնավորաքար ասաց Ամենայն Տայոց Կաթողիկոսը՝ մաղթելով ժողովրդին, որ Նարեկա Սրբի աղոթքները միշտ ունենա իր շուրթերին, որպեսզի այդ աղոթքները հրաշագործեն մեր կյանքում:

Օձման արարողությունից հերո Ա. Գրիգոր Նարեկացի եկեղեցում մարուցվեց Տայրապերական Ա. Պարարագ: Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի ձեռամբ Ա. Տաղորություն սրացան հարյուրավոր վանաձորցիներ և հյուրեր:

Տավարք Ա. Պարարագի րեր և րիկ, Մարգիս և Տոութ Բեղնյանների ամուսնության 40-ամյակի առիթով կարարվեց իրենց պատկաղության օրհնության հարուկ կարգ:

Եկեղեցու օձման արարողությանը ներկա էին Տայասարանյան թեմերի առաջնորդներ, Մայր Աթոռի միարաններ, ԱՄՆ, արարակարգ և լիագոր դեսպան Ջ. Էվանսը, Լոոու մարգալին և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, եկեղեցու օձման առիթով Ավիտոքից Տայասարան ժամանամ շուրջ հարյուր ուրարավորներ, հագարավոր վանաձորցիներ:

Տիշարձան այս օրը րիար Մարգիս Բեղնյանին, ի գնահարություն իր ազնիվ բարերարության, Վանաձորի քաղաքային իշխանությունները շնորհեցին Վանաձորի պարավոր քաղաքացու կոչում:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐ ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԱՄԱԿԱՐԳ

ՎԵՐԱՕԾՎԵՑ ԶԱՎԱՆՔԻ ԲԱՐԱԼԵՌ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾՄԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 20-ին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Ս. Վազգեն եպիսկոպոս Միր-գախանյանի, վերածովեց Ախալքալաքի շրջանի Բարալեթ գյուղի Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցին:

Բարալեթ գյուղը հիմնվել է հարյուրամյակներ առաջ: Նույց ի վեր այսօրեղ բնակվել են հայեր և վրացիներ. այսօր էլ գյուղի մեկ երրորդը վրացիներ են: 1720-ականներին Բարալեթ են գաղթել հայեր նաև Ղարաբաղից, իսկ 1830-ականներին՝ Ալաշկերտից ու Էրզրումից: Մինչև հայկական եկեղեցու կառուցումը հայերը ու վրացիները օգտվել են 13-րդ դարում վրաց թամարա թագուհու որդի Լաշա-Գիորգիի կառուցած եկեղեցուց: Այսօր գյուղում գործում են հայկական Սուրբ Աստվածածին և վրացական Սուրբ Սարգիսնոս եկեղեցիները: Երկար փարիներ Բարալեթը հանդիսացել է շրջակա 23 գյուղերի հովվական կենտրոնը: Գյուղը հարուստ է նաև պարմական հուշարձաններով. 1867-ից Բարալեթում գործել է հայկական դպրոց: Նրա հյուսիսային բարձունքներում մինչ օրս էլ պահպանված են միջնադարում կառուցված հայկական եկեղեցու զերեզմանապան և պարիսպի փլաքակները:

Բարալեթի Սուրբ Աստվածածին եկեղեցին, որպես փայտաշեն, կառուցվել է դեռևս 1855 թվականին՝ գյուղի հայ բնակչության միջոցներով: 1869-ին այն վերականգնվել է իբրև քարաշեն և հանդիսացել հայ բնակչության միակ սրբաբղին: Խորհրդային փարիներին, սկսած 1930-ականներից, եկեղեցին փակվել է և օգտագործվել իբրև հացահարկի պահեստ:

Սուրբ Աստվածածին եկեղեցու անմխիթար և քայքայված վիճակը, սակայն, փարիներով հանգիստ չէր փալիս բարալեթցիներին: Ի վերջո, 2004-ին, բարալեթցիների նախաձեռնությամբ և Ռուսաստանում ու Նայաստանում ապրող գյուղի նախկին բնակիչների ազակով նվիրատվությունների շնորհիվ, եկեղեցին ամբողջությամբ վերանորոգվեց, բարեկարգվեց և պարսպապարվեց:

Անավասիկ, հասավ և եկեղեցու վերածման նվիրական ու սուրբ օրը, որին, արդարև, սրբաբարձի սպասում էին բարալեթցիները: Դրանում համոզվել էր և ինքը՝ թեմի առաջնորդը, երբ ամռանը Վիրահայոց թեմի Սամգյուե-Ջավախքի փոխառաջնորդ Ս. Բարգեն արևդա Մալբիյանի ուղեկցությամբ այցելել էր գյուղ և հանդիպել տեղացիներին ու շինարարներին: Եվ ահա բեղամներ մի քանի ամիս անց, թեմի առաջնորդ Վազգեն Սրբազանը Ախալքալաքի հոգևոր հովիվ Ս. Սամվել քահանա Թորոսյանի հետ, կապարեց եկեղեցու վերաբացման արարողությունը: Այսօրեղ էին նաև եկեղեցու նորոգության բարեարարները՝ Նայաստանից և Ռուսաստանից, ինչպես նաև Ախալքալաքի իշխանության ներկայացուցիչները՝ գլխավորությամբ քաղաքապետ Նաիրի Իրիցյանի, և ուխտավորներ շրջակա գյուղերից: Նյուրեր էին ժամանել նաև Նայաստանից՝ մրավորականներ, հասարակական գործիչներ և լրագրողներ:

Սրբազան Նայրը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու կանոնների համաձայն, կապա-
րեց վերածման կարգը, որին հաջորդեց Ս. Պապարագի արարողությունը և հաղորդությու-
նը: Իր օրհնության խոսքում առաջնորդ Սրբազան Նայրը գնահատեց կապարված աշխա-
փանքը, Օրհնության Գիր հանձնեց գլխավոր նվիրատուներին: Առաջնորդն ընդգծեց, որ
բարայեթցիների փոխն համընդհանուր է, փոխ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Գարեգին Բ
Ամենայն Տայոց Կաթողիկոսի համար, ով նույն այս օրը օծումն է կապարում Էրևանի
Սուրբ Երրորդություն եկեղեցու: Մեկ անգամ ևս կարևորելով եկեղեցու դերը պապմության
ընթացքին՝ ու արդի ժամանակներում, Վազգեն Սրբազանը ինչպես կրոնական, այնպես էլ
ազգային փեսանկյունից հորդորեց շարունակել հավատարիմ մնալ մեր հայրերի Աստծուն,
մեր պապմությանն ու մշակույթին:

Արարողության ավարտին բարայեթցի դպրոցականների մասնակցությամբ փոսի հիա-
նալի զեղարվեստական մասը և գարնանային եղանակը համալրումն էին կարծես այդօրյա
մեծախորհուրդ փոխախմբության:

Նավարտ արարողության ժողովրդին բաժանվեց ավանդական մաքրադ:

ԳԻՎԱՆ ՎԻՐԱՄԱՅՈՅ
ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆԻ

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՉԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄՈՒՄ

Նոյեմբերի 13-ին, հրեթաց Ս. Պարարացի, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուի եպիսկոպոս Չուլջյանի, սարկավագության կոչվեց Արմեն Բայադյանը, ով, ավարտելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քահանայից լսարանի եռամյա դասընթացը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի փեսոբինությամբ վերադարձել է Գուգարաց թեմ:

Մինչ 1995 թվականից ի վեր, ինչ վերակազմավորվել էր Գուգարաց թեմը, անգամ սարկավագական ձեռնդրություն չէր կատարվել թեմում, և հավաքված հավաքացյալների համար յուրահարուկ ուրախություն էր այս արարողությունը, երբ Մրբազան Տոր ձեռամբ «Աստվածային և երկնային շնորհ» էր իջնում իրենց սիրելի սպասավորի վրա, որին վաղուց էին ճանաչում, և հիրավի, սրբաբուխ էր հնչում «Արժանի՛ ե» խոսքը:

Տավարի սրբազան արարողության, թեմակալ առաջնորդն իր խոսքն ուղղեց Արմեն սարկավագին՝ ասելով, որ ես առավել նվիրումով իր սպասավորությունը բերի մեր սուրբ Եկեղեցուն՝ օրինակ ունենալով Ս. Սփեփանոս Նախասարկավագին, որ լինի քաջ՝ ընդդեմ սալամայի հնարքների, և իր բարի վարքով առավել լցվելով Քրիստոսի սիրով՝ դառնա օրինակ համայնքի համար: Իսկ ներկաներին շնորհավորելով՝ Մրբազան Տայրն իր երախտագիտության խոսքը բերեց Տայոց Տայրապետին այս ձեռնդրության համար: Սեպուի Մրբազանը հորդորեց առավել սիրել Տայ Եկեղեցին և ազդեթել նրա սպասավորների համար, մանավանդ նորոգ ձեռնդրյալ Արմեն սարկավագի համար, որ Տերը արժանի անի նաև քահանայության բարձր կոչմանն ու օժմանը:

Արմեն սարկավագ Բայադյանն այսուհետ իր ծառայությունն է բերելու Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցուն և Քարոզչական կենտրոնին:

ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՅԱԳՅԱՆ

Ծնվել է 1978 թ. հոկտեմբերի 12-ին Կիրովական քաղաքում:

1985-1995 թթ. սովորել է փոքի թիվ 3 միջնակարգ դպրոցում:

1995 թ. ծառայության է անցել Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցում:

1997-2001 թթ. սովորել է Էրեւանի «Գիտակ» համալսարանում սրբանալով իրավագիտության բակալավրի ասպիճան:

1998-1999 թթ. ծառայել է ՏՏ Ձինված ուժերում:

2002-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2005 թ. նոյեմբերի 13-ին, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուի եպիսկոպոս Չուլջյանի, ձեռնդրվել է սարկավագ:

ՄԻԱՎՉԻԱՆ ԿԻՄՆԱԿԱՐՅԵՐԻՆ ՈՒ ՄԱՐՏԱՆՐԱՎԵՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՍԵՄԻՆԱՐ

Նոկտեմբերի 13-14-ին Երևանում, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի և Գերմանական Բողոքական Եկեղեցիների ասոցիացիայի (EED) նախաձեռնությամբ, կազմակերպվել էր «ՄԻԱՎՉԻԱՆ հիմնահարցերը և մարտահրավերները Հարավկովկասյան փարածաշրջանում» թեմայով սեմինարը:

Սեմինարի ընթացքին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, ԵՏՆ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամի, ՉԻԱՆ կանխարգելման հանրապետական կենտրոնի, «Լորդ Վիմ Արմենիա», UNAIDS-ի և հասարակական ու կրոնական մի շարք այլ կազմակերպությունների ներկայացուցիչները փոխկազմակերպել են ՄԻԱՎՉԻԱՆ-ի կանխարգելման ուղղությամբ իրենց կառույցների կողմից իրականացվող ծրագրերի մասին:

Ի թիվս իրագործվող ձեռնարկների մասին փոխկազմակերպությունների, ՉԻԱՆ կանխարգելման հանրապետական կենտրոնի աշխատակից Էդուարդ Նովիանիսյանը հանդես եկավ «ՄԻԱՎՉԻԱՆ-ի համաճարակը աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎՉԻԱՆ-ի կանխարգելման ազգային ծրագրի իրականացումը» գեկույցով, Բժշկական Առաքելության Գերմանական Ինստիտուտից Սոնյա Վայնրայխը խոսեց ՄԻԱՎՉԻԱՆ-ի հիմնահարցերի և մարտահրավերների մասին, իսկ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քարոզչական կենտրոնի փոխոհան Ե. Անտոյ քհն. Մայիսյանը բանախոսեց «Աստվածաբանությունը և ՄԻԱՎՉԻԱՆ-ը» թեմայով:

Նոկտեմբերի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սեմինարի կազմակերպիչներին՝ Գերմանական Բողոքական Եկեղեցիների ասոցիացիայից Հարավ-արևելյան Եվրոպայի և Հարավկովկասյան պետությունների ծրագրերի կոորդինատոր Կարոյին Կրուկովին, ԵՏՆ Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի գործադիր փոխոհան ղոկար. Կարեն Նազարյանին, ինչպես նաև Բժշկական Առաքելության Գերմանական Ինստիտուտից Սոնյա Վայնրայխին:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությանը ներկայացվեցին սեմինարի արդյունքները և ՄԻԱՎՉԻԱՆ-ի կանխարգելման ոլորտում նախապեսվող հետագա ծրագրերը:

ՄԱՅՐ ԱԹՐԱՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿՈՑԱԿԱՆ ԿՐՈՒԿՈՎԻՆ

Ամերիկայի Արևելեան թեմին ներս

Տ. ՎԻԳԷՆ ԵՊՍ. ԱՅԳԱԶԵԱՆ ԵԿԵՂԵՅԻՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՏ ԸՆՏՐՈՒԵՑԱԲ

ԱՄՆ Եկեղեցիներու Ազգային Խորհուրդը իր Պարզամտորական Ընդհանուր Ժողովի ընթացքին, Նոյեմբեր 10, միաձայնությամբ Նայաստանայց Եկեղեցոյ Տիսիսային Ամերիկայի Արևելեան թեմի թեմական պատուիրակ եւ Միջեկեղեցական յարաբերութեանց վարիչ Գերշ. Տ. Վիգէն եպս. Այգազեանը Խորհուրդի նախագահ ընտրեց:

Նորընտիր նախագահը իր շնորհակալութեան խօսքին մէջ քսաւ. «Մեծապէս երախտապարպ եմ ինձի վստահուած այս պատեհութեան համար. յոյս ունիմ որ համեստաբար ոչ միայն Նայ Եկեղեցին՝ այլ բոլոր Եկեղեցիներն ու յարանուանութիւնները պիտի ներկայացնեն: Ուրախատի՞ք երևոյթ է որ այս Եկեղեցիները վերահասու են թէ Նայ Եկեղեցին իրապէս առաջնորդողի դեր ունի միջեկեղեցական շարժումին մէջ»:

Որպէս ընտրուած նախագահ՝ Գերշ. Տ. Վիգէն եպս. Այգազեան իր պաշտօնին պիտի ձեռնարկէ երկու փարի երթ՝ երբ ներկայ նախագահը Տ. Մայրը Լիվինկսթըն պիտի աւարտէ իր շրջանը:

Վիգէն Սրբազանի ընտրութեան անդրադառնալով՝ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան քսաւ. «Այս ընտրութիւնը խորհրդանշէն է Ամերիկայի մէջ Նայ Եկեղեցոյ գրասովոր դիրքին: Ի Դրիստոս մեր նորայրներն ու յոյրերը զիտեն Նայոց պատմութիւնը եւ զիտեն նաեւ թէ մենք զօրաւոր եւ քրիստոնէական խոր արմատներ ունեցող Եկեղեցի մըն ենք: Եւ ահա, մեզի կը վստահին առաջնագոյն ազգային միջեկեղեցական մարմնի մը ապագան»:

Անիի քան 400 պարզամտորներ մասնակցեցան Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի Ժողովին, որ գումարուեցաւ Նոյեմբեր 8-10 օրերուն՝ Մերիլենդի Նանթ Վալի շրջանին մէջ: Արևելեան թեմը կը ներկայացնէին Գերշ. Տ. Վիգէն եպս. Այգազեան, Ուինվուրի (Փենսիլվենիա) Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցոյ հոգևոր հովի Կոզմ. Տ. Նայկագուն ծ. վրդ. Նաճարեան, Շիզակոյի (Իլլինոյ) Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ հոգևոր հովի Կոզմ. Տ. Առէն արք. Ճէպլեճեան եւ երէցիկն Արիփի Գուգուեան (Պլյմպիքճի - Մասսաչուսեց - Ս. Երրորդութիւն եկեղեցիէն): Իսկ Արեւմտեան թեմը կը ներկայացնէր Արժշ. Տ. Վարդան ա. քին. Գասպարեան:

Պարզամտորական այս ժողովի ընթացքին, ի մէջ այլոց, ներկայացուեցան Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի գանազան բաժանմունքներու եւ Եկեղեցոյ Նամաշխարհային Ծառայութեան (Խորհուրդի միջազգային մարդասիրական օգնութեան կազմակերպութիւն) փոխկազմակերպները, որոնք առևտրութիւն ունէին Միացեալ Նահանգները հարուածող փոթորիկներու, Փաքիստանի երկրաշարժին եւ Ալիքիկի մէջ յատապ փարտող օգնութեան աշխատանքներուն:

ժողովի առաջին օրերոյն՝ Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու պարզամտորենը հանդիպում ունեցան եւ խորհրդակցեցան յիշեալ Եկեղեցիներ յուզող կարգ մը հարցերու մասին:

Արեւելեան թեմի թեմական պատրիարակ եւ Միջեկեղեցական յարաբերութեան վարիչ Լշանակունլէն եփք՝ գլխաւորաբար Պերշ. Տ. Վիզլե եպս. Այգազեանի եւ նաեւ թեմական պատրիարակի Յանձնախումբի ջանքերուն շնորհիւ՝ Տայասարանեայ Եկեղեցին կարեւոր ներկայութիւն մը դարձած է ԱՄՆ, միջեկեղեցական կազմակերպութիւններուն եւ այլ հաստատութիւններու մօտ: Այս առաջնորդութիւնն ու յանձնառութիւնը կը զօրացնէ Տայասարանեայ Եկեղեցին Ամերիկայի միջեկեղեցական եւ քաղաքական համայնքներու մօտ՝ եւ որմէ մեծ օգուտ կը քաղեն նաեւ Տայասարանն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

ՅԻՄՆ ԱՌԱՋՆՈՐԿԱՐԱՆԻ

րուպական քաղաքականության մեջ, հոգևոր կոդմն է: Լավագույն փոփոխություն դառնալը ռազմավարական նպատակ է, սակայն ոչ թե փեսիք, որը ոգեշնչում է մարդկանց: Իսկ եթե մարդիկ պետք է շար աշխատեն և փառապեն Եվրոպայի համար, ապա նրանք առնվազն պետք է ունենան սոցիալական փեսիք և ընդհանուր ոգի՝ նոր համայնք կառուցելու համար:

Վերջին փորձերի ընթացքում Եվրոմիությունը պարասխանաբարություն է ստանձնել ապահովել աշխատանքի բարձր մակարդակ, պարզաճ սոցիալական պաշտպանվածություն, կրթության բարձր մակարդակ և մարդկանց առողջության պահպանում: Սակայն այս նպատակներն ինչպես են իրագործվում Եվրոպայի սոցիալական քաղաքականության մեջ, սոցիալական բյուջեում, սոցիալական կառուցվածքային ծրագրերում և օրակարգում, ահա սրանք էին այն հարցերը, որոնց անդրադարձան ժողովի մասնակիցները:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Միջնկեղեցական հարաբերությունների բաժին

ՆՈՒՄԵՐԱԿԱԹՈՒԿ ԵԿԵՂԵՅՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ XI ՆԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՆՈՒՄՈՒՄ

(2-23 հոկտեմբերի 2005 թ.)

Մույն թվականի հոկտեմբերի 2-ից 23-ը Տոմում զումարվեց Տոմսակաթոլիկ Եկեղեցու Եպիսկոպոսների XI համագումարը: Նամագումարը, որին մասնակցում էին 256 եպիսկոպոսներ 118 երկրներից, կրում էր հետևյալ խորագիրը. «Նաղորդություն՝ Եկեղեցու կյանքի և առաքելության աղբյուրն ու զագաթնակերը»:

Նամագումարի բացումը տեղի ունեցավ Ս. Պերրոսի փաճարում, Մուրբ Պարարագի արարողությամբ, որին նախագահում էր Տոմի Բնակեցիկը ԺԶ Պապը: Նամագումարի բացման առիթով մարտցված Ս. Պարարագի իր քարոզում Պապը նշեց. «Նաղորդության մասին կաթոլիկ վարդապետությունը՝ սահմանված Տրենտի ժողովի կողմից, պետք է ընդունել, ապրել և եկեղեցական համայնքին փոխանցել կորովի՝ ժամանակներին համահունչ: Առանց ընկալելու և սուրբ Նաղորդության խորհուրդը քրիստոնեական համայնքները կկորցնեն իրենց էությունը: Միայն հաղորդութենական փնելու շնորհիվ է, որ նրանք կարող են Քրիստոսին, և ոչ թե պարզապես գաղափարներ կամ արժեքներ՝ անկախ դրանց կրոնությունից, ներկայացնել մարդկանց»:

Տոմի Արքայան Բահանայապետն իր քարոզը եզրափակեց հույսի կոչով, քանի որ «Ասրված երբև չի պարտվում. վերջում Նա հաղթանակում է՝ սերը հաղթանակում է»:

Տոմսակաթոլիկ Եկեղեցու Եպիսկոպոսների Սինոդը, որպես հասարակություն, ունի Եկեղեցու կառավարման հարցերում Պապին օգնելու առաջադրանք: Այն պաշտոնապես հիմնադրվել է 1965 թ. սեպտեմբերի 15-ին: Այն ունի մշտական գլխավոր քարտուղարություն՝ տեղակայված Տոմում, որը ներարկվում է անմիջապես և միայն Տոմի Պապին:

Այս փարի համագումարի 20-օրյա աշխատանքների արդյունքում ներկայացվեցին բազմաթիվ զեկույցներ, որոնց վերաբերյալ առաջ քաշվեցին մի շարք հարցեր, որոնք ժողովականները քննարկեցին փոքրիկ աշխատանքային խմբերում:

Վերջում ժողովականները հանդես եկան «Նաղորդություն. կենդանի Նազ աշխարհի խաղաղության համար» խորագրված ուղերձով: Այն իրենից ներկայացնում է 26 պարագրաֆներից բաղկացած 17 էջանի մի տեքստ, որն, ի թիվս այլ խնդիրների, անդրադառնում է նաև այնպիսի հարցերի, ինչպիսիք են սովը, աղքատությունը, անարդարությունը, բնական աղետները, պարերագմանը և ղժվարին իրավիճակները Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում, Արևմուտքում տիրող կրոնական անարբերությանը և այլն:

Նամագումարին նաև հրավիրվել էին հոգևորականներ քույր Եկեղեցիներից: Գարեգին Բ Վեհափառ Նալբապետի բարձր փեսիխոթյամբ այդ համագումարին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում էր Լիոնի շրջանում Նալբապետական Պարավիրակի փոխանորդ Գերաշնորհ Տ. Նորվան Լպս. Զարարյանը:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵԿՍԱՆՅԱՆ

Միջկեղեցական հարաբերությունների բաժին

«ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԵՈՍՈՍՈՒԹՅՈՒՆ»

ՆԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՆՈՌԴՈՍՈՒՄ

(5-9 հոկտեմբերի 2005 թ.)

«Քաղաքակրթությունների երկխոսություն» համաշխարհային հասարակական ֆորումի երրորդ հանդիպումը, որը կազմակերպվել էր «Ռուսաստանի Ազգային Փառքի Կենտրոն»-ի և «Ս. Անդրեաս Առաքյալ» Տիմոտեոսյան կողմից, փոքի ունեցավ սույն թվականի հոկտեմբերի 5-9-ը Նոռոս կղզում, որին մասնակցում էին 410 ներկայացուցիչներ աշխարհի 46 երկրներից՝ Նայաստանից, Ավստրալիայից, Ալժիրից, Բելգիայից, Բանգլադեշից, Մեծ Բրիտանիայից, Վարիկանից, Վենեսուելայից, Գերմանիայից, Նոլանդիայից, Նուսաստանից, Վրաստանից, Եգիպտոսից, Իսրայելից, Նիդերլանդներից, Ինդոնեզիայից, Նորդանանից, Իրանից, Իսպանիայից, Իրադիայից, Եմենից, Ղազախստանից, Կիբրիզիայից, Չինաստանից, Կուբայից, Լատվիայից, Լիբանանից, Մակեդոնիայից, Մեքսիկայից, Նիգերիայից, Նորվեգիայից, Պերուից, Լեհաստանից, Ռուսաստանից, Ռումինիայից, Սերբիայից, Մոնթենեգրոյից, Սիրիայից, Սլովակիայից, Մոլդանից, ԱՄՆ-ից, Թուրքիայից, Ուկրաինայից, Ֆինլանդիայից, Ֆրանսիայից, Չեխիայից, Շվեյցարիայից: Բացման արարողությանը մասնակցում էին շուրջ 200 ճանաչված քաղաքական գործիչներ և կրոնական առաջնորդներ:

Գարեգին Բ Անիափառ Նայրասկիի բարձր փնտրիչությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն այդ համագումարում ներկայացնում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Նոգեջուրի Տ. Դավիթ արդ. Քարամյանը:

«Քաղաքակրթությունների երկխոսություն» համաշխարհային հասարակական ֆորումի փարեկան հանդիպումների հիմնական թեման խաղաղությունն ու անվտանգությունն է: Այն եկիրված էր քաղաքակրթությունների փոխազդեցությանը զորալ մակարդակի վրա, իսկ քննարկումների նպատակն էր՝ պարասխանել այն հարցին, թե ինչպե՞ս կարող են երկու փարարնույթ գործընթացներ՝ ինտեգրացիան և ինքնորոշումը, ընթանալ համաժամանակ: Նամագումարի հիմնական նպատակն է նաև՝ համախմբել համաշխարհային հանրությանը՝ պաշտպանելու մարդկության հոգևոր և մշակութային արժեքները:

«Քաղաքակրթությունների երկխոսություն» Նամաշխարհային հասարակական ֆորումի մասնակիցների հայտարարությունը

Ֆորումի մասնակիցները ընդհանուր համաձայնությամբ հաստատում են, որ այն նպատակը, որի համար սրելովվել է Նամաշխարհային հասարակական ֆորումը և որը հռչակվել է 2003 թ. Նոռոսի հայտարարագրում, դարձել է ավելի նշանակալի, քան երբևէ: Ֆորումին են միանում փարրեր քաղաքակրթությունների, երկրների ու ազգությունների նոր ներկայացուցիչներ՝ այս նպատակի իրագործման համար: Այս փարի Ֆորումի աշխատանքներին մասնակցում էին նաև ներկայացուցիչներ Եվրոպայից, Ասիայից, Նյուսիսային և Նարավային Ամերիկաներից, Մերձավոր Արևելքից, Աֆրիայից և Ավստրալիայից:

Այսօր կարելի է հաստատել, որ «Քաղաքակրթությունների երկխոսություն» համաշխարհային հասարակական Ֆորումը ձեռք է բերում ցանց հանդիսացող համայնքի նկարագիր՝ աշխարհելով ամբողջ աշխարհում՝ քաղաքակրթությունների փարբեր մոդելների հիման վրա:

Անհրաժեշտ է կշել, որ ընդլայնվել է ոչ միայն եվրոպացի մասնակիցների շրջանակը, այլև քննարկվող թեմաների: Մենք այժմ քաղաքակրթությունների երկխոսությանը հուզող շարք հրապարակ խնդիրների խորը ուսումնասիրությունից անցնում ենք սխաբմտարիկ աշխարհաբանների և կոնկրետ քայլերի:

Ֆորումի երրորդ հանդիպումը կենտրոնացավ 21-րդ դարի շեմին քաղաքակրթությունների ինտեգրացիայի և ինտեգրոշման խնդրի վրա: Քննարկումների մասնակիցները նշեցին, որ ժամանակակից ինտեգրացիան ընդգրկում է ժամանակակից հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ փոփոխություն, քաղաքականություն, կրթություն, մշակույթ, գիտություն և նույնիսկ նորագույն փոխադրվածներ: Դա գլոբալիզացիայի հիմնական փարբեր է, որը մի կողմից մերժեցնում է ազգերին, հաստատում է նոր հարաբերություններ բոլոր մայրցամաքների մոդուլիզացիայի միջև, որը հնարավոր չէր նույնիսկ պարզապես մեկ կամ երկու փաստաբանական առաջ, իսկ մյուս կողմից՝ այն առաջնորդում է հեղափոխության, խորացնում է հարուստների և աղքատների միջև եղած փարբերությունը: Ուստի անհրաժեշտ է ուղիներ և մեխանիզմներ գտնել՝ փոխելու գլոբալիզացիայի՝ ներկայում իշխող մոդելը: Այն կարելի է փոխարինել մի այնպիսի մոդելով, որը թույլ կտա օգտվել գլոբալիզացիայի օգուտներից ու արդյունքներից՝ ի շահ բոլոր ազգերի և քաղաքակրթությունների:

Մասնակիցները արգահայտեցին նաև իրենց անհանգստությունը միջազգային հակամարտությունների և հարաբերությունների ոլորտում փրոդ իրավիճակի կապակցությամբ՝ պնդելով, որ անհրաժեշտ է մշտապես փնտրել կայուն և արևելյան խաղաղ լուծումներ:

Մերձավոր Արևելքում, Բալկաններում և Կենտրոնական Ասիայում կայունության և անվտանգության հարցերով զբաղվող հարույլ խմբի աշխարհաբաններում ընդմիջ, որ անհրաժեշտ է մշտապես վերահսկել այն գործընթացները, որոնք այս փարբաժաշխանների ապագայի համար վճռորոշ դեր են կատարում: Նշվեց նաև, որ աշխարհի այս շրջաններում քաղաքակրթությունների հանդիպումն ու փոխազդեցությունն արդեն հակառակ ուղղությամբ է զարգանում: Այս շրջաններում զարգացման գործընթացները փարբաբանորեն չեն գործադրվել և փոփոխական վիճակում են, ուստի մյուս ապագայում դրանք պետք է ենթարկվեն արդարին և ներքին ճնշումների:

Ժամանակակից աշխարհում կրոնի դերի մասին քննարկումները հաստատում են, որ կրոններն առավել գործուն ձևով են ազդում հասարակական գործընթացների վրա՝ շրջանցելով անձնական կյանքի ոլորտը: Ֆորումի առաջադրանքն է՝ հավատացյալների համար պայմաններ ստեղծել ազատորեն կառուցելու իրենց և՛ անձնական, և՛ հասարակական կյանքը՝ միմյանց հետ և հասարակության աշխարհիկ մասի հետ ներդաշխակորեն: Կրոնական համայնքների դրական ազդեցությունը, միմյանց հետ, ինչպես նաև պետության և հասարակության հետ երկխոսությունն ու համագործակցությունը պետք է ազատորեն զարգանան կրթության, մարդու իրավունքների պաշտպանության, զանգվածային լրատվամիջոցների, ինչպես նաև այլ հասարակական գործընթացների ոլորտներում:

Քաղաքակրթությունների երկխոսության մեջ կենտրոնական դեր են կատարում մշակույթն ու արվեստը: Մշակույթների բազմազանությունը ներկայացնում է ոչ միայն ժամանակակից աշխարհի իրականությունը՝ որպես ինքնին արժեք, այն նաև մեծ ազդեցություն ունի միջբաղադրական ինտեգրացիայի գարգացման վրա: Սա կարող է համարվել որպես դրա հիմնական փարրը: Միջմշակութային երկխոսությունը, հիմնված ազգային մշակութային ինքնության պաշտպանության սկզբունքների վրա, միջբաղադրական ընկալման և փոխազդեցության ամենաարդյունավետ ձևն է:

Ֆորումի ընթացքում հափուկ ընդգծվեց երիտասարդ ներկայացուցիչների ընդգրկումը քաղաքակրթությունների երկխոսության գործընթացքում: Ֆորումի մասնակիցները հավանություն արվեցին բոլոր երկրների երիտասարդների համար պայմաններ ու հնարավորություններ ստեղծելու անհրաժեշտությանը՝ դառնալու ամենաակտիվ մասնակիցները ավելի արդար և ներդաշնակ աշխարհի կառուցման գործում: Երիտասարդ սերունդն իրավունք ունի լսելի լինելու համաշխարհային հանրության կողմից:

Երրորդ հանդիպման մասնակիցները միաձայն հաստատեցին, որ անհրաժեշտ են միջքաղաքակրթական հարաբերությունների կոորդինացումը, համայնքների գործող ցանցի զարգացումը՝ ստեղծելու երկխոսության վրա հիմնված հարաբերություններ:

ԳԱՅԱՆԵ ԱԼԷՔՍԱՆՅԱՆ

Միջնկենդակական հարաբերությունների բաժին

**ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ
ՆԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՆԱՆՁՆԱԽՄՔԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՆԱՆԴԻՊՈՒՄԸ
ԲՐՅՈՒՄԵԼՈՒՄ**

(19-21 հոկտեմբերի 2005 թ.)

Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի աշխատանքային ծրագրում «Եկեղեցու և հասարակության» քարտուղարների հանդիպումը կազմակերպվում է ամեն փարի: 2005 թվականի հանդիպումը թվով երրորդն էր իր փեսակի մեջ, որին մասնակցում էին շուրջ 60 ներկայացուցիչներ Եվրոպայի Եկեղեցիներից: Սա մի հնարավորություն էր՝ կապի մեջ լինելու միմյանց հետ, իրենց ծրագրերի իրականացման համար գործընկերներ գտնելու ողջ Եվրոպայում, փոփոխված լինելու եվրոպական քաղաքականության որոշ յուրահատկություններին, ինչպես նաև «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի աշխատանքների մասին:

Այս փարի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի քարտուղարների հանդիպումը փնտրելու ունեցավ հոկտեմբերի 19-21-ը Բրյուսել քաղաքում, որին Գարեգին Բ Վեհափառ Նայրապետի բարձր փնտրությամբ Նայ Առաքելական Եկեղեցին ներկայացնում էր Նոգեշնորի Տ. Տաթև վրդ. Նախարարը:

Նախնական նպատակն էր՝ կազմել Եվրոպայի Եկեղեցիներում «Եկեղեցու և հասարակության» քարտուղարների ցանց, ապահովել փոփոխվողությունը նրանց միջև, քննարկել Բրյուսելում փնտրված եվրոպական հասարակություններում և էկոմենիկ կազմակերպություններում առկա զարգացումները, գործընկերներ գտնել համընդհանուր խնդիրների իրականացման համար:

Այս հանդիպման համար ընտրված էին երկու հիմնական թեմաներ, որոնք սերտորեն առնչվում են Եվրոմիության զարգացումների հետ: Դրանք են.

1. **Լիսաբոնի ռազմավարությունը** – Նոր Եվրոհանձնախումբը սկսել է առավել ընդգրծել, այսպես կոչված, Լիսաբոնի ռազմավարության կարևորությունը, այն է՝ մինչև 2010 թ. Եվրոմիությունը դարձնել ամենամրցունակ փոփոխությունն աշխարհում: Այս ծրագիրը, որը ստեղծվել էր հավասարակշռելու մրցակցությունը, սոցիալական կառուցվածքն ու քաղաքականական խնդիրները, այժմ թվում է, թե նախ և առաջ ընդգրծում է մրցակցությունը: Նրավիրվել էին նաև ներկայացուցիչներ Եվրոհանձնախմբից և Եվրոխորհրդարանից, որպեսզի նրանք մասնակիցներին ծանոթացնեն Լիսաբոնի ռազմավարության փոփոխական և սոցիալական ասպեկտների հետ:
2. **Եվրոպայի և Եվրոպայի սահմանադրության ապագան** – Ֆրանսիայում և Նորանգլիայում փնտրելու ունեցած ռեֆերենդումի և դրան հաջորդած իրադարձությունների հետևանքով Եվրոպայի սահմանադրության ընդունումը ճգնաժամային փուլ մտավ: Նախնական մասնակիցներին փարեկան զեկույցները ներկայացնելուց բացի, նրանց

առաջարկվեց նաև արտահայտել փարբեր եվրոպական երկրներում ապրող ժողովուրդների և այդ երկրների Էկեղեցիների ակնկալիքներն այս առնչությամբ:

Երկրորդ կիսրի ընթացքում մասնակիցները քննարկեցին նաև Էկեղեցիների դերը Եվրոպայի սահմանադրությանն աջակցելու հարցում՝ անդրադառնալով հնարյալ հարցերին. Էկեղեցիների և օրեցօր աշխարհականացող աշխարհի միջև հարաբերությունները, գաղթականությունը և լարվածության գիտակցումը անվտանգության և մարդու իրավունքները հարգելու համարներստում, միջկրոնական հարաբերություններն ու անհանդուրժողականության աճը:

*ԳԱՅԱՆԵ ԱԼԵԶԱՆՅԱՆ,
Միջկեղեցական հարաբերությունների բաժին*

«ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿՐՈՐԴ ՄԻԶԿՐՈՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 7-9-ը Սպամբուլում րեղի ունեցավ «Խաղաղություն և հանդուրժողականություն» խորագիրը կրող երկրորդ միջկրոնական կոնֆերանսը, որին մասնակցում էին կրոնական առաջնորդներ աշխարհի րարքեր մասերից, այդ թվում նաև՝ Ալեքսանդրիայի Նույն Ուղղափառ Եկեղեցու Թեոդորոս Բ Պատրիարքը, Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու Անաստասիոս Արքեպիսկոպոսը, Կ.Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը, Ռաբբի Արթուր Շևայերը՝ Նյու Յորքից, Թուրքիայի Գլխավոր Ռաբբին, Կովկասի, Ադրբեջանի և Բալկանների մուսուլման առաջնորդները, Թուրքիայի Կրոնի գործոց նախարարը, Նուսաստանի Կրթության և Կրոնի գործերի նախարար Մարիեդա Գիանակուն, որն ընդգծեց կոնֆերանսի կարևորությունը՝ ասելով. «Այն գործը, որ Պատրիարքաքանը կատարում է՝ Վարիկանի, մուսուլմանների և այլ կրոնների, նույնիսկ Դալայ Լամայի հեղ համագործակցաբար, շար մեծ քաղաքական կարևորություն ունի»:

Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի բարձր րնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն այդ կոնֆերանսում ներկայացնում էր ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

Կոնֆերանսի ընթացքում ընթերցվեցին նաև Բենեդիկտ ԺԶ Պապի, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի, Եվրոհանձնախմբի նախագահ Ժոզե Մանուել Բարոզոի ուղերձները իրենց ներկայացուցիչների կողմից:

Առաջին նման կոնֆերանսը՝ «Խաղաղություն և հանդուրժողականություն» խորագրով, րեղի է ունեցել 1994 թ. Սպամբուլում, դարձյալ Տիեզերական Պատրիարքության նախաձեռնությամբ: Այն ավարտվեց մի հայտարարությամբ, որն ընդգծում էր քաղաքական և կրոնական առաջնորդների պատրասխանաբությունը՝ «օգրագործելու բոլոր միջոցները՝ երկխոսություն սկսելու բոլոր ազգերի և կրոնների միջև՝ րոխադարձ վստահություն, սեր և հարգանք սերմանելու նպատակով», ինչպես նաև այն, որ «կրոնի անուսից կատարված հանցագործությունը մեծաույն հանցագործությունն է՝ կատարված կրոնների դեմ»:

Եռօրյա կոնֆերանսը նվիրված էր միջկրոնական համագործակցությանը՝ խաղաղություն հաստատելու հարավ-արևելյան Եվրոպայում, Բալկաններում և Կենրոնական Ասիայում, շրջաններ, որրեղ վերջին ժամանակներում կրոնական հակամարտություններ են եղել:

Քրիստոնյա, հրեա և մուսուլման առաջնորդները հաստատեցին, որ կրոնական առաջնորդները պարտավոր են հաշտության և խաղաղության ձայն հնչեցնելու և ոչ թե կրոնական բախումներ հրահրելու:

«Եղծմարանքի կոչ» հիմնադրամի նախագահ Ռաբբի Արթուր Շևայերը ասաց, որ կոնֆերանսի երկու հիմնական նպատակները պեքը է լինեն՝ սրիպակ կառավարությունների

վարահեցելու, որ անհանդուրժողություն չբարոզվի դպրոցներում, և ընդդիմանալու այն կրոնական առաջնորդներին, որոնք բռնություն են հրահրում, և մեկուսացնելու նրանց որպես «սոցիալական բրդուրներ»:

Քարոզիղիմես Ա Պապրիխաբը շեշտեց, որ կրոնական առաջնորդի վրա չպետք է ազդեն ո՛չ զգացմունքները և ո՛չ էլ մոլեռանդությունը: Նա իր դատողությունները չպետք է դիվարկի որպես Աստուծո կամք:

Կոնֆերանսի ավարտին մասնակիցները հանդես եկան հայտարարությամբ, որում ի մասնավորի ասվում է. «Որպես Արրուսահամի զաւակներ հոգևոր առաջնորդներ՝ մենք պարտավորությունն է՝ վերացնել ազգային և կրոնական յարմարությունները: Այս ոգով մենք կոչ ենք անում բոլոր հոգևոր առաջնորդներին՝ քարոզել, ուսուցանել և դրսևորել սեր, հսկողորժողականություն և ընթերցում միմյանց, այլադավանների և այլազգիների նկատմամբ իրենց կեղեցիկներում, մզկիթներում և սփեակազոցներում, իրենց ընտանիքներում, դպրոցներում և ճեմարաններում: Նաև պետք է պարասախանաւորություն կրենք կրթելու, սնելու և աջակցելու մեր համայնքների բոլոր անդամներին՝ կանանց և տղամարդկանց, երիտասարդներին և ծերերին՝ հորդորելով նրանց՝ ջանքեր գործադրել վարսահեցելու, որ անզայի վիրավորանքներն ու հսկամարտություններն այլևս չեն կրկնվի:

Վերջերս Տարափարեկյան Եվրոպան արձանագրեց նշանակալի դրական զարգացումներ փոխադարձ երկխոսության, հաշտության և համագործակցության ուղղությամբ: Մենք ընդունում ենք ՄԱԿ-ի և ԵԱՏԿ-ի կարևոր, շարունակական և աճող գործունեությունը և ողջունում ենք նրանց արձանագրած առաջընթացը: Այնուամենայնիվ, դեռևս յուրք խնդիրներ կան կրոնական և ազգային իրավունքների պաշտպանության ու հսկողորժողականության առումով: Դեռևս շարունակվում են հանցանքներ կատարվել կրոնի անունից: Մենք ուժգնաձայն կրկնում ենք, որ նման գործողությունները պետք է դադարեցնել: Ինչպես նշված է 1992 թ. Բեռլոնում (Շվեյցարիա) ստորագրված «Խղձարանքի կոչ»-ի հայտարարության մեջ, «կրոնի անունից կատարված հանցագործությունը հանցագործություն է՝ կատարված կրոնի դեմ»:

Մենք դատապարտում ենք նրանց, ովքեր բռնություն են քարոզում այլադավանների և այլազգիների նկատմամբ: Տարափարայով մարդկային կյանքի սրբությանը՝ մենք հաստատականորեն ընդդիմանում ենք նրանց, ովքեր խախտում են հիմնական մարդկային արժեքները:

Մենք մերժում ենք այն բոլոր գործողությունները, որոնք կեղծ մեկնաբանություններով և ոչ չափավոր ազգայնամոլությամբ աղավաղում են մեր հավատքի հիմնական սկզբունքները: Մենք չենք ընդունում այն հասկացությունը, որ զինված հսկամարտության մեջ որևէ գործողություն կարելի է արդարացնել՝ վերագրելով այն Աստուծո: Նման արդարացումը չի կարող խաղաղության առաջնորդել: Մենք պահանջում ենք, որ հարակրեան հաստատվի մարդկանց հիմնական իրավունքների մասին օրենքը բոլոր այն երկրներում, որոնք ներկայացված են այս կոնֆերանսում, և զանկանում ենք բոլորին հորդորել, որ պարտաձև հոգաբար-

րություն ցուցարկին փախարակյանների, փեղսահալածների նկատմամբ և ակտիվորեն պաշտպանեն փոքրամասնություններին:

Միջազգային տեսակետային տղերք, որ աղափաղում է մեր միաստվածային կրոնների բարոյական սկզբունքները, տեսզևացել է 1994 թվականից ի վեր: Մենք դատապարտում ենք նրանց, ովքեր ներգրավվում են նման հրեշտակոր հանցագործությունների մեջ՝ որպես ակտիվ մարդասպաններ, և կոչ ենք անում բոլոր կրոնական առաջնորդներին՝ հաստատակամորեն արտահայտվելու նրանց դեմ:

Կարևոր է հիշել, և մենք ցանկանում ենք բոլոր հավատացյալներին հիշեցնել, որ բոլոր միաստվածային կրոնների Սուրբ Գրքերը խաղաղությունը համարում են որպես զերագույն արժեք և կոչում: Ինչպես կշել ենք 1994 թ. «Նրա ճանապարհները խաղաղության ճանապարհներ են», «Երանի խաղաղարարներին, որովհետև նրանք պետք է Աստուծո որդիներ կոչվեն», «Աստված դեպի Խաղաղության բնակարան կանչեց» («Allah summoneth to the abode of Peace»):

ԳԱՅԱՆԵ ԱԼԵԶԱՆՅԱՆ

Միջկենդակյան հարաբերությունների բաժին



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՅ ԲԵԼԱՌՈՒՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Տոկոսներն 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց Բելառուսի մշակույթի նախարար Լևոնիդ Գույակոյիև և նրա զինավորամ պարվիրալությանը՝ ՄՇ մշակույթի և երիտասարդության հարցերի փոխնախարար Գագիկ Գյուրջյանի և երկու երկրների ղեկավանների ուղեկցությամբ:

Ողջունելով նախարարի այցը Մայր Աթոռ՝ Ամենայն Տայոց Տայրապետը գոհունակություն հայտնեց Տայաստանում անցկացվող Բելառուսի մշակույթի օրերի առիթով՝ կարևոր նկատելով մշակութային նման ձեռնարկների կազմակերպումը, որոնք նպաստում են երկու ժողովուրդների միջև փոխհասկանալի շարունակ ձևավորվող հարաբերությունների և ավանդույթների առավել սերտագմանն ու ամրապնդմանը: Նորին Մրբությունն այս ամենում կարևոր նկատեց երկու ղեկավանների դերն ու առաքելությունը:

Տայոց Տայրապետը ի դեմս Մշակույթի նախարարի իր գնահատանքը հայտնեց Բելառուսի իշխանություններին հայ համայնքի հանդեպ դրսևորվող հոգաբար ու բարյացակամ վերաբերմունքի, ինչպես նաև հայկական եկեղեցու կառուցման նպատակով կատարված հողահարկացման համար: Նորին Մրբությունը նախարարի միջոցով նաև իր եղբայրական սերն ու բարենադրանքները փոխանցեց Ֆիլարետ միտրոպոլիտին:

Իր հերթին պրն Գույակոն անդրադարձավ Տայաստանում ցուցաբերված ջերմ ընդունելությանը, ներկայացրեց Տայաստանում Բելառուսի մշակույթի օրերի ծրագրի շրջանակներում կատարված և նախատեսվող միջոցառումները: Նախարարը նաև ուրախությամբ նշեց, որ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն եկող տարի Բելառուսում անցկացվելու են Տայաստանի մշակույթի օրեր:

Հանդիպման ընթացքում նաև անդրադարձ եղավ Տայաստանյայց Առաքելական Սուրբ Էկեղեցու առջև ծառայած դժվարություններին և երկու Էկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերություններին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՅ ՆՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Նոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց երկօրյա պաշտոնական այցով Տայաստան ժամանած Նունաստանի ազգային պաշտպանության նախարար Սպիլիոս Սպիլիոսյանի և զինվորական պարզախառնակությանը՝ ՏՏ ՊՆ փոխնախարար գեներալ-լեյտենաներ Արթուր Աղաբեկյանի և ՏՏ Զինված ուժերի հոգևոր առաջնորդ Տ. Նորայր արք. Միմոնյանի ուղևորությամբ:

Ողջունելով հյուրերի այցը Մայր Աթոռ՝ Ամենայն Տայոց Տայրապետն ուրախություն հայտնեց Տայաստանի և Նունաստանի պաշտպանության նախարարությունների միջև զարգացող գործընթացների ու ջերմ հարաբերությունների համար: «Մենք գիտենք, որ անկախության առաջին իսկ օրերից ձևավորվել են այդ կապերն ու համագործակցությունը, և առաջին մեր սպաները իրենց կրթությունը և իրենց զինվորական գիտելիքների կապարելագործումը ձեռք են բերել Նունաստանում: Այս համագործակցությունը, անշուշտ, արդարապես Տայրությունն է այն դարավոր բարեկամական, եղբայրական կապերի, որ բերող են եղել մեր երկու ժողովուրդներին: Եվ ուրախ ենք, որ այդ ոգին շարունակվում է, ավելի զորանում և ամրանում է: Վստահ ենք, որ այդպես է լինելու բոլոր ժամանակներում: Ճակատագիրը մեզ եղբայրացրել է և մեր ընթացքը նույնական դարձրել: Միմյանց պիտի աջակցենք ու գորակցենք՝ կյանքի կոչելով մեր նպատակները»,- ասաց Նորին Սրբությունը:

«Ժամանել ենք Տայաստան, որպեսզի փոխանցենք հայ ժողովրդին այն մեծ սերը, որ հույն ժողովուրդը փրամում է հայերի հանդեպ»,- նշեց նախարարը՝ խոսելով հայ-հունական հարաբերությունների առավել զարգացման հեռանկարների, ինչպես նաև փարամաշրջանային խնդիրների լուծման մասին:

Վեհափառ Տայրապետը պրն Սպիլիոսյանի միջոցով նաև իր եղբայրական ջերմ ողջույնները փոխանցեց Աթենքի և Տամայն Նունաստանի Արքեպիսկոպոս Խրիստոփորոսին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՅ «ՆԱԿԱԶԳԻՆՈՒԹՅՈՒՆ ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ԵՎ ՌԱԳԻԱՅԻՈՆ ԱՆԱԲԵԿՉՈՒԹՅԱՆԸ» ԹԵՄԱՅՈՎ ՍԵՄԻՆԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Նոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց ՆԱՏՕ-ի «Գիտություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Առաջավոր գիտությունների փոխնախարարների կենտրոնի կազմակերպած «Տակազդեցություն միջուկային և ռադիոակտիվ ահաբեկչությանը» թեմայով սեմինարի մասնակիցներին:

Մեմինարի աշխատանքների նպատակներն ու ընթացքը Նորին Սրբությանը ներկայացրեց Առաջավոր գիտությունների փոխտնօրդիաների կենտրոնի փոօրեն Սամվել Ապիկյանը:

Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին իր օրհնությունն ու պարզամը փոխանցեց Ամենայն Տայոց Տայրապետը՝ ողջունելով սեմինարի՝ Տայասպանում անցկացման նախաձեռնությունը: «Մեր բարենադրանքն է, որ ձեր ներողամ ջանքերը բարի արդյունավորում ունենան և ծառայեն աշխարհում խաղաղության և ապախովության պահպանման նվիրական գործին», - ասաց Գարեգին Բ Կաթողիկոսը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՏԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՏՎԱՅԻ ՍԱՏՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՆԻՆ

Տոկոբնրերի 6-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց Լիտվայի Սահմանադրական դատարանի նախագահ Էդիդիոս Կուրիսի գլխավորամ պարվիրակությանը:

Տանդիպման ընթացքում խոսվեց երկու երկրների Սահմանադրական դատարանների սերը համագործակցության մասին: Անդրադարձ եղավ նաև Տայ Էկեղեցու ներկայիս գործունեությանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՏԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿՐԱՍՆՈՂԱՐԻ ՆԱԿԱՆԳԱՊԵՏԻՆ

Տոկոբնրերի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի նահանգապետ Ալեքսանդր Տկաչովի գլխավորամ պարվիրակությանը՝ ՏՏ ոստիկանության պետ Տայկ Տարությունյանի և ՏՏ ԱԳ փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանի ուղեկցությամբ:

«Նմանապիպ փոխայցելությունները գալիս են առավել ևս գորացնելու մեր երկու ժողովուրդների դարավոր եղբայրական բարեկամական կապերը: Տայաստանի և Ռուսաստանի, ինչպես նաև մեր ժողովուրդների միջև բարեկամական կապերն առանձնատում են: Տայ ժողովրդի հոգում Ռուսաստանն ու ռուս ժողովուրդն ունեն առանձնատարուկ րեղ: Մենք, իրապես, փառք և գոհություն ենք մարտուցում Աստծուն այս բարեկամության, այս եղբայրության համար, որ բնորոշում է մեր երկու ժողովուրդներին», - ողջունելով Կրասնոդարի նահանգապետին ասաց Ամենայն Տայոց Տայրապետը:

Նորին Սրբությունը նահանգապետին իր գոհունակությունը հայտնեց հայ ժողովրդի զավակների, հայ համայնքների հանդեպ դրսերվող բարյացակամ ու հոգաբար վերաբերմունքի համար: Վեհափառ Տայրապետը նկատեց, որ րարամաշրջանում երբեմն րեղ գրնող անցանկալի միջադեպերն ու իրավիճակները ժամանակի սիպա ընկալումների դրսերում:

ներ են և փեղ չունեն այն ջերմ հարաբերությունների մեջ, որոնք հիմք են կազմում երկու ժողովուրդների դարավոր բարեկամության:

Իր հերթին Կրասնոդարի նահանգապետը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, անդրադարձավ ՏՏ նախագահի հեյտ ունեցած իր հանդիպմանը: «Ուրախ ենք գտնվել Տայաստանյայց Առաքելական Եկեղեցու կենտրոնում: Մեզ մոտ գործում են ավելի բան փաստ նախկան եկեղեցիներ և համայնքներ: Գիտնք, որ հայ գործարարները բազում փորձեր և ցանկություն են դրսևորում շարունակելու նոր եկեղեցիների կառուցումը և ծխերի հաստատումը: Մենք և փարաձառքչանի իշխանությունները դրան ընթրնամար ենք մոտենում, հարկապես որ մեր պարամությունը և մշակույթը բազում ընդհանրություններ ունեն: Տայ բնակչությունը, որի թիվը շուրջ երեք հարյուր հազար է, կազմում, իրավունք ունի իր եկեղեցիներն ունենալու, ուր կարող են աղոթել, Աստված մերձենալ, հոգևոր բաժարաբություն ստանալ»,- ևշնց Ա. Տկաչովն իր խոսքում: Օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ նահանգապետը Նորին Սրբությանը հրավիրեց պաշտոնական այցով լինել Կուրասնում:

Տանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև Տայաստանյայց Առաքելական և Ռուս Ռոդոպիտո Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերություններին: Տանդիպմանը ներկա էր Տարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպ. Մովսիսյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՐՆԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Տոկբնձերի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուկրաինայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոյին:

«Ուրախ ենք, որ Տայաստանում եք կրկին դեսպանի հանգամանքով և Ձեր ծառայությունը շարունակելու եք բերել մեր երկու ժողովուրդների և պետությունների սերտ համագործակցությանը և բարեկամական կապերի գորացմանը: Տանելի է, որ այդ առաքելությունը Կուր եք շարունակելու՝ լինելով մեր ժողովրդին ջերմ բարեկամ, ինչից շահելու է ն՝ Տայաստանը, ն՝ Ռուկրաինան»,- ասաց Ամենայն Տայոց Տայրապետը՝ մաղթելով, որ Տերն օգնական լինի դեսպանին իր առաքելությունը լիարժեքորեն իրականացնելու ի սեր երկու ժողովուրդների:

«Տայաստանն ինձ համար հարուկ երկիր է: Ես ձեզ ասեմ, որ այս չորս փարում, որ բացակայում էի այստեղից, այնուամենայնիվ ես Տայաստանի հեյտ էի՝ ն՝ Մուրթ Էջմիածնի, ն՝ Ձեր ներկայությունը միշտ եղել է իմ փանը և աշխատասեյակում»,- ևշնց դեսպանը՝ գոհունակությամբ անդրադառնալով նաև այդ փարիների ընթացքում հայ համայնքի և Ռուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպ. Բուկիաթյանի հեյտ ունեցած իր սերտ համագործակցությանը: Ա. Բոժկոն հաստատեց, որ պաշտոնավարման ընթացքին պետք է հեյրամուտ լինի հայ-ուկրաինական համագործակցության առավել գորացմանն ու գարացմանը:

Նանդիպման ընթացքում Նորին Սրբությունը նաև մաղթեց, որ Ռկրախնան շուրջով հաղթահարի իր ենթադադարական դժվարությունները և վերգրելի կայունությունը կյանքի բոլոր ոլորտներում:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՅ ՍԱՄԱՐԱՅԻ ՆԱԿԱՆԳԱՊԵՏԻՆ

Նոկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Գաշնության Սամարայի մարզի պարավիրակությամբ՝ նահանգապետ Կոնստանտին Տիտովի գլխավորությամբ:

Ուրախություն հայտնելով Հայաստանում Ռուսաստանի փարվա շրջանակներում Սամարայի մարզի օրերի անցկացման առիթով՝ Նորին Սրբությունն արձանագրեց, որ նման միջոցառումները նպաստում են երկու պետությունների ու ժողովուրդների միջև առկա ջերմ հարաբերությունների առավել սերտացմանն ու փոխճանաչողությանը: Ամենայն հայոց հայրապետությունների առավել սերտացմանն ու փոխճանաչողությանը հայտնեց նաև Սամարայի հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգաբար վերաբերմունքի համար:

Նանդիպման ընթացքում խոսվեց Սամարայի մարզի կրոնական խճանկարի մասին: Անդրադարձ կատարվեց նաև Հայաստանյայց Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերություններին ու սերտ համագործակցությանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՅ ՆՈՒՆԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊԱՆԻՆ

Նոկտեմբերի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Նունաստանի ճանրապետության նորանշանակ արքակարգ և լիազոր ղեկավար Կիկ Դանայուրա Մավրոմիխայիին:

